# ԷՋՄԻԱԾԻՆ



ՕՅԳԷ

Ե. ՏԱՐԻ

Հոկտեմբեր – Նոյեմբեր – Դեկտեմբեր

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1948

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

1. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի Կոնդակը—պաղեստինահայ աղետյալների և Երուսաղեմի Ս. Տեղյաց օգնություն կազմակերպելու մասին . . . 3
2. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի Կոնդակը— Ռումանահայ թեմի նորընտիր Առաջնորդ Տ. Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճյանին իր նոր պաշտոնում հաստատելու մասին . . . 5
3. Հայրենիքի համար ու Հայրենիքի հետ . . . 6
4. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 31-րդ տարեդարձը . . . 12
5. Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձի տոնակատարությունը . . . 15
6. Խ. ՍԵՅՐԱՆ.— Վերհիշում . . . 18
7. Մայր Աթոռ . . . 19
8. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի ցավակցական հեռագիրը Ատրպատականի թեմի Առաջնորդ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի մահվան առթիվ . . . 21
9. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան . . . 24
10. Հայաստանյայց եկեղեցին Սփյուռքի մեջ . . . 27
11. Հայրենի հարազատ հողի վրա . . . 31
12. ՀԱԿՈԲ ԱՐԱՄՅԱՆ.— Հայրենադարձների հարսանիք – Ոսկերիչ Արշակի ուխտերի կատարումը . . . 32
13. ԱՐԱՄ ԵՐԵՄՅԱՆ.— Հայ ժողովրդի ազատագրական պայքարի Մադրասի դրոշակակիրները . . . 38
14. ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.—Մեծաքար՝ թե՛ անապատ, թե՛ ամրոց . . . 46
15. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Կենսագրական նյութեր Միքայել Նալբանդյանի մասին . . . 48
16. Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ.— Ռումանահայոց մտքի գանձարան «Հայ Մշակույթի Տունը» . . . 56
17. ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.— Իմ հուշերից— Ղազարոս Աղայանը . . . 73
18. Օտարները հայերի և Հայաստանի մասին . . . 80
19. Սովետական Հայաստանում . . . 81
20. Գաղութահայ կյանք . . . 91
21. «Էջմիածին» ամսագրում 1948 թվի ընթացքում տպագրված նյութերի ցանկ . . . 98


## ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ


ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

ԷՋՄԻԱԾԻՆ, „ԷՋՄԻԱԾԻՆ" ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Armenia, USSR

Պատվեր N 930

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. Վարչ. N 2 տպարան, Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

Տ. Տ. Գ Է Ո Ր Գ Ա Յ Զ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԿՈՆԴԱԿԸ

ԳԵՎՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹՅԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՎ ԿԱՄՕՔ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Անսահման է եղել հալածանքների և աղետների շարանը, որ անընդհատ անթիվ դարեր անարդարադատ պատմությունը մասնահանել է Հայկազյան տոհմին:

Անհատակ է եղել ցավի փորձության բաժակը, որ վիճակվել է Հայաստանյայց Ազգային-Առաքելական եկեղեցուն աստուածապարգև հիմնադրության օրերից սկսած:

Անհամար են եղել անհաշիվ արհավիրքները, որոնք անխնա ավերածել են հայ ազգային հինավուրց մշակույթի սքանչելի գանձերը և Լուսավորչահիմն եկեղեցու նվիրական սրբությունները:

Սակայն ալեհեր և դաժան պատմությունը անզոր հանդիսացավ իսպառ գերեզմանել մեր բազմաչարչար Թորգոմյան Տոհմը, բարոյապես ուժաբեկել մեր ազգային առաքելական եկեղեցին և վախճանապես անհետացնել-ոչնչացնել մեր ազգային մշակույթի բազմաթիվ գանձերը և կրոնական սրբությունները:

Հերոսածին Հայ Ազգը և իր հայրենասեր առաջնորդները, Հայաստանյայց եկեղեցին և իր ուխտապահ կրոնավորները, անողոք հալածանքների ու աղետների ծանր օրերին անձնվեր պաշտպանն ու մխիթարիչ հրեշտակը հանդիսանալով բազմաչարչար հարազատների, քաջաբար վահանեցին և արթուն պահակեցին հիասքանչ գանձերը հայրենի մշակույթի և կրոնական Սրբությանց:

Նահատակվող Ազգիս և առաքելաշնորհ Եկեղեցուս բազմադարյան սքանչելագործությունները և երջանկահիշատակ նախորդներիս աննման սխրագործությունները անսպառ ու կենարար աղբյուր հանդիսացան արիության և առաքինության հետնորդ պսակավորներին, որոնց թափած ազնիվ քրտինքի և անսպառ արյան գնով Արարատյան դաշտավայրում խարսխվեց ազատ և ինքնօրեն հայկական ազգային Պետությունը, լույսի, հույսի և փրկության փարոսը:

Սակայն, եղո՜ւկ, դեռ ևս չարագույժ ամպեր են պատած Հայ Սփյուռքի երկնակամարին, որ անձկանոք տենչում է փրկության Երանելի օրին, երբ արժանի պիտի լինի երջանիկ անդորրության՝ Մայր Հայրենիքի ծոցում, հայրենի իշխանության հզոր բազուկի պաշտպանության ներքո և միաժամանակ Սուրբ Տաճարիս հովանուն արժանացած:

Խռովահույզ աշխարհը ալեկոծում են ցրտաշունչ և մահաբեր քամիներ, որոնք ամեն ժամ նորանոր պատուհասներ են բերում աշխարհացրիվ տարաբախտ հարազատներից:

Լուսավորչահիմն Մայր Աթոռը և համազգայնորեն ընտրյալ ալեզարդ Հայրապետը այսօր անհուն կսկծով և վշտակցությամբ են հետևում այն նորահաս ողբերգության, որ պատերազմական արհավիրքների շնորհիվ վիճակվել է Պաղեստինի և ի մասնավորի Սուրբ Տեղյաց հարազատներիս և հոգևոր եղբարց:

Մենք սարսափով ենք համակված նաև ի տես այն վտանգի, որ սպառնում է Երուսաղեմի պատրիարքարանում և վանքում պահված ազգային պատմության ու մշակույթին վերաբերյալ հազարավոր հնագույն ձեռագրերին և վավերագրերին:

Ցավոք սրտի, մենք նախատեսնում ենք, որ ծանր փորձությանց այս դաժան ժամին Սուրբ Տեղյաց «հովանավորի» պատմուճանը հագած և «քրիստոնեյա թշվառներին» օգնություն պատրվակող տարամերժ ու դավադիր ուժերը կփորձեն գայթակղեցնել մեր վտարաբախտ զավակներին և հանդգնություն կունենան պղտոր ջրում ձուկ որսալ:

Մենք մաղթում ենք Սփյուռքի բոլոր հարազատներիս և հոգևոր թե աշխարհիկ առաջնորդներին —լինել արթուն և զգուշացած, իմաստուն և առաքինի, դիմագրավելու և հաղթահարելու մահաշունչ վտանգը, որ անբուժելի վերք է պատճառելու հավատացյալ զավակներիս և Ազգային Եկեղեցուն:

Անտարբերության չէ մատնված Մայր Աթոռը, որ առավելագույնն է անում և կանի սփոփելու իր հոտը, թեթևացնելու հարազատների ցավը և կասեցնելու ու վերացնելու վտանգը, և անխուսափելի կորստից ազատելու հոգևոր-մշակութային գանձերը:

Մենք դիմել ենք ուր անկ է, որպեսզի արտասահմանյան զավակներիս ու ազգային մշակույթի և եկեղեցական Սրբությանց սպառնացող վտանգը կանխվի:

Մենք կոչ ենք անում Սփյուռքի համայն հայության և ազգային-եկեղեցական հաստատությունների ղեկավարներին՝ բոլորանվեր անձնատուր լինել հարազատ եղբարց ազատելու և փրկելու գործին: Երուսաղեմի Պատրիարքությունը ապավինած և Ս. Հակոբա վանքում ծվարած ձեր բազմահազար տառապյալ եղբայրներն ու քույրերը ծարավի են ողջ հայ ժողովրդի կարեկցության և օգնության: Նախ առավելագույնն անել սեփական-ազգային միջոցներով և ապա միայն օտարին դիմել: Օգնեցեք ձեր սովահար և ծարավի եղբայրներին, որոնց աչքը հույսով լի դեպի հարազատներն են դարձած:

Մենք կոչ ենք անում նաև հոգևոր առաջնորդներին և ազգային գործիչներին՝ որառաջ անվնաս փոխադրել ձեռագրերը և պատմական արժեք ներկայացնող վավերագրերը պահպանման համար առավել ապահով մի այլ վայր: Դարերից ի վեր ժառանգություն մնացած այդ գանձերը, որպես համազգային սրբություն-սեփականություն, պետք է անվթար պահպանվեն և հանուրի հոգածության առարկան հանդիսանան:

Մեզ քաջ հայտնի է, որ Հռոմեական եկեղեցին՝ Վատիկանը հավակնություն ունի Սուրբ Տեղյաց խնամակալի և հովանավորի մենաշնորհը իր ձեռքը վերցնելու, արհամարհելով այլ եկեղեցիների դարևոր սրբագործված նվիրականները:

Մենք, որպես Հայաստանյայց Ազգային-Առաքելական եկեղեցու ընդհանրական Կրոնապետ-Ազգապետ, առաքելահիմն և ուղղափառ եկեղեցու առաջ խղճի ուխտ ենք արել անվթար ու անձնվիրաբար պահպանել մեր ազգային-կրոնական բազմադարյան սրբազան իրավունքները Ավետյաց երկրում, հետևելով մեր առաքինազարդ նախորդներին, որոնք դարեր շարունակ անձնուրաց պայքարել են աշխարհահզոր Հռոմի և Բյուզանդիոնի ոտնձգությունների դեմ, ի փառս և ի պատիվ հայրենի սրբությանց:

Մենք չենք վարանում հավատալ, որ հավատացյալ հոտը և ուխտապահ կրոնապետները, ի պահանջել հարկին, կորովի կպաշտպանեն օտար, աշխարհիկ թե հոգևոր, իշխանավորների ոտնձգություններից ազգային եկեղեցու և ընդհանրական Մայր Աթոռի սրբանվեր իրավունքները:

Մենք լիահույս ենք, որ առանձնապես Մեր հոգևոր եղբայրը՝ Աստուածորդու սըրբագործությանց և հրաշագործությանց նվիրական վայրերի հայ Կրոնապետը, Երուսաղեմի սրբազան Պատրիարքը, եղբայրակցությամբ բազմավաստակ և հույժ ուխտապահ Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոսի, անձնվիրաբար ու աննահանջ պաշտպան կըկանգնեն Հայ Եկեղեցու և Պատրիարքության իրավանց:

Խաղաղություն և ազատություն աղետյալ հարազատներիս՝ անձնվեր օգնությամբ համորեն ազգայնոց և պաշտպանությամբ արդարախոհ իշխանությանց:

Անվթար պաշտպանություն ազգային մշակույթի, գանձերի և կրոնական սրբությանց, ի միաբանություն և ներդաշնակություն համայն հայության, Հայ Հայրենյաց և գալիք սերնդոց:

Օրհնությամբ Ամենակարողին, օգնությամբ արդարադատ կառավարությանց, իմաստությամբ ազգային Առաջնորդաց և կորովի միաբանությամբ համայն Ազգիս թող անցնի դառնաշունչ փորձությանց բաժակը Հայրենիքիս, Ազգիս և Եկեղեցուս գլխից:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Գէորգ Զ

Տուաւ Կոնդակս ի 8-ն դեկտեմբերի
1948 ամի Փրկչական և ի Տոմարիս ՌՅՂԷ
ի Ս. Էջմիածին

# ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԿՈՆԴԱԿԸ

ՌՈՒՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՆԱԽԱԳԱՀԻՆ,
ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՎԱԿՆԵՐԻՆ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Արգո Թեմական Խորհուրդը հաղորդում է Մեզ, որ տարվույս հուլիսի 25-ին գումարված Պատգամավորական ժողովը, գաղտնի քվեարկությամբ և միաձայն, ընտրել է Բարձրապատիվ Տ. Վազգեն Մայրագույն Վարդապետ Պալճյանին Ռումանիո Հայոց թափուր Թեմի Առաջնորդ և խնդրում է Մեզ հաստատել նորան նոր պաշտոնում:

Անձամբ ճանաչելով Բարձրապատիվ Տ. Վազգեն Մայրագույն Վարդապետին և նկատի առնելով նորա կրթական ցենզը, պահանջված վարչական ընդունակությունը, կիրթ կեցվածքը, համեստ բնավորությունը և սիրալիր վարվեցողությունը պաշտոնեության և ժողովրդի հետ, այլ և նորա էջմիածնասիրությունը, հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունը և Արգո Խորհրդի միջնորդությունը՝ Մեր այս Հայրապետական Կոնդակով հաստատում ենք Բարձրապատիվ Տ. Վազգեն Մայրագույն Վարդապետին, Առաջնորդ Ռումանիո Հայոց Թեմին: Հայրապետական պատվեր ենք տալիս առաջնորդելու Մեր հոտը, սիրով և խաղաղասիրությամբ ապրելու Ռումեն և ռումինաբնակ եղբայր ժողովուրդների հետ և հնազանդ ու հավատարիմ Ռումեն պետության հանդեպ:

Մաղթում ենք Ամենակարողին, որ պահպանե և առավել ևս զորացնե Տ. Վազգեն Մ. Վարդապետի ընդունակությունները իր ծանր և պատասխանատու նոր պաշտոնը պատվով վարելու:

Աղոթում ենք Բարձրյալին, որ զորացնե բարեխնամ Ռումեն պետությունը տնտեսապես, կուլտուրապես և քաղաքականապես և նորա հովանավորող մարդասեր Ազգը Մեր սիրեցյալ Հայ հոտի նկատմամբ հարատև անե:

Մաղթում ենք աշխարհի Փրկչին, որ Իր Աջը հովանի պահե Մեր հոտի գլխին և հայցում նորա օրհնությունը Թեմական Խորհրդի անդամների վերա, որպեսզի, աջակցելով իրենց ընտրյալին, պատվով տանեն իրենց ծանր լուծը և պարզերես լինեն ժողովրդի և Մեր առաջ, և պատասխանատու չմնան իրենց բարոյական Դատավորի՝ խղճի հանդեպ:

Ողջ լերուք, զորացյալ շնորհօք Ս. Հոգվույն և հավետ օրհնյալ ի Տյառնե և ի Մենջ. ամեն:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Գէորգ Զ

Տուաւ Կոնդակս ի 16 դեկտեմբերի
1948 ամի Փրկչական և ի Տոմարիս ՌՅՂԸ
ի Ս. Էջմիածին

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ

Հայ ժողովուրդը, Սովետական Միության եղբայրական ժողովուրդների հետ միասին, մեծ խանդավառությամբ Նոյեմբերի 7-ին տոնեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 31-րդ տարեդարձը:

Անցած 31 փառապանծ տարիների ընթացքում Սովետական անծայրածիր երկիրը անճանաչելիորեն կերպարանափոխվել է. նա հսկայաթափ աճել, զարգացել ու վերածվել է ամենաառաջավոր կուլտուրայի, գիտության և հզոր տեխնիկայի երկրի:

Այսօր, երբ Եվրոպական շատ երկրներ տնտեսական տագնապի ճիրաններում գալարվելով իրենց աղերսալից հայացքներն են ուղղում անդրօվկիանոսյան հղփացած դոլարատերերին, նրանցից փշրանքներ մուրալու, օգնություն ստանալու սին հույսերով, Սովետական գերհզոր Միությունը, իր անընկուն ժողովրդի անձնուրաց ու հերոսական աշխատանքի վրա կռթնած, առանց դրսի օգնության, ոչ միայն բուժել է պատերազմի հասցրած շատ վերքեր, այլ և ստեղծել է այնպիսի առատություն, որը գերազանցելով նախապատերազմյանին, լիակատար կերպով ապահովում է սովետական երջանիկ ժողովրդի բարօր կյանքը:

Եվ մինչդեռ մեր մեծ հայրենիքը՝ Սովետական Միությունը տնտեսական ու կուլտուրական հախուռն վերելք է ապրում, օվկիանոսի մյուս կողմում տնտեսական մոտալուտ ճգնաժամի ուրվականը հանգիստ չի տալիս ամերիկյան դոլարոկրատիայի տխրահռչակ հերոսներին. Նրանք, պատերազմի, հավերժ նզովքի արժանի, այդ ջահակիրները իրենց միակ փրկությունը տեսնում են միայն համաշխարհային նորանոր սպանդների կազմակերպման մեջ, որի համար էլ անընդհատ զինվում ու զինում են իրենց մեծ ու փոքր սատելիտներին: Սակայն, պատերազմի հրահրման այդ անզուսպ ուժերը բախվում են խաղաղության վիթխարի ուժերի հետ, որոնց գլխավորում է Սովետական Միությունը: Մեծ վերելքի ուղիով անշեղորեն ընթացող հզոր Սովետական Միությունը հանդիսանում է խաղաղության անխոցելի ու անառիկ միջնաբերդը, որի աշտարակների վրա հպարտորեն ծածանվում են ժողովուրդների համերաշխ գործակցության ու խաղաղության հաղթական դրոշները. ողջ աշխարհի պրոգրեսիվ ու խաղաղատենչ մարդկության հայացքներն այսօր ուղղված են խաղաղության այդ ամրակուռ միջնաբերդին:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան բախտորոշ դեր խաղաց Ռուսաստանի ժողովուրդների կյանքում—սկիզբ դրվեց ցարական անարգ բռնատիրության կապանքներից ազատագրված ժողովուրդների անխախտ դաշինքի, սերտ համագործակցության և եղբայրական համերաշխ ու հզոր միասնական մի ընտանիքում համախմբվելուն. այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը լայն հնարավորություններ ստացավ կուլտուրական և տնտեսական աճման ու զարգացման համար:

Սովետական ժողովուրդների եղբայրական այդ ընտանիքի իրավահավասար անդամներից մեկը հանդիսանում է հայ ժողովուրդը, որն իր այսօրվա բերկրալից կյանքը ձեռք է բերել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի մեծագույն նվաճումների շնորհիվ:

Հայ ժողովուրդը անհուն երախտագիտությամբ ու անսահման ցնծությամբ Նոյեմբերի 29-ին տոնեց նաև իր ազատագրու-

թյան, իր փրկության ու վերածնության մեծ տոնը՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 28-րդ տարեդարձը:

28 տարի առաջ, դաշնակների տխրահռչակ տիրապետության օրոք Հայաստանը վերածվել էր զուլումի, արյան ու ավերի, սրտամորմոք ողբի ու դառնացի արցունքի, մխացող մոխրակույտերի ու լեռնացած դիակույտերի, սովալլուկ գաղթականների ու անօգ որբերի և բիրտ, վայրագ կամայականությունների ու մաուզերի նողկալի տիրապետության երկրի. հայի բոսոր արյունով էին ներկվել հայրենի հարազատ լեռն ու գետերը, սարալանջերն ու լեռնաձերպերը, անհերկ մնացած դաշտերն ու անդնդախոր ձորերը: Վտանգի տակ էր դրվել մի քանի հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը— հայի արյան ծարավ թուրք վանդալները սպառնում էին իսպառ բնաջնջել ողջ մնացած հայության բեկորները:

Ստեղծված այս գեհենից փրկվելու համար հայ քաջարի ժողովուրդը արնաներկ ու հոշոտված Լեռնահայաստանի վրա ապստամբության ալ դրոշ պարզեց և ռուս ազնիվ ու մեծ ժողովրդի ու հարազատ Կարմիր Բանակի եղբայրական օգնությամբ 1920 թվի նոյեմբերի 29-ին, ընդմիշտ փշրելով դաշնակների անարգ լուծը, սովետական կարգեր հաստատեց երկրում:

Անցել է այդ հավերժահիշատակ օրվանից արդեն 28 տարի: Երիտասարդ, առնական Սովետական Հայաստանը աճել, զարգացել ու դարձել է Սովետական Միության առաջավոր ռեսպուբլիկաներից մեկը: 28 հոյակապ տարիների ընթացքում անճանաչելիորեն փոխվել է Հայաստանի դեմքը. նա վերածվել է կուլտուրայի ու գիտության աննախընթաց ծաղկման մեծագույն օջախի և առաջավոր արդյունաբերության ու մեքենայացված գյուղատնտեսության բուռն վերելք ապրող երկրի: Նախկին «մայրագյուղը» Երևանը ծավալվել, ընդարձակվել, փոխվել ու դարձել է այսօր Սովետական Միության գեղատեսիլ, հոյակերտ ու ինդուստրիալ քաղաքներից և գիտության ու արվեստի կարևորագույն օջախներից մեկը: Եվ ոչ միայն Երևանը, այլ և ողջ Հայաստանը վերափոխվել և նոր ու խնդուն տեսք է ընդունել:

Երբ մի պահ համեմատենք Հայաստանի նախասովետական և նոր քարտեզը, ապա կտեսնենք, որ հայ քրտնաջան ժողովրդի ստեղծագործ ու շինարար աշխատանքի, նպատակասլաց ու կուռ կամքի, անսպառ եռանդի և հերոսական ու անխոնջ ջանքերի շնորհիվ մեծ չափերով փոխվել ու փոխվում է անընդհատ հայրենի երկրի աշխարհագրական դեմքը: Նոր քարտեզը ծածկվել և շարունակում է ծածկվել բազմաթիվ ու բազմատիպ պայմանական նշաններով ու գծերով, որոնք հանդիսանում են վիթխարի մտահղացումների կենսագործման և հայ ժողովրդի բարեկեցիկ ու երջանիկ կյանքի կերտման խոսուն վկաները: Պայմանական այդ պարզ նշաններից ամեն մեկի տակ թաքնված է սովետական մարդկանց բարոյա-ֆիզիկական ուժերի գերլարման, խիզախ մտքի մեծ թռիչքների, ջլուտ մկանների պրկման, աշխատանքային անհման սխրագործությունների և բնության ահռելի ուժերի հաղթահարման երջանկությամբ լեցուն սրտերի հերոսական պատմությունը: Դրանք, այդ նշանները պատմում են այն մասին, թե ինչպես ամայի վայրերում հաղթանակորեն վեր են խոյացել գեղեցկակառույց գյուղերն ու քաղաքները, ստեղծվել ինդուստրիալ օջախները, անջրդի ու խոպան տափաստանները ծածկվել ջրանցքների խիտ ցանցով, չորացվել ճահճուտները. էլեկտրալույսերով ողողվել գյուղ ու քաղաք, դաշտերը ծածկվել հացառատ ոսկեծուփ արտերով, բամբակի բերքաշատ պլանտացիաներով, մրգաշատ փթթուն այգիներով: Պատմում են այն մասին, թե ինչպես լեռների ծոցում ստեպ-ստեպ պահվող ու լեռնալանջերին արագորեն հայտնվող բարեկարգ հանքավայրերը մեկ մագլցում են լեռն ի վեր, մեկ գահավիժորեն սլանում խորը կիրճերի առափնյա ժայռերի վրայից, իսկ հարյուրավոր գործարանների երկնահուպ ծխնելույզները Հայաստանի բարձրակատար լեռներին միախառնվելով մի նոր թովչություն հաղորդում նրա վեհատեսիլ բնության նկարչագեղ պեյզաժին: Պատմում են և այն մասին, թե ինչպես Լեռնահայաստանի բնության չնաշխարհիկ թագուհին՝ Սևանա գանձաշատ լիճը, դարեր շարունակ բարձրագահ լեռների ամուր գրկում նիրհելուց հետո, այսօր, սովետական դարաշրջանում իր անսպառ էներգիան ի սպաս է դրել հայրենի աշխարհի ծաղկող ժողովրդատնտեսությանը: Սևանն այսօր ոչ խոլ հսկաների կողմից գերված չքնաղ գեղեցկուհի է, և ոչ էլ վիթխարի լեռների կատարին պարզած, հայոց անոթ՝ դինջ լեցուն, կենաց մի թաս, այլ նա համակ

կյանք է, հուժկու մի ուժ. գանձերի անսպառ շտեմարան, քաջախուն մի սիրտ, Հայաստանի ժողովրդատնտեսության շարժիչ լծակը: Այդ չքնաղ Սևանն է էներգիա մատակարարում կենսախինդ հայրենիքի հարյուրավոր գործարաններին ու ֆաբրիկաներին, շունչ փչում հանդ ու արտերին, զովացնում դաշտերի ու այգիների ծարավից պապակած սրտերը: Սևանն այսօր ավտոդողեր է, գունավոր մետաղ, բազմապիսի էլեկտրամեքենաներ, դազգահներ, գյուղատնտեսական մեքենաներ, միկրոգեսներ, տուրբիններ, կոմպրեսորներ, պարարտանյութեր, թթուներ, հիմքեր, պլաստմասսա, ապակի, տեքստիլ գործվածքներ, բամբակ, պահածոներ, արևաժպիտ մրգեր, ոսկեհատիկ ծփուն արտեր: Սևանը Հայաստանի էներգամարգարիտն է, նրա հզոր սրտի բաբախումը զգացվում է նրանից հարյուրավոր կիլոմետրներ հեռավորության վրա. այդ նա է լեռնալանջերին փարված ու լեռնահովիտներում սփռված գյուղերն ու քաղաքները գիշերները ողողում էլեկտրալույսերի հեղեղով և այնպես աստղազարդում նրանց, որ հորիզոններում երկինք ու երկիր իրար են միախառնվում և այդ թովիչ պատկերը դիտողը դժվարանում է սահման գտնել երկնքի ու երկրի միջև:

Հայ ժողովրդի հայանուն թշնամիները այսօր էլ արտասահմանում չեն դադարում վայնասուն բարձրացնել այն մասին, որ իբր թե խախտվել է Սևանի գեղեցկությունը. նրանք անհիմն կերպով ողբում են Սևանի մահը, նրա իսպառ անհետացումը Հայաստանի քարտեզի վրայից. նրանք դեմ են Սևանի պրոբլեմի իրականացմանը, նրանց ցանկությունն է, որ Սևանը հար ու հարատև անձեռնմխելի մնա: Սակայն, գեղեցկության այդ գռեհիկ «երկրպագուները», ժողովրդի այդ քողարկված թշնամիներն ու զրպարտիչները մոռանում են, որ մարդը միջամտելով ու ուղղելով բնության սխալները, ոչ թե ավերում, այլ ավելի քան թովչություն է հաղորդում նրա գեղեցկությանը: Լճի ծավալի փոքրացումը դեռևս նրա գեղեցկության նվազում չի նշանակում, ընդհակառակը նա ավելի քան գեղեցիկ կլինի, քան եղել է երբևէ. խշշուն անտառների, ալպյան թովիչ մարգագետինների կանաչ գոտին կզարդարի նրա հեզաճկուն իրանը, հանգստյան բազմաթիվ տների պատկերները մեղմորոր կըծփան լճի ջինջ հայելու մեջ, էլեկտրագնացքը Արարատյան երախտապարտ դաշտի սիրագորով ողջույնը կբերի նրան ամեն օր, իսկ տասնյակ հազարավոր աշխատավորներ տոն ու կիրակի օրերին իրենց հանգիստը կկազմակերպեն նրա հյուրընկալ ափերին: Կարելի՞ է մի պահ անգամ վարանել, թե ո՞րն է արդյոք ավելի գեղեցիկը — լեռների գոգում նիրհող լճի արևաշող հայելին, թե՞ հարյուրավոր գործարանների աշխատանքային ախորժ աղմուկը, արևաշող ու հասուն մրգերի բեռան տակ կքած թփերի ու ծառերի կանաչ ծովը, ոսկեծփուն արտերի, ձյունասպիտակ բամբակի դաշտերի օվկիանը, աստղասփյուռ գյուղերի ու քաղաքների գիշերային դյութիչ տեսարանը, միլիոնավոր մարդկանց երջանիկ ու բարեկեցիկ կյանքը: Սևանի կասկադի, Սևանի պրոբլեմի խիզախ ու անօրինակ մտահղացման համարձակ ու արագատեմպ իրագործումով սովետական մարդիկ ընդմիշտ փշրեցին գերված Սևանի կապանքները, խռովեցին նրա դարավոր նիրհը և բազմապատկեցին մեր սիրասուն հայրենիքի գեղեցկությունը, էներգազինվածությունը, հզորությունը և բարօրությունը:

Բայց Սևանը միակը չէ, որին վերապահված է խոշոր դեր խաղալ Լեռնահայաստանի աշխարհագրական դեմքի վերափոխման գործում: Սովետական մարդիկ գիտեն ոչ միայն նպատակահարմար փոփոխություններ մտցնել եղած լճերի կառուցվածքի մեջ, այլ և ստեղծել նորերը: Հայաստանի քարտեզի վրա արդեն սկսել են երևան գալ նոր լճակներ ու լճեր. դրանք կառուցված ու կառուցվող մանր ու խոշոր ջրամբարներն են, որոնց մեջ կան նաև հարյուրավոր միլիոն խորանարդ մետր ջրատարողություն ունեցողներ: Մանր ու միջակ հիդրոկայանների ցանցով են սկսել պատվել Հայաստանի նաև մյուս ջրվեժաշատ գետերն ու գետակները, նույնիսկ սրնթաց լեռնավտակներն ու ջրառատ ջրանցքները: Այսօր տասնյակ գյուղեր ունեն իրենց սեփական միկրոգէսները, հարյուրավոր գյուղեր զարդարվել են էլեկտրալույսերով, իսկ 1950 թվականին Հայաստանի բոլոր գյուղերն անխտիր համատարած էլեկտրիֆիկացման ենթարկված կլինեն:

Սովետական բորբ արևի տակ այսպես է կերպարանափոխվում հայրենի աշխարհի դեմքը գերերջանիկ հայ ժողովուրդը:



Մեր ծաղկող Հայրենիքի չքնաղ մայրաքաղաք Երևանը

Սովետական Հայաստանի տնտեսական մեծ վերելքը հնարավորություն ընձեռեց նրան իր գիրկն ընդունելու օտար հորիզոնների տակ գաղթացուպը ձեռին դեգերող իր տասնյակ հազարավոր զավակներին. արդեն հայրենիք են դարձել բազմահազար հայրենադարձներ, որոնք հարազատ եղբայրների ու քույրերի հետ ձեռք-ձեռքի տված իրենց լուսաշող կյանքն են կերտում ու հայրենիքի վերելքին մասնակցում:

Բայց հայրենիքի դեմքը չէ միայն, որ փոխվել է այդպես, փոխվել ու փոխվում է նաև այդ բնությանը իր հուժկու կամքը թելադրող ժողովուրդը: Երբեմնի բազմատանջ ու բազմաչարչար հայ ժողովուրդը վերածընվել է հոգեպես. չկան այլևս արյուն ու ավեր, կեղեքում ու լլկում և առույգ ու տաղանդավոր հայ ժողովուրդը ապրում է լիարյուն կյանքով ու ստեղծագործում համամիութենական նշանակություն ունեցող արժեքներ: Հայ ժողովրդի դարավոր պատմությանն անհայտ բուռն վերելք է ապրում այսօր հայ մշակույթը, արվեստը, գրականությունը, գիտությունը: Սովետական Միության պետական-հասարակական նշանավոր գործիչների, ժողովրդատնտեսության առաջավորների, ականավոր գիտնականների, նորարարների, գրողների, արվեստագետների, հարտարապետների, զինվորականների փայլուն անունների շարքում իրենց պատվավոր տեղն են գրավում նաև հայ ժողովրդի լավագույն զավակների անունները: Հայ գրականության ընտիր երկերը թարգմանվում են բազմաթիվ լեզուներով, հայ-երգը, հայ երաժշտությունը հնչում է հարյուրավոր ռադիոկայաններից, վրձինի հայ վարպետների գործերը ցուցադրվում են երկրի խոշորագույն պատկերասրահներում:

Մոռացության են տրվել ղարիբի, պանդխտության, անանդորր ու չարքաշ կյանքի վշտոտ ու թախծալի երգերը: Այսօր արևավառ մեր հայրենիքի գեղեցկաշեն, էլեկտրալույսերով ողողված գյուղերում ու քաղաքներում, մեծ ու փոքր գործարաններում, լեռնահանքերի ընդերքում, հսկա նորակառույցների աշտարակների վրա, բերքառատ դաշտերում, մրգառատ այգիներում, թավիշ կանաչով ծածկված լեռնարոտներում, բարեբեր լեռնահովիտներում, սաղարթախիտ անտառներում, ջինջ լեռնալճերի ու սրնթաց լեռնագետերի ափերին աշխատանքային ուրախ զվարթ երգն է զիլ ու անույշ հնչում և նորանոր սխրագործությունների հրավիրում:

Այսպես է կյանքը մեր խնդուն հայրենիքում և նրա ամեն մի օրը— դա դեպի լուսաշող ապագան տանող սանդուխքի մի նոր աստիճանի ավելացում է նշանակում:

Ի տես այս ամենի, ազնիվ, ողջախոհ ու հայրենասեր հայ մարդը կարո՞ղ է չուրախանալ, չհրճվել անկեղծորեն ու չհպարտանալ հարազատ ժողովրդի աննախընթաց նվաճումներով. հայ ժողովրդի երդվյալ թշնամիները և օտարներին վաճառված հայրենադավները միայն կարող են կույր ձևանալ ու չտեսնել մեր հայրենիքի այս անօրինակ բարգավաճումն ու ծաղկումը: Հայ եկեղեցին, հայ հոգևորականությունը, որ իր հարազատ ժողովրդի դաժան փորձությունների, մեծ արհավիրքների, սարսափելի եղեռների օրերին նրա հետ միասին նահատակվել, տանջվել ու տառապել է, այսօր չի կարող չուրախանալ, չհպարտանալ նրա փառահեղ վերածնունդը տեսնելով: Հայ եկեղեցու դարավոր պատմության ընթացքում հայ հայրենասեր հոգևորականությունը երբեք օտարներին չի վաճառվել ու հակադրվել իր սիրասուն հայրենիքին, նա միշտ եղել է, կա ու կլինի հայրենիքի հետ. նա երբեք մոռացության չի մատնել հայրենիքի կենսական շահերը ու բարձր է ծածանել հայրենասիրության նվիրական դրոշը. այսօր էլ հայ հայրենասեր հոգևորականությունը իր հայրենիքի հետ է և նրան անհուն հրճվանք են պատճառում հարազատ ժողովրդի խաղաղ ու բարօր կյանքը, աննախընթաց տնտեսական ու կուլտուրական վերելքը: Հայ եկեղեցու նշանաբանն է— ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ և հայ հոգևորականության ողջ հասարակական գործունեությունը սյետք է ընթանա այս սրբազան նշանաբանի տակ: Հայ հոգևորականությունը այն հաստատ հավատն ունի, որ հայ ժողովրդի երջանկությունը, նրա խաղաղ ու ջինարար աշխատանքը, նրա լուսապայծառ ապագան պայմանավորված է միայն ու միայն Սովետական Միության ժողովուրդների եղբայրակցության բնտանիքի գոյությամբ և այդ հզոր ընտանիքից դուրս նա խաղաղ ապրել ու բարգավաճել չի կարող երբեք: Հայ ժողովրդի բախտը սերտորեն միահյուսված է Սովետական Միության ժողովուրդների բախտի հետ և ով մինչև այսօր մեկ ընդմիշտ

չի բռնել այս ակնհայտ ճշմարտությունը, նշանակում է նա դեռ ոչինչ չի հասկացել պատմության դասերից:

Այսօր, երբ սովետական ժողովուրդները, որոնց թվում և հայ ժողովուրդը, խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով են զբաղված, համաշխարհային մի նոր պատերազմի անգլո-ամերիկյան հրձիգները դավեր են լարում մեր անծայրածիր հայրենիքի դեմ ու տենդագին պատերազմի նախապատրաստվում: Այս իրադրությամբ ոգևորված, վերջերս հայկական մի քանի գաղութներում նկատելի աշխուժություն են սկսել ցուցաբերել հակահայաստանյան տարրերը, որոնք նպատակադրել են գաղութահայ եկեղեցին ևս ներգրավել իրենց հայրենադավ գործունեության շրջանակի մեջ: Մենք լիովին վստահ ու համոզված ենք, որ գաղութահայ հայրենասեր հոգևորականությունը, որը սրբազան պարտականություն ունի հանուն Հայ Հայրենիքի և Հայ Եկեղեցու անողոք պայքար ծավալել հայրենիքի ու եկեղեցու թշնամիների դեմ, արժանի հակահարված կտա հայրենադավների այս նենգամիտ փորձերին և գաղութահայ հայաստանյան կազմակերպությունների հետ ձեռք-ձեռքի տված անդուլ կերպով կաշկանդի Հայ ժողովրդի, Հայ Հայրենիքի ու Հայ Եկեղեցու թշնամիներին քողազերծ անել, զրկել նրանց իրենց ոտքի տակի հողից, չեզոքացնել ու մեկուսացնել: Ամենադույզն կասկած անգամ չունենք, որ գաղութահայ հոգևորականությունը, անվերապահորեն բոլորվելով ծաղկուն Սովետական Հայրենիքի ու Հայաստանյայց միասնական եկեղեցու շուրջը, իր սիրագորով հայացքը միշտ հառած կպահի հայրենի լեռնաշխարհում մեծ վերելք ապրող Հայրենիքին և հայ հավատի հինավուրց օջախ, նոյան տապանակիր սրբազան լեռան ստորոտում վեր խոյացած լուսավորչահիմն Էջմիածնին:

Գաղութահայ հայրենասեր հոգևորականությունը, թեկուզ և հեռավոր ու օտար երկնակամարի տակ, պետք է ապրի, շնչի և իր հավատացյալ հոտին ապրեցնի հարազատ հայրենիքով: Նա իր մտքի հորիզոնի վրա միշտ վեր խոյացած պիտի տեսնի հայրենի երկնահաս լեռների լուսաշող կատարները և հնադարյան Ս. Էջմիածնի ճառագայթազարդ գմբեթները: Նա ջանք չպետք է խնայի կենսագործելու համար Հայ Եկեղեցու որդեգրած նվիրական նշանաբանը— ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ:

# ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻ 31-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

## ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ԵՐԵՎԱՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ 31-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

*Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի դահլիճում հավաքվել էին ձեռնարկությունների այն ներկայացուցիչները, որոնք ի պատիվ տոնի, ժամկետից առաջ են կատարել իրենց տարեկան պլանները, ռեսպուբլիկայի խոշորագույն օբյեկտների կառուցողները, արտադրության անվանի նորարարները, ինտելիգենցիայի ներկայացուցիչները, Սովետական Բանակի սպաները, Հայաստանի մայրաքաղաքի պարտիական-սովետական և պրոֆմիութենական ակտիվը։*

*Երեկոյան ժամը 7-ին Նախագահող Ե. Վարդանյանը բացված է հայտարարում Երևանի Քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը։ Հանդիսականները խանդավառ օվացիայով ու ընդհանուր հրճվանքով ընտրում են պատվավոր նախագահություն՝ ժողովուրդների մեծ առաջնորդ Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ։*

*Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի 31-րդ տարեդարձի մասին զեկուցում է Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար Կ. Բարիգյանը։*

*Զեկուցողը խոսում է այն փառապանծ հաղթական ուղու մասին, որն անցել է սովետական ժողովուրդը կոմունիստական պարտիայի և ռեվոլյուցիայի հանճարեղ առաջնորդներ Լենինի ու Ստալինի ղեկավարությամբ։*

*Սովետական Սոցիալիստական եղբայրական ռեսպուբլիկաների ազատ համագործակցությամբ, անճանաչելիորեն կերպարանափոխվել է մեծ Ստալինի հանճարով վերածնված, ավերակներից ու մոխրակույտերից հառնած բազմաչարչար Հայաստանը։*

*Ապա զեկուցողը պատմում է այն փառապանծ աշխատանքային հաղթանակների մասին, որոնցով դիմավորում է ռեսպուբլիկան Մեծ Հոկտեմբերի 31-րդ տարեդարձը։*

*Զեկուցողն իր խոսքը ավարտում է կեցցե բացականչելով ի պատիվ իմաստուն բոլշևիկյան պարտիայի, ի պատիվ սովետական ժողովուրդների բոլոր հաղթանակների կազմակերպիչ և ոգեշնչող մեծ Ստալինի։*

*Այդ խոսքերին դահլիճը պատասխանում է բուռն, երկար ժամանակ չլռող ծափահարություններով, որոնք փոխարկվում են օվացիայի։*

*Սովետական Միության Պետական Հիմնի հոյակապ հնչյունների տակ հանդիսավոր նիստը հայտարարվում է փակված։*

*Նիստից հետո տեղի ունեցավ մեծ համերգ ռեսպուբլիկայի արտիստական լավագույն ուժերի մասնակցությամբ։*

## ԶՈՐԱՀԱՆԴԵՍԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՇՔԵՐԹԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Պայծառ արևով է ողողված Լենինի անվան հսկայական հրապարակը, կարմիր դրոշակները ծածանվում են Հայաստանի տոնականորեն զուգված մայրաքաղաքի տների և բազմաթիվ նորակառույցների վրա։*

*Արդեն վաղ առավոտյան փողոցներում հնչեց երաժշտությունը։ Հազարավոր մարդիկ տոնական զգեստներով, ծաղկեփնջերով շտապում էին դեպի իրենց ձեռնարկությունները ու հիմնարկությունները, որպեսզի շարասյուներ կազմած մասնակցեն աշխատավորների շքերթին ի պատիվ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի 31-րդ տարեդարձի։*

Կուլտուրայի տան ճակատին փակցված են ռևոլուցիայի հանճարեղ առաջնորդներ Լենինի և Ստալինի ամբողջ հասակով հսկայական պորտրեթները։ Լոզունգներով և դրոշներով է զարդարված ամբողջ հրապարակը։

Այդտեղ ճիշտ ուղղանկյուն կազմած շարք են կանգնել Երևանի կայազորի զորամասերը։

Կառավարական տան աշտարակի ժամացույցը խփում է տասնմեկը։ Ամբիոն են բարձրանում Սովետական Հայաստանի բոլշևիկների պարտիայի և կառավարության ղեկավարները, Հայկական ՍՍՌ մինիստրները, Գերագույն Սովետի դեպուտատները, սոցիալիստական կուլտուրայի ականավոր գործիչները, Սովետական Բանակի ներկայացուցիչները։

Հայաստանի բոլշևիկների պարտիայի ու կառավարության անունից զորքերին և աշխատավորներին շնորհավորական ճառով դիմում է ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Մ. Պապյանը։

Հզոր հազարաձայն ուռռան որոտում է հրապարակի վրա։ Հանդիսավոր կերպով հնչում է Պետական Հիմնը։

Սկսվում է զորամասերի զորահանդեսը, որը ցույց տվեց մեր խաղաղ ստեղծարար աշխատանքի փառապանծ պաշտպանների հզորությունն ու մարզվածությունը։

Աշխատավորների ցույցը սկսեցին դպրոցականներն ու պիոներները։

— Անդուլ կերպով տիրապետեցեք գիտելիքներին, պատրաստվեցեք դառնալու Լենին-Ստալինի գործի կայուն մարտիկներ,— հնչում է ամբիոնից։

Այդ կոչին համերաշխ, միահամուռ ուռռայով են պատասխանում սովետական երեխաները։ Նրանց շարասյուներում ծածանվում են դրոշներ, պլակատներ՝ «Շնորհակալություն մեծ Ստալինին երջանիկ մանկության համար» մակագրությամբ։

Նվագախմբի հանդիսավոր հնչյունների տակ հրապարակ է մտնում Երևանի արդյունաբերական կենտրոն Ստալինյան ռայոնի աշխատավորության շարասյունը։ Կարմիր դրոշների ծովի մեջ բարձրանում է Ստալինի կոթողը։ Երկինք են թռչում հարյուրավոր գույնզգույն օդապարիկներ։

Բազմաթիվ գծագրեր, պլակատներ և պաննոներ ակնառու կերպով ցույց են տալիս Սովետական Հայաստանի մայրաքաղաքի արդյունաբերության նվաճումները։ Նախահոկտեմբերյան սոցիալիստական մրցության ընթացքում ժամկետից առաջ են կատարել տարեկան ծրագիրը Երևանի մի քանի տասնյակ ձեռնարկություններ։

Ցուցարարների շարասյուներում ողջույն են վերջերս շարք մտած նոր ձեռնարկությունների կոլեկտիվները։ Նրանք ամսեամիս ավելացնում են այնպիսի իրերի արտադրությունը, որոնք առաջ երբեք չեն պատրաստվել Հայաստանում՝ էլեկտրակաբելների, գեներատորների, կոմպրեսորների, փոքր հիդրոտուրբինների և մի քանի տասնյակ այլ տեսակ իրերի արտադրությունը։

Դեպի մեծ Ստալինին են հառած բոլոր ցուցարարների խոհերն ու զգացմունքները։ Ի պատիվ նրա, ողջույններ են հնչում արդյունաբերության անձնվեր աշխատավորների շարքերից, որոնք անցնում են հրապարակով կարմիր դրոշներ ձեռքներին.

— Հարազատ Ստալինին ուռռա։

— Փառք ռուս մեծ ժողովրդին։

Հայրենասիրական վսեմ խոյանքը, բոցավառ սերը դեպի իրենց սոցիալիստական հայրենիքը մարմնացել են ստախանովականների, արտադրության նորարարների փառապանծ գործերում։ Նրանցից մոտ 200 մարդ մինչև մեծ տոնի օրը արդեն կատարել են իրենց հնգամյա պլանը։

Անընդհատ հոսանքով առաջ են շարժվում շարասյուները։ Աշխատավորների շարքերում քիչ չեն սովետական նոր քաղաքացիներ, որոնք հայրենիք են վերադարձել երկարատև թափառումներից հետո, որոնք կապիտալիստական երկրներում ճաշակել են իրավազրկությունը և աղքատությունը։ Նրանք խանդավառությամբ մտել են սոցիալիստական շինարարության ասպարեզը։

Սպանդարյան ռայոնի աշխատավորների շարասյունը հարյուրավոր դրոշների միջով տանում է Լենինի և Ստալինի մեծ բարելեֆները, որոնք ամրացված են ծաղիկներով զարդարված պատվանդանի վրա։ Առջևից գնում են օպերային արվեստի աշխատողները, որոնք քիչ բան չեն արել կլասիկ ժառանգությունը մասսայականացնելու և հայ ազգային երաժշտությունը զարգացնելու համար։ Այդ ռայոնի բազմամարդ շարասյուներում քայլում են կարողները, կահույքագործները, կառուցողները, գինեգործները, որոնք նշել են տոնը աշխատանքային նոր հաջողություններով։

Մոլոտովյան ռայոնի շարասյան առջևից գնում են Երևանի տրամվայի աշխատողները, որոնք 1948 թվի պլանը կատարել են բոլոր ցուցանիշներով և ավարտել են տրամվայի տնտեսության նախապատրաստումը ձմեռային պայմաններում աշխատելու համար։ Նրանց ետևից անցնում է Սուլիտի գործարանի կոլեկտիվը, որն իր տարեկան

պլանը կատարել է 135 տոկոսով. Երևանի սառցատան կոլեկտիվը, որը պետության տվել է մեկ միլիոն ռուբլի արտապլանային կուտակում։

Անցնում է ռեսպուբլիկայի առաջնեկ թատրոնի կոլեկտիվը, որը կրում է Հայ մեծ դրամատուրգ Սունդուկյանի անունը, իսկ նրա կողքին քայլում են Սովետական Հայաստանի գրողները։

Ռեսպուբլիկայի գիտական մտքի շտաբը Հայաստանի Գիտությունների Ակադեմիան, որը շուտով նշում է իր գոյության հնգամյա տարեդարձը, գլխավորում է Կիրովյան ռայոնի շարասյունը։ Գիտնականների բարեբար օգնությունը ավելի ու ավելի է զգում մեր ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությունը։ Գիտական նվաճումները անդուլ կերպով արմատավորվում են արդյունաբերական արտադրության և գյուղատնտեսության մեջ։ Հայ գիտնականների նոր հետազոտությունները, հայտնագործությունները ու գյուտերը տարեց-տարի հարստացնում են մեր ռեսպուբլիկան։

Ուրախ երգերով, հնչուն ծիծաղով է թընդում լայն հրապարակը։ Անվերջ հոսանքով անցնում են բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները։

Աշխատավորների տոնական երթն ավարտեցին Երևանի մարզիկները։ Հազարավոր պատանիներ ու աղջիկներ սեղմ, ներդաշնակ շարքերով, գույնզգույն մետաքսե դրոշակներով ցույց տվին մեր հերոսական երիտասարդության ուժն ու առողջությունը։

Սոցիալիստական շինարարության վեհ պաթոս, անհուն սեր դեպի մեծ Ստալինը, կոմունիստական հասարակության կառուցմանը իր բոլոր ուժերը նվիրելու պատրաստակամություն ցույց տվեց Սովետական Հայաստանի աշխատավորության տոնական երթը։

Այդ օրը Լենինի անվան հրապարակով անցավ ավելի քան 120 հազար աշխատավոր։

Երեկոյան տեղի ունեցավ սալյուտ՝ հրավառությամբ։ Ժողովրդական զբոսանքները տևեցին մինչև ուշ գիշեր։

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 28-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՈՎԵՏԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 28-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

*Նոյեմբերի 29-ին Սպենդիարովի անվան օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցավ Երևանի Քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը՝ պարտիական, հասարակական կազմակերպությունների և Սովետական Բանակի ներկայացուցիչների հետ համատեղ, նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 28-րդ տարեդարձին։*

*Թատրոնի դահլիճում հավաքվել էին Սովետական Հայաստանի մայրաքաղաքի անվանի մարդիկ, տարեդարձի պատվին իրենց տարեկան պլանները ժամկետից շուտ կատարած գործարանների ու ֆաբրիկաների ներկայացուցիչներ, հետպատերազմյան ստալինյան հնգամյակի խոշորագույն նորակառույցների շինարարներ, արտադրության փառաբանված նորարարներ, գիտության, կուլտուրայի, արվեստի գործիչներ, Սովետական Բանակի սպաներ, պարտիական, սովետական և պրոֆմիութենական ակտիվը։*

*Ժամը 6 անց 30 րոպեին նախագահող Ե. Վարդանյանը հանդիսավոր նիստը հայտարարում է բացված։ Դահլիճը բուռն օվացիայով պատվավոր նախագահություն է ընտրում մեծ Ստալինի գլխավորությամբ։*

*Հայաստանում սովետական իշխանության հաստատման 28-րդ տարեդարձի առթիվ զեկուցման համար խոսքը տրվում է Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար Զ. Գրիգորյանին։*

*Զեկուցողը մանրամասն նկարագրում է 28 տարվա ընթացքում հայ ժողովրդի անցած հաղթական պանծալի ուղին։ Հայաստանի աշխատավորները, բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ, իրենց ավագ եղբոր՝ ռուս մեծ ժողովրդի և հերոսական Կարմիր Բանակի օգնությամբ, տապալեցին կոնտրռևոլյուցիոն դաշնակների՝ հայ ժողովրդի ոխերիմ թշնամիների ատելի տիրապետությունը և հաստատեցին սովետական իշխանություն։ Լենինյան-ստալինյան իմաստուն ազգային քաղաքականությունը հնարավորություն ապահովեց Հայաստանի էկոնոմիկայի, գիտության, կուլտուրայի բուռն ծաղկման համար։*

*Հայկական ռեսպուբլիկայի աշխատավորները սովետական իշխանության հաստատման 28-րդ տարեդարձի օրը հետադարձ հայացք ձգելով անցած ուղուն, օրինական հպարտության և գոհունակության զգացմունքով նշում են Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վիթխարի նվաճումները, որոնք ձեռք են բերվել Լենինյան-Ստալինյան իմաստուն պարտիայի ղեկավարությամբ, շնորհիվ մեծ Ստալինի անձնական հոգատարության։*

*Կանգ առնելով ռեսպուբլիկայի վերջին տարիների հաջողությունների վրա, զեկուցողն ասում է.*

*— Հետպատերազմյան հնգամյակի առաջին երկու տարիներին՝ 1946 և 1947 թվերին ռեսպուբլիկայի արդյունաբերությունը պլանը կատարեց 102 տոկոսով։ 1947 թվին համախառն արտադրանքի աճը նախապատերազմյան 1940 թվի համեմատությամբ կազմեց 36,8 տոկոս։ 1948 թվի տասն ամիսների պլանը կատարված է 105,2 տոկոսով. 1947 թվի համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ տալով 21,7 տոկոսով ավելի շատ արտադրանք։*

*Երևանի և ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը պանծալի տարեդարձը դիմավորեց տարեկան ծրագիրը կատարած ու գերակատարած։ Այդ*

ձեռնարկությունների թվին են պատկանում Կիրովի անվան գործարանը, որը տարեկան պլանը կատարեց ժամկետից շուտ և տվեց 5 միլիոն 100 հազար ռուբլու գերպլանային կուտակում, Կաբելի, Մուլիտի գործարանները, Շինանյութերի արդյունաբերության մինիստրության օբեկտների ճնշող մեծամասնությունը, Հայպղինձ սիստեմի ձեռնարկությունները։

Ռեսպուբլիկայում արագորեն զարգանում են քիմիական, մետալուրգիական արդյունաբերությունը և մեքենաշինությունը։ Հայաստանի արդյունաբերությունը երկրին տալիս է արտադրանքի հարյուրավոր տեսակներ, այդ թվում դազգահներ և էլեկտրաչափիչ ճշգրիտ գործիքներ, ավտոդողեր ու կաբել, կոմպրեսորներ, տրանսֆորմատորներ և փոքր հիդրոտուրբիններ, ժամացույց ու հախճապակի։

Հիանալի են Հայաստանի կոլխոզային գյուղացիության նվաճումները։ Զգալի չափով ընդարձակվել են ցանքատարածությունները։ Տեխնիկական կուլտուրաների ցանքատարածության հնգամյա պլանով նախատեսված ընդարձակումը իրագործված է երեք տարում։ Սովետական ագրոտեխնիկական գիտության առաջավոր մեթոդների լայն կիրառման շնորհիվ տարեց-տարի ավելանում է կոլխոզային դաշտերի բերքատվությունը։ Լավ արդյունքներ են ձեռք բերվել նաև անասնապահության զարգացման ասպարեզում։ Ռեսպուբլիկայում հսկայական թափ է ստացել իռիգացիոն շինարարությունը։ Կատարված խոշոր միջոցառումների հետևանքով կոլխոզային գյուղը ստացել է տասնյակ հազար հեկտար նորանոր ցանքատարածություններ։ Մեծ աշխատանքներ են կատարվել գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման գծով, 1950 թվին ռեսպուբլիկայի բոլոր կոլխոզները կէլեկտրիֆիկացվեն։

Կոլխոզնիկները և կոլխոզնիկուհիները ազնվորեն և արդյունավետ կերպով աշխատեցին այս գյուղատնտեսական տարում։ Ժամկետից շուտ կատարված են հացահատիկի, խաղողի, կարտոֆիլի, մսի, կաթի և այլ մթերքների հանձնման պետական պլանները։

Հայաստանը դարձել է համատարած գրագիտության երկիր։ Եթե 1918 թվին դպրոցներում սովորում էր 18 հազար երեխա, ապա այժմ 1193 տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում սովորում են 300 հազար աշակերտ։

Նախառևոլյուցիոն Հայաստանը բարձրագույն ուսումնական հաստատություններ չուներ։ Այժմ ռեսպուբլիկայում կա 14 ստացիոնար և 3 հեռակա բարձրագույն ուսհիմնարկություն, որոնք ամեն տարի հարյուրավոր մասնագետներ են տալիս Սովետական Հայաստանի հարաճուն ժողովրդական տնտեսությանը։

Հսկայական թափ ու ծավալ է ստացել գիտա-հետազոտական աշխատանքը։ Հայրենական պատերազմի տարիներին ստեղծված Գիտությունների Ակադեմիան միացնում է 30 գիտական ինստիտուտ և հաստատություն։ Հայկական Ակադեմիան, որի կազմակերպման հնգամյակը լրացավ այսօր, այս տարիների ընթացքում լուրջ հաջողություններ է ձեռք բերել մի շարք կարևոր գիտական պրոբլեմների մշակման գործում։ Հայաստանի մի շարք գիտնականներ իրենց աչքի ընկնող աշխատությունների ու հայտնագործությունների համար արժանացել են Ստալինյան մրցանակի։

Հետագա վերելքի տարիներ է ապրել սովետահայ գրականությունը, սովետական արվեստը։ Հայ գրողները իրենց երկերում շարունակում են զարգացնել սոցիալիստական ռեալիզմի մեթոդը։ Նրանց երկերը տոգորված են սովետական հայրենասիրության գաղափարով։ Պայքարելով պատմական թեմատիկայում միակողմանիորեն տարվելու, բուրժուական նացիոնալիզմի ռեցիդիվների դեմ, Սովետական Հայաստանի գրողները ստեղծում են մեր օրերի հերոսականությունը արտացոլող բարձր գեղարվեստական, գաղափարապես հագեցված երկեր։

Վերջին տարիներս Սովետական Հայաստանի նշանակալից նվաճումներից մեկը արտասահմանյան հայերի մասսայական հայրենադարձությունն է։ Արտասահմանից վերադարձած հայերը լայնորեն օգտվում են Ստալինյան Կոնստիտուցիայում գրի առնված իրավունքներից։

Ավարտելով իր խոսքը, զեկուցողն ասում է.

— Վերջերս տեղի ունեցած Հայաստանի կոմպարտիայի 14-րդ համագումարը մշակեց ռեսպուբլիկայի հետագա զարգացման կոնկրետ ծրագիրը։ Մեր խնդիրն է ռեսպուբլիկայի աշխատավորներին մոբիլիզացնել ավելի արագ կերպով կատարելու Հայաստանի բոլշևիկների համագումարի որոշումները։

Զեկուցումն ավարտելուց Զ. Գրիգորյանը կեցցե է բացականչում ի պատիվ բոլշևիկյան իմաստուն պարտիայի, ի պատիվ հայ ժողովրդի փրկարար, սովետական ժողովրդի բոլոր հաղթանակների հանճարեղ կազմակերպիչ և ոգեշնչող մեծ Ստալինի։ Զեկուցողի վերջին խոսքերը ծածկվում են բուռն, եր-

կար ժամանակ չդադարող ծափահարություններով, որոնք վերածվում են օվացիայի։ Հնչում են ողջույնի բացականչություններ ի պատիվ մեծ Ստալինի— հայ ժողովրդի լավագույն բարեկամի։

Հանդիսավոր նիստի մասնակիցները հրսկայական խանդավառությամբ ողջույն են ընդունում ուղղված՝ սիրելի առաջնորդ, պարտիայի ու սովետական ժողովրդի հայր և ուսուցիչ մեծ Ստալինին։ Բոլորը ոտքի են կանգնում։ Նորից թնդում են բուռն ծափահարությունները։ Դահլիճում հանդիսավոր կերպով հնչում է Հայկական ՍՍՌ Պետական Հիմնը։

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 28-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

ՍՈՖԻԱ, 30 նոյեմբերի (ՏԱՍՍ).— Պլովդիվի, Վառնայի և բուլղարական այլ քաղաքների հայ աշխատավորները Հայկական ՍՍՌ կազմվելու 28-րդ տարեդարձը նշեցին հանդիսավոր նիստերով։ Տեղական հայ կազմակերպությունների ներկայացուցիչները հանդես եկան զեկուցումներով՝ սոցիալիզմի կառուցման ասպարեզում Սովետական Հայաստանի ձեռք բերած հաջողությունների մասին։

Հանդիսավոր նիստերի մասնակիցները ողջույնի հեռագրեր ուղարկեցին Գեներալիսիմուս Ի. Վ. Ստալինին և Բուլղարիայի պրեմիեր-մինիստր Գեորգի Դիմիտրովին։

***

ԿԱՀԻՐԵ, 1 դեկտեմբերի (ՏԱՍՍ).— Նոյեմբերի 29-ի երեկոյան, Կահիրեում, Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 28-րդ տարեդարձի առթիվ տեղի ունեցան հանդիսավոր ժողովներ, որոնք կազմակերպել էին Եգիպտոսի հայ գաղութի ակումբները։ Ժողովներին մասնակցեցին բազմաթիվ հայեր։ Հայ հայրենասերները հանդես էին գալիս ճառերով, շեշտելով այն հսկայական հաջողությունները, որոնք ձեռք են բերվել Սովետական Հայաստանի քաղաքական, տնտեսական և կուլտուրական զարգացման ասպարեզում՝ նրա գոյության 28 տարվա ընթացքում ընկեր Ստալինի ու սովետական կառավարության ղեկավարությամբ և Սովետական Միության ժողովուրդների օժանդակությամբ ու օգնությամբ։

Ժողովներից հետո տեղի ունեցան ինքնագործունեության համերգներ։ Համերգների ժամանակ կատարված սովետական երգերը, արտասանված ոտանավորները և ՍՍՌՄ ժողովուրդների պարերը հսկայական հաջողություն ունեցան։

Նոյեմբերի 29-ին Կահիրեի և Ալեքսանդրիայի հայ եկեղեցիներում տեղի ունեցան Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 28-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր ժամերգություններ։ Եկեղեցական երգեցիկ խմբերը կատարեցին «Հայրենիք» սովետական քայլերգը։

Նոյեմբերի 29-ին եգիպտական ոստիկանությունը ձերբակալեց մի խումբ հայ երիտասարդների, այն բանի համար, որ նրանք փորձել են հարկադրել Կահիրեի հայկական մի դպրոցի ռեակցիոն դիրեկտորին՝ տոնի օրը փակել դպրոցը։

***

ՆՅՈՒ-ՅՈՐՔ, 1 դեկտեմբերի (ՏԱՍՍ).— «Արմենիըն տրիբյուն» թերթը, նշելով Սովետական Հայաստանը կազմվելու 28-րդ տարեդարձը, գրում է, որ Սովետական Հայաստանը վերականգնեց հայերի դերն ամբողջ աշխարհի քաղաքական և կուլտուրական կյանքում։ Թերթը գրում է. «Հայաստանի ժողովուրդն ամբողջ աշխարհին ցույց տվեց իր հայրենասիրությունը և նվիրվածությունը ազատությանն ու դեմոկրատիային և իր շարքերից հանդես բերեց ականավոր գործիչներ պետական կառավարման, արվեստի, գիտության, կրթության ու իր երկրի վերականգնման ասպարեզում, որով պարծենում ենք մենք բոլորս»։

«Արմենիըն տրիբյուն» թերթը հաղորդում է, որ «Ամերիկայում Հայ ազգային խորհուրդի» Նյու-Յորքի բաժանմունքը քսան քաղաքում, այդ թվում Նյու-Յորքում, Դետրոյտում, Լոս-Անջելոսում, Սան-Ֆրանցիսկոյում միտինգներ է կազմակերպում Սովետական Հայաստանը կազմվելու 28-րդ տարեդարձի առթիվ։

***

ՓԱՐԻԶ, 8 դեկտեմբերի (ՏԱՍՍ).— Օրերս Փարիզում տեղի ունեցավ 4000 հայերի հանդիսավոր ժողով՝ նվիրված Հայկական ՍՍՌ-ի 28-րդ տարեդարձին։

Հայկական ՍՍՌ-ի մասին զեկուցումով հանդես եկավ «Հայկական ազգային ճակատ»-ի նախագահ Մարմարյանը։

Խ. ՍՆՃՐԱՆ

(Եգիպտոսից հայրենիք վերադարձած վերջին քարավանով)

# ՎԵՐՀԻՇՈՒՄ

Ա՛խ, ինչքան ուժգին կարոտել էի քեզ,
Զքնաղ Երևան,
Մանավանդ էսպես երբ սարերդ հագած
Սիպտակ պատմուճան,
Դու բեհեզներով կարգին պճնված,
Որպես նորահարս,
Կանգնած նայելիս, այնքա՜ն նազելի
Սարերին անհաս:

Հիշո՞ւմ ես, ինչպես էն սև օրերին,
Ծիծաղկոտ դեմքիդ
Շղարշ մ՚ ունեիր, մի շղարշ սուգի.
Լացը աչքերիդ,
Մայր էիր դառել, անհույս, անպաշտպան
Որբերին բյուրավոր,
Սիրտդ բզկտված ցավեն անսահման,
Արծիվ վիրավոր:

Թոռմել էր ժպիտը վառ այտերիդ,
Ոնց տերև աշնան,
Եվ շրթներդ դալուկ, մոր մ՚ զգայուն
Գութովն անսահման,
Բառ էին փնտռում, մի բառ վսեմ, խոսուն,
Որդոցդ սփոփման.
Բայց չէին գտնում, շրթներդ դողդոջուն,
Խոսքը մայրական:

Անցել են էսօր դառն, արցունքոտ
Օրերդ էն վշտաշատ,
Կորել են անհե՛տ, որ կարծես երբե՛ք
Չե՛ն եղել, չկան,
Ու նրա փոխան ծաղկունք անքառամ,
Ճակատդ են պճնել
Պսակով փառաց, իսկ անթիվ գուսանք
Գովքդ են հյուսել:

Արցունքներդ հիմի կյանք են ստեղծել.
Ոնց արևն անմար՝
Զանգվի ջրերը լույսի են փոխվել,
Որ մութ ու խավար
Անկյուններդ խոր, լինեն լուսաշող,
Սրտիդ պես պայծառ:
Իսկ դո՛ւ, նոր աշխարհ, երկինքդ չնքշող
Աստղերդ անհամար:

Հիմա ես դրել, սոցիալիստական
Կարգերով ամուր,
Կանգնել ես տեսքով վեհ ու մարտական,
Անընկճելի, կուռ,
Նայվածքդ ուղիղ դեպի ապագան,
Քայլերդ վստա՛հ,
Դեպի հաղթանակ, կամքով վճռական,
Քայլում անվարան:

Դարձել ես հիմի անգին մի գոհար,
Հեքիաթային զարդ,
Ճանաչներով լի; գույներով հազար,
Մանիակ գեղազարդ:
Ապրին քեզ կերտող ձեռները շինարար
Մեր ցեղի հանճար,
Որ քեզ պարգևեց օրը փրկարար:
Ազատ, կենսուրախ, քեզ կյանք անսահման,
Իմ լույս Երևան
Նույնպես հավիտյան:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

# ՄԱՅՐ ԱԹՈՌ

*Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 31-րդ տարեդարձի օրը, նոյեմբերի 7-ին Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց։ Պատարագիչն էր Կոնստանդին արեղա Թաղանյանը։ Հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Սահակ ծայրագույն վարդապետը։*

*Տաճարում Ս. Պատարագին ներկա էր Տ. Տ. Գևորգ Զ. Վեհափառ Հայրապետը։*

*Ս. Պատարագից հետո Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ մաղթանք կատարվեց Սովետական իշխանության հարատևության համար։*

*Ս. Պատարագին ու մաղթանքին ներկա էր ժողովրդի հոծ բազմություն։*

* * *

*Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 31-րդ տարեդարձի առթիվ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ը ողջույնի, շնորհավորանքի ու օրհնության հեռագիր հղեց ՍՍՌ Միության կառավարության անունով։*

* * *

*Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձի օրը, նոյեմբերի 29-ին Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց։ Պատարագում էր Տ. Նիկողայոս ավագ քահանա Բաղեյանը։ Հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Սուրեն Եպիսկոպոսը։*

*Մայր Տաճարում Ս. Պատարագին ներկա էր Տ. Տ. Գևորգ Զ Վեհափառ Հայրապետը։*

*Ս. Պատարագից հետո Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ մաղթանք կատարվեց Սովետական Հայաստանի ծաղկման ու բարգավաճման համար։*

*Ս. Պատարագին ու մաղթանքին ներկա էր ժողովրդի հոծ բազմություն։*

* * *

*Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձի առթիվ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ը ողջույնի, շնորհավորանքի ու օրհնության հեռագիր հղեց Սովետական Հայաստանի կառավարության անունով։*

*Հեռագրում ասված է.—*

*«Հայ հավատացյալ ժողովրդի, հոգևոր դասի և Մեր անունից ի սրտե շնորհավորում ենք Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 28-ամյակը։*

*Շնորհիվ ազատարար Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի, Ռուս մեծ ու մարդասեր ժողովրդի անձնվեր օգնությամբ, երբեմնի նահատակ Հայ Ժողովուրդը ավերակներից վերակենդանացավ և իր նվիրական ու հարազատ պետության մեջ ամենակարճ ժամանակամիջոցում անասելի ծաղկման ու զարգացման հասցրեց թե՛ իր ժողովրդական տնտեսությունը և թե՛ ազգային մշակույթը։*

*Սովետական մեծ Միության բարեխնամ կառավարության անմիջական օգնությամբ սկիզբը դրվեց Հայ Սփյուռքի փրկարար Հայրենադարձի, որի շնորհիվ մոտ հիսուն հազար հարազատներ արդեն ժամանել են Հայրենի երկիրը և սովետահայ բնիկ եղբայրների հետ ձեռք ձեռքի տված կոփում են երջանիկ կյանքի հիմքերը։*

*Թող հզոր ու անսասան մնա Սովետական Մեծ Միությունը*

Թող էլ ավելի բարգավաճի մեր Սովետական Մայր Հայաստանը
Օրհնում ենք մեր հարազատ հայրենի Սովետական կառավարությունը և արեշատություն մաղթում նրա իմաստուն ղեկավարներին։

***

Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձի օրը, նոյեմբերի 29-ին Հոգևոր ճեմարանի դահլիճում հանդիսավոր նիստ տեղի ունեցավ։

Հանդիսավոր նիստը բացվեց ՀՍՍՌ-ի Պետական Հիմնով. ապա, ճեմարանի տեսուչ Մ. Մինասյանի բացման խոսքից հետո, Սովետական Հայաստանի 28 տարվա նվաճումների մասին ընդարձակ զեկուցում կարդաց Ա. Զաքարյանը։

Գեղարվեստական բաժնում ելույթ ունեցան ճեմարանի երգեցիկ խումբը և մենակատար Հակոբ Խանչյանը (Բ դասարանի սան)։ Ճեմարանի Գ դասարանի սաներ Սիրունյան Լևոնը և Գևորգյան Հարությունը հանդես եկան իրենց ինքնուրույն բանաստեղծությունների արտասանությամբ։

***

Սեպտեմբերի 30-ին Ս. Էջմիածնում ստացվեց Երուսաղեմի Պատրիարքի հեռագիրը հղված Բեյրութից։ Այս հեռագրով Ամենապատիվ Պատրիարք Տ. Կյուրեղ Բ-ը իրազեկ դարձնելով ստեղծված ծանր կացության մասին, խնդրում է Վեհափառ Հայրապետին հրահանգել Թեմական Առաջնորդներին, որպեսզի շտապ օգնություն կազմակերպեն պաղեստինահայ աղետյալներին փրկելու համար։

***

Վեհափառ Հայրապետը հոկտեմբերի 3-ին պատասխան-հեռագիր հղեց Երուսաղեմի Պատրիարք Ամենապատիվ Տ. Կյուրեղ Բ-ին։ Այդ հեռագրում ասված է.

«Ստացանք Ձեր սրտաճմլիկ հեռագիրը. հոգևոր զավակներիս և Պատրիարքարանիդ վիճակված ողբերգությունը մեզ մեծ կսկիծ պատճառեց. առավելագույնը կանենք սփոփելու աղետը։ Կհեռագրենք Կիլիկիո Կաթողիկոսին, Առաջնորդներին, հաստատությանց և ազգայնոց՝ շտապ օգնության կոչով...»։

***

Հոկտեմբերի 4-ին Վեհափառ Հայրապետը մի շարք հեռագրեր հղեց Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ին և մի շարք թեմերի Թեմական Առաջնորդներին, կոչ անելով շտապ օգնություն կազմակերպել՝ պաղեստինահայ աղետյալներին ծանր կացությունից փրկելու համար։

***

Նոյեմբերի 9-ին Մայր Աթոռում ստացվել է Ռումինահայ Թեմի Առաջնորդ Վազգեն ծայրագույն վարդապետի 12 հոկտեմբեր 1948 թվակիր գրությունը, որով նա Վեհափառ Հայրապետին իրազեկ է դարձնում մի շարք խնդիրների մասին։ Այս գրությունից բերում ենք մի փոքրիկ հատված, որը ցայտուն կերպով դրսևորում է Վազգեն ծայրագույն վարդապետի տածած սերը Մայր Աթոռի ու Հայրենիքի հանդեպ.—

Վեհափառ Տե՛ր,

Մխիթարիչ համոզումն ունեմ թե նվաստիս սույն տողերը Ձերդ Վեհափառությունը պիտի գտնեն կատարելապես առողջ ու լավագույն տրամադրությանց մեջ մեր Ս. Եկեղեցվո երջանկահիշատակ Լուսավորիչներուն Աստուածակառույց Գահին վրա։

Մեր բոլորին, Ձերդ Վեհափառության հավատարիմ զավակներուն, ջերմագին աղոթքն ու խնդրվածքը երբեք պիտի չդադրին, այլ պիտի դառնան ավելի և ավելի համարձակ ու սրտագին, որպեսզի Ամենայն Հայոց Հայրապետին նվիրյալ կյանքին ոսկի թելը տակավին շատ ու շատ տարիներ երկարի մեր Ս. Եկեղեցվո և մեր հարազատ Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի պայծառության ու երջանկության համար։

Ինչպես հայտնած եմ արդեն Ձերդ Վեհափառության 21 հուլիսի 1948 թվակիր գրությամբս, հայրենիքեն վերադարձիս ես ինձ համար սրբազան պարտականություն համարեցի մեր ժողովուրդին խոսել ու քարոզել Մայր Աթոռի և մեր Մայր Երկրի՝ Սովետական Հայաստանի վերաշինության ու վերելքի մասին։ Մինչև օրս այցելեցի մեր թեմի գրեթե բոլոր կարևոր համայնքները, ամեն տեղ գե-

կուցելով և քաջալերելով։ Այդ առիթներով բոլոր հայերու հոգիներում մեջ կտեսնեի թե ինչպես կաճի ոգևորությունն ու սերը դեպի Ս. Էջմիածինն և մանավանդ դեպի մեր պապերուն այն սուրբ հողը, որ այսօր իր հրաշալի վերածննդյան օրերը կապրի։ Տպավորություններես մաս մը գրեցի տեղվույս «Հայաստանեան Ճակատ» թերթին մեջ, ի մասին Մայր Աթոռի, Հոգևոր Ճեմարանի, Սովետական Հայաստանի, Մոսկվայի և ռուս ազնիվ ժողովուրդի։ Երկար զեկուցագրեր, նկարագրություններ գրեցի արտասահմանի մեր թեմերու առաջնորդներին ոմանց. դոքա արտատպված են զանազան հայ թերթերում մեջ...

Իմ Սովետական Հայաստան այցելության մասին գրություններ լույս տեսան նաև ռուսեն մամուլին մեջ։

Ինչքան կարոտ է մեր թափառական ժողովուրդը Մայր Հայրենիքեն եկած բարի լուրերուն։ Եվ անսահման է իմ ուրախությունը, որ իմ ճանապարհորդությունը դեպի Սովետական Հայրենիքը առիթ ընձայեց ինձ մեր գաղթաշխարհին ավետելու այնքան ոգևորիչ խապրիկներ մեր աշխարհեն, մեր այսօրվան սովետաստեղծ Հայոց աշխարհեն։ Ավելի ուրախ և հպարտ պիտի ըլլամ, եթե իմ այս հայրենասիրական գործը կարենամ շարունակել ավելի լայն չափերով, ավելի արդյունաբեր կերպով, երբ և ուր որ Ձերդ Վեհափառությունը ինձ հրահանգե։

Գրության վերջում Տ. Վազգեն ծայրագույն վարդապետը գրում է.—

— Մեր թեմի եկեղեցական-ազգային կյանքը բարեհաջող ճամբու մեջ է։ Կշարունակենք վայելել Ռումեն Ժողովրդական Հանրապետության հարգանքն ու ուշադրությունը թե որպես ժողովուրդ, թե որպես եկեղեցի։ Մեր ազգային վարժարաններու նյութական ամբողջական հոգածությունը պետությունը ստանձնած է, իսկ Դավանությանց նախարարությունը խոստացած է մեծցնել իր նյութական օժանդակությունը մեր թեմին համար։

Մեր գաղութին մեջ, առհասարակ, կտիրե խաղաղ, համերաշխ ու փոխադարձ գործունեության մթնոլորտ եկեղեցական և ազգային-հայրենասիրական իշխանության միջև։ Սերտորեն կգործակցինք «Հայաստանեան Ճակատ»-ի հետ։

Ստացած ենք իրենց ժամանակին «Էջմիածին» ամսաթերթի Հունվար-փետրվար և Մարտ-ապրիլ 1948-ի թիվերը։ Անհամբեր կսպասենք հաջորդ թիվերուն։

***

Մայր Աթոռում սեպտեմբերի 29-ին ստացված հեռագիրը գուժեց Ատրպատականի թեմի Առաջնորդ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի մահը։

Վեհափառ Հայրապետը սեպտեմբերի 30-ին հետևյալ հեռագիրը հղեց Թեհրանի թեմի Առաջնորդ Տ. Ռուբեն Եպիսկոպոսին.

«Պատվիրում ենք հոկտեմբերի 3-ին լինել Թավրիզում և իբրև Մեր ներկայացուցիչը, նախագահել սգահանդեսին, պատարագել, քարոզել և մխիթարել Մեր սիրեցյալ հոտը»։

Միաժամանակ, սեպտեմբերի 30-ին Վեհափառ Հայրապետը հետևյալ շրջաբերական հեռագիրը հղեց բոլոր թեմերի թեմական առաջնորդներին.

«Խորին վշտով հաղորդում ենք Ատրպատականի Առաջնորդ Ներսես Արքեպիսկոպոսի մահը։ Ողբում ենք Սուրբ Էջմիածնի հավատարիմ և հարազատ զավակի, ժողովրդասեր, գործունյա, հեղինակավոր և դժվար փոխարինելի միաբանի մահը։

Պատվիրում ենք հանգուցյալի հիշատակին պատարագել, հոգեհանգստյան պաշտոն կատարել և քարոզել»։

***

Հոկտեմբերի 3-ին, կիրակի օրը Մայր Տաճարում, Ս. Պատարագից հետո, հոգեհանգիստ կատարվեց Ատրպատականի թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հիշատակին։

Տաճարում հոգեհանգստյան արարողությանը ներկա էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ը։

Տաճարում ներկա էին նաև Մայր Աթոռի Միաբանության բոլոր անդամները և Հոգևոր Ճեմարանի դասատուներն ու սաները։

Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոս Թումանյանը ներկաներին ծանոթացրեց հանգուցյալի արդյունավետ կյանքի ու բեղուն գործունեության հետ, հատկապես նշելով արժանահիշատակ Առաջնորդի նվիրվածությունը Հայ Եկեղեցուն, Մայր Աթոռին ու Հայ ժողովրդին։

***

Հոկտեմբերի 6-ին Հոգևոր Ճեմարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և Մայր Աթոռի Միաբանության, ճեմարանի դասախոսների ու սաների ներկայությամբ, տեղի ունեցավ ճեմարանի լսարանական բաժնի հանդիսավոր բացումը։

Ճեմարանի տեսուչ Մ. Մինասյանը, ողջույնի խոսքով հանդես գալով, նշեց լսարանական բաժնի անհրաժեշտությունը Մայր Աթոռի ու Հայ Եկեղեցու համար իրենց կոչման բարձրության վրա կանգնած պիտանի հովիվներ պատրաստելու գործում։

Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոսը Մայր Աթոռի միաբանների մասնակցությամբ կատարեց օրհնության արարողությունը։

Օրհնության արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը, իր խոսքը լսարանի սաներին ուղղելով, կոչ արեց Հայ Եկեղեցուն ու Հայ Հայրենիքին նվիրված եկեղեցականներ դառնալու համար լավ ուսումնասիրել հայոց պատմությունն ու գրականությունը, հայ լեզուն ու մատենագրությունը։

***

Դեկտեմբերի 25-ին Հոգևոր ճեմարանի դահլիճում կայացավ Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակին նվիրված գրական երեկո։

Խ. Աբովյանի կյանքի ու գործունեության մասին ընդարձակ զեկուցում կարդաց ճեմարանի դասախոս Ա. Մինասյանը։

Ճեմարանի Ա լսարանի սաներ Մարտիրոսյան Ռուբենը և Գևորգյան Քաջիկը հանդես եկան ինքնուրույն պատրաստած զեկուցումներով. դրանցից առաջինը զեկուցեց «Խ. Աբովյանը հայ աշխարհաբար լեզվի դատի պաշտպան» թեմայի մասին, իսկ երկրորդը՝ «Խ. Աբովյանը ժամանակակիցների և հայ կլասիկների գնահատությամբ» թեմայի մասին։

Խ. Աբովյանին նվիրված իրենց սեփական բանաստեղծությունների արտասանությամբ հանդես եկան ճեմարանի սաներ Այնթափյան Փայլակը (Ա լսարան), Սիրունյան Լևոնը (Գ դասարան) և Գրիգորյան Գրիգորը (Գ դասարան)։ Գ դասարանի սան Ազատյան Ազատը մեծ հաջողությամբ արտասանեց Խ. Աբովյանից ընտիր հատվածներ։

Գրական երեկոն փակվեց Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոսի և ճեմարանի տեսուչ Մ. Մինասյանի ելույթներով, որոնք ջերմ խոսքերով դրվատեցին մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի հայրենանվեր գործունեությունը։

***

Հոկտեմբերի 13-ին Մայր Աթոռ այցելեցին գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման համար անհրաժեշտ էլեկտրասարքավորման խնդիրներին նվիրված Համամիութենական գիտա-տեխնիկական սեսիայի, որի նիստերը տեղի էին ունենում Երևանում, մի խումբ մասնակիցներ։ Նրանք դիտեցին Տաճարը, նրան կից Թանգարանը և իրենց տպավորությունները գրանցեցին այցելուների մատյանում։ Այցելուներին ուղեկցում և ռուսերեն լեզվով անհրաժեշտ բացատրություններ էր տալիս լուսարարապետ Տ. Սահակ ծայրագույն վարդապետը։

***

Հոկտեմբերի 24-ին Մայր Աթոռ այցելեցին հանքատերմիկական էլեկտրակայաններին վերաբերող Համամիութենական գիտա-տեխնիկական խորհրդակցության (Երևանում) մի խումբ մասնակիցներ, որոնք ներկա գտնվեցին Ս. Պատարագին։ Պատարագից հետո նրանք դիտեցին Տաճարը և նրան կից Թանգարանը։ Հայերեն, ռուսերեն ու վրացերեն լեզուներով անհրաժեշտ բացատրություններ տալիս էր լուսարարապետ Տ. Սահակ ծայրագույն վարդապետը։ Թանգարանը դիտելուց հետո այցելուները ցանկություն հայտնեցին տեսնվելու Վեհափառ Հայրապետի հետ։ Տ. Սահակ ծայրագույն վարդապետը այս առթիվ Վեհափառ Հայրապետի համաձայնությունն ստանալուց հետո վերադարձավ և այցելուներին Վեհարան առաջնորդեց, ուր նրանք արժանացան ծերունազարդ Հայրապետի ընդունելությանը։ Կարճատև զրույցից հետո այցելուները Վեհի առաջարկությամբ դիտեցին նաև Ծաղկյա դահլիճը։ Նախքան մեկնելը այցելուները ցանկություն հայտնեցին Վեհի հետ լուսանկարվելու և այս առթիվ խնդրեցին Նրա համաձայնությունը։ Վեհը, ընդառաջելով նրանց այս ցանկությանը, լուսանկարվեց այցելուների խմբի հետ։

# ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

## ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ԹԱՎՐԻԶ

ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

*Մենք և Միաբանությունը խորապես վշտացած ենք Սուրբ Էջմիածնի հարազատ ու հավատարիմ զավակի, ժողովրդասեր, զոր-ծունյա, հեղինակավոր և դժվար փոխարինելի միաբանի մահվան առթիվ։*

*Աղոթում ենք Տիրոջը, որ ի քարանցս յայսցանե հարուցանե որդիս Աբրահամու։*

*Մխիթարեցեք Մեր կողմից յուրայնոց և Մեր սիրեցյալ հոտը։ Թաղման սգահանդեսին կնախագահե և կպատարագե Ռուբեն Եպիսկոպոսը։*

*Հրամայված է բոլոր թեմերին հանգուցյալի հիշատակին պատարագել, հոգեհանգստյան պաշտոն կատարել և քարոզել։*

ԳԵՎՈՐԳ Զ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Սեպտեմբերի 30*
*1948 թ.*
*Ս. Էջմիածին*

# ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ



Թավրիզից ստացված հեռագիրը գուժեց Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք—Թանգյանի մահը։

Սեպտեմբերի 26-ին, 83-ամյա հասակում, իր մահկանացուն կնքեց Հայ եկեղեցու ավագագույն, բազմաշխատ ներկայացուցիչներից մեկը՝ Ատրպատականի թեմի բազմամյա Առաջնորդ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք—Թանգյանը։

Նիկողայոս (Տ. Ներսես Արքեպիսկոպոսի անունը նախքան կուսակրոնություն ընդունելը) Մելիք-Թանգյանը ծնվել է 1866 թ. մարտի 16-ին Ջանգեզուրի Բռնակոթ գյուղում։ Մի տարի գյուղի խալիֆայական դպրոցում ուսանելուց հետո նրան հաջողվում է 1877 թվին ընդունվել Էջմիածնի Գևորգյան ճեմարանը։ Այստեղ, միջնակարգ կրթություն ստանալուց հետո, ճեմարանի լսարանական բաժնում հետևում է հայագիտական առարկաներին։ 1886 թվին հաջողությամբ ճեմարանի լրիվ դասընթացն ավարտելուց հետո նա իր գործունեության ասպարեզ ընտրում է ուսուցչությունը։ Երկու տարի հայրենի Բռնակոթ գյուղի դպրոցում պաշտոնավարելուց հետո 1886 թվին, Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի հոգաբարձության հրավերով, նա տեղափոխվում է Շուշի, ուր թեմական դպրոցում պաշտոնավարում է մինչև 1894 թիվը։ 1894 թվին ուսուցչի պաշտոնով տեղափոխվում է Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերության դպրոցը, որտեղ պաշտոնավարում է մինչև 1896 թիվը, երբ ցարական կառավարության կողմից փակվում են հայկական դպրոցները։ Հենց այդ թվականին էլ, բարերար Համբարձում Մելիքյանի ծախսով, Մելիք-Թանգյանը ուղևորվում է Պետերբուրգ համալսարանական կրթություն ստանալու համար։ 1900 թվին նա հաջողությամբ ավարտում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։

1900 թվին Էջմիածին վերադառնալով Նիկողայոս Մելիք-Թանգյանը սարկավագության աստիճան է ստանում և 1901-ին էլ վարդապետ ձեռնադրվում, Նիկողայոս անունը Ներսեսի փոխելով։ Ներսես վարդապետը, Տաթևի վանքի վանահայր նշանակվելով, իր

աշխատասիրության շնորհիվ կարողանում է կարճ ժամանակամիջոցում վանքը բարեկարգ վիճակում դնել։ Այնուհետև նա նշանակվում է Սյունյաց թեմի առաջնորդական փոխանորդ և այդ պաշտոնը վարելու ժամանակամիջոցում էլ գործուն կերպով պայքարում է Նիկոլայ Բ ցարի հրովարտակի դեմ, որով նա ցանկանում էր բռնագրավել Հայ եկեղեցական կալվածքները։

Խրիմյան Հայրիկը Ներսես վարդապետին 1906 թվին Էջմիածին է հրավիրում Հայրապետական դիվանապետի պաշտոնով, բայց ցարական կառավարությունը նրան անբարեհույս համարելով թույլ չի տալիս Էջմիածնում մնալ և 1907 թվին աքսորել է տալիս Ղրիմի Ս. Խաչ վանքը։ Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսի միջնորդության շնորհիվ 1909 թվին աքսորավայրից Էջմիածին է վերադառնում նա և նշանակվում «Վանական կառավարության» նախագահ, որպիսի պաշտոնը մեծ հմտությամբ ու բարեխղճությամբ վարում է մինչև 1912 թվականը։

1912 թվին Գևորգ Ե կաթողիկոսը Ներսես վարդապետին գործուղում է Ատրպատական՝ թեմի գործերը ստուգելու և անհրաժեշտ կարգադրություններ անելու համար։ Այստեղ էլ նա, թեմական պատգամավորական ժողովի կողմից, Ատրպատականի թեմի առաջնորդ է ընտրվում։ 1914 թվին Ներսես վարդապետը Էջմիածնում եպիսկոպոս է ձեռնադրվում, իսկ 1917-ին էլ նրան շնորհվում է արքեպիսկոպոսության աստիճան։

Ներսես Արքեպիսկոպոսի գրական վաստակներից հիշատակության արժանի են «Աշխարհաբարի քերականությունը» և «Հայոց եկեղեցական իրավունքը» երկհատոր պատկառելի աշխատասիրությունը։

1912 թվականից սկսած մինչև իր մահը Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի անունը սերտորեն կապվում է Ատրպատականի թեմի հետ։ Այստեղ թեմական պատգամավորական ժողովների կողմից միշտ առաջնորդ ընտրվելով նա այդ պաշտոնը 36 տարի անընդհատ վարում է, արժանանալով ոչ միայն իր հավատացյալ հոտի, այլև օտարների հարգանքին ու համակրանքին։ 36 տարի միևնույն թեմում առաջնորդի ծանր ու պատասխանատու պաշտոն վարելը ինքնըստինքյան այն մասին է վկայում, թե որքան մեծ ժողովրդականություն էր վայելում Հայ Եկեղեցու այս եռանդուն, գործունյա և ժողովրդասեր սպասավորը։ Առաջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդող մղձավանջային օրերին Տ. Ներսես Արքեպիսկոպոսը անգնահատելի ծառայություններ է մատուցել Ատրպատական ապաստանած հայ ու ասորի գաղթականներին տեղավորելու, որբերի արցունքը սրբելու և նույնիսկ թշնամու մերկացրած սուրը իր պատյանը դնել հարկադրելու գործում։ Ժողովուրդների համերաշխության ջերմ պաշտպան հանդիսանալով նա աշխատել է բարեկամական հարաբերություններ մշակել հայ և ատրպատականաբնակ բոլոր ժողովուրդների միջև. այդ է պատճառը, որ նա սիրվել ու գնահատվել է ոչ միայն հայերի, այլև իրանաբնակ մյուս ժողովուրդների կողմից. այդ մասին են վկայում այն հարգալից տողերը, որ նվիրել են հանգուցյալի հիշատակին իրանյան մի քանի թերթեր. դրանցից «Ժուռնալ դը Թեհրան»-ը գրում է.

«Ն. Մելիք-Թանգյան, Ատրպատականի Հայ առաջնորդը մահացավ 4 մեհրին։

Հանգուցյալը արժանավոր կերպով վարել էր ամբողջ 36 տարի Հայ եկեղեցու գործերը Ատրպատականում։

Նա անձնվեր և բարեպաշտ մի անձնավորության հիշատակն է թողնում։ Իր գործունեության երկարաշունչ ասպարեզում Ատրպատականի Առաջնորդը միշտ աշխատել է ամրապնդել հայերի և մահմեդականների բարեկամությունը և ձեռք էր բերել մահմեդականների հարգանքը։ Նրա մահը մի մեծ կորուստ է ոչ միայն հայ համայնքի, այլ և ամբողջ Ատրպատականի նահանգի համար»։

Հայ Եկեղեցու ավանդական սովորությունների ջերմ նախանձախնդիր, առաքինի ու շիտակ Տ. Ներսես Արքեպիսկոպոսին հատուկ է եղել ժողովրդի շահը ամեն ինչից վեր դասելը։ Իսկ ամենասրտառուչն այն է, որ հայ հոգևորականության կարկառուն դեմքերից և Հայ Եկեղեցու ականավոր գործիչներից մեկը հանդիսացող Տ. Ներսես Արքեպիսկոպոսը իր ալեզարդ հասակում կարողացավ խոշոր շրջադարձ կատարել և, վերջ տալով բոլոր վարանումներին, անվերապահորեն կանգնել Հայ Հայրենիքի բարեկամների դիրքերում։ Նա տեսավ, որ Սովետական Հայաստանում հայ ժողովուրդը տնտեսական ու կուլտուրական անօրինակ վերելք է ապրում, և հանգեց միակ ճիշտ եզրակացության, որ հայ ժողովրդի աստանդական հատվածների փրկության ուղին ձգվում է դեպի Սովետական Հայաստան։ Հայ Եկեղեցու հավատարիմ զավակ Տ. Ներսես Արքեպիսկոպոսը կոչ էր անում Սփյուռքի հայությանն իր սիրասուն ու հնադարյան հայրենիքը դառնալ։ Դեռ անցյալ տարի նա, «Վերածնունդ» թերթի Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձին նվիրված համարում զետեղված, իր մի հոդվածում հետևյալ տողերն է նվիրել հայրենիքի վերելքին.

«... Ահա տարիների վկայությունը 27

տարի առաջ եղած Հանրապետության մասին։ Ի՞նչ է այժմ, ոչ մի նմանություն, նրկարագրությունը կտանի շատ հեռու։ Երկարացնելու ոչ մի կարիք։ Այժմյան Հայաստանում գոյություն չունի Սարդարաբադի և այլ անմշակ անապատներ, ամեն տեղ ջուր, առուներ, ծառ և բուսականություն։ Գյուղերում գոյություն չունին սև նավթի ճրագները, որոնցով կապրեին գյուղացիք. այժմ ամեն տեղ ջուր, ջրվեժ, էլեկտրական լույս։ Ակադեմիա և համալսարանի բազմաթիվ ճյուղեր. իսկ դպրոցները համարելու կարիք չկա։

Մասնագիտությունը և զանազան տեսակի հետազոտությունները այնքան առաջ են գնացել, որ նմանություն չունեն ոչ մի ժամանակի հետ։

... Հայաստանը 27 տարում տնտեսական, ուսումնական, շինարարական, այլ և բոլոր քաղաքակրթական մասնաճյուղերում այնպիսի բարձրության է հասել, որ նմանություն չունի 27 տարի առաջվա Հայաստանի հետ...

Իր այս հոդվածը հայրենասեր Ներսես Արքեպիսկոպոսը ավարտում է հետևյալ տողերով.—

«Չմոռանամ հիշատակելու, որ սփյուռքի հայության միակ փրկությունն է վերադառնալ հինգհազարամյա հայրենիք։ Մի մոռանաք, որ Լեհաստանի 200.000 հայությունը, Անիի հայությունը կուլ գնաց կաթոլիկության...։

Դեպի հայրենիք, այս է միակ փրկությունը»։

Մեծ հանդիսավորությամբ է տեղի ունեցել Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի թաղումը։ Այս մասին Թեհրանի թեմի Առաջնորդ Տ. Ռուբեն Եպիսկոպոսը հետևյալն է հաղորդում.—

«Թավրիզից հեռագիր ստանալով Գերապատիվ Տ. Ներսես Մելիք-Թանգյանի մահվան մասին, մեծ բարերար Ռոման Իսայելի և մի շարք հասարակական-ազգային մարմինների ներկայացուցիչների հետ միասին հոկտեմբերի 1-ին, հետկեսօրին ժամը 4-ին հասանք Թավրիզ։ Նույն օրը կատարեցինք սովորական հոգեհանգիստ. Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 2-ին դագաղն առաջնորդեցինք եկեղեցի, իսկ ամսի 3-ին Ս. Պատարագ մատուցելուց ու օծումը կատարելուց հետո հողին հանձնեցինք հանգուցյալի աճյունը։

Չտեսնված փառահեղությամբ տեղի ունեցավ թաղումը. 100-ի մոտ պսակներ, 5—6 հազար հուղարկավորներ, որոնց թվում շատ իրանցիներ և օտարազգիներ։ Թաղմանը մասնակցելու համար միայն Թեհրանից ժամանել էին 100-ից ավելի անձնավորություններ։

Զերդ Վեհափառության ցավակցական հեռագիրը ստացվեց Ս. Պատարագի արարողության ընթացքում, որ խորը տպավորություն թողեց ժողովրդի վրա։ Երբ հայտնեցի Զերդ Վեհափառության հեռագրի ստացման մասին, ժողովուրդը Մայր Աթոռի ու Զերդ Վեհափառության անունը տալուց հոտնկայս և խորին գոհունակությամբ, կրոնական երկյուղածությամբ ու բարեպաշտությամբ լսեց հեռագրի բովանդակությունը։

Թաղմանը ներկա էին 12 քահանա, որոնցից 3-ը Թեհրանից, 3-ը Թավրիզից, իսկ մնացած 6-ը Ուրմիայից, Սալմաստից, Որդայիեից և այլն։ Ներկա էր նաև Տ. Պետրոս վարդապետը—Թադեոս առաքյալի վանքի վանահայրը, մի համակրելի և խիստ ավանդապահ անձնավորություն։

Նախքան դագաղը եկեղեցուց հանելը դամբանական խոսք ասացի, վեր հանելով հանգուցյալի կյանքն ու գործունեությունը։

Հանգուցյալի աճյունը, իր կտակի համաձայն, ամփոփվեց գերեզմանատան մատուռի առջևում։

Հուղարկավորության թափորի երթը եկեղեցուց մինչև գերեզմանատունը տևեց երկու ժամ։

Օրհնյալ է հիշատակը Հայ. Եկեղեցու հավատարիմ զավակի։ Հավիտենական հանգիստ իր աճյունին։

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՋ

# ՕԳՆԵ՛ՆՔ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ 5.000 ՀԱՅ ԱՂԷՏԵԱԼՆԵՐՈՒՆ

*Արար և Հրեա կռիւներուն պատճառով Երուսաղէմ մեր վանքին մէջ ապաստանած 5.000-ի չափ Հայերու վիճակի մասին, որոնց մէջ անշուշտ բազմաթիւ փոքրիկներ ալ կան, մօտաւոր գաղափար մը տալու համար հետեւեալ մէջբերումները կ՚ընենք այն սրտաճմլիկ տեղեկագրէն, որ ներկայացուցած է Տ. Խորէն Եպիսկոպոս Բարոյեանը Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհ. Տ. Գարեգին Կաթողիկոսին։ (Տեղեկագիրը տեսնել մեր սոյն համարում։ Մէջբերումները բաց ենք թողնում։ Մէջբերումներից հետո Վարդան Եպիսկոպոսը շարունակում է. ԽՄԲ.)։*

*Սիրելի և ազնիւ ընթերցողներ, Գալիֆորնիոյ մէջ ապրող բախտաւոր ու բարեկեցիկ ժողովուրդ հայոց, ի՞նչ կը խորհիք այս քանի մը տողերուն մէջ ամփոփուած կսկծալի տեղեկութիւնները կարդալէ հետո։ Դուք ունիք ազգասիրական զգացում և հաւատք Քրիստոնեական՝ օգնելու համար կարօտեալին, աղէտեալին, մանաւանդ մերազնեից համար։*

*Դուք տուած էք միշտ և կուտաք Սուրիո, Հունաստանի և այլ տեղերու մեր հալածական ու թափառական դժբախտներուն համար։ Կուտաք միշտ անհատաբար և հաւաքօրէն։*

*Այս անգամ ալ կործանարար ռումբը պայթեցաւ Երուսաղէմի վրայ, Հայրենիքի աղէտներէն հոն ապաստանած մեր տարաբախտ եղբայրներու և քոյրերու գլխին, որոնց ներկա տնտեսապէս այնքան խեղճացած վիճակը պարզուած է տեղեկագրին մէջբերուած քանի մը տողերուն մէջ։*

*ՕԳՆԵՆՔ ԱՆՈՆՑ։ Մի՛ սպասէք, որ հրապարակային ժողովներ ունենանք, հանձնախումբեր կազմենք, աւելորդ ժամանակ ու ծախքեր տալով։*

*Թէպէտ և նախընտրելի է, որ ձեր սրտաբուխ ու պատուաբեր նուէրները ազգային Առաջնորդարան ուղարկեք, բայց դիւրութեան համար կրնաք զանոնք հանձնել ձեր տեղւոյն մէջ այստ. հոգաբարձութեանց. Բարեգործականի մասնաճիւղին և կամ հայ թերթի մը խմբագրութեան։*

*Վստահ եղէք թէ մենք անմիջապէս պիտի ստանանք։ Նուիրատուներու ցանկը հրատարակութեան պիտի տրուի հայ մամուլին մէջ։*

*Թախանձագին կոչ կ՚ընենք Գալիֆորնիոյ բազմահազար հայութեան, առանց կրօնքի, դաւանանքի և քաղաքական հոսանքներու խտրութեան, Սան Ֆրանսիսկոյէն մինչև Լոս Անճելըս, Սաքրեմանթոյէն մինչև Սան Տիեկօ։*

*Ո՛վ դուք զգայուն և բուխ սիրտ Հայեր, լսեցէ՛ք մեր այս խնդրանքը և ջանացէք որ այսօրի կարենանք պատուով և յաջողութեամբ պսակել մեր այս նուիրական ձեռնարկը. Յօգուտ Ս. Երուսաղէմի մեր 5.000 աւուր հացի կարօտ ազգակիցներուն։*

*Տէրը օրհնէ Ձեր ամենքին նուիրատուութիւնը, քիչ կամ շատ, և պարգեւէ յաջողութիւն և առողջ կեանք։*

*Սիրով ողջունիւ և հայրական օրհնութեամբ*

Առաջնորդական Տեղապահ Հայոց Գալիֆորնիո

ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՍՊԱՐՅԱՆ

# ՍՐՏԱՌՈՒՉ ԿՈՉ ՄԸ

*Ամէնքս ալ տեղեակ ենք, որ Պաղեստինի կռիւներու առթիւ Երուսաղէմի Ս. Հակոբա վանքը ենթարկուած է աճռելի փնասներու և հազարաւոր հայ աղէտեալներ, իրենց կեանքը ազատելու համար, լեցուած են վանքը և կարօտ օգնութեան։*

Պատրիարք Հայրը, Տ. ԿՅՈՒՐԵՂ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, արտասովոր կոչով դիմած է հանուր հայության, որպեսզի հայ գաղութները եղբայրական պարտականություն կատարեն փրկելու համար թե Միաբանությունը, և թե վանքը ապաստանած բեկորները Երուսաղեմի վանքը թե պատմական և թե միջազգային արժեք ներկայացնող հինավուրց հաստատություն մըն է։

Պարտք նկատած ենք անմիջական հանգանակություն մը բանալ և արդյունքը փութով հասցնել Ամեն. Սրբազան Հոր։ Անհապաղ պետք է կատարենք մեր պարտականությունը։ Ասիկա ազգային արժանապատվության հարց է։

Կոչ կընենք մեծագույն Շիկագոյի մեր բոլոր հայրենակիցներուն, որ փութով կատարեն իրենց պարտականությունը Երուսաղեմի հանդեպ։

Կմաղթենք, որ Տերը հազարապատիկ պարգևե Ձեզի։

Մնամք ողջունիվ սիրո և օրհնությամբ*)

Հոգևոր Հովիվ Շիկագոյի և շրջակայից ՎԱՀՐԱՄ Ծ. ՎՐԴ. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Դիվան Հոգաբարձության Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո

Ատենապետ Խ. ՃԵՐԱՆՅԱՆ

Ատենադպիր Խ. ԵՂՈՅԱՆ

Գանձապետ Մ. ՄԱՆՈՒԵԼՅԱՆ

## ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1948 հուլիս 25-ի, կիրակի, Բուքրեշի Հայոց Մատենադարանի սրահին մեջ տեղի ունեցավ Ռումանահայ Թեմ. Պատգ. Ժողովի Դ շրջանի լիակատար նիստը, նախագահությամբ Առաջնորդական Տեղապահ Գեր. Տ. Վազգեն Ծ. Վրդ. Պալճյանի և ներկայությամբ Թեմական Խորհուրդի և 22 պատգամավորներու։

Կրոնից նախարարության կողմե Տոքթ. Տ. Վասքա և Ռումեն Պատրիարքարանին կողմե Խորհրդական Տ. Լեու Հայրերը իրենց պատվաբեր ներկայությամբ հարգած էին Ռումանահայ Պատգամավորական սույն պատմական ժողովը։

Դիվանը կազմվեցավ հետևյալ կերպով.— Ինճիներ Սոլոմոն՝ նախագահ, Վահրամ Երեցյան՝ փոխ-նախագահ, իսկ քարտուղարներ՝ Տ. Արսեն քհն. Վարժապետյան և փաստ. Ժիրայր Մկրտիչյան։ Նախագահը հանուն դիվանի շնորհակալություն հայտնելե վերջ, խոսք տվավ Տեղապահ Հոր, որ հաջողություն մաղթելով ժողովի աշխատանքներուն, հիշեց Յոզչանի նախկին պատգամավոր հանգուցյալ Հարություն Իսրայիլյանին ու վեր հանելով կատարած ծառայությունները, խնդրեց հարգանքի վարկյան մը նվիրել անոր հիշատակին։ Ժողովը հոտնկայս հարգեց հիշատակը։ Ապա, Տեղապահ Տ. Վազգեն Ծ. Վրդ. ըրավ իր տեղեկագրությունը մայիս ամսու ընթացքին դեպի Հայաստան կատարած իր ուխտորության վերաբերմամբ, որ լավ տպավորություն ձգեց ժողովականներուն վրա։ Հետո Հայր Սուրբը ժողովին ներկայացուց Կրոնից Նախարարության և Ռումեն Պատրիարքարանի պատվիրակները։

Կրոնից Նախարար Վսեմ. Սթանչու Սթոյանի կողմե ներկայացուցիչ Տոքթ. Տ. Վասքա խոսք առնելով կարդաց հետևյալ գեղեցիկ ուղերձը.—

«Ձեր մեջ կգտնվիմ Դավանություններու Նախարար Փրոֆ. Սթանչու Սթոյանի կողմե, պատասխանելով իրեն ըրած ձեր հրավերին, որպեսզի, մեր Նախարարությունը ևս ներկա ըլլա Ռումանիո Լուսավորչական Հայոց Թեմական Քոնկրեսի գործերուն։

Կփափաքիմ որ մեր ներկայությունը սույն քոնկրեսին, մեկնաբանվի կրկնակ իմաստով.—Նախ որպես պաշտոնական պարտականություն, զոր մեզ կպարտավորե մեր Նախարարությունը, և երկրորդ որպես լավ

*) Կալիֆորնիայի Հայոց Առաջնորդական Տեղապահ Տ. Վարդան Եպիսկոպոս Գասպարյանի և Չիկագոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Հոգաբարձության ու Հոգևոր Հովիվ Տ. Վահրամ Ծ. Վրդ. Նազարեթյանի, Երուսաղեմի հայ աղետյալներին շուտափույթ օգնության հասցնելու վերաբերող, սույն կոչերը տպագրվել են ամերիկահայ մի քանի թերթերում։

ԽՄԲ.

ցնահատողներ և ջերմ բարեկամներ, որ մեզ կկապեն Հայ Լուսավորչական Եկեղեցին Ներկայացուցիչներուն հետ, որոնք, իսկական դեմոկրատական կարգերու տակ. ըմբռնեցին Ռումեն Ժողովրդական Րեպուբլիկայի եկեղեցական կյանքին տալ Նոր ուղեգիծ մը, համաձայն անկեղծ դեմոկրատիայի մը համապատասխան ուղղությանց, դեմոկրատիայի որ անվարան կծառայե ժողովուրդին:

Մեր երկրին դեմոկրատական վարչաձևը ցույց տվավ, ինչպես հայտնի է, իր դիրքը հանդեպ դավանությանց՝ Նոր Սահմանադրությամբ, որ պատրաստվեցավ և քվեարկվեցավ Ազգ. Մեծ Ժողովին կողմե, 27-րդ հոդվածով կրճշտե ռեժիմին բարձր հասկացողությունը, երաշխավորելով խղճի արտահայտությանց ազատությունը:

Այսպես, յուրաքանչյուր կրոնական դավանություն ազատ է կազմակերպելու և վարելու իր եկեղեցական գործերը իր իսկ եկեղեցական կանոնադրությանց համաձայն, պայմանավ որ դավանությանց կազմակերպիչները ու անդամները թշնամական արտահայտություններ չունենան հանրային կարգին և պետության ապահովության դեմ:

Իսկ կղերականության համագործակցական ճիգերը կառավարության տարած երկրին վերականգնումի և քաղաքացիներու բարոյական ու նյութական վիճակի բարելավման աշխատանքներուն հետ պիտի կազմեն լավագույն ծառայությունը մեր հասարակաց դատին խորանին վրա:

Մեր կառավարությունը կգնահատե հայ համայնքին և հայ դավանության այս համագործակցական ճիգերը, և մեր միջոցավ ձեզ կհայտնե իր բովանդակ վստահությունն ու շնորհավորությունները:

Ապա Տոքթ. Վասքա կշնորհավորե Վազգեն Ծ. Վրդ-ը իր աստիճանին բարձրացման համար, և ջերմագին ու սրտագին մաղթանքներ կընե քոնկրեսի գործերուն հաջողության:



Վազգէն Ծայրագոյն Վարդապետ Պալճեան

Հաջորդ խոսողն էր Պատրիարքարանի խորհրդական Տ. Լեոն քհն., որ ի միջի այլոց ըսավ թե, ուրիշ առթիվ պաշտոնական հանդամանքով եղած եմ հայ շրջանակի մեջ, բայց այս անգամ ի բացակայություն Ռումանիո Յուստինիան Ս. Պատրիարքին, Հայ Եկեղեցվո և անոր համայնքին հանդեպ ունեցած անվերապահ զգացումներս թելադրված, կուգամ այս պատկառելի ժողովին բերել իմ ջերմագին հարգանքներս, վստահ ըլլալով որ ներկա ժողովը բացառիկ հանգամանք մը ունի իր նախորդներեն, տրված ըլլալով համայնքի մը պետի ընտրության պարագան: Շատ մոտեն կճանչնամ, ըսավ, Տեղապահ Գեր. Տ. Վազգեն Ծ. Վարդապետ, նույնիսկ համալսարանի նստարաններեն որպես խոհական և լուրջ անձնավորություն մը, ու կհավատամ որ ներկա ընտրությունը կկատարվի արժանավորությամբ մը, և առիթ պիտի ընծայե Հայ և Ռումեն եղբայրական կապերու ամրապնդման: Տ. Լեոն Հայրը վերջացուց իր խոսքերը, հաջողություն մաղթելով:

Նախագահ՝ ինճիներ Սոլոմոն ի դիմաց Պատգ. Ժողովին իր շնորհակալիքը հայտնեց բանախոս երկու եկեղեցականներուն, անոնց անկեղծ արտահայտություններուն համար:

Հետո կարդաց շնորհակալության և երախտագիտության երեք հեռագիրներ, ուղղված Վարչապետ Տոքթ. Փետրու Կրոզայի, Կրոնից նախարար Ստանչու Ստոյանի և Ն. Ս. Օծություն Տ. Գևորգ Զ Վեհ. Հայրապետին: Ժողովը ծափահարությամբ իր հավանությունը հայտնեց:

Պ. Նախագահի հրավերին վրա փաստ. Պ.

Եր. Մելիտոն ըրավ Թեմական խորհուրդի տեղեկագրությունը՝

Ժողովը գոհ մնաց և անցավ օրակարգի հաջորդ խնդրույն, որ է՝ ընտրություն Թեմի Առաջնորդի։

Մինչ Պ. Նախագահը կթվեր Վազգեն Ծ. Վարդապետի ըրած ծառայությունները ու բարեմասնությունները, Առաջնորդը մեկնեցավ ժողովասրահեն։

Ձեռնարկվեցավ գաղտնի քվեարկության։ Ներկա 22 պատգամավորներ իրենց քվեն տված ըլլալով Վազգեն Ծ. Վարդապետի, ան հռչակվեցավ Առաջնորդ Ռումանիո Հայոց Թեմի։

Նորընտիր Առաջնորդը հատուկ պատվիրակության մը հրավերով ժողովասրահ մըտավ և զգացված խոսքերով իր շնորհակալությունները հայտնեց Պատգ. Ժողովին. և անոր միջոցավ համայնքին։ Շնորհակալություն հայտնեց Հայաստանյան Ճակատին, Բուքրեշի և գավառի եկեղեցական վարչության, ու մաղթանքներ ըրավ Ռումանիո և մեր հայրենիքի բարօրության համար։

Նորընտիր Առաջնորդին շնորհավորական ուղերձներ ըրին Պ. Վ. Դանիելյան՝ Հայաստանյան Ճակատի կողմե, Ար. Գասպարճյան, Տ. Հովհաննես քահանա, փաստ. Եր. Սրապիոնյան, Վ. Երեցյան, Փրոֆ. Ձլուշ և Վ. Գրիգորյան։

Այս հանդիսությենեն վերջ ժողովը վավերացուց Թեմական խորհրդի և քննիչներու տեղեկագիրները ու քվեարկեց 1948—1949 պյուտճեն։

ԺՀ. Ճ.

# ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱԶԱՏ ՀՈՂԻ ՎՐԱ

## ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Կիրովական քաղաքում հայրենադարձ հայերը կառուցում են բնակարաններ։ Նրանց բաց է թողնված վեց միլիոն 200 հազար ռուբլի վարկ։ Արդեն օգտագործման է հանձնվել 90 բնակարան։ Շուտով կավարտվի ևս 50 բնակարանի կառուցումը։ Յուրաքանչյուր բնակարան ունի 2—4 սենյակ, խոհանոց, մառան և այլ հարմարություններ, ինչպես նաև 500 քառակուսի մետր հողամաս՝ այգու և բանջարանոցի համար։*

*Անտառային տնտեսությունը և քաղաքի մատակարարման բաժինը հայրենադարձներին օգնում են շինանյութով ու փոխադրական միջոցներով։*

***

*Կիրովական—Վարդանլու ճանապարհից ոչ հեռու կառուցված նոր ավանում բնակություն են հաստատել հայրենադարձ հայերը։ Շատ նոր տներ են կառուցվել Կիրովականի հյուսիսային կողմը՝ Փամբակ գետի ձախ ափին և Վանաձոր կոչված տեղամասում։ Բնակելի տներ են կառուցվում նաև քաղաքի մյուս մասերում։*

*Երկհարկ և եռահարկ 12 տուն են կառուցել Կորդի և Տրիկոտաժի ֆաբրիկաները։ Շահագործման է հանձնված 8 բնակարանից բաղկացած երկհարկ մի տուն։*

***

*Ավարտվեց Երևան քաղաքի Ստալինյան ռայոնում, Թումանյանի անվան դպրոցից ոչ հեռու, կառուցվող եռահարկ տան շինարարությունը։ Այդ նոր տանը բնակարաններ ստացան վերջերս հայրենիք վերադարձած հայերը։*

*Այդ տան շարքում մի ուրիշ եռահարկ տուն էլ է կառուցվում, 24 բնակարանից բաղկացած։ Վերջինս նույնպես շուտով շահագործման կհանձնվի։*

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

*Արտասահմանից վերադարձած հայերի համար Սովետական Հայաստանի կոլխոզային գյուղերում կառուցվում են գեղեցիկ ու բարեկարգ տներ։*

*Գյուղատնտեսական բանկը սույն տարում հայրենադարձ հայերին բաց է թողել 12 միլիոն 439 հազար ռուբլի երկարատև վարկ, բնակելի տներ կառուցելու համար։*

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Սովետական կառավարությունը մեծ հոգ է տանում աշխատավորների բնակարանային ու կենցաղային պայմանները բարելավելու համար։ Այս տարի Երևանում անհատական տներ կառուցողները, հիմնականում արտասահմանից հայրենիք վերադարձած հայեր, պետությունից ստացել են մոտ 75 միլիոն ռուբլի։ Ընդամենը քաղաքում և նրա նոր կառուցվող արվարձաններում կառուցվել է ավելի քան 5100 տուն, որոնցից 1248-ում արդեն բնակվում են, 433-ը լիովին պատրաստ են բնակվելու համար և 1315 տներում էլ ավարտվելու վրա են ներքին աշխատանքները։*

*Նոր կառուցված տները ապահովվում են էլեկտրական լուսավորությամբ։ Քաղաքի նոր արվարձանները կանաչապատվում են։*

## ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ ՄՈՍԿՎԱ ՄԵԿՆԵՑԻՆ

*ՍՍՌՄ Գեղարվեստական ֆոնդի հրավերով Մոսկվա մեկնեց հայրենադարձ նկարիչների մի խումբ՝ Արամ Ղարիբյան, Գևորգ Քանդարյան, Առաքել Պատրիկ, Հակոբ Փափազյան, Հովհաննես Զոմյան, Պետրոս Կոնդրատյան։ Մայրաքաղաքում նրանք կդիտեն համամիութենական նկարչական ցուցահանդեսը, կծանոթանան թանգարաններին, ցուցահանդեսներին, կայցելեն մայրաքաղաքի տեսարժան վայրերը և հանդիպումներ կունենան Մոսկվայի նկարիչների հետ։*

ՀԱԿՈԲ ԱՐԱՄՅԱՆ

# ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԱՐՍԱՆԻՔ

## ՈՍԿԵՐԻՉ ԱՐՇԱԿԻ ՈՒԽՏԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ



Հակոբ Արամյան

*Ուրախառիթ երևույթներ են անտարակույս հայրենադարձների հարսանիքները հայրենի երկրում, ուրախառիթ, բայց ոչ արտասովոր։*

*Շուրջ երկու տարուց ի վեր, բազմահազար արտասահմանյան հայեր համարյա բոլոր գաղութներից, երկու սեռից և բոլոր հասակներից, եկել հաստատվել են մայր-հայրենիքում։ Հազվադեպ չէ, որ նրանց մեջ ամուսնացողներ լինեն, եվ փաստորեն, բազմաթիվ երիտասարդներ, հայրենիք գալուց հետո կազմել են ընտանեկան բույներ։*

*Բավականին արտասովոր է սակայն և հետաքրքիր, և վստահ եմ թե կարդալուց հետո համաձայն կլինեք ինձ հետ, ամուսնությունը, որ պատմվում է այստեղ։*

***

*Բախտավոր մարդ է անտարակույս Ոսկերիչ Արշակը. իր բոլոր իղձերը, իր բառով «ուխտերը», կատարվում են անվրեպ։*

*Ընդամենը մի քանի ամիս է միայն, որ ճանաչում եմ ընկեր Արշակին, և այդ կարճ ժամանակում պատահած իրադարձությունները հաստատում են ինձ այն կարծիքի մեջ, որ բախտավոր մարդ է նա անպայման։*

*Անցյալ տարվա (1947) ամռան ամիսներին, խոր և համատարած խանդավառություն էր տիրում Եգիպտոսի թեմի հայ գաղութի մեջ։ Եկել էր Ներգաղթի լիազորը մայր հայրենիքից, և պատրաստում էինք հայրենադարձների առաջին քարավանը։ Սրտերը թունդ էին ելած։ Տենդագին աշխատանք և եռուզեռ կար Սովետական դեսպանատան հարակից գրասենյակներում, որտեղ հաստատված էր լիազորը, հայոց Առաջնորդարանում, որտեղ Ներգաղթի Կենտրոնական Կոմիտեն համարյա մնայուն նիստ ուներ, նախագահությամբ թեմական Առաջնորդ Մամբրե Արքեպիսկոպոսի, ինչպես նաև տներում այն ընտանիքների, որոնց «թիվը» ելած էր», այսինքն որ արձանագրվել էին առաջին քարավանով ճանապարհ ելլել դեպի ցանկալի հայրենիքը։*

*Առ առավելն 1700 անձ միայն մաս պիտի կազմեին առաջին քարավանին, մինչ թեկնածուների թիվը հասնում էր մի քանի հազարի։ Համառ դիմումներ էին կատարում, դրա-*

վոր թե անձամբ, հարյուրավոր անձինք, ամեն օր։

Հայրենադարձության կանխապատրաստության այդ անմոռաց օրերին էր, որ հաճույքն ունեցա անձամբ ճանաչել ընկեր Արշակին, որի մասին լսել էի արդեն։

Մի օր, մոտիկ ծանոթներիցս մեկը, մտնելով «Արևս» թերթի խմբագրատան իմ գրասենյակը, ասաց ինձ.

— Այս ի՞նչ անիրավություն եք կատարել Ներգաղթի Կենտրոնական Կոմիտեում. խնդրեմ, դարմանեք, եթե դեռևս հնարավոր է, եթե շատ ուշ չէ...

— Իսկ ի՞նչ անիրավության մասին է խոսքը։

— Մերժել եք Արշակ Գազազյանի դիմումը առաջին քարավանին մաս կազմելու մասին, առարկելով, թե նա կարող է սպասել առաջիկա տարվան։ Ուրեմն Կոմիտեի անդամներիցդ և ոչ մեկը մոտիկից չի ճանաչում Արշակին։ Այլապես, Արշակը անպայման պիտի ընդունվեր առաջին քարավանի մեջ։ Նա գծված է Սովետական Հայաստանով, և այդ, ոչ թե նոր, այլ ավելի քան քսան տարիներից ի վեր...։ Ողջ մարմնով դողում է նա, երբ Հայաստան բառն է արտասանում։ Խելագարի պես մի բան է եղել նա հիմա։

Կրկնում է, թե ուխտ ունի առաջին քարավանով մեկնել և թե կգժվի, թե որ չմեկնի։ Շատերն են հայրենասեր, շատերն են բաղձացող առաջին քարավանով մեկնելու, բայց Արշակի պարագան ուրիշ է, բացառիկ է։ Գերազանցապես գաղափարական, մտքից չանցած սատիճանով սիրում է Սովետական Հայաստանը, և ամենը, ինչ որ սովետական է։

Հետզհետե ավելի սկսեցի շահագրգռվել Արշակով, քանի ընկերս խոսում էր։

Արշակի մասին լսել էի ես։ Գիտեի, թե մեր Հայաստանյան Ճակատի լավ զինվորներից է եղել, գործակցել է ՀՕԿ-ին, և ակտիվ կերպով նվիրվել հակաֆաշիստական բուռն պայքարին, բայց ինձ թվում էր, թե վերջին տարիները փոխվել է նա, քաշվել ակտիվ պայքարից, տարիքը առած լինելով գուցե...

— Արշակի տիպի մարդիկը չեն փոխվում շուտ,— ասաց ընկերս։ Հետո նա այնքան էլ ծեր չէ, հիսուն հինգ, վաթսուն տարեկան հասակում պետք է լինի այժմ։ Ավելի խանդավառ է նա քան քսան տարեկան մի երիտասարդ։ Կիսագրագետ, ոչ շատ մշակված միտք, բայց սքանչելի սիրտ անպայման, այսպես է մեր Արշակը։ Ծոցագրպանիցը անպակաս է պատկերը ընկեր Ստալինի, ինչպես նաև սովետական մուրճ մանգաղով փոքրիկ կարմիր դրոշը։

Ընկերս հետևյալ մանրադեպն էլ պատմեց Արշակի կյանքից։

— Մի օր Արշակի տանը մի ճաշկերույթ կար, իր թոռնիկի ծննդյան տարեդարձի կապակցությամբ։ Հյուրերից մի բժիշկ, խոհեմ մի մարդ, տեսնելով Արշակի տան հյուրասենյակը զարդարող սովետ ղեկավարների մեծադիր պատկերները և ոսկեհյուս մուրճ մանգաղով փոքր կարմիր դրոշները, սկսեց հանդիմանել Արշակին, թե խոհեմություն չէ արածը մի կապիտալիստական երկրում։ Արշակի տաք գլուխը ավելի էր տաքացել գինու ազդեցության տակ։ Նա բացեց մի պահարան, որ սենյակի մի անկյունն էր գրավում, դուրս բերեց մուրճ մանգաղով մի հսկայական կարմիր դրոշ և բարձրացավ տան կտուրը։ Մի քանի րոպեից վերադառնալով, խոհեմ բժշկին և մյուս հյուրերին հրավիրեց դուրս գալ պատշգամբ։ Հսկայական կարմիր դրոշը ծածանվում էր ծայր ի ծայր կտուրի եզրին։ «Տեսեք խոհեմությունը, դոքտոր,— կրկնում էր Արշակը,— ահա խոհեմությունը։ Արշակի խոհեմությունից մի՛ք ճառի, շատ եմ խնդրում...»։



Ոսկերիչ Արշակը

Ընկերոջս խոսքերից հետո այնքան համակրեցի Արշակի կերպարին, որ խոստացա իմ լավագույնն անել, որ նա մաս կազմե մեր առաջին քարավանին, որքան էլ վերջնական

ցանկը կազմված լինեք արդեն և հանձնված ընկեր լիազորին։

Թե՛ Ներգաղթի Կոմիտեի ընկերները, գլխավորությամբ Մամբրե Սրբազանի, և թե ընկեր լիազորը սիրով ընդառաջեցին իմ առաջարկին, և այսպիսով ընկեր Արշակը, իր ամբողջ ընտանիքով, կարողացավ ճանապարհ ելնել դեպի ցանկալի Սովետական Հայաստան։ Իր առաջին իղձը, իր բառով ուխտը, կատարված էր։ Բայց նա ունեք դեռ ուրիշ ըղձեր, ուրիշ ուխտեր էլ...

***

Երեք շաբաթ հետո «Պոբեդա» ջերմանավը, աննկարագրելի խանդավառության և ցնծության ցույցերով, խարիսխ է վերցնում Ալեքսանդրիայի Նավահանգստից, տանելով եգիպտահայ հայրենադարձների առաջին քարավանը— 1700 անձ։ Բեյրութից նաև վերցնում է Սիրիա-Լիբանանի 1947 թվի չորրորդ քարավանն էլ, և ցուպն ուղղում դեպի Սև ծով։

Ավելի քան 4200 պանդուխտներ դեպի երազած մայր-հայրենիք։ Վա՜ռ երջանկություն։ Անպակաս էին երգ ու նվագ, ծափ ու ծիծաղ։

Երջանիկների մեջ գերադրական աստիճանով երջանիկ էր մեր Արշակը, որին կոչել էի «Պոբեդա»-ի ամենաերջանիկ մարդը։ Ունեք նա մանկահասակ թոռնիկներ և այդ իսկ պատճառով իրավունք խցիկ պահանջելու։ Բայց չէր պահանջել։ Իր ընտանիքի համար «տուն» էր սարքել կամրջակներից մեկի վրա, և գոհ էր շատ, մշտաժպիտ, երջանիկ...։

Քարավանապետի հոգսերից և հոգնություններից հանգստանալու համար, օրը մեկ երկու անգամ այցելում էի նրան անց ու դարձիս պահերին և հետը զրույց ունենում մի քանի րոպե։ Բարձրահասակ, նրբակազմ մարդ էր, կապույտ ու պայծառ աչվրներով, լայնարձակ ճակատով և սպիտակել սկսած խարտյաշ վարսերով։ Կազդուրիչ էին ինձ համար իր հոգեկան տոկունությունը, անսայլայլ երջանկությունը, իր մշտաժպիտ կապույտ աչքերը, մանկական անմեղունակ հայացքով։ «Հայրենի՜ք կերթանք կոր, հայրենի՜ք կերթանք կոր, հե՜յ» այս ուրախ բացականչությամբ և պարելով ընդունում էր ինձ, ամեն անգամ, որ մոտենում էի իր «տուն»-ին։ Իր լավատեսությունից, ոգեկան առողջությունից, երջանկությունից վարակվել էին և իր հարևանները։ Նավի «Թաղերից» ամենաուրախը Արշակի «Թաղն» էր անկասկած։

Քեֆդ ո՞նց է, Արշակ ջա՛ն,— հարցնում էի ես, և վստահ էի թե պիտի ստանամ նո՛ւյն պատասխանը,—«Սքանչելի է, տղա՛ս, սքանչելի։ Հայրենի՜ք կերթանք կոր, օ՜խ օ՜խ...», և նա ագահությամբ շնչում էր ծովային բարկ և առողջարար օդը, որպես թե հայրենի երկրի օդը լինեք արդեն...

Այդ օրը, մեր հրաշալի ճանապարհորդության երրորդ թե չորրորդ օրն էր, շատ բարձր էր իմ տրամադրությունը։ Երեք երիտասարդ զույգեր, որ դեռ Եգիպտոսում եղած ժամանակ որոշել էին նշանվել Հայրենադարձության նավի վրա և ամուսնանալ հայրենիքում, խնդրել էին ինձանից, որ քարավանապետի հանգամանքով հանդիսավոր կերպով գրանցեմ նշանդրեքի ակտը։ Մի ժամ հետո, նշանախոսության արարողությունները պետք է տեղի ունենային նավի մեծ սալոնում, և շատ ավելի հանդիսավոր, քան երիտասարդ զույգերը երազել էին...։ Մեզ հետ ճանապարհորդում էր նաև Կահիրեի Սովետական դեսպանորդ Ալեքսեյ Շեբուրինը, որ Բաթումիից անցնելու էր Մոսկվա։ Մեզ հետ էր նույնպես Բեյրութի Սովետական դեսպանատան աշխատակից Արշակ Սարգսյանի կինը՝ Սեդան, որը գնում էր Երևան։ Խնդրել էի նրանց, որ որոշյալ ժամին ներկա լինեն նավի սալոնում և որպես վկա ստորագրեն նշանդրեքի ակտերը։ Կատարվելու էր գեղարվեստական հայտագիր նավի բարձրախոսի առաջ։

Ամեն կարգադրություն վերջացրած, գնացի այցելելու Արշակին։ Նա ինձ ընդունեց իր սովորական ուրախության ցույցերով, և խնդրեց իր կնոջից, որ մի «հայկական պատվական սուրճ» պատրաստե մեզ համար։ Արշակն այսպես էր կոչում սուրճը, որը տաճկական որակել ընդունված է։

— Արշակ ջա՛ն, միշտ ուրախ, միշտ երջանիկ ես, «Պոբեդա»-ի ամենաերջանիկ մարդը իսկ և իսկ։ Մի օր էլ տրտնջալդ, մի բան պահանջելդ լսեի,— ասացի կատակով։

— Ե՞ս տրտնջամ, ե՞ս մի բան պահանջեմ...։ Եվ ի՞նչ կարող եմ պահանջել ավելի, երբ գնում եմ հայրենիք, երբ ուխտս կատարվել է։ Երկու-երեք ցանկություն, ուխտեր էլ ունեմ, նրանք էլ կատարվեի՜ն, հետո ոչինչ չեմ ուզում ավելի...

— Իսկ որո՞նք են մյուս ուխտերդ,— Արշակ, կարելի՞ է իմանալ։

— Երկրորդ ուխտս՝ Արտաս նշանել և ամուսնացնել հայրենիք հասնելուս պես առաջվելն երեք ամիս հետո... մրմնջաց Արշակը ականջիս, և աչքով ցույց տվեց իր երկրորդ դուստրը։ (Անդրանիկ դուստրը ամուսնացած էր արդեն և տեր երկու երեխաների)։ Արտան հորը նման բարձր հասակով, նրբիրան, շնորհալի մի աղջիկ էր։

Հանկարծ մի գաղափար ծնվեց մտքումս։

— Իսկ ի՞նչ կասեիր, եթե աղջիկդ նշանվեր հենց մի ժամ հետո, և դու երկար չսպասեիր ուխտիդ կատարմանը համար։

Արշակը նայում էր ինձ ակնապիշ, զարմանահար։

Մինչ նրա հետ էի խոսում, ակնարկս հառել էի մի երիտասարդի, որը մեզանից ոչ շատ հեռու, մի շեզ-լոնկի վրա նստած գիրք էր կարդում։ Մերթ ակնարկը անջատում էր գրքից և ուղղում մեր կողմը և ապա մի երկար պահ հանգչեցնում այն Արտայի վրա. օրիորդը շիկնում էր թեթևակի և խոնարհեցնում աչքերը։ Իմ ակնարկից չէր վրիպում նրանց անխոս համակրությունն ու հետաքրքրությունը միմյանց հանդեպ։ Տղան իմ երիտասարդ ընկերներից Մելքոն Մելքոնյանն էր, հեծանիվի համաեգիպտական չեմպիոն, որ տարիներով բարձր էր պահել հայ մարզիկի պատիվը Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում։ Լավ մեխանիկ էր նա, Ֆրանսիայում և Բելգիայում կատարելագործած իր արհեստը։ Ուներ սեփական հայտնի առելիե։ Հայրենիքի կանչից հետո նա թողել էր ամեն ինչ և մորը ու քրոջը հետ ուղևորվում էր հայրենիք։ Լինելով Հայաստանյան ճակատի մեր լավագույն երիտասարդներից, ներգաղթող խմբերից մեկի ղեկավար էինք նշանակել նրան։ Նկատել էի, որ իր ղեկավարի պարտավորություններից ազատ բովանդակ ժամանակը գալիս անցկացնում էր Արշակի սալոնի մոտ, իր շեզ-լոնկի վրա, և ինչ որ մի գիրք էր կարդում, հաճախ ընդհատելով ընթերցումը և երկար ու հիացիկ ակնարկներ հանգչեցնելով Արշակի երիտասարդ աղջկան վրա։ Ամեն անգամ երբ իր խմբի գործերով նրա անակնկալ կարիքն էի զգում, մարդ էի ուղարկում հետևից, որը նրան կարող էր անվրեպ գտնել նույն տեղում, Արշակի սալոնի հարևանության մեջ։ Գիտեի թե ինչ էի անում, երբ առանց Արշակի զարմանքը մեղմելու որևէ փորձի, անցա հանկարծահաս իմ գաղափարի կատարմանը։

— Մելքո՛ն, այստեղ արի՛,— ասացի երիտասարդին դիմելով։

Մելքոնը շեզ-լոնկի վրայից իջավ և բարձրահասակ շտկելով եկավ մոտս կանգնեց։

— Ի՞նչ կա, ընկե՛ր Արամյան։

— Սա կա, որ մի ժամ հետո պիտի նշանվես,— ասացի ես։

Երիտասարդ ընկերս նայում էր ինձ ապշած։

— Խնդրեմ ծանոթացեք, օրիորդ Արտա Գազազյան, դուստրը ընկեր Արշակի։ Պիտի նշանվես այս օրիորդի հետ, ընկե՛ր Մելքոն։ Օրիորդ Արտա, ծանոթացե՛ք, իմ երիտասարդ լավ ընկերներից՝ Մելքոն Մելքոնյան, հեծանիվի Եգիպտոսի չեմպիոն, առաջնակարգ մեխանիկ, ապագա ամուսինդ։

Արտան և Մելքոնը շիկնեցին և նայեցին իրար, հետո՝ գետին։

Սուրճի փոքր բաժակը դողաց Արշակի ձեռների մեջ։

Եվ առանց թողնելու, որ երիտասարդները ուշքի գան ու որևէ պատասխան տան, շարունակեցի.

— Գուցե տեղյակ եք. մի ժամ հետո նավի



Մելքոնը և Արտան նավի վրա

մեծ սալոնում նշանդրեքի արարողություններ են տեղի ունենալու։ Ներկա է լինելու ընկեր Շերոբինը, որպես վկա։ Կան երեք զույգեր։ Դուք կլինեք չորրորդ զույգը։ Մի ժամ ժամանակ ունեք։ Իրար հետ ման եկեք նավի վրա և ծանոթություն հաստատեցեք։ Եթե հավանեցիք իրար, մի ժամից ձեր ծնողների հետ կգաք սալոն։ Հայրիկը առարկություն չունի, օրիորդ Արտա, այնպես չէ՞, Արշա՛կ։

— Ի՞նչ ասեմ... ի՞նչ ասեմ։ Քանի որ ընկեր Արամյանը հարմար է գտնում...։

— Լա՛վ, երիտասարդնե՛ր, ընկեր Արշակը տարկություն չունի. մի ժամից կսպասեմ ձեզ։ Կնշանվեք և մի ամսից հետո կամուսնանաք Երևանում, ես եմ լինելու ձեր քավորը, գնացե՛ք։

Որոշյալ ժամին Մելքոնը և Արտան, իրենց ծնողների և մերձավորների հետ, եկան նավի սալոնը, և մենք ունեցանք չորս նշանախոսություն, փոխանակ նախատեսված երեքի։

Այսպես է, որ կատարվեց Արշակի երկրորդ ուխտը, իր ամենալավատես ակնկալությունից էլ լավագույն կերպով։

«Պոբեդա»-ի ամենաերջանիկ մարդը ավելի երջանիկ էր քան երբե՛ք։

— Ուրիշ ի՞նչ ուխտ ունես, ընկեր Արշա՛կ,
— հարցրի նույն երեկո, շնորհավորական այցի գնալով իր սենյակը։

— Կասեմ, երբ հասնենք Երևան...։

***

Երևանում Արշակի մեծ փեսան, Կարպիս Զատրջյանը, արհեստով լուսանկարիչ, լավ աշխատանքի անցավ Իտենտգենյան ինստիտուտում և շատ չանցած տեղավորվեց երեք սենյակից բաղկացած նորակառույց պատրաստի մի բնակարանում, որտեղ նրա հետ բնակվում է և իր աները՝ Արշակը։

Արտայի նշանածը՝ Մելքոնը աշխատանքի անցավ էլեկտրալուսավորման արմատուրայի գործարանում, և շուտով դարձավ ցեխի վարիչ։ Շատ չանցած նա աչքի ընկավ որպես առաջավոր ստախանովական և որպես այդպիսին հրավիրվեց պետական ռադիոկայանից ելույթ ունենալու։ Շուտով Մելքոնն էլ երկու սենյակից բաղկացած սիրուն բնակարան ստացավ։ Ստանում է լավ աշխատավարձ և վայելում իր հիմնարկի դիրեկտորի ու անմիջական ղեկավար ինժեների համարումն ու համակրանքը։

Արշակը, իհարկե, շատ երջանիկ էր։ Շաբաթվա մեջ մի քանի անգամ այցելում էր իր աղջկա պապգա քավորին, ինչպես ասում են այստեղ, կամ կնքահայրին, ինչպես ասում են արևմտահայերը։

— Ա՜խ,— ասում էր նա հաճախ,— մեկ հատիկ տղա զավակս, Նուպարս Ֆրանսիայումն է, նա՛ էլ լիներ մեզ հետ հայրենիքում...։ Բայց դժվա՛ր է այդ, զինվոր է նա ֆրանսիական բանակում. հազիվ մի քանի տարի հետո հնարավոր կլինի նրա ազատվելը զինվորական ծառայությունից և գալ մեզ միանալը այստեղ...։ Նա գա՜ր, դրանից հետո կմնա ինձ մեկ հա՜տիկ իղձ, մեկ հա՜տիկ ուխտ և վերջինը...

Իսկ ի՞նչ էր այդ վերջին իղձը, այդ կտեսնենք վերջում։

***

Եկավ Հարսանիքի օրը։

Քավորի պարտականությունս ստանձնեցի։ Մի շաբաթ օր, Մելքոնին ու Արտային տարա իրենց բնակավայրի՝ Ստալինյան ռայոնի զագսը*), որտեղ նրանք ստորագրեցին ամուսնական ակտը։ Հաջորդ օրը կիրակի, տեղի էին ունենալու հարսանեկան ուրախությունները։

Գի՞տեք, ինչ պատահեց շաբաթ երեկո, հարսանիքի նախօրեին—անակնկալների անակնկալը։ Արշակի միակ աղան, ֆրանսիական բանակի նախկին զինվոր, Հայրենիք եկավ և իր հորը տուն ընկավ անսպասելիորեն... ասեք հատկապես քրոջը հարսանիքին ներկա լինելու համար։ Ոչ ոք մտքից կանցկացներ նման բան. հրաշալի զուգադիպություն, այնպես չէ՞...։ Նուպարը, որ տեղյակ չէր թե իր հայրը և ամբողջ ընտանիքը հայրենիք են եկել, հորը նամակ է ուղարկում Եգիպտոս։ Ազգականները հեռագրով հայտնում են, թե ծնողները հայրենիքումն են։ Նուպարի զինվորական համազգեստը վրայից նետելը, ֆրանսահայ հայրենադարձների երկրորդ քարավանին միանալը և շտապ Հայաստան գալը մեկ քանի օրվա գործ է լինում։ Եվ բարեբաստիկ մի զուգադիպությամբ նա հասնում է ճիշտ քրոջը հարսանիքին։ Հարսանիքի օրը ամենաերջանիկ մարդկանցից մեկը Նուպարն էր անտարակույս, մի երեսնամյա, պարթևահասակ տղա, որի զինվորի արևախանձ դեմքը ճառագայթում էր ներքին բավականությունից։

Երջանիկ Արշակի մի իղձն էլ, մի ուխտն էլ կատարված էր, իր որդու անակնկալ և բարեդեպ վերադարձով։

Սփյուռքի հայության Հայրենադարձությունը այսպիսի անակնկալներ է վերապահում։

Այստեղ, եթե օրինավոր ամուսնության համար զագսի գրանցումը բավարար է նըկատվում, սակայն, արգելք չկա նաև կրոնական պսակ անելու։ Քաղաքացին ազատ է կրոնական պսակի, եթե այդ իր ցանկությունն է։ Փեսայի հարևանության մեջ բնակող մի քահանա, Բեյրութից ներգաղթած ընիկ Տեռոր-Եոլցի Թորոս քահանա Մաճառյանը, ընկերակցությամբ իր սարկավագի, եկել էր պսակը օրհնելու։ Դրանից հետո սկսվեցին հարսանեկան ուրախությունները։

Հարսն իր սպիտակափառ երկար շրջազգեստով, և փեսան իր սմոքինկի մեջ, շնոր-

---

*) Զագս—քաղաքացիական կացության ակտերի գըրանցման բաժին։

հալի էին և գեղեցիկ։ Կահիրեի հայտնի մեխանիկ և Հայաստան գալու կապակցությամբ կազմված մետաղարդյունաբերական արտելի նախագահ ընկեր Ղազար Հակոբյանի որդին, երիտասարդ Հակոբը. Կահիրեից իր բերած ավտոն դրել էր քավորի տրամադրության տակ՝ հարսն ու փեսան և հետարնակ հարսնևորները փոխադրելու համար։ Հարսնևորների մեջ կային բազմաթիվ եգիպտահայեր, որոնց շարքում եգիպտոսի Հայաստանյան ճակատի ղեկավարներից, Թեմական Ժողովի անդամներից և պարավանապետի տեղակալ ընկեր Մանվել Սելլերյանը։ Հարսանիքին ներկա էին և քավորի բարեկամներից՝ Երևանի միլիցիայի պետ փոխ-գնդապետ Հարությունը և իր կին Վանուհին, բնիկ մշեցի, 1915 թվին գաղթած, Մելքոնի աշխատած գործարանի ավագ ճարտարագետ Աննան, ազգությամբ ռուս, իր որդու՝ Կարենի հետ։ Այս վերջինները, ինչպես նաև նորահարսի ու փեսայի ծնողներն և քավորակին Թագուհին հարսին բերել էին գեղեցիկ ընծաներ — ոսկի օղեր, ապարանջաններ, ադամանդակուռ բռոշ, նրբահյուս լուսամփոփ և այլն։ Կարգի՛ն հարսանիք։

Սեղանը լիքն էր հայրենական գինիով, կոնյակով, երշիկներով, ավանդական տոլմայով, կեսարական պաստուրմով, պանիրներով, պես պես համադամներով...։

Կահիրեում հայտնի սաքսաֆոնիստ Սարգիսը, իր ակորդեոնով շենցնում էր հարսանիքը։ Բաժակաճառեր, կենացներ, կերուխում, երգ, նվագ. հայկական ու եվրոպական պարեր, ծափ ու ծիծաղ շարունակվեցին մինչև առավոտյան առաջին ժամերը, արտակարգ ուրախությամբ։ Հայրենադարձների հարսանիքն էր սա, ուրախությունը կրկնակի և գերադրական միայն կարող էր լինել։

Եգիպտոսում ավանդական, համարյա պարտադիր մեղրալուսնի ճամփորդությունն էլ պակաս չմնաց. հարսն ու փեսան երկու օր բնակվեցին «Ինտուրիստ» մեծ հյուրանոցում, որտեղ կանխավ սենյակ էր վերապահվել նրանց համար։

— Էլ ուրիշ ուխտ ունե՞ս, ուրիշ իղձ մնո՞ւմ է,— հարց տվեցի Արշակին հարսանիքի վերջում։

— Այո՛, այո՛, իհարկե, մնում է վերջին իղձս, վերջին ուխտս — մի օր տեսնել, լինի իսկ հեռվից, մեր մեծ ազատարար, մեզ կրկին մեր հայրենիքը դարձնող, ժողովուրդների հայր Ստալինին։

Այո՛, և դա այս պարզ ու բարի մարդու ջերմ ցանկությունն էր երկար տարիներից ի վեր։

Ինչպես տեսանք Արշակի իղձերը, ուխտերը կատարվեցին։ Վստահ ենք, որ նրա այս վերջին իղձն էլ, ուխտն էլ իր բառով, կատարվելու է մի օր։

ԱՐԱՄ ԵՐԵՄՅԱՆ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱԴՐԱՍԻ ԴՐՈՇԱԿԱԿԻՐՆԵՐԸ

18-րդ դարի երկրորդ կեսում և 19-րդ դարի առաջին քառորդում հայկական ոչ մի գաղութում հայ ժողովրդի ազատագրության հրատապ հարցն այնքան մտքեր չի հուզել, որքան Հնդկաստանի Մադրաս քաղաքում։ Այդ ժամանակաշրջանում է, որ Մադրասի առաջադեմ, հեռահայաց ու նշանավոր գործիչները հայ ժողովրդի ազատագրական շարժման խնդրում այնքան խոշոր դեր են խաղում։ 18-րդ դարաշրջանի հայոց պատմության էջերում այդ գործիչներից փայլում են Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի և Շահամիր Սուլթանում Շահամիրյանի անունները․ Քաղաքական առաջադեմ գաղափարներով տոգորված այս պայծառ դեմքերի շնորհիվ է, որ 18-րդ դարի երկրորդ կեսից Մադրասը դառնում է հայ ժողովրդի ազատագրական ու կուլտուրական շարժման խոշոր կենտրոններից մեկը։ Մադրասում է, որ 18-րդ դարի վերջերին, 1794 թվականին, Տ. Հարություն քահանա Շմավոնյանի խմբագրությամբ, լույս է տեսնում հայերեն առաջին թերթը «Ազդարար»-ը, որի էջերում արծարծվել է սկսում հայ ժողովրդի ազատագրման գաղափարը։ Այս թերթի հրապարակ գալը իր ժամանակին խոշոր երևույթ էր հանդիսանում հայ հասարակական մտքի զարգացման տեսակետից։ Նմանապես Մադրասում են հրատարակվում հայ ազատագրական պայքարին և ժողովրդական հանրապետության կանոնադրության նվիրված առաջին արժեքավոր գրքերը.— «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» (1772 թ. Մադրաս)— Մովսես Բաղրամյանի և «Որոգայթ փառաց»— Շահամիր Շահամիրյանի։ Հայ քաղաքական գրականության նվիրված այդ առաջին երկերով հեղինակները ձգտել են ժողովրդի մեջ վառ պահել և՛ հայրենասիրության, և՛ ազատագրության ոգին։ Այդ նպատակով էլ տետրակները տարածվել են հայ ժողովրդի մեջ, ուղարկվել են նաև պարսկահայ նշանավոր դեմքերին, Ղարաբաղի (Խամսայի) մելիքներին, Սիմեոն կաթողիկոսին և նույնիսկ վրաց Հերակլ թագավորին։ Առհասարակ, Մադրասի հայ գործիչներին— թե՛ Շահամիրյանին, և թե՛ Բաղրամյանին— հուզել է մի միտք, մի ձգտում՝ սթափեցնել ժամանակի հայ երիտասարդներին դարավոր քնից, հրահրել նրանց հոգիներում ո՛չ միայն ազգային ինքնագիտակցության, հայրենասիրության ու ազատության ոգին, այլ և նվիրվածության զգացմունքը․ իսկ նպատակը— ծածանել հայ ազատագրական պայքարի դրոշը և Հայաստանն ազատելով օտար տիրապետողների լծի տակից, վերականգնել նրա քաղաքական անկախությունը։ Բայց դա պատահական մի երևույթ չէր, այլ ժամանակի հրամայական պահանջ։ Դա այն պատմաշրջանն էր, երբ Մադրասի ու Կալկաթայի հայ առևտրականները, սկսած 18-րդ դարի առաջին կեսից, տնտեսական խոշոր դեր էին խաղում Հնդկաստանի և Արևմտյան Եվրոպայի առևտրական փոխհարաբերությունների ասպարեզում։ Սակայն, նույն դարի երկրորդ կեսին հնդկահայ առևտրականներն այլևս չեն դիմանում անգլիական մրցակցությանը․ բրիտանական իշխանություններն ու կապիտալը հետզհետե չեզոքացնում են նրանց ու դուրս մղում առևտրական շուկաներից։ Նման իրադրությունը դրդում է հնդկահայ առևտրականներին ձգտել իրագործելու հայ պետության ստեղծման գաղափարը, որի իրականացումը նրանք կապում էին սուլթանական ու շահական լծից Հայաստանն ազատագրելու խնդրի հետ։

Բայց Մադրասի առաջադեմ մտավորականների գրքույկների հրատարակության դրդապատճառը միայն հնդկահայերի տնտեսական քայքայումը չէր, կար և հայ ժողովրդի քաղաքական ազատության հրատապ խնդիրը։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ

հայ ժողովուրդը տառապում էր սուլթանական և շահական գերիշխանության բացարձակ կամայականությունների, բռնությունների ու հարստահարությունների ներքո։ Հայ ժողովրդի համար ստեղծված մռայլ իրականության և Հայաստանում տիրող ծանր դրության պատկերը տեսնում ենք մեր ձեռագիր մատյաններում, ժամանակի վաստակավոր գրիչներն իրենց ապրած պատմաշրջանն անվանում են «դառն ու դժնդակ», «աղետաբեր», «անբարի», «չար»։ Նրանք իրենց ձեռագրերը գրել են «դառն և ամպրոպ խռովութեան և անփարատելի տրտմութեան մէջ», «անանդորր ժամանակս», «գերութեան կամ փախստի ճամբին»։ Հատկանշական է և այն, որ 18-րդ դարի առաջին քառորդից սկսած Անդրկովկասի՝ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ժողովուրդները իրենց ազատագրության միակ պաշտպան համարում են Ռուսաստանը և ձգտում են վայելել նրա հովանավորությունը։ Այդ գաղափարով համակվում են հայ ժողովրդի ազատագրական պայքարի բոլոր փայլուն ղեկավարները, որոնց մեջ առաջին դրոշակակիրներից մեկը հանդիսանում է Իսրայել Օրին, որը հրապարակ է իջնում 18-րդ դարի առաջին քառորդում։ Հանուն հայ ժողովրդի ազատագրության, նա Արևմտյան Եվրոպայի երկրներում շատ գահակալների դռներ է բախում, բայց ոչ մի օգնություն չի ստանում։ Հիասթափված Արևմտյան Եվրոպայի գահակալների անտարբեր ու անբարյացակամ վերաբերմունքից, 1701 թվականին Իսրայել Օրին հայերի անունից մի դիմում է ներկայացնում ռուսաց կայսր Պետրոս Մեծին, խնդրելով, որ ապահովի ստրկական պայմաններում տառապող հայ ժողովրդի և Հայաստանի ազատագրումը պարսկական լծից։ Կայսրը առաջ է քաշում Հայաստանի ազատագրության ու հայկական պետության կազմակերպման հարցը։ Պետրոս Մեծը խոստանում է ո՛չ միայն օգնել հայ ժողովրդին իր ազատագրական արդար պայքարում, այլ և իր հովանավորության տակ վերցնել նրան։ 1723 թվականի հունիս 3-ին էլ հրատարակվում է Պետրոս Մեծի հրովարտակը, որով նա խոստանում էր հովանավորել հայ ժողովրդին՝ ազատելով վերջինիս օտար բռնակալների լծից։ Այս ակտով ոչ միայն ամրապնդվում են հայ-ռուս քաղաքական կապերը, այլ և հայ ժողովրդի կյանքում սկսվում է քաղաքական պայքարի մի նոր շրջան։ Բնորոշ է և այն, որ Պետրոս Մեծի արշավանքների շրջանում հայերը, վրացիների հետ միասին, պաշտպանվում են օսմանցիների, լեզգիների և պարսիկ խաների հարձակումներից ու միաժամանակ Սյունիքում և Ղարաբաղում ծածանվում է ժողովրդա-ազատագրական պայքարի դրոշը։

Նույն երևույթը տեսնում ենք Եկատերինա Բ կայսրուհու օրոք, որը իր քաղաքական ծրագրերի իրագործման համար Ղրիմի հայերին գաղթեցնում է Դոնի Ռոստովի շրջակայքը և 1781 թվականին այստեղ հիմնում Նոր-Նախիջևան քաղաքը։ Կայսրուհու թույլտվությամբ Ռուսաստան են գաղթում շատ հայեր նաև Բեսարաբիայից, Մոլդավիայից, Ռումինիայից և Բուկովինիայից։ Նոր-Նախիջևանից բացի Դնեպրի ավազանում հիմնվում է զուտ հայաբնակ Գրիգորիոպոլ քաղաքը։ Նույն շրջանում էլ հետզհետե կազմավորվում են Մոզդոկի, Ղզլարի և Աստրախանի հայ գաղութները։ Այսպիսով հայ ժողովրդի համար սկսվում է զարգացման մի նոր շրջան։

Այսպես էր պատկերը նաև 18-րդ դարի վերջերում։ Այդ ժամանակաշրջանում նորից առաջ է քաշվում պարսկա-թուրքական լծի տակ տառապող Հայաստանը, Մեծն Ռուսաստանի օգնությամբ, ազատագրելու հարցը։

Այնուհետև հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները նոր փուլ են ստանում 19-րդ դարի սկզբներին։ Դա այն պատմաշրջանն էր, երբ ռուս բանակը վերսկսել էր արշավել դեպի Անդրկովկաս։ Ռուսական բանակի առաջխաղացումը ազատագրական շարժման ոգի է մտցնում նաև գաղութահայության մեջ։ Թերևս դրանով էլ պիտի բացատրել, որ ռուս ժողովրդի օգնությանը դիմելու և հայերի ազատագրությունը Մեծ Ռուսաստանի հետ կապելու փաստական ցայտուն տվյալներ գտնում ենք նաև հնդկահայ գաղութի 19-րդ դարի առաջին շրջանի գրականության մեջ։

Դրանցից էականը 1806 թվականին Մադրասում, շիրազցի Տ. Հարություն քահանա Շմավոնյանի տպարանում, տպված «Անցք կամ գործք» խորագրով գրքույկն է։ 29 էջից բաղկացած պարզ և անպաճույճ մի տետրակ է դա, որ իր բովանդակությամբ տալիս է Մադրասի հայ հասարակության 43-րդ և 44-րդ պատմական ժողովների արձանագրությանց պատկերը։ Այդ ժողովներում հանդես են գալիս 18-րդ դարի վերջին շրջանում և 19-րդ դարի առաջին քառորդում Մադրասում ապրող և հայ ժողովրդի ազատագրության վեհ գաղափարով տոգորված ժամանակի պայծառ դեմքերը, որոնց մեջ ամենից առաջ տեսնում ենք հայ անդրանիկ լրագրի հիմնադիր՝ Տ. Հարություն քահանա Շմավոնյանին, կուլտուրական մի փայլուն գործչի, որի ազնիվ սիրտը բաբախում էր միայն հայ ժողովրդի ազատագրության համար։ Շմավոնյա-

նը չափազանց հեռատես լինելով, հայ ժողովրդի չերմ պաշտպան համարում է ռուս ազնիվ և վեհանձն ժողովրդին և գտնում է, որ Հայաստանի ազատագրության հարցը պիտի կապել Մեծ Ռուսաստանի հետ։ Հատկանշական է և այն, որ Մադրասի մյուս հայ հայրենասերներն էլ պաշտպանում են նույն տեսակետը։ Ընդհանուր առմամբ, 1806 թվականին հրատարակված սույն գրքույկը մադրասաբնակ հայ հայրենասերների գործունեության ցայտուն մի էջը պատկերող կարևորագույն վավերագրերից մեկն է, որն իր մեջ բովանդակում է հասարակական ու քաղաքական ուրույն արժեք ներկայացնող ուշագրավ կետեր։ Դրանցից էականն այն պարզաբանությունն է, թե ինչո՞ւ պիտի ազատագրել Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրությունն օտար լծից։ 1805 թվի նոյեմբերի 17-ին Մադրասում կայացած պատմական ժողովին մասնակցող հայրենասերներից Նազար Հակոբյան Շամիրյանն իր արտասանած ճառով ընդգծում է պատճառներից կարևորը։ Նա տխուր սրտով արձանագրում է այն փաստը, որ հայ ժողովուրդը 500 տարվա ընթացքում ապրում է քաղաքական-տնտեսական ամենածանր պայմաններում, բայց միաժամանակ իր անսահման ուրախությունն է արտահայտում, որ հայության մի զգալի մասը զօրհնեալ Ռուսաստանիս օգնությամբ փրկվելով ասիական բռնակալության դարավոր ստրկությունից և տառապանքներից, մտել է պատմական նոր հունի մեջ։ Ահա թե ինչպիսի գույներով է պատկերում նա հայ ժողովրդի անցյալի տխուր վիճակը, միաժամանակ ընդգծելով Ռուսաստանի պատմական դերը հայ ժողովրդի մի ստվար հատվածի ազատագրական գործում։

— Քանզի տուն և աշխարհն մեր,— ճառում է Շամիրյանը,— մինչ իբր հինգ հարիւր ամ ժամանակաւ մաշեալ ի ներքոյ սրոյ և ոտից անհաստատ տէրութեանց և այլակրօնից. մեք և բիւրաւորք յազգակցաց մերոց և արիւնակցաց վարեալք ի պէս-պէս գերութիւնս և պանդխտութիւնս, նուաղեալք և օրըստօրէ պակասեալք, ոմանք զոհ անկանելով անընական և օտար տարերաց, և ոմանք ճնշեալք ի ներքոյ անտանելի խստութեանց և անազատութեանց, մեք և աշխարհ մեր աստ, որ յաւէտ յուսահատութեան տրտմութիւն քան թէ վերականգնման նպատակ ունէաք առաջի աչաց, այժմ արժանաւորեցաք (յայսմիկ և եթ բախտաւորագոյնք քան զգնախնիս մեր) առանց խնդրոյ և ակնկալութեան մերոյ տեսանել զօղորմածագոյն ձեռ ամենամեծ կայսերութեան օրհնեալ Ռուսաստանու ամենաողորմածաբար կարկառեալ առ փրկութիւն և ազատութիւն մեր («Աճցք կով գործք» 1806 թ., Մադրաս, էջ 5)։

Մի հանգամանք պարզ է, որ Մադրասի առաջավոր և հայրենասեր գործիչներին հուզում է այն ծանր վիճակը, որի մեջ գտնվում էր հայ ժողովուրդը, բայց և միաժամանակ նրանց սրտերը բաբախում են նրա ազատագրության բարձր զգացումներով։ Ապրում են նրանք հայության ցավերով ու նրա ազատության համար ծրագրեր մշակում։ Նրանք գիտեն նաև Ռուսաստանի հզորացման մասին։ Ահա թե ինչո՛ւ նրանք հայ ժողովրդի ազատագրական պայքարի էությունը վերլուծելիս, Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի և Մովսես Բաղրամյանի նման, հայության օտար լծից փրկելու գործում մեծ տեղ են տալիս Ռուսաստանին, Վրաստանին։ Գտնում են, որ Հայաստանը կարող է ազատագրվել միայն ռուս ազնիվ ժողովրդի օգնությամբ։ Նրանք հայ ժողովրդի միակ ազատարար և փրկարար համարում են Ռուսաստանին։ Գտնում են, որ նա՛ կարող է ստեղծել անկախ Հայաստանը։ Վերջապես նրանք գտնում են, որ Ռուսաստանի հովանավորությամբ և հայվրացական ժողովուրդների եղբայրական միությամբ ու վրաց թագավոր Հերակլ Բ-ի գլխավորությամբ կիրականանա հայ ժողովրդի վերջնական ազատագրությունը։ Ահա այս է մադրասաբնակ հայ գործիչների մըտայնության հիմնական կետերից մեկը և ամենից կարևորը։ Հենց այս ուղղությամբ էլ նրանք արտահայտվում են ժողովում։ Այս տեսակետից առանձնապես բնորոշ են ժողովի նախագահ Նազար Հակոբյան Շամիրյանի արտահայտած մտքերը։ Նա ավելի խորացնելով իր տեսակետը, ավելացնում է.

— Այժմ տեսանելով և լսելով ազատ և փառաւոր կենցաղավարութիւն քաղաքակցաց մերոց և եղբարաց ի ներքոյ սքանչելի բարեկարգութեան կայսերութեանն Մեծին Ռուսաստանու, արժանաւորս ի նորանէ յարգեալ և պաշտօնատրեալ ճգնաժամական պատուաւ և աստիճանաւ («Աճցք կով գործք» 1806 թ., Մադրաս, էջ 7)։

Ռուսաստանի հովանավորության ներքո գտնվող հայ ժողովրդի ազատությունն ու երջանկությունն անսահման ուրախություն է պատճառում Մադրասի ազգասեր հայերին։ Ահա թե ինչու նախագահ Ն. Շամիրյանը ժողովում առաջարկում է խորին երախտագիտական զգացումներով լի շնորհակալության թուղթ գրել «Մարգասէրս և զօրհնեալս Ռուսաստանին»։ Նա քաղաքական պարտականություն է համարում այդ խնդիրը դնել ժողովում, որովհետև գտնում է, թե 1) մեծահզոր Ռուսաստանի շնորհիվ է, որ հայ ժողո-

վուրդն ապրում է հանգստության և բարօրության մեջ և 2) նա է հայության ազատիչն ու բարերարը։

— Եվ արդ յայտնանք հաւաքելի է,— ճառում է ժողովի նախագահը,— թէ մեզ ժողովեալքս աստ բարեպէս տեղեակ եմք մեծահոգիութեան և ողորմածագոյն դիտման օրհնեալ կայսերութեան և մարդասէր կայսերն Ռուսաստանու յատկապէս առ ազգ և աշխարհն մեր, տեղեակ եմք և խելամուտ հանդըստութեան և բարօրութեան ազդակցաց մերոց ենթ Աստուածապահ կայսերութեան նոցին, լի եմք ամեն յարգանօք և երախտագիտութեամբ առ այս ազատիչ և բարերար մեր. և վասն այնորիկ ժողովեալ եմք նախ սակս միմեանց հաղորդելոյ և միաբան ուրախանալոյ ի վերայ պատճառի խնդութեան և երջանկութեան մերոյ, և ապա խորհելոյ զյարմարութենէ կերպին հեղլոյ արտաքո զհեղեղ երախտագիտութեան սրտից մերոց առ ուստ ամենապայծառ կայսերութեանն («Անգլ հմմ գործ» 1806 թ., Մադրաս, էջ 8)։

Ժողովի ղեկավար Նազար Շամիրյանը առաջադրված խնդրի կարևորությունը, վեհությունն ու լրջությունը նկատի առնելով «խոնարհաբար հայցում էր» ժողովականներին, որ Ռուսաստանի կայսեր երախտագիտության թուղթ գրելու հարցի մասին յուրաքանչյուրն ազատապէս» արտահայտե իր կարծիքը։ Ավելի հատկանշականն այն է, որ նա հավատարիմ մնալով ժամանակի կրոնական ոգուն, «սրբակրօն հարցս առաջարկում է աղոթքով խնդրել Տիրոջից, որ ժողովականներին «արժանաւորութիւնս շնորհե, որպեսզի նրանք ավելի լուրջ խորհեն և առաջադրեն այն, որ առավել «վայելուչն է և «րօլորովին հաճելիս։ Աղոթքն արտասանում է հայ անդրանիկ լրագրի հիմնադիր Տ. Հարություն քահանա Շմավոնյանը։ Բոլոր ժողովականներն ոտքի են կանգնում և ահա բարեկրոն քահանայի շրթերը մրմնջում են.

— ...Ինձ այսպէս երևի զի այս ժողով ձեր յԱստուծուստ է և ընկերակից է մեզ Քրիստոս, ուրեմն խնդրեմ առ հասարակ ամենեքեանդ ասելով զտէրունական աղօթք՝ խնդրեցէք յամենակալէն Աստծոյ երկայն կեանս և յաղթութիւն ամենամեծ կայսերն Աղեքսանդրի պաշտպանին և ողորմածին ազգին և աշխարհին մերոյ. և մեզ զշնորհ հոգւոյն սրբոյ, զի նա տացէ մեզ բերան և իմաստութիւն ի առաջադրել և խօսել ըստ հաճոյից իւրոց. օրհնեալ էք և օրհնեալ լինիք, ամէն («Անգլ հմմ գործ» 1806 թ., Մադրաս, էջ 9)։

Այնուհետև բոլոր ժողովականներն էլ առանձին-առանձին և տարբեր ոճերով հայտնում են իրենց կարծիքները։ Մադրասի քահանաներից խոսում է նաև Տ. Թադեոս Տեր-Անդրեասյանը, որ նույնպես կանգ է առնում «ամենամեծ կայսերութեանս հայ ժողովրդի հանդեպ ցույց տված անօրինակ բարերարության վրա։ Հերթական կարգով արտահայտվում են նաև Մադրասի հայության ժամանակի առաջավոր գաղափարներով տոգորված հասարակական հայտնի գործիչներից Մանուկ Հակոբյանը, Հակոբ Հարությունը, Գրիգոր Սամյանը, Ավես Սեթյանը, Վարդան Գասպարյանը, Սեթ Սամյանը և ուրիշները։ Բոլորն էլ սրտագին ողջունում են ռուսական դրոշակի հաղթանակը, գտնելով, որ ռուս ժողովրդի հետ ստեղծված անխորտակելի բարեկամությունն այն միակ ուժն է, որի օգնությամբ հայ ժողովուրդը կարող է թոթափել բռնության, խավարի և տգիտության շղթաները ու հասնել իր քաղաքական ազատությանը։

Հատկանշական են «աշխարհատեսս և «փորձառուս Մարգար Բարումնի արտահայտած մտքերը։ Խոսում է նա պատմական տվյալներով և առանձնապես ընդգծում այն «խնամքնս ու ողորմածությունը, որ հայ ժողովրդի հանդեպ մարդասիրաբար ցույց են տվել Պետրոս Մեծը, Եկատերինա կայսրուհին և Աղեքսանդր կայսրը։ Անդրադառնում է նաև երկու հարևան եղբայրակից ժողովուրդների—հայերի ու վրացիների քաղաքական հարաբերություններին։

Արտահայտվելու համար կրկին ձայն է խնդրում հայ լրագրության առաջին դրոշակակիր Տ. Հարություն քահանա Շմավոնյանը։ Խոսում է նա կարճ, բայց բովանդակալից։ Նա նորից է շեշտում, որ հայ ժողովրդի միակ ջերմ պաշտպանը Մեծն Ռուսաստանն է։ Նրա արտահայտած մտքերի մասին ավելի ցայտուն գաղափար տալու համար այստեղ ամբողջությամբ առաջ ենք բերում նրա ճառը, որ բնորոշում է նաև նրա քաղաքական աշխարհայացքի էությունը։

— Առ այս ոչ ինչ ունիմք դարձեալ խորհել. մինչ տեսանեմք արդէն զի քան զարեգակն պայծառ է զշնորհ և զգթութիւն ամենաողորմած կայսերն Ռուսաց առ ազգս մեր, վկայ են մեզ բովանդակ բարերարութիւնք նոցին առ ազգս Հայոց, որ ի Նորն Նախիջևան և ի Գրիգորիուպօլ, զերափայլ պատիւ որով հոգելոյս Յովսէփ կաթուղիկոսին մեծարեաց ի պարծանս ազգի մերոյ, և այժմ զոր առնէ եպիսկոպոսաց Հայոց, և յատկապէս շնորհաւորմամբն Սրբազան Դանիէլ կաթուղիկոսին, մանաւանդ ներկայ իշխանաւն Աշդարխանու, որ կենդանի է և թոռն Աւան իշխանին Տեառն խաչանոյ տանն աղուանից Հայոց, որ այժմ Շուշի ասի, և միւս եղբայրն որ է Տէր կամ Լարդ Ղըլարու։ Եվ այժմ զոր լսեմք հաւատարիմ արանց գրեցելովք զի զբարձր

թագուհի իւր տարածեալ է ի հովանաւորութիւն և ի փրկութիւն տանն Հայոց։ Ունիմք մեք բազում օրինակս ազգասիրաց և մարդասիրաց, որք գործովք իւրեանց հաճոյ եղեն Աստծոյ և արժանի յաւիտենական յիշատակութեան, այլ բազումք ի սոցանէ միայն ազգասէրք լոկ զազգս իւրեանց սիրէին և փրկութիւն նոցա միայն ջանային որպէս յայտ է վերծանողաց։ Բայց սա օգոստափառ կայսերն մեր մարդասէր՝ ոչ գոլով յազգէ Հայոց, սիրէ զազգն մեր, և փրկիչ և առաքեալ երևի վասն մեր, վասն որոյ տուք ինձ համարձակութիւն առաջի յարգութեան ձերոյ ասել ոչ միայն խոհական և երախտագիտելի՝ այլև տօնելի է ամենայաղթ կայսրն Ռուսաց, և մեզ յատուկ պարտականութիւն է դիմել ամենակատար սրտիւ առ Արարիչն ամենայնի Աստուած սակս բարի աջողութեան և երկան կենաց ամենապայծառ կայսերն մերոյ Ներկայ պայծառացուցչի սրբոյ եկեղեցոյն մերոյ, և այսպէս որպէս սկզբան ասացի ոչ երկբայիմ զի այս ժողով ձեր իցէ Աստուծոյ և Հոգւով, որ տայցէ ձեզ խորհել և խօսել, ըստ այնմ թէ նա տացէ ձեզ բերան և իմաստութիւն։ Ուրեմն համարձակիմ առարկել զի ոչ միայն երախտագիտել է արժան՝ այլև աղերսախառն և հայցուածքն դրով մատուցանել զայն առ յոտս աթոռոյ ամենաբարձր և անպարտելի Տէրութեան նորա... արժանաւոր անձինս առաքելով ի դիմաց համասարակութեանս մերոյ («Անցք կամ գործք», էջ 10, Մադրաս 1806 թ.)։

Արտասանված ճառերից և մտքերի փոխանակությունից հետո օրակարգում դրվում է երկու գործնական առաջարկ. առաջինը՝ երախտագիտության և շնորհակալության մի թուղթ մատուցել անպարտելի Տէրութեան Ռուսաստանի և երկրորդ՝ Նորին Բարձրության համար մի վայելուչ ընծա պատրաստել։ Նվերի ընտրության խնդրում ժողովականները երեք տարբեր կարծիք են հայտնում.

1. Նվիրել ընտիր և հազվագյուտ ապրանք Հնդկաց աշխարհի։

2. Երախտագիտության մի արձան կանգնեցնել Նոր-Նախիջևանում և Գրիգորիոպոլ քաղաքում։

3. Կալկաթայի և Բոմբեի հայության ևս ժողովի հրավիրել և նրանց «միաբանությամբ» ավելի «արժանաւոր ու վայելուչ» ընծա ուղարկել։

Այնուհետև ժողովում մի նոր հարց է առաջադրվում.—ի՞նչ ձևով ուղարկել ընծան և երախտագիտության թուղթը «մեծահռչակ կայսեր»։ Այս հարցի նկատմամբ հետաքրքիր է Գրիգոր Սամյանի պաշտպանած տեսակետը։ Նա առաջարկում է ընծան և պաշտոնական գրությունն ուղարկել կայսեր շատ զգույշ ձևով, որպեսզի չը վտանգվի օսմանցիների կամ պարսիկների դերիշխանության ներքո ապրող հայ ժողովրդի դրությունը։ Այս էական հարցի շուրջ ևս լինում են տարբեր առաջարկություններ.



Տ. Հարություն Քահանա Շմավոնյան

1. Գրությունն ու ընծան հասցնել Ռուսաստանի թեմի առաջնորդ Տ. Եփրեմ Արքեպիսկոպոսին և նշանավոր հայեր Մինաս ու Հովակիմ Եղիազարյաններին, խնդրելով, որ նրանք մի պատեհ ժամու և վայելուչ կերպիւ մատուցանեն Նորին Կայսերությանն։

2. Բրիտանական դեսպանի միջոցով մատուցել։

3. Հատուկ մի անձի միջոցով ուղարկել։

Անցնում է առաջին առաջարկությունը։

Այնուհետև 1806 թվի հունվար 28-ին Վարդան Գասպարյանի տանը տեղի է ունենում մի նոր ժողով, ուր հանդիսավոր կարդացվում է երախտագիտության զգացմունքներ արտահայտող թուղթը։ Ապա ժողովին ներկա եղողները նորից կարդում են առանձին-առանձին և ստորագրում։ Թարգորոշ գաղափար տալու

համար պատմական այդ գրության բովանդակության մասին, այստեղ առաջ ենք բերում այն ամբողջությամբ, որ ներկայացնում է հետևյալ պատկերը.

ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿ և օգոստափառ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ. Աստուածահզօր ԿԱՅՍԵՐ ՄԵԾԻՆ Ռուսաստանու, և միանգամայն բազում և զանազան Հիւսիսական իշխանութեանց և պետութեանց միահեծան ԻՆՔՆԱԿԱԼԻ։

Յառկայս անտիրացեալ Ազգիս և Աշխարհին Հայոց ողորմած և բարերար այցելուի և պաշտպանի օգոստափառ մեծութեան, ի ձեռն յարգանաց՝ հպատակութեան՝ գոհունակութեան՝ և երախտագիտութեան խոնարհեալ՝ հնազանդաբար մատուցումն։

*Ազգս Հայոց որ ի վերին տեսչութենէ՝ անխնամացեալ՝ կորուսաք զԹագաւորութիւն մեր. ի բռնութենէ օտարաց տարագրեցաք ի յաղենաստանս Հայրենեաց մերոց, բայց՝ ո՛չ իսպառ լքեալ թողեալ զմեզ ձեռն ամենակալին՝ բաժինս որոշեաց Հոգին Տեառն. և ժողովս ժողովս ի վարելոցս փոխադրեաց ի Աստուածապահ տէրութիւնս ձեր, ուր յանձնեցան խնամարկեցան ի գերաշխարհիկ բարերարութենէ Աստուածազօր կայսերաց՝ առաւել բարօրութեամբ՝ քան ի բնիկ Թագաւորութեանս մերում, և ժողովս ժողովս մեկնեաց ի սահմանս Հնդկաստանու, ի կալուածս մեծափառ ազգին մեծին Բրիտանիոյ, ուր հովուիմք ի հանդորրու, և պաշտպանիմք ի բարեբար խնամս ամենազօր աէրութեանց իւրեանց. իսկ մնացելոցն բազմութեան ի սեփական աշխարհին, ի ճնշմունս օտարազգաց. անցուցանելով ի հուր և ի ջուր նեղութեան՝ սահման եդ ժամանակի սահմանին ժամանակաց՝ հանելոյ ի հանգիստ, որոյ զլրումն և զկատարած տեսանեմք աչօք բացօք եկեալ հասեալ առ մեզ օգնութիւն ի Տեառնէ, և ծագեալ մեզ եղջիւր փրկութեան ի Տանէ Դաւթի սիրելւոյ իւրոյ։ Այս է, ի Տիրահաստատ ի յարփիափայլ գահէ, յաւիտենական յիշատակութեան արժանի Մեծի կայսերն ՊԵՏՐՈՍԻ, որոյ ի խնամոցն Աստուծոյ սկզբնաւորեալն ողորմութիւն առ անկեալ ազգս մեր բազմապատկօրէն օրըստօրէ տարածեցաւ ի մեզ ի յարժանաժառանգ յաջորդաց նորին երանելւոյն, իսկ՝ առ երանաւէտ ժամանակաւ ամենամեծի և անյաղթելի ԿԱՅՍԵՐԴ մերոյ՝ ծագեցաւ մեզ արեգակն ի բարձանց՝ առ ի միանգամայն լուսաւորել զխաւարային տխրականութիւն փարատել ազգիս՝ գալստեամբ Աստուածազօր զօրացդ յաշխարհս մեր, ուստի և մեզ հանդերձեցաւ ճանապարհ ելանել ընդ առաջ Քրիստոսապսակ ԿԱՅՍԵՐԴ մերոյ հեծելոյ ի փրկութիւն մեր՝ խոնարհական և աղերսական թղթովս. ազգ միահամուռ և համախումբ, օրհնելով զգալուստ ամենամեծի անուան՝ և անյաղթելի Տէրութեան քոյ յաշխարհս մեր. միանգամայն՝ և զանբաւելի երախտեաց՝ և Աստուածադորձ բարերարութեանցն ձերոց առ ազգս մեր, զի հերուն հետէ առ ի մեզ մթերեալն բան գոհաբանական և շնորհակալութեան, ձօնել մատուցանել առաջի փրկողին մերոյ ԿԱՅՍԵՐ, եւս՝ և զայլերս համօրէն ազգիս ընդ առ ոտս Տեառնդ մերոյ, և հայցել՝ որպէսզի Աստուածազութ սիրով շարժեսցիս ի մեզ յողորմածութիւն, գրել զազգս մեր ի ժողովուրդ քոյ ստրուկ որով զիկոր անկեալն մեր դլուխ կարասցուք համբառնալ յամէն ուրեք, և խրախոյս բառնալ յանուն ամենայաղթ ԿԱՅՍԵՐԴ մերոյ որով և արժանասցուք թերևս վերստին վայելել զքաղցրութիւն հայրենեաց մերոց ընդ ամենաքաղցր լծով ծառայութեան ձերոյ. ուրանօր համախմբեալք ազգովին՝ միաբանութեամբ հանցուք զօրհնութիւն վերնական խնամոցն պարգևողին մեզ զփրկութիւն, և հայցեսցուք ի նոյն Աստուած՝ պիտական է երկարութիւն կենաց մշանջենաւորութիւն անխոնարհելի բարձրութեան՝ երանական փառաց և ամենայաղթ զօրութեան՝ ողորմածի և բարերարի ԿԱՅՍԵՐԴ մերոյ։*

*Որ և արդ՝ նոյն սիրայի յուսով յանձն եղեալ մեր ի խնամողական պաշտպանութիւն ամենաբարձր քոյ կարողութեան՝ պանծամք Տեառնդ մերոյ մեծի անուամբ՝ ամեն մտերմութեամբ և խոնարհամիտ սիրով։*

Քոյդ Ամենաբարձր Կայսերական Պետութեան Ամենախոնարհ ծառայ. և հաւատարիմ հպատակ

*«Մին վայելուչ և յարմար» թուղթ էլ գրում են Վրաստանի մայրաքաղաքի՝ Թիֆլիսի իշխանին։ Դա ցույց է տալիս, որ Մադրասի հայ հայրենասերները հատուկ հարգանք են տածել նաև դեպի Հերակլը։ Դա ցույց է տալիս և այն, որ նրանք հայ ժողովրդի բախտը կապել են նաև հարևան վրաց ժողովրդի բախտի հետ։ Նրանք խորապես ըմբռնել են, որ երկու բախտակից ժողովուրդները պիտի միանան, միասնական ույժ կազմեն, որպես-*

*գի ազատվելով օտար լծից, պահպանեն իրենց անկախությունը։ Դա անհրաժեշտ էր, երբ Մեծ Ռուսաստանն իր վրա էր վերցնում Վրաստանի ու Հայաստանի հովանավորությունը։ Այդ կապակցությամբ էլ անչափ հետաքրքիր է Մադրասի հայ հայրենասերների գրությունը ուղղված Հերակլ Թագավորին, որ բերում ենք ստորև.*

Մեծի և Գերապայծառ ԻՇԽԱՆԻ, և Քաջայաղթ Զօրապետի Ամենաբարձր կայսերութեանն Մեծին Ռուսաստանու, որ ի Թիֆլիս մայրաքաղաքին վրաց, և
Յատկապէս բարերարի և խնամակալի Ազգիս և Աշխարհիս Հայոց:

*Յայտ իսկ է ձերումդ մեծութեան՝ անտիրացեալ ազգիս մերոյ վտարանդութիւն և բազմապիսի վիշտք ի յօտարազգաց բռնաւորութենէ, միանգամայն և ի խնամոցն Աստուծոյ ողորմածութիւն ամենաբարի Ազգին Ռուսաց առ անկեալ ազգս մեր, որ ընդ ամեն ժամանակս գրեթէ տարածեալ ունելով զբազում ընկալան ի գիրկս որք անկանն առ ողորմածութիւն իւրեանց, և Աստուածագութ սիրով խնամարկեցին, մանաւանդ՝ ի ժամանակէ անտի մեծին ՊԵՏՐՈՍԻ, այն՝ որոյ յիշատակն է անմահ, որ ոչ միայն խնամածելոյ առ մեզ եղև սկզբնաւորիչ. այլև՝ սկզբնապատճառ համօրէն ազգիս փրկութեան, ի ձեռն Արփիափայլ շառաւիղաց իւրոց՝ Աստուածապահ գահին իւրոյ ժառանգորդաց։*

*Սա է՝ հզօրացեալն բարձրելոյն աջով, նախագահն ի տիեզերակալս աշխարհի ԱՂԷՔՍԱՆԴՐ Քրիստոսապսակ կայսեր մեր, որ ի վերին ակնարկութենէ առաքեաց զանպարտելի և հզօր պետութիւն քո յաշխարհ մեր, որով զփրկութիւն բոլորի ազգիս՝ աներկեան լինել հաւատամք, քանզի ձեր ողորմածացդ է գթալ ի վերայ անկելոյ ազգիս, ձեր հզօրացդ զօրացուցանել զլքեալ ձեռն մեր, և ձեզ տիրողացդ է տիրել անտերունչ ազգիս, վերահաստատելով և սեփհականելով մեզ փրկութիւն և խաղաղութիւն ի հայրենիս մեր։ Այս ուրախալի յուսով, և սքանչելի երևմամբ փրկութեան մերոյ՝ քաջալերեալ զանկարութիւն մեր՝ կանխեցաք առ ոտս Տեառն մերոյ կայսեր՝ անձնանուէր գրով, ի հեռաւորութենէ աստի խոնարհեցուցեալ զպարանոց ազգիս՝ մատուցաք առ անքան մեր ընկալեալ բարերարութիւն զգոհաբանական և զշնորհ ընկալութեանն մերոյ բան՝ պատարագ անկարօտի մեծութեան իւրոյ, օրհնելով զգալուստ անյաղթելի աէրութեան և ամենամեծի՝ անուան իւրոյ յաշխարհ մեր ի փրկութիւն մեզ —սմին իրի և առ տէրութիւնդ մեր և իշխան՝ ընդառաջեալ այսու գրութեամբ՝ վերապատուեմք զվեհափառ իշխանութիւն քոյ, զոր Տէր Աստուածն մշտնջենաւորս արասցէ անյաղթելի զօրութեամբ, ի շինութիւն աշխարհաց և ի փրկութիւն Ազգիս Հայոց։ Ընդ այս սակաւամասնեայ բանի՝ խոնարհութեան մերոյ նուիրի՝ և զաղերս առ տէրութիւնդ մեր արկանեմք՝ գթութեամբ հայիլ ազգ մեր նեղեալ նուազեալ, տարածելով զձեռն ողորմածութեան ձերոյ ի պահպանութիւն նոցին, քանզի ձերեմք և մեք՝ որք տիրէք աշխարհի, պարծանք և պահպանիչք Քրիստոնէութեանս կրօնի։ Ուստի և մեք մնամք պանծալով յանուն ամենաբարձր Կայսերութեան Մեծին Ռուսաստանու, և*

Քոյդ Մեծի իշխանութեան հաւատարիմ ամենախոնարհ ծառայք
Տէր Յարութիւն Շմաւոնեան Մադրասիս Հայոց Աւագ Քահանայ
Տէր Թադէոս Տէր–Անդրէասեան
*(և ուրիշ 33 ստորագրություններ)։*

*Ահա այս ամբողջ նյութերն իրենց արտացոլումն են գտել* «Անցք կամ գործք» *գրքույկում, որն իր բովանդակությամբ Մադրասի հայ հայրենասերների հասարակական գործունեության ցայտուն մի էջը պատկերող թանկագին փաստաթուղթ է հանդիսանում։*

*Մնում է պարզել, թե ինչպիսի կարևոր երևույթներ են լուսաբանում պատմական այս գրքույկում եղած գլխավոր նյութերը։*

*1. Ամենից առաջ պարզում են 18-րդ դարի վերջում և 19-րդ դարի առաջին քառորդում Հնդկաստանի Մադրաս քաղաքում ապրող հասարակական առաջադեմ գործիչների դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարում, պատկերելով նրանց հայրենասիրական անկեղծ գործունեության ցայտուն մի էջը։*

*2. Ընդգծում են, որ մեզնից 141 տարի առաջ հեռավոր Հնդկաստանի Մադրաս քաղաքում կենտրոնացած փոքրաթիվ հայերի առաջավոր մտավորականները հանդես են եկել իր ժամանակի քաղաքական առաջադեմ իդեալներով և ամբողջապես համակվել հայ ժողովրդի ազատագրական շարժման վեհ գաղափարով, միաժամանակ բարձր գնահատելով նրա փրկության ու պաշտպանության հարցը և առանձին հետաքրքրություն ցուցաբերելով ասիական ստրկության մեջ գտնվող Հայաստանի հանդեպ։*

*3. Գրքույկում հանդիպում ենք նաև ցայ-*

տում փաստերի՝ հայ ժողովրդի համար այն ժամանակները ստեղծված ծանր կոշմարային պայմանների և մռայլ իրականության մասին։ Տեսնում ենք օտար բռնակալների բացարձակ կամայականությունների ու բռնությունների պատկերը։

4. Գրքույկում, թեև շատ սեղմ կերպով, ընդգծված է նաև օսմանյան ու պարսկական կենտրոնական իշխանությանց ասաիճանական թուլացումը և Ռուսաստանի գերիշխանության ծավալումը։

5. Ավելի ուշագրավն այն է, որ Մադրասի հայ հայրենասերները խորապես ըմբռնել են, թե հայ ժողովուրդը կանգնած է ֆիզիկական բնաջնջման վտանգի առջև, իսկ նրա փրկությունը տեսել են միայն ու միայն Ռուսաստանի հաղթանակի և օգնության մեջ։ Նրանք եկել են այն եզրակացության, որ օսմանյան սուլթանական և պարսկական շահական լծի տակ ապրող հայության ազատագրությունը կարող է իրագործել միայն Մեծ Ռուսաստանը և միաժամանակ խորապես համոզված են եղել, որ հայերը խաղաղ ու երջանիկ պայմաններում ապրել կարող են միայն Ռուսաստանի հովանավորության ներքո։

6. Առանձին ուշադրության արժանի է նաև Մադրասի հայ ազատասերների դիմումը Վրաց Հերակլ թագավորին։ Դա նշանակում է, որ նրանք հայ ժողովրդի բախտը կապել են հարևան վրաց ժողովրդի բախտի հետ։ Նրանց կարծիքով հայ ժողովրդի երջանկությունը դրացի ժողովրդների հետ միասնություն ստեղծելու մեջ է։ Այս կապակցությամբ էլ անչափ հետաքրքիր է Մադրասի հայ հայրենասերների 1806 թվականին գրած նամակը՝ ուղղված Հերակլ թագավորին։

7. Բնորոշ է և այն, որ Մադրասի հայ գործիչները ոչ միայն հայ, այլև վրաց ժողովրդի փրկությունը սպասել են Ռուսաստանից։

8. Հատկանշական է նաև, որ Մադրասի առաջադեմ հայ խմբի կենտրոնական դեմքերից մեկն է հանդիսացել Տ. Հարություն քահանա Շմավոնյանը, առաջին հայ լրագրի՝ «Ազդարար»-ի խմբագիրը։ Դա ցույց է տալիս, որ այս հայ հոգևորականը իրեն նվիրել էր հայ ժողովրդի ոչ միայն լուսավորության, նրա մտավոր զարգացման գործին, այլ և նրա ազատագրության վեհ գործին։ Շմավոնյանը, կուլտուրական այս մեծ գործիչը, հայ ժողովրդի ազատագրության նկատմամբ ունեցած իր հույսերը անվերապահորեն կապել էր ռուսական օգնության հետ։

Այժմ մի հանգամանք պարզ է։ Հնդկահայ առաջավոր մտավորականության քաղաքական առողջ տեսակետները, որոնք ուշագրավ ու խոշոր երևույթ են հանդիսանում հայ կյանքում, պատմությունն արդարացրեց. դրա ցայտուն ապացույցը այսօր մենք տեսնում ենք Սովետական Միության դրոշի տակ իր քաղաքական-տնտեսական վերածնությունն ապրող Հայաստանում։ Եվ արդարև 1917 թվի Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան ոչ միայն ընդմիշտ ազատագրեց հայ ժողովրդին իր դարավոր ստրկության կապանքներից, այլ և նրան տվեց ազգային պետականություն և տնտեսական ու կուլտուրական ծաղկման լիակատար հնարավորություն։ Դա այն հոյակապ մտահղացման, գեղեցիկ ծրագրի իրականացումն է, որի մասին միայն երազել ու տենչացել են մեզնից 141 տարի առաջ ապրած մադրասաբնակ հայ հայրենասերները։

Վերջապես ընդգծենք մի կարևոր պարագա ես։ Երբ մեզնից մոտ մեկ ու կես դար առաջ հեռավոր Հնդկաստանի Մադրաս քաղաքում ապրող հայ հայրենասերները հայության ազատագրության ճիշտ ուղին համարել են Ռուսաստանի հովանավորությունը, դժբախտաբար, այդ մեծ ճշմարտությունը ու կարևոր հանգամանքը չեն կարողացել ըմբռնել մեր վերջին հիսնամյակի պատմության որոշ քաղաքական գործիչներ ու կուսակցություններ։ Ահա թե ինչու հնդկահայերի, գլխավորապես մադրասահայերի, մղած ազատագրական պայքարը կազմում է հայ քաղաքական պայքարի պատմության ուշագրավ էջերից մեկը։

Սրանք են ահա հասարակական բնույթ կրող այն բոլոր կարևոր երևույթները, որոնք 1806 թվականին Մադրասում հրատարակված «Անցք կամ գործք» խորագրով տետրակի բովանդակությունն են կազմում։ Հենց այս բովանդակած երևույթներն էլ արժեքավորում են գրքույկը, որը, իր մեջ շոշափված խնդիրներով, ուրույն տեղ է գրավում ոչ միայն Մադրասի, այլ և հայ քաղաքական գրականության, պատմության մեջ։

1 նոյեմբերի 1947 թ.
Թեհրան

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

# ՄԵԾԱՔԱՐ՝ ԹԷ ԱՆԱՊԱՏ ԹԷ ԱՄՐՈՑ

*Հայր Ալիշան Սիսուանի մէջ Կիլիկիո հայկական վանքերը նկարագրելու կարգին կ՚իշէ և Մեծաքարի վանքը (էջ 196 ա), բայց կտարակուսի միաժամանակ անոր* ամրոց *ըլլալուն եւս կգրէ. «Անուն տեղւոյն յայտ առնէ զի լեռնային էր կողմն և քար կամ քարայր մեծ անդ,* հաւանօրէն ամրոց ևս շինեալ, *թէև ոչ յիշի ի կարգս բերդօրէից, բայց տեղին վաղ ուրեմն* ամրացեալ էր *և սրբութեամբ»։*

*Այժմ պիտի հիշատակենք որ* Մեծքար *կամ* Մեծաքար *նախ եղած է իբր* ամրոց *և իբր այդ մնալով հանդերձ, ԺԲ դարու վերջին կիսուն եղած է վանք և դարձած հռչակավոր* վարդապետանոց:

*1941-ի ամառը, օգտվելով Երուսաղեմ մեր կարճատև ներկայութենեն, Ս. Հակոբյանց վանքի մեջ աչքե անցուցինք Ձեռագրաց Մատենադարանի մեջ գտնվող կիլիկյան բոլոր գրչագիրները, դյուրացնելու համար Կիլիկիո հայկական ամրոցներու և վանքերու մեր ընդարձակ պատմության խմբագրությունը։ Նատերու կարգին մեր ուշադրությունը գրավեց 1214-ին* Մեծաքար անապատին *մեջ* Դրազարկցի Գրիգոր կրոնավորի *ձեռքով և Հովհաննես ու Ստեփան քահանաներուն համար գրված թիվ 417, ընտիր թուղթի վրա, «Մասեր Հին և Նոր Կտակարանէն»-ը, որուն կարևոր Հիշատակարանեն որոշապես կերևա, որ*

*ա. Մեծաքար անապատը եղած է նույնպես* ամրոց *և ունեցած է իր զինվորական բերդատերը, իր «իշխեցողն»-ը։ Այսպես, 1208-ին Մեծաքար բերդ-անապատի իշխեցողը եղած է իշխան* Գեորգ: *«Սա որդի էր իշխանաց իշխանին մեծին* Մլեհի՝ *հարեղբաւրորդի թագաւորին* Լևոնի, *և էր նա քաջ և յաղթող ի պատերազմի, առատաձեռն, առատասեղան, բաշխող աղքատաց, պարգեւատու գինուորեալ մարդոց» (անդ)։ Ահա թէ ո՛րպիսի մարդկային և զինվորական առաքինություններով օժտված բերդատեր իշխանի մը հանձնված էր* Մեծաքար *կարևոր ամրոցին պահպանությունն ու կառավարչությունը։ Բայց ինչպես որ պատահած է շատ անգամ, և այս կարգի դժբախտաբար, այս պատվական իշխանն ալ կունենա իր նախանձորդները՝ «մարդիկ ոմանք չարք և քսմոսք», որոնք «մատեան առ թագաւորն (Լևոն Դ) ասին՝ եթէ ազգայինն (իմա՝ ազգականն) քո* Գէորգ *հակառակ է թագաւորութեան քոյ։ Լևոն թէև «աստուածասէր և բարեպաշտ», սաստիկ բարկացած ձերբակալել տվավ իր ազգականը, «յափշտակեց զամենայն ինչս նորա և եդ զնա բանդի, ի դղեակ և յանառիկ բերդին Սիսոյ թագաւորաբնակ քաղաքին»։ Այսքանով չի վերջանար սակայն հավատարիմ պատմիչին կատարված ծանր դեպքին նկարագրությունը։ Թագավորը «ի նմին աւուր խաւարեցոյց զաչս նորա (Գէորգի) ի թուականին Հայոց ՈԾԷ (1208)»։*

*Տարաբախտ իշխանը «խաւարեալ աչաւք» կուգա յուր հայրենաշեն վանքը, «զոր հայրն իւր բարեպաշտն մեծն* Մլեհ *շինեալ էր, զհռչակաւոր անապատս* Մեծաքար *և զմեծ եկեղեցին յանուն Տիրամաւրն» (անդ)։*

*Իշխան Մլեհ այնքան ապահով կգտնե Մեծաքար ամրոցի դիրքը և շրջակայքի այնպիսի բնական և այլ հարմարություններով օժտված վայր, որ իր և իր մեծահարուստ իշխանական գերդաստանի նյութական միջոցներով կկանգնե ո՛չ միայն սովորական վանք մը, այլև, հոգևոր հայ մշակույթի ծաղկման, նա կհաստատե նաև վարդապետանոց, ուր պիտի փայլեին Հովհաննես, Գրիգոր, Թորոս, Կարապետ և այլն, բոլորն ալ մեծքարեցի անվանի վարդապետներ և արուն*

Առաջնորդութեանը պիտի կոչվէին Հակոբ Կլայեցիի և Աստուածատուրի նման հայրենասէր և ավանդապահ հոգևորականներ։

Բ. Կիւլէկյան այս Ձեռագրի կարևոր Հիշատակարանէն որոշապես կհասկացվի, որ Մեծաքարի անվանի անապատ կամ վանքը իր ծաղկյալ վարժապետանոցով, կառուցված էր ո՛չ թե, ըստ Հ. Ալիշանի ենթադրութեամբ, Լևոն Դ թագավորի ջանասիրութեամբ, այլ Լևոնի եղբոր՝ «Իշխանաց իշխան մեծին Մլեհի» հոգացողութեամբ, ուր շուրջ քառորդ դար հետո, 1208-ին, իր դժբախտ որդին՝ Գեվորգ աշխարհի լույսը պիտի կորսնցներ «բայց երկնաւոր լուսոյն արժանի եղև տեսանելոյ, շնորհաւքն Քրիստոսի բազում երգնութիւնս և ծնրադրութիւնս յանձն առեալ կրէ և ազաւթից սաէպ կայ հանապազ ի տուէ և ի գիշերի արիաբար կալով յաղաւթս առաջի դերահրաշ վկայիցն» (անդ)։ Այս տողերեն հայտնապես կիմացվի, որ Գ. (Ք. Հ.) դարուն նահատակված Թորոսի, Տարագոսի և Անդրոնիկոսի հիշատակին կառուցված հուշական նախկին վկայարաններուն վրա և կամ անոնց շատ մոտ կառուցված է Մեծաքարի վանքը իր վարդապետանոցով, վասն զի աշագուրկ և աստիճանազուրկ Մլեհ նույն այդ վկայարաններուն առջև է որ կաղոթե, այլև «յայսմ ամի (1208) շինեաց (Գէորգ) եկեղեցի ի վերայ քնարանի սրբոց և շինեաց առաւպիլս (նախադրունք, գավիթ) առաջի դրանց սրբոյ եկեղեցեացն՝ մաւտ ի դիրս սրբոցն, որ ի յունականն կոչի դըան սըան, և անուանեաց զնա իւր տապանատուն, զի ի վախճանին իւրոյ անդ թաղեսցին զնա»։

Ահա կարճառոտ Հիշատակարան թանկագին պատառիկ մը, կեսն ալ ինկած ու կորսուած, և սակայն ան որոշակի կերպով և պատմագրորեն կարձանե, որ Մեծքար անապատ, վանք ըլլալե շատ առաջ ան հայտնի ամրոց էր և ունէր արքայազուն բերդատեր իշխանաց իշխան իշխեցողներ, ինչպես Լեվոն թագավորի Մլեհ եղբորը որդին՝ զօրապետ Գեորգ. թե Մեծքար անապատ իր անվանի դասատունով կառուցած է ո՛չ թե Լևոն Գ, այլ իր եղբայրը՝ Մլեհ և թե Մեծքարի դժբախտ բերդապահ Գեորգ թաղված է յուր ձեռակերտ տապանատուն-ի մեջ։ Դեռ որքա՜ն հայոյսներով ձեռագիրներ պիտի ընդարձակեին մեր ազգային պատմության հյուսքը, եթե անոնք կորսուած չըլլային աղետի և ավերի տարիներուն։

20 դեկտեմբեր 1947 թ.
Փարիզ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ*)

*Պատանի քարտուղարի օգտավետ խորհուրդները և նրա վարժ գրիչը մեծ չափով արդյունավետ են դարձնում առաջնորդի գործունեությունը. վերջինիս սերն ու համակրանքը Նալբանդյանի հանդեպ օրեցօր բազմապատկվում է, այնպես որ առանց նրա գիտության ոչ մի հարց չէր լուծում։ Թե՛ Քիշինևից և թե՛ Հաշտարխանից, ուր հետագայում տեղափոխվել էր առաջնորդը, անընդհատ դիմում էր նա Նալբանդյանի խորհուրդներին։ Վերջին վայրից ուղարկած նամակներից մեկում առաջնորդը գրում է Նալբանդյանին. «Դիտաւորութիւն ունիմ մի ազգային դպրոց բանալ Հաշտարխանու մէջ, բայց շատ արգելքներ... դիմացս կան, ուստի չեմ իմանում ինչպէս կատարեմ դիտաւորութիւնս. ահա դարձեալ քեզ եմ դիմում և քո շնորհքով յոյս ունիմ յառաջ տանել այս գործըս»**)։*

*Ինչպես տեսնում ենք Նալբանդյանի Նախիջևանից բացակայելու պատճառն այն էր, որ նա քարտուղարի պաշտոնով գտնվում էր Քիշինևում։ Նախիջևանի հոգևոր կառավարության 1850 թ. մարտի 6-ի գրությունից, որը բերված է վերը, տեղեկանում ենք, թե Նալբանդյանը իրեն մեղադրած լինելու մասին լսելով վերադարձել է Նախիջևան։*

*Արդ տեսնենք, թե Նալբանդյանը ինչպիսի ինքնապաշտպանության միջոցների է դիմում Ներսես կաթողիկոսի դաժան հալածանքներից խուսափած լինելու համար. նա ստիպված է լինում հայտարարել, որ տիրացու Սարգսին հասցեագրված նամակները իր գրչին չեն պատկանում։ Այս առթիվ 1850 թ. մարտի 8-ին Նալբանդյանը մի դիմում է ներկայացնում Նախիջևանի հոգևոր կառավարությանը, պահանջելով մանրամասն քննության ենթարկել Բարսեղ քահանա Պոպովին (Նախկին տիրացու Սարգիս) և պարզել, թե նրա կողմից Ներսես կաթողիկոսին հանձնված նամակները ո՞վ է գրել։ Բերում ենք Նալբանդյանի այդ դիմումը.—*

Ի Նախիջեւանայ Հայոց Հոգևոր կառավարութիւնն

Ի Միքայէլ դպրէ Նալբանդեան

Խնդիր

*Նախ՝ ըստ հաւաստի տեղեկութեանս իմացեալ եմ զի Բարսեղ քահանայն Պոպովեանց, ի լինելն տակաւին ի սուրբ Աթոռն Էջմիածին, և յառաջ քան զքահանայանալն իւր մատուցեալ է Նորին Վեհափառութեան զքանի մի գրութիւնս յանուն իւր գրեցեալս, որպէս թէ յինէն առ ինքն գրեցեալ, և երկրորդ՝ լսեմ այժմ զի այնոքիկ թուղթք իբր ըստ յանձնարարութեան Նորին Վեհափառութեան հասեալ են առ Նախիջևանայ քաղաքական գլուխ ազնուական աղայ Յարութիւն Խալիպովն սակս քննութեան, որպէս և Նորին ազնուութիւնն պահանջեալ է ի դմին Ատենէ յիմմէ կողմանէ զպատգամաւոր ոք և որովհետև կայի ի հեռաւոր բացակայութեան, առ այն մնացեալ էր զայսն իմ առնելն կառավարութեանդ զտնօրէնութիւն, յաղագս ներկայանալոյ իմ ի ժամ քննութեանն։*

*) Տես «ԷՋՄԻԱԾԻՆ» մայիս-հունիս 1948 թ.։
**) Ե. Շահազիզ.— Միքայէլ Ղազարեան Նալբանդեանց, Մոսկուա 1897 թ., էջ 20—21։

իմ Տեառն Աստուծոյ յաջողութեամբ հասեալ աստանօր և իմացեալ զայնց ամենից՝ մնացի ապաքէն յապշութեան թէ որպ է իմ ունեցեալ զգրութիւն ընդ Թարսեղ քահանային, ուստի և պարտաւորեալ գտայ այսու իմով յատուկ խնդրագրով ծանուցանել Հոգևոր կառավարութեանդ զի ես երբէք յընթացս իմոց քսանամեայ հասակի կենաց չեմ ունեցեալ ընդ Թարսեղ քահանային ղգրութիւն, և ո՛չ իսկ զծանօթութիւն, վասնորոյ ամենախոնարհաբար հայցեմ յԱտենէդ առնել վաղվաղակի զյարաբերեալն տնօրէնութիւն սակս բանալոյ ղօրինաւոր քննութիւն ի վերայ Թարսեղ քահանային, թէ՝ այդպիսի գրութիւնք յումմէ՞ արդեօք ստացաւ և ե՞րբ և ո՞ւստի ստուգեաց թէ իմ էր գրեալ և թէ ունեցեա՞լ էի ես և երբեմն ընդ ինքեան ղգրութիւն, կամ ինքն ընդ իս, և երկրորդ՝ խնդրեմ զկնի պատկանաւորն հետազօտութեան տալ ինձ զբաւականութիւն պահանջեալ համաձայն օրինաց Տէրութեան, զրկանս իմ ի Թարսեղ քահանայէ զոր յառաջացուցեալ է նա ինքն, առանց տալոյ ինձ զտեղի բարձրացուցանել զիմ բողոք արդար ի բարձրագոյն դատարանս։

Միքայէլ դպիր Նալբանդեան

ի 8 մարտի, 1850 ամի,
ի Նախիջևան*)

Այս դիմումի վրա կա հետևյալ մակագրությունը—

«Ընկալաւ կառավարութիւնս ի 8 մարտի 1850 ամի»։

Հոգևոր կառավարությունը հինգ օր հետո, իր № 189 գրությամբ, Նալբանդյանի դիմումի պատճենը ուղարկում է Թարսեղ քահանային, հրամայելով ոչ ուշ քան երեք օրվա ընթացքում պատասխանել։

Մարտի 15-ին Թարսեղ քահանան հետևյալ պատասխանն է տալիս.—

«Ես այսչափ միայն մարթանամ պատասխանել Հոգևոր կառավարութեանդ ըստ յայտարարութեան Նալպանտեանի, թէ ի լինելութիւն իմում ի սուրբ Էջմիածին ի 25 փետրվարի և 23 մարտի 1846 ամի յառաջ քան ղքահանայանալն իմ ստացեալ եմ թէպէտ զերկուսին գրութիւնս առաքեցեալ առտի ի Նոր Նախիջևանայ, բայց ոչ ստորագրութեամբ Միքայէլ դպրի Ղազարեանի Նալպանտեանց, այլ Միքայէլ դպրի Ղազարեանի Ոստայեանց. վասնորոյ ոչ կարեմ ստուգել թէ Նալպանտեան խնդրագործեողն էր առ իս գրեալ դայնոսիկ գրութիւնսն. ըստ որում Նալպանտեան ժականուամբ դպիր առ իս ոչ է գրեալ զթուղթ և ոչ ես առ նա*)։

Թարսեղ քահանայի պատասխանի պատճենը Հոգևոր կառավարությունը իր № 217 և № 218 գրությունների հետ միասին մարտի 29-ին ուղարկում է Նալբանդյանին. վերջինս դժգոհ մնալով քահանայի երկմիտ պատասխանից, ապրիլի 8-ին իր երկրորդ դիմումն է գրում, մեղադրելով Թարսեղ քահանային, որպես այդ նամակները հեղինակողի։ Բերում ենք Նալբանդյանի այդ երկրորդ և ընդարձակ դիմումը.—

Ի Նախիջևանայ Հայոց Հոգևոր կառավարութիւնն

Ի Միքայէլ դպրէ Նալբանդեանց

Խնդիր

Զհրովարտակ Հոգևոր կառավարութեանդ զոյգ ընդ պատճէնի պատասխանւոյ Թարսեղ քահանային Պողոսեանց գտողեալն ի 29-էն մարտի սոյն ամի ընդ համարօք 217 և 218, ընկալայ պարտուպատշաճն յարգութեամբ, սակայն՝ ընթերցեալ զայն ամենայն ուշի ուշով ժամանեցայ ի վարանս թէ վասն է որ Հոգևոր կառավարութիւնդ տուեալ ինձ զպատճէն պատասխանւոյ Թարսեղ քահանային Պողոսեանց. հրամայէ ի դէմ այնր տալ զապացուցութիւն ըստ որում պատասխանէ կամ ապացուցութիւն պահանջեն յայնմանէ յորոյ վերայ գտանի ոք խնդրագործ։ Ես ամենախոնարհաբար խնդրեմ դատ առնել ընդ մէջ իմ և քահանային Թարսղի համաձայն սրբազան օրինաց տէրութեան կայսերական հրովարտակաւ ծանուցելոց տեղեակ ամենայն անձանց և դատաստանատանց որով և եթ իւրաքանչիւր զրկեալ յուսայ փրկութիւն, քանզի նա միայն ապաստան զրկելոց յանիրաւութենէ անքարեբարոյից։ Բարեհաճեսցի Հոգևոր կառավարութիւ-

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139, գործ № 1974, էջ 1։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139, գործ № 1974, էջ 3։

Նրդ գիտել ի քահանայէն Պողոսեանց թէ նա որ յերկրայս գտանի արդիս թէ Նալպանտեանն էր գրողն ինքեան զգիր, թէ Ոստայեանն... և թէ Նալպանտեան դպիր չէ գրեալ առ ինքն զգիր։ Ինքն գոլով ծնեալ և սնեալ ի սմին. քաղաքի նամանաւանդ բազմաժամանակեայ պաշտօնատար գրագրութեան դմին Ատենի միթէ չգիտէ՞ր թե Ոստայեան դպիր Միքայէլ անուամբ գտանի ի քաղաքիս թէ ո՞չ, ըստ որում ամք պանդխտութեան նորա չէին աւելի յայնժամ քան զերիս և յընթացս նոյնքան ամաց ի չգոյէ դպրի ընձիւղիլ անմարթ էր, միթէ չգիտէ՞ր թէ դիտաւորութիւն հեղինակի գրութեան չէր այլ ինչ՝ միայն բեեռել յիմ վերայ զայդ գրութեամբ, միթէ չգիտէ՞ր թէ Միքայէլ դպիր ի քաղաքիս բաց յինէն ըր գտանի, այլ զի կենարար վարդապետին Յիսուսի բան ելցէ ի կատար թէ զոր խօսեցիք յունկանէ քարոզեսցի ի վերայ տանեաց, վասն այն և բազմախարդախ հեղինակութիւն քահանային Պողոսեանց աստանօր մերկապարանոց յայտնի, որ տակաւին անգէտ գտեալ զինէն՝ և զիմս մականուանէ հայրենեաց որ է Նալպանտեան որպէս և գտանի արձանագրելոյն ի բեհզակի սկազկային ութերորդ աշխարհագրութեան, ուստի արձակեալ օրինաւոր վրկայականաւ մտի ի կոչումն հոգեոր զորմէ գտանի ի կառավարութեանդ և գործ, և յորջորջէ զիս Ոստայեան որ օտար է ըստ ամենայնի ի ճշմարտութենէ միայն ջանացեալ ազտեղեալ զիս իւրովք սնոտի ծեքարանութեամբ, ո՞չ այդպէս ես զԲարսեղ քահանայն միայն գիտեմ գոլ հեղինակ այդօրինակ անպատեհ գրագրութեանց, որով և յայտնեցան այդօրինակ անկանոն գրութիւնքն, և ո՞չ դայլ ոք վասն զի եթէ չէր ինքն հեղինակ և գրող՝ կարէր ասել զճշմարիտն, սակայն գոլով իսկապէս հեղինակ վասն այն երկուցեալ թէ մատնեցաւ արդարութեամբ իրաւանց հերքել ջանայ յանձնէ իւրմէ զանուն հեղինակութեան պատեպատ պատրուակարանութեամբ իւրով անգէտ լեալ զգրողին թէ Նալպանտեանն էր թէ Ոստայեանն. բայց այնուամենայնիւ կրկին պարտաւորէ նա քահանայն Պողոսեանց քանզի եթէ ինքն գտանէր յերկրայս զգրողէն թէ Նալպանտեանն էր և թէ Ոստայեանն, նա զի և ոչ անգամ ճանաչէր իսկ զնա՝ անհրաժեշտ հարկի ենթակայանայ զայնոսիկ դրութիւնս իւր զոր այժմ ուրանայ ուղղել չեշտակի առ կառավարութիւնդ ի քննել առ ի զգրողն ածել ի յայտ և ոչ նորանոր ճարտասանութեամբ անասելի հեգնութեամբ որ ո՛չ է վայել կոչման իւրոյ և ստիճանի գրեալ առ մասնաւոր անձինս հրատարակել զայդպիսիքս և վերջապէս հասուցանել և ի մաքուր լսելիս Նորին Աստուածարեալ Վեհափառութեան, որ գտանիմ ըստ ամենայնի անծանօթ նոր օրինակ հիւսուածոց դաւաղիր ծուղակի Բարսեղ քահանային Պողոսեան։ Վասնորոյ ամենախոնարհաբար խնդրեմ յԱտենէ այտի ո՛չ միայն առաքմամբ պատճէնք պատասխանւոյ Բարսեղ քահանային առ իս բաւականացուցանել զիս այլ օրինաւոր պահանջմամբ իմոց զրկանաց ի յիշեալ քահանայէն համաձայն օրինաց ամենաողորմած Կայսերութեան Ռուսաց՝ յոր միայն գտանեմ ապաստան (այլ) առանց հայելոյ ի հակախօսց պատասխանիս քահանային Բարսղի՝ դատել ըստ իրաւանց Աստուծոյ հաւատացելոց զորին վերատեսչութեան յԱմենաողորմած Տէրութենէ, առանց տալոյ ինձ զպատճառ բարձրացուցանելոյ զիմ բողոք իրաւացի ի բարձրագոյն դատարանս համաձայն առաջին խնդրոյ իմոյ առ դա հետեւեցելոյ ի 3-էն նախընթաց ամսոյն մարտի։

Միքայէլ դպիր Նալբանդեան

13 ապրիլի 1850 ամի
ի Նախիջեւան*)

Հոգևոր կառավարությունը նույն թվի մայիսի 8-ին իր № 266 գրությամբ մի հարցաթերթիկ է ուղարկում Բարսեղ քահանային, որը լրացնելով այն, մայիսի 18-ին վերադարձնում է։ Բերում ենք այդ հարցաթերթիկն իր պատասխաններով հանդերձ.

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139., գործ № 1974, էջ 6—8։

Հարցական թերթս այս յօրինեալ եղև ի Նախիջևանայ Հայոց Հոգևոր կառավարութիւն ի հետևումն խնդրանաց Միքայէլ դպրի Ղազարեան Նալպանտովի մատուցելոց ամին յ 8-էն մարտի և յ 3-էն ապրիլի սոյն ներկայ ամի յաղագս Նորին անքաւականութեան զտէր Բարսեղի քահանայէ ի մասին տալոյ ի դէմ սորին Նոյն տէր Բարսեղ քահանայի Պողոսեան զպատասխանի։

ի 8 մայիսի 1850 ամի Նախիջևան

Հարցումն

Նախ որպէս երևի ի մատուցեալ ամին ի 15-էն մարտի սոյն ամի ի դէմ խնդրոյ Միքայէլ դպրի Նալբանդեան պատասխանագրութենէ Ձերմէ թէ՝ դուք ի լինելն Ձեր ի սուրբ Էջմիածին յառաջ քան զքահանայանալն Ձեր ստացեալ էք զերկուսին գրութիւնս՝ մին ի 25 փետրվարի և միւսն ի 23 մարտի 1846 ամի ստորագրութեամբք Միքայէլ դպրի Ոստայեան, այլ արդեօք այդոցիկ գրութիւնքն այժմ գտանին առ Ձեզ թէ առ Նորին Վեհափառութիւն սրբազնագոյն կաթողիկոսն ամենայն Հայոց Ներսէս, որպէս յայտնեալ է Միքայէլ դպիր Նալբանդեանն մատուցեալ ամին խնդրագրութեամբ իւրով և թէ առ Նորին Վեհափառութիւն ապա որո՞վ եղանակաւ հասեալ եղեն այնոցիկ ի ձեռս նորա, արդեօք դուք յինքենէ յանձնեալ էք զայնս Նորին Վեհափառութեանն, թէ՞ ըստ պահանջողութեամբ նորա. եթէ յինքենէ ապա ընդ է՞ր, ի վերայ որպիսի օրինաց հիման, առ ի՞նչ նպատակ և վախճան և ի՞նչ պատճառ շարժեաց զՁեզ յայդ։ Իսկ եթէ ընդ պահանջողութեան Նորին Վեհափառութեան, ապա ուստի՞ գիտաց Նորին Վեհափառութիւն առ ձեզ գոլն այնոցիկ նամակաց. ընդ որո՞յ ամբաստանութեան և մատնութեան, զի պահանջեաց ի Ձէնջ զայնոսիկ թուղթսն։

Փոխանակ։

Պատասխանի

Ըստ զօրութեան սոյն Հարցական թերթի յօրինելոյ ի Հոգևոր կառավարութեան ի Հետևումն խնդրանաց Միքայէլ դպրի Ղազարեան Նալպանտեանց յատենի գործին տացուք ի ամին զպատասխանի. Նախ զի որպէս պատասխանեալ եմ յառաջին պատասխանատուութեամբ իմում ըստ այնմ և այժմ պատասխանիմ թէ Միքայէլ դպիր Ղազարեանն Ոստայեանց գրեալ է առ իս զերկուսին գրութիւնս ի լինելութիւն իմում ի սուրբ Էջմիածին յառաջ քան զքահանայանալն իմ զորս ստացեալ եմ ի 25 փետրվարի և ի 23 մարտի 1846 ամի և ո՛չ գտանին այնոցիկ գրութիւնք առ իս այժմ, այլ առ Նորին բարձրագոյն Քահանայապետութիւն Վեհափառ կաթողիկոսն ամենայն Հայոց և ոչ ես յինէն եմ հասուցեալ առ Նա, այլ ըստ պահանջողութեան Նորին Վեհափառութեան յանձնեցի զգրութիւնսն. այլ մատնութիւն և ամբաստանութիւն ի մասին գրագրութեանց առ իս Ոստայեանին առ Նորին Վեհափառութիւն յումմէ էր ոչ գիտեմ և անյայտ է ինձ, որովհետև սրբազան կաթողիկոսն ի ստանալն յինէն զգրութիւնսն չասաց ինձ թէ յայսինչ կամ յայնինչ մարդոյ տեղեկացայ զգրագրութիւն Ոստայեանի առ քեզ. միայն ասաց թէ գրութիւնք Ոստայեանի որք գտանին առ քեզ տուք ինձ և ես ըստ այնմ յանձնեցի Նորին Վեհափառութեան։

Երկրորդ. Ընդ է՞ր դուք յերկրայս գտանիք արդիս թէ՝ Նալբանդեանն էր գրողն Ձեզ զգիր. թէ Ոստայեանն... և թէ Նալբանդեան դպիր չէ գրեալ առ Ձեզ զգիր։ Դուք գոլով ծնեալ և սնեալ ի ամին քաղաքի նամանաւանդ բազմաժամանակեաց պաշտօնատար դրագրութեան սորին ատենի միթէ ոչ գիտէի՞ք թէ Ոստայեան դպիր Միքայէլ անուամբ գտանի ի քաղաքիս թէ ո՛չ. ըստ որում ամք պանդխտութեան Ձեր չէին աւելի յայնժամ քան զերիս և յընթացս նոյնքան ամաց ի չգոյէ դպրի ընձուղել անմարթ էր. միթէ ոչ գիտէի՞ք թէ Միքայէլ դպիր ի քաղաքիս բաց ի Նմանէ ոչ գտանի։

Քարտուղարի

Երկրորդ. յերկրայս գտանիմ զի ես զնմանէ չէի լուեալ Նալպանտեան, և որովհետև մականունն որոշէ զյատուկ անունն իւրաքանչիւր մարդոյ վասն այն ասեմ թէ Նալպանտեանն չէ գրեալ առ իս զգիր, և ի լինելութիւն իմում ի Հոգևորական կառավարութիւն գրագրական պաշտօնի չէր յորջորջեալ անուն Միքայէլին դպիր սուրբ Լուսաւորչի այլ մանկահասակ փոխասաց սուրբ Թէոդորոս եկեղեցւոյ քաղաքիս։

Երրորդ. ընդ է՞ր դուք անգէտ գտեալ զնմանէ և զնորա մականուանէ Հայրենեաց, որ է Նալպանտեան, ուր և գտանի արձանա-

Երրորդ. չեմ անգէտ զմականուանէ Հայրենեացն նորա զի որպէս այլք յորջորջեն զնա Ոստայեան, նոյնպէս և ես գիտեմ զնա Ոս-

գրութիւն ըևիզսկի սկազկային ութերորդ աշխարհագրութեան, յորմէ արձակեալ օրինաւոր եղանակաւ մտեալ է ի կոչումն հոգևոր, զորմէ գտանի ի կառավարութիւնս գործ՝ յորչորչէք զնա Ուստայեանն, որ օտար է ըստ ամենայն ճշմարտութեան միայն ջանացեալ ազտեղել զնա ձերովք սնոտի ծեքարանութեամբք։

Աւետիք

Չորրորդ. եթէ դուք գտանէիք յերկրայս զգրողէն՝ թէ Նալբանդեանն էր և թէ Ուստայեանն նա զի և ո՛չ անգամ ճանաչէիք իսկ զնա՝ ընդ է՞ր ապա իսկ զայնոսիկ գրութիւնս, զորս այժմ ուրանայք. չուղղեցիք չեշտակի առ կառավարութիւնս ի քննել առ ի զգրողն ածել ի յայտ, այլ անպատեհ բանիւք և հեգնութեամբ որ ո՛չ է վայել կոչման Ձերում և աստիճանի. գրեալ առ մասնաւոր անձինս հրատարակեալ էք զայդպիսին և վերջապէս հասուցեալ էք ի լսելիս Նորին Վեհափառութեան

Խաչիզեանց

Անդամք կառավարութեան

Կարապետ քահանայ Զօլախեանց

Պօղոս քահանայ Խուճեանց

Գաբրիէլ քահանայ Ճաւճայեանց

տայեան և ոչ Նալպանտեան. և ի լինելութիւն իմում աստի ի պարտաւորութիւն գրագրութեան Հոգևոր կառավարութեան տեղւոյս նա Ուստայեանն չէր մտեալ ի հոգևորական կոչումն ի ըևիզսկի սկազկային հոգևորականաց և չէր արձակեալ ի հասարակութենէ և ոչ իմ գրեալ զարձակումն նորա ի գործս Հոգևոր կառավարութեան յայնժամ զի էր մանկահասակ և փոխասաց, որպէս այժմ քանիք գտանին յեկեղեցիս յաշակերտացն։

Եվ չորրորդ. ես ճանաչէի յայնժամ զՈւստայեանն յորժամ զգրութիւնսն նորին ստացայ, բայց վասն մանկահասակութեան նորա ներողամիտ գտայ առ նա, և ոչ գրութիւնսն նորա մատնեցի ի դատաստան և ի քննութիւն Հոգևոր կառավարութեան, որ այն էր անվայել մերում հոգևորական կոչման այլ ի ձեռն մասնաւոր անձին պարտ վարկայ խրատել զի մի՛ յանդիմանեսցի նա ի պատուաւորաց և հրատարակեսցի գրագրութիւն նորա. և ոչ եմ ես հասուցեալ յունկս սրբազնագոյն Քահանայապետին զգրութիւն նորա առ իս. Նորին Վեհափառութիւն առանց իմ յայտնութեանս հրամայեաց թէ տուք ինձ զգրութիւնսն զորս ստացեալ էք ի Միքայէլ դպրէ Ուստայեանց։

1850 ի 11 մայիսի ի Նոր Նախիջևան

Թարսեղ Քահանայ Կարապետեան Պօղոսեանց*)

Հոգևոր կառավարությունը, Թարսեղ քահանայի լրացրած հարցաթերթիկն ստանալուց հետո, Մ. Նալբանդյանին իրազեկ չի դարձնում ոչ այդ և ոչ էլ դրանից հետո երկար ժամանակ շարունակվող գրագրությունների մասին։ Այս մասին մենք իմանում ենք Նալբանդյանի 1852 թվին գրած մի գրությունից, որը հասցեագրված է Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոս Վեհապետյանին։ Այս գրության մեջ ասված է. «...առ որ վերստին խնդրագրութեամբ իմով յանուն նոյն Հոգևոր կառավարութեան ի 3-էն յաջորդ ամսեան ապրիլի ետու զպատասխանի, այլ յօրէ յայնմանէ մինչև ցայսօր չէ ունեցեալ ի կողմանէ նոյն Հոգևոր կառավարութեան զորպիսի և իցէ տեղեկութիւն և ծանօթութիւն զգրութենէ գործոյն և ոչ առաւել քան զայս հետամուտ եղեալ այնմ»*)։

Հոգևոր կառավարությունը իր հունիս 23-ի նիստում ծանոթանալով Թարսեղ քահանայի պատասխաններին, խնդիրը սպառված չի համարում և իր № 404 գրությամբ քահանայից պահանջում է հաղորդել, թե էջմիածնից Ուստայանի մասին նրա գրած գրությունը հոգևորական թե՞ աշխարհական անձ է եղել ստացողը։ Հունիսի 29-ին քահանան պատասխանում է, որ «...Գրութիւնն իմ այն գրեալ եմ առ հոգևորական անձն տէր Եղիայ քահանայն տէր Աստուածատուրեան Շաքրշնիկեանց որ յայնժամ էր ուրարակիր տիրացու և ատենադպիր կարգեալ ի Հոգևոր կառավարութիւնս»**)։

Հոգևոր կառավարությունը սույն գրությունն ստանալուց հետո իր հուլիսի 30-ի № 408 գրությամբ հարցնում է անում Շաքրշնիկյան քահանային, թե ճի՞շտ է, որ Թարսեղ քահանան էջմիածնից նրան նամակ է գրել Մ. Նալբանդյանի մասին և պահանջում

*) Երվանդ Շահազիզ.— Դիվան Միքայել Նալբանդյանի, 1932 թ. Երևան, էջ 51։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139, գործ № 1974, էջ 6—7։

**) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 139, գործ № 1974, էջ 13։

է, որպեսզի նա, եթե առաջել է այդպիսի նամակ, այն անմիջապես ուղարկի Հոգևոր կառավարության։ Եղիա քահանան այս գրությանը պատասխանում է ութ ամիս հետո և իր պատասխանում հերքելով Թարսեղ քահանայի ցուցմունքները, մերկացնում է նրան, որպես զրպարտիչ ու խարդախ անձնավորության։ Բերում ենք այդ գրությունը.

Ի Նախիջեւանոյ Հայոց Հոգեւոր կառավարութեանց

Ի սուրբ Լուսաւորչայ Ա. եկեղեցւոյ
Եղիայ քահանայէ Շարշնիքեանց

Յայտարարութիւն

Առ հրաման Առեենիդ որ ի յ 30 յուլիսի 1850 ամի համար 408 յաղագս գրութեան Արժանապատիւ տէր Թարսեղ քահանայի Կարապետեան Պուպովի վասն տիրացու Միքայէլ Ղազարեանս Այսու ունիմ պատիւ յայտնել՝ նախ թէպէտ տէր Թարսեղն Կարապետեան ցոյց տուեալ է թէ առ իս գրեալ է նա թուղթս ի յէջմիածնայ իբր, և այն՝ ի ժամանակս դպրութեան իմոյ, և այժմ Հոգևոր կառավարութիւնդ պահանջէ յինէն զայն և հրամայէ առաջի առնել ինքեան հաւատալով ասութեան նոյն քահանային, սակայն ես յաղագս տիրացու Միքայէլի Ղազարեան Ուստայեանց չեմ թուղթ ինչ ստացեալ ի նմանէ, որով ջանայ տէր Թարսեղն զրպարտել զնա իւրով անհիմն գրագրութեամբ։ Մանաւանդ զի նա քահանայն Պուպով ի չուելն իւր աստի ի սուրբ Աթոռն էջմիածին, պանդխտութեամբ ըստ իւրն կամաց, թշնամացեալ էր գրեթէ ընդ բոլոր դասուց հոգևորականաց, մանաւանդ ընդ առենակալաց և ընդ քարտուղարի Հոգևոր կառավարութեան, որ յայնժամ ես էի կարգեալ քարտուղար փոխանակ ինքեան, և այդ թշնամութիւն նորա տևէ մինչև ցայս վայր թէև անցին ամք ահա գրեթէ ութն առաւելօք։ Նա Պուպովն անտի ի սուրբ էջմիածնայ սկսեալ ի 1843 ամէ մինչև ց 1847 ամն, այն է ցդալն իւր ի Նախիջևան չէ ընդ ումեք ի դասուց հոգևորականաց յայտնի ունեցեալ գրագրութիւն, բաց ի ծածուկ խառնակիչ իւրեան գրագրութեանց իւրոց ընդ աշխարհականաց, ուր մնայ նորա ընդ իս ունիլն յայտնի յարակցութիւն նամակագրութեամբ իբրև ընդ բարեկամի ումեք՝ վասն զի նա լաւ գիտէ ամենեւին թէ ինչ է բարեկամութիւն և զի արդ լինի են։

Երկրորդ՝ ծանուցանեմ Առեենիդ, թէ չիք առ իս գիր ինչ Պուպովեան քահանային, զի յանդիման արարից։

1851 ամի ի 6 մարտի
Նախիջևան*)

Եղիայ քահանայ Շարշնիքեանց

Այս գրության բովանդակությունը միանգամայն հասկանալի է, քանի որ, ինչպես տեսանք, Շարշնիկյան քահանան ևս, Նալբանդյանի հետ միասին, հալածվում էր Ներսես կաթողիկոսի կողմից։

Սույն գրությունը, իբրև բուն խնդրին չվերաբերող, Հոգևոր կառավարությունը 1851 թ. մարտի 13-ին, իր նախատինքներով առլեցուն № 234 գրության հետ միասին, վերադարձնում է Շարշնիկյանին, պահանջելով պատասխանել իրեն առաջադրված կոնկրետ հարցին, առանց Թարսեղ քահանայի սարժանապատուիթիւնը արատաւորելու։ Եղիա քահանան մարտի 14-ին գայրացած հայտնում է, որ ինքը իր նախորդ գրության մեջ սպառիչ կերպով պատասխանել է իրեն տրրված հարցին և այլևս ոչինչ չունի ավելացնելու։ Այսպիսով Հոգևոր կառավարությունը ավարտում է մի տարուց ավելի տևող իր քննությունները և արդյունքներն ամփոփելով հաղորդում սինոդին ի տնօրինություն։

Ներսես կաթողիկոսը, որ շարունակ զեկուցագրեր էր ստանում Խալիպովից, քաջատեղյակ էր թեմում տիրող դրությանը։ Նրան հայտնի էր, որ Նալբանդյանի ղեկավարությամբ ու թելադրությամբ են գործում հակախալիպյանները, որոնց գլուխն էր անցել քաղաքի վաճառական Կարապետ աղա Հայրապետյանը։ Մեր նյութից դուրս է մեկ առ մեկ շարադրել այդ երկու ընդդիմադիր խմբերի երկարատև պայքարի պատմությունը. այս մասին իր ժամանակին գրվել ու հրապարակվել են մեծ քանակությամբ նյութեր։ Այստեղ պետք է նշենք միայն, որ թեմի առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոս Վեհապետյանը համակիր էր Հայրապետյաններին, որի համար էլ արժանացել էր կաթողիկոսի

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ. ֆոնդ № 189, գործ № 1874, էջ 17։

թշնամական վերաբերմունքին, և այդ թշնամական վերաբերմունքը շարունակվեց մինչև Ներսես կաթողիկոսի մահը՝ 1857 թվին։

Այնուհետև Ներսես կաթողիկոսն ինքն անձամբ սկսում է դատ վարել հանդուգն դպիր Նալբանդյանի և Շաքշնիկյան քահանայի դեմ։ 1852 թ. հունվարի 8-ին կաթողիկոսը սինոդին հրամայում է «հրամանագրել կոնսիստորիին Բեսարաբիոյ առաքել ի Սինոդն էջմիածնի զստահակն Եղիա քահանայն զՇաքշնիկեանց և զՄիքայէլ դպիրն Ղազարեան Ուստայեանց, վասն անձամբ առանձին տալոյ զպատասխանիս Սինոդին էջմիածնի»։ Սակայն, թեմի առաջնորդը զանազան պատրվակներ բերելով չի կատարում հիշյալ հրամանը։ Այն ժամանակ Ներսեսը դիմում է Կովկասի կուսակալ Վորոնցովին, խնդրելով ոստիկանության միջոցով նրանց բռնել տալ ու էջմիածին ուղարկել՝ դատելու համար։ Այս մասին մանրամասն շարադրված է Խալիպովի. կաթողիկոսին ուղարկած, 1853 թ. հունիսի 26-ի № 106 զեկուցագրում։ Այս զեկուցագրից տեղեկանում ենք, որ Վորոնցովի հրամանագրի հիման վրա Տագանրոգի քաղաքապետը ձերբակալել է տալիս Շաքշնիկյան քահանային և ուղարկում, մի ուղեկցող պահապանի հետ միասին, Խալիպովի մոտ, որպեսզի նրանց ճանապարհածախսով ապահովի՝ էջմիածին ուղևորվելու համար։ Խալիպովը իր զեկուցագրում հայտնում է, որ քաղաքի մագիստրատը դիմել է Քիշինևի ոստիկանությանը, որպեսզի դպիր Միքայել Նալբանդյանին էլ այնտեղ ձերբակալեն ու էջմիածին ճանապարհեն։ Ապա ավելացնում է, թե երբ քահանան արդեն մեկնել էր Նախիջևանից, այդ ժամանակ Նախիջևան է վերադառնում Նալբանդյանը և իրենց չի հաջողվում նրան ձերբակալել, որովհետև Գաբրիել քահանա Պատկանյանը հայտնում է նախապատրաստվող ձերբակալության մասին և Նալբանդյանը, հազիվ երկու ժամ հոր տանը մնալուց հետո, փախչում է քաղաքից։

Բերում ենք այդ զեկուցագրից այս խնդրին վերաբերող մասը.— «Այլև ունիմ յայտնել ամենախոնարհաբար Աստուածարեալ Տէրութեան Ձերում, զի ըստ տնօրինելոյ Թագանռոկու քաղաքապետն մերոյ գնիրազ Լիվինին ի վերայ հիման հրամանագրութեան կուսակալին կովկասեան կողմանց՝ մագիստրատն քաղաքիս ի ներկայ ամսոյ ուղևորեաց աստի զԵղիայ քահանայն Շաքշնիկեան ի սուրբ Աթոռն էջմիածնի ընդ տեսչութեամբ առանձին նշանակեալ պահապանի, և որպէս հրամայեալ էր Վեհափառութիւն Ձեր ի մասին ճանապարհային ծախուցն յանձնեցի չափաւոր հարկաւորեալ դրամոն յայն պէտս նոյն նշանակեալ պահապանին. ապա և որովհետև դպիրն Միքայէլ Ուստայեանց ո՛չ գտանէր աստ՝ մագիստրատն ըստ մտաց յիշեալ տնօրէնութեան Վեհագոյն իշխանութեան գրեաց իսկոյն ի Քիշինև ոստիկանական կառավարութեան տեղւոյն որպէսզի և զնա անտի առաքեսցէ ի սուրբ էջմիածին. բայց յայսմ միջոցի, այսինքն յաւուր ուղևորելոյ աստի քահանային Շաքշնիկեան, Միքայէլ Ուստայեանցն ի Քիշինևայ եկն աստ պօշտիւ, և մինչ իմացեալ մեր ըղձալստենէն այն ինչ կամէաք ի ձեռն մագիստրատի ուղևորել և զնա նոյն եղանակաւ, նա լուեալ աստ թէրևս զայսպիսի տնօրէնութենէ՝ փախուցեալ մեկնեցաւ աստի՝ ունելով առ իւր ապառօթնի խատոռօժնի քօ գազիօննի նատօպնօստի անուամբ առաջնորդական գրագրի. և ի տան հօրն հազիւ մնացեալ ժամս երկուս, և որպէս ի վախճանէ լսելի եղև որ փախստեան նորին օգնական և առ այն խորհրդատու եղեալ է Գաբրիէլ քահանայն Պատկանեան։

Վեհափառութեան Ձերում այլև հարկաւոր համարիմ յայտնել ամենախոնարհաբար զյետագայ դիպուածս. երբ մագիստրատն քաղաքիս ի կատարումն հրամանագրութեան իւրում քաղաքապետի՝ արար կարգադրութիւն առաքել ի սուրբ էջմիածին զքահանայն Շաքշնիկեան, նա եկեալ առ մեզ իբրև զըղջացեալ մեղաւոր թախանձանօք աղերսեաց յոյժ միջնորդել խնդրանօք առ Ձերդ Վեհափառութիւն վասն թեթևացնելոյ զարժանին պատիժ մեղացն իւրոց-մեղմացուցեալ զհատուցումն ըստ անօրէնութեանն. և մեք յայսպիսի աղաչանացն նորա ի ժամուն շարժեալ՝ վերջապէս խոստացաք զկնի մեկնելոյն աստի եթէ ըստ հետևանացն հանգամանց ներեսցեն, յայտնել զայսմանէ ամենախոնարհաբար Վեհափառութեան Ձերում. այլև յառաջ քան զհասանիլ հրամանագրութեան նորին լուսափայլութեան, գնիրազ Վորոնցովի վասն ուղևորելոյ զնա այդր, քանիցս եկեալ առ մեզ նախ իբր լուեալ գոլով զայսպիսի տնօրէնութենէ՝ յայտնեաց թէ մտադիր է ինքնակամ յառաջագոյն դիմել յոտս Վեհափառութեան Ձերոյ. և առ այս խնդրեաց ի մէնջ խորհուրդ, առ որ պատասխանեցի թէ տէրտէր դու գիտես. յաւել ևս ասել թէ զոր ինչ և գրեալ ի զանգատ ի սենաթ այն ամենայն սխալմամբ և ի թելադրութենէ այլոց ոմանց արարեալ է, յորս սակս յօժար եմ ասաց այժմ առաքել ի նորոյ խնդիր ի սենաթ թէ իւր առաջին զանգատ է անհիմն և սխալական. առ որ նոյնպէս և ասացաք մեզ չէ ինչ փոյթ դու գիտես. այլ սակայն այսպիսի զզջումն նորա ի վախճանի յայտնի եղև լեալ

իցէ սուտ և խաբէական, որպէս նորոգ խաբ-դախութիւնն նորին յայտնեցեալն զկնի մեկ-նելոյն աստի ցուցանէ*)։

Նալբանդյանը Նախիջևանից փախչելուց հետո վերադառնում է Քիշինև և առաջնորդից համապատասխան թղթեր ու Լազարյանների խացեով էլ մի հանձնարարական նամակ ստանալով ուղևորվում Մոսկվա։ Այստեղից էլ նա մեկնում է Պետերբուրգ, ուր քննու-թյուն տալով հայոց լեզվի ուսուցչության ի-րավունք է ստանում և ապա Մոսկվա վերա-դառնալով մի որոշ ժամանակ պաշտոնավա-րում է Լազարյան ճեմարանում։ Սակայն նրա թշնամիները այստեղ էլ նրան հանգիստ չեն թողնում. նրանք համոզում են Ներսեսին՝ հե-տապնդել ու էջմիածին վերադարձնել տալ նրան։ Կաթողիկոսը դիմում է թե՛ Մոսկվայի ոստիկանապետին և թե՛ Լազարյաններին, որպեսզի Նալբանդյանին, որպես հոգևորա-կանի, արձակեն պաշտոնից և էջմիածին ու-ղարկեն։ Ոստիկանապետը ձերբակալում է Նալբանդյանին, բայց Սաեփանոս Նազարյա-նը, լավ ծանոթ լինելով ամբողջ գործին, մի-ջամտում է և նրան կալանքից ազատել տալիս՝ հոգևորական կոչումից նրա ազատված լի-նելու մասին համապատասխան վկայագրեր ցույց տալուց հետո։

Այժմ էլ մի երկու խոսք այն մասին, թե ինչպես է Նալբանդյանը ազատվել հոգևորա-կան կոչումից։ Այս մասին կա մի անհիմն ենթադրություն, որ իբր թե Նալբանդյանը դիմել է կաթողիկոսին և խնդրել իրեն հոգևոր կոչումից արձակել, իսկ թեմի առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոսն էլ գրել է կաթո-ղիկոսի տեղապահ Ղուկաս եպիսկոպոսին, որպեսզի օժանդակի այդ գործին։ Տեղապահ սրբազանը իբր թե, ի շարս մի շարք գրու-թյունների, կաթողիկոսին ստորագրել է տա-լիս նաև Նալբանդյանի խնդրագիրը, առանց նրան իրազեկ դարձնելու գրության բովան-դակության մասին։ Սակայն Ներսեսի կյան-քին ու գործունեությանը ծանոթ անձինք գի-տեն, թե նա որքան բծախնդիր էր և թե ինչ-պես իր բազմաթիվ կոնդակներն ու անհամար գրությունները իր իսկ ձեռքով էր գրում, ա-ռանց վստահություն տածելու շրջապատող-ների նկատմամբ։ Բնականաբար տեղապահ սրբազանին դժվար թե հաջողվեր մոլորու-թյան մեջ գցել Ներսեսին. մյուս կողմից էլ Ներսեսի բացարձակ միահեծանությունը նը-կատի առնելով հավանական չենք համարում, որ տեղապահը համարձակվեր նման ակտով դրդռել կաթողիկոսին իր դեմ։ Մնում է են-թադրել, որ այդ խնդիրը լուծվել է Քիշինե-վում. հավանական է, որ առաջնորդի կողմից Նալբանդյանին տրված փաստաթղթերից մե-կը եղած լինի նրան հոգևոր կոչումից ազատ արձակելու վկայագիրը, հակառակ դեպքում նրան պետական ծառայության չէին ընդու-նի։ Այս տեսակետից հետաքրքրությունից զուրկ չէ Ներսեսի մտերիմ Սարգիս վարդա-պետ Ջալալյանի մի նամակը՝ գրված 1854 թ. հունիսի 13-ին Քիշինևից։ Այս նամակում նա հայտնում է, թե թեմի հոգևոր իշխանու-թյունը բարյացակամ է Միքայել դպիր Ոււ-տայանի նկատմամբ և նրան Մոսկվա ու-ղարկելով օրինավոր ծննդյան վկայական է տվել, որով նա կարող է կայսերական ծա-ռայության մեջ մտնել։ Բերում ենք այդ նա-մակը.—

Ի 13 յունիսի 1854

Առ կաթողիկոսն

Առաջեմ ընդ այսմ զանկանոն ներգոր-ծութիւն տեղւոյս հոգևոր իշխանութեան յա-ղագս Միքայէլ դպրի Ոււտայեան, թէպէտ ես կամէի յայտնել ուր հարկն էր բայց առանց նախընթացաբար հարցանելոյ զՁերոյին Վե-հափառութեան ո՛չ վստահացայ. նախ, առա-քեալ է զնա ի Մոսկով, զի ծառայեալ ստա-ցի զառաջիճան ի կայսերէ, տալով նմա զօրի-նաւոր ծննդեան վկայական, երբ նա չէ օրի-նաւոր ծնունդ, և նոյնպիսիքն չկարեն մանել յայս և իցէ ի կայսերական ծառայութիւն։

Երկրորդ՝ անցեալ 1853 ամի խաբելով զմարմնաւոր իշխանութիւն ի վնաս զանձա-րանի տէրութեան հանեալ են նմա զանցա-թուղթ, որպէս թէ զնա նա ի Նախիջեան և ի Ղրիմ գործով ծառայութեան բայց լեալ է այն վասն նորին զբօսանաց ըստ որում ընկալայ ես յամէն ուստեք զտեղեկութիւն զորս առա-ջի առնեմ ընդ սմին Ձերոյին Վեհափառու-թեան տնօրինութիւն, իսկ եթէ բարեհաճէք հրամայեցէք ինձ զի ես յիմէ կողմանէ յայտնեցից ուր հարկն է վասն պահպանելոյ զարդարութիւն*)։

Այսպիսով Նալբանդյանի դեմ ուղղված հալածանքները տարիներ են տևում և նույ-նիսկ վերջ չեն գտնում անգամ Ներսես կա-թողիկոսի մահվանից հետո։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ. ֆոնդ № 58, գործ № 4, էջ 9։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ. ֆոնդ № 53, գործ № 650, էջ 75.

# ՌՈՒՄԱՆԱՀԱՅՈՑ ՄՏՔԻ ԳԱՆՁԱՐԱՆ „ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆԸ"*)

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Եթե ռումանահայ մամուլը և Մատենադարանի ոսկեմատյանը ուսումնասիրելու ըլլանք, կտեսնենք որ այս հաստատությունը, իր համեստ պայմաններով, ոչ միայն հայ մտավորականին ու ընթերցողին օճախն է եղած, այլ նաև բազմաթիվ օտարներ, հատկապես ռումեններ, այցելած ու հետագային ալ սերտ կապ պահած են այս հաստատության հետ. եղած են նաև դեմքեր, որ իրենց աշխատության համար անսպառ աղբյուր նկատած են զայն։

«Ռումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ին հավատարիմ բարեկամ մնաց մինչև իր եղերական վախճանը մեծ հայագետ ու հայասեր, ուսուցչապետ Ն. Եորգան։ 1928-ի մայիսին էր, որ առաջին անգամ նա այցելեց մատենադարանը և հոն ժամ մը անընդհատ պրպտումներով զբաղեցավ. ան իր հրատարակություններեն մաս մը նվիրելով մատենադարանին, անոր ոսկեմատյանին Ա էջին վրա ֆրանսերեն լեզուավ զգացված դրեց սա տողերը. «Ի հիշատակ այցելության այս հարկին, ուր պարփակված է մտածումը տառապած ու փառավոր ժողովուրդի մը։ Ու որքան պիտի հրճվեր մեծ հայագետը, եթե իրեն վիճակված ըլլար տեսնել նաև բացումը «Հայ Մշակույթի Տան», ուր փոխադրվեցավ իր նախկին համեստ հարկեն անոր կողմե այնքան սիրված Ռումանահայ Մատենադարանը հայ արվեստի ու հայ անցյալի իր թանկագին նշխարներով հանդերձ։ Համաշխարհային համբավի տիրացած այս գիտնականը, որու գրչին կպատկանին 1300 գործեր ու 25000 հոդվածներ սփռված աշխարհի չորս ծայրը լույս տեսնող թերթերուն մեջ, գերման ֆաշիստներու կողմե վարձված ռումեն լեգեոնականներեն վատաբար կսպանվի 1940-ին, խոր սուգի մատնելով ամբողջ Ռումանիան։

1929 թվին Մատենադարան այցելեց տոքթ. Քրուչեանո գիտուն քահանան, որն Մատենադարանի մեջ պատրաստեց իր դոկտորական աշխատանքը, աշխատություն մը գրելով հայ եկեղեցվո պատմության շուրջ*)։ 1935 թվին կայցելե հայագետ փրոֆ. Վլատ Պընըցեանուն, որն ոսկեմատյանի մեջ գրած իր տպավորության մեջ արդեն կշեշտե ավելի մեծ գանձարան մը ստեղծելու անհրաժեշտությունը։ Փրոֆ. Պընըցեանու կգրե. «Հիացումով դիտեցի հայկական Մատենադարանի մեջ բոլոր այն նյութերը, որոնք մեզ կհիշեցնեն հայոց մշակույթն ու անցյալի մեծ պահերը և ի մասնավորի մեր երկրի մեջ ապրող հայոց պատմությունը... Եթե իսկապես հայերը իրենց ազգին ու գեղեցիկ և փառահեղ անցյալին վրա կգուրգուրան, այն ժամանակ ամեն միջոցով պետք է ճոխացնեն մատենադարանը ու ստեղծեն թանգարան մը։ Այլապես մեր դարու աններող ժամանակը, որ նկատի չառներ երբեք ան-

*) Տե՛ս ամսագիր «ԷՋՄԻԱԾԻՆ» մայիս-հունիս 1948 թ.

*) Gr. Gruceanu Preot.— Privire generala asupra Bisericei Armene pana la Sinodul al IV-le ecumenic, Bucuresti, 1936

ցյալի հետքերու արժեքը, շուտով պիտի ոչնչացնե ամեն ինչ, իսկ Հայերը այլևս հընարավորություն չպիտի ունենան իրենց զավակներուն ցույց տալու բոլոր այն առարկաները, որոնք իրենց համար մտամփոփման ու հարգանքի բարձր պատճառներ էին և միևնույն ժամանակ ազգային պարծանքի և ոգևորման պահեր։ Փրոֆ. Պընըցեանուի բաղձանքը շուտով պիտի իրականանար։

Հայ այցելուներեն հիշենք Պոլսո նախկին պատրիարք հանգուցյալ Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը, որ 1928-ին այցելած է, 1939-ին այցելած է Սիոն վրդ. Մանուկյան (այժմ եպիսկոպոս) և շատ ուրիշներ։

## ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ռումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ի հիմնադրության շրջանին տեղի կունենան նաև դասախոսություններ ու հուշերի երեկոներ, ինչպես նաև կարգվին գրական երեկույթներ. սույն հիմնարկության նախաձեռնությամբ ու Պուքրեշահայ բոլոր միություններու աջակցությամբ կսկսի տոնվիլ «Հայ Մշակույթի օր»-ը։ Հաճախ հերթական դասախոսություններուն, իբր դասախոս, իրենց մասնակցությունը կբերեին նաև ռումեն ու այլ բարձրաստիճան անձնավորություններ։ Ասոնց կողմե տրված դասախոսություններեն հիշենք «Հայ կին գրող Սրբուհի Տյուսաբ»-ի մասին 1931-ին կարդացված դասախոսությունը, 1937-ին՝ «Մանուկ պեյ իբր դիվանագետ», ավելի ուշ՝ «Հայ իրավունքի մասին», և շատ ուրիշներ։

«Ռումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ը իր հաստատության մեջ կազմակերպեց նաև զանազան հյուրասիրություններ, որոնցմե առաջինը տեղի ունեցավ 1930-ին ի պատիվ մեծանուն հայագետ փրոֆ. Ն. Եորգայի, անոր կողմե հայ անունը Սորպոնի և Պուքրեշի ազգային թատրոններու բեմերեն պանծացնելե ետքը։ Հյուրասիրություն մ՚ ալ սարքվեցավ ի պատիվ փրոֆ. Վլատ Պընըցեանուի։

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ռումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ը, ըլլա իր ստեղծման սկզբնական շրջանին կամ ավելի ուշ, երբ կհիմնադրվի «Հայ Մշակույթի Տուն»-ը, միշտ ալ ջերմապես փափաքած է մնայուն գրական-բանասիրական պաշտոնական հանդես մը հրատարակել և մատենաշար մըն ալ հիմնել, սակայն այս բոլոր ծրագիրներն ալ ինչ ինչ պատճառներով չեն իրականացեր. միայն 1928-ին, Թարգմանչաց տոնի օրը, երբ Մատենադարանի հիմնադրության ալ տարեդարձն էր, լույս կտեսնե «Հայ Մշակույթի Օր» անուն 8 էջնոց պարբերական մը՝ ճոխ բովանդակությամբ, որ հետագային իր հաջորդներն ալ պիտի ունենար, սակայն կարելի չեղավ գեթ տարին մեկ թիվ իսկ լույս ընծայել։ 1944-ին, «Հայ Մշակույթի Տան» բացումին առթիվ, լույս ընծայվեց պատկերազարդ ցուցակ մը՝ 110 էջերէ բաղկացած։

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Դեռ 1928-են սույն հաստատության վարչության ժողովներուն մեջ ծնունդ կառնե Հայ Արվեստին նվիրված ցուցահանդեսի մը կազմակերպման գաղափարը. այս բանը շուտով իրականություն կդառնա 1930-ին, երբ փրոֆ. Ն. Եորգայի նախագահությամբ ռումանահայ գաղութը շքեղ կերպով կցուցադրե հայ արվեստի նշխարները, պանծացնելով հայու անունը։ Ցուցահանդես կայցելեն նաև ռումեն ու օտար բարձրաստիճան հյուրեր, որոնց մեջ երկրին երբեմնի վեհապետը եւ Ռումեն մամուլը միաբերան այս առթիվ երկար ժամանակ գովքը հյուսեց հայ արվեստին։

«Ռումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ի վարչության նախաձեռնությամբ տեղի ունեցավ նաև «Հայ Մշակույթի Բարեկամներու Ընկերակցութեան» հիմնադրումը, որուն նախագահը դարձյալ փրոֆ. Եորգան էր։ Այս ընկերակցությունը պարբերաբար

շքեղ հանդեսներ կազմակերպեց, ի մասնավորի Վըլենի տե Մունթեի մեջ, ուր անխոնջ տքնությանց առաքյալ Նիքոլա Եորգան ուսման տաճար մը ստեղծեր էր, ամառային արձակուրդին իր շունչով սերունդները թրթռեցնելու և գյուղը լուսավորելու համար. հոն էր, որ մոտ կապ մը ստեղծվեցավ հայ և ռումեն ժողովրդի ու մտավորականության միջև։

## «ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ»

Գիրքերով ու թանկարժեք իրերով շարունակ ճոխացող և իր ծրագրված գործունեությամբ ընդլայնվող «Ռումանահայ Կեդրոնական Մատենադարան»-ին համար այլևս շատ նեղ կուգար Միսաքյան-Քեսիմյան դպրոցին մեջ գտնվող իր սրահը. ինչ կվերաբերեր հարևան շենքին, որը երկրաշարժեն բոլորովին վնասվեր էր ու իր մեջ զետեղված եկեղեցական թանգարանն ալ փոշիներու տակ էր մնացեր, ան ալ արդեն պատանիներու համար խաղասենյակ մը կծառայեր։ Ուրեմն անհրաժեշտ էր մտածել նոր շենքի մը կառուցման մասին և շուտով, շնորհիվ Հովսեփ Տուտյանի նվիրատվության, իրականանալ սկսավ Մատենադարանի վարիչներու ու գրասերներու այս փափաքը։

Պուքրեշի առաջին հայկական վարժարանի հիմնադրության 125-ամյակի օրը ռումանահայության համար նշանակալից օր հանդիսացավ։ Այդ օրը Պուքրեշում հիմը դրվեց ազգային թանգարան-մատենադարանի նոր շենքին, որ պիտի կրեր «Տուտյան Հայ Մշակույթի Տուն» անունը։ Հիմերու օծման կրոնական արարողությենեն վերջ, որուն կնախագահեր հանգուցյալ Հուսիկ արքեպիսկոպոս, հաջորդեցին բազմաթիվ ճառեր։ Շենքին նախագիծը գծվեցավ ճարտարապետ էմիլ Քըլինեսքուե և աշխատանքները կատարվեցան Աուրել Եուանովիչ ընկերության կողմե. շենքին կառուցմանը կհըսկեր ճարտարապետ Հ. Կոմիկյանը։

«Հայ Մշակույթի Տուն»-ը, իբր իր հիմնադրության նպատակ, որդեգրեց հետևյալ ըսկըզբունքները.— Ա. զարկ տալ հայ մշակույթի ծաղկմանն ու տարածմանը, Բ. օտարներին ծանոթացնել հայ արվեստի ու մշակույթի հետ և ամրապնդել հայ ու ռումեն ժողովուրդներու կուլտուրական կապերը։ Սույն նպատակներին հասնելու համար «Հայ Մշակույթի Տուն»-ը պետք է ա) ճոխացնե ու ծաղկեցնե Ռումանահայ Կեդրոնական Մատենադարանն ու թանգարանը, բ) կազմակերպե ասուլիսներ, դասախոսություններ ու դասընթացքներ, գ) հրատարակե մատենաշար մը և ի հարկին պարբերական մը հայ-ռումեն կամ այլ օտար լեզուներով, ինչպես նաև սահմանե գրական մրցանակներ, դ) կազմակերպե գրական-գեղարվեստական հանդեսներ, երաժշտական համերգներ և տոնախմբություններ, ե) սարքե ցուցահանդեսներ։

Շենքին հիմնարկեքեն տարիներ հետո, երբ ավարտվեցան ինչպես շենքին, այնպես ալ անոր մեջ գույքերու զետեղման աշխատանքները, 1944-ին տեղի ունեցավ Տան հանդիսավոր բացումը։ Բացումեն մեկ քանի ամիս առաջ շենքին նվիրատուն՝ Հ. Տուտյան, երկար հիվանդությենե մը վերջ, կնքեր էր իր մահկանացուն, առանց շենքին ավարտումը տեսնելու։ Հանդեսի բացումը կատարեց «Հայ Մշակույթի Տան» վարչության նախագահ, արվեստի քննադատ Գր. Ջամպազճյանը, և ուրիշներ. հանդեսի գեղարվեստական բաժինեն հետո ներկաները դիտեցին Տան զանազան բաժինները։

1944-ի օգոստոսի 23-են սկսյալ, երբ Սովետական հաղթապանծ բանակները ազատագրելով Ռումանիան փրկեցին հոն ապրող հայերը, որոնց պահ մը փորձեր էր աքսորել Անթոնեսքուի ֆաշիստական կառավարությունը, «Հայ Մշակույթի Տան» համար գործունեության նոր շրջան սկսվեց. ընթերցարանը վերածվեցավ Հայրենիքեն՝ Սովետական Հայաստանեն ստացված թարմ գրականության նոր աշխարհի մը։ Այսպիսով գաղութահայ ընթերցողները տեղյակ էին դարձվում Սովետական Հայրենիքի բարգավաճմանն ու վերելքին։

«Հայ Մշակույթի Տան» վարչության նախագահությունը վարեցին 1944-ի հիմնադրության շրջանին՝ Գր. Ջամպազճյան, 1944—1946-ին տոքթ. Ա. Սալբի, 1946—1948-ին Տ. Վազգեն վարդապետ Պալճյան։ Վարչության կից 1944—1947 տարիներում սա տողերը գրողին ղեկավարությամբ կգործեր շուրջ 17 երիտասարդ-երիտասարդուհիներե բաղկացած Մատենադարանի հանձնախումբը, որը շարունակական որոշ դեր ստանձնած էր Մատենադարա-

նի գրքերի դասավորման, պահպանության, տեխնիկական զանազան աշխատանքների կատարման, հանդեսների կազմակերպման գործերում մեջ։ Մատենադարանի առօրյա ձրի կերպով կատարվող աշխատանքներում զուգընթաց Հանձնախումբը զբաղվեց նաև երիտասարդության ինքնազարգացման խնդիրներով ու իր համեստ ուժերով կարողացավ հայ լեզուն, մշակույթը մատչելի դարձնել շարք մը գրիչե ձուլման ենթարկված երիտասարդներու, որոնք հետագային պատշաճ առիթներով հայերեն պատասխանություններ ալ կկարդային։

«Հայ Մշակույթի Տունն»-ը բազմաթիվ այցելուներ ունեցած է թե բացման առթիվ և թե անկե ետքը։

1946-ին այցելեց ու հոս հյուրասիրվեցավ Տ. Երոնիմ ռուս արքեպիսկոպոսը։ 1947-ի հունիս 3-ին հայ համայնքը և «Հայ Մշակույթի Տունն»-ը մեծ շուքով ընդունեց այցելությունը Մոսկվայի ու համայն Ռուսիո Պատրիարք Ն. Ս. Ալեքսիի։ Ն. Սրբությունը կուղեկցեին Լենինկրատի և Նովկորոտի Ս. Միտրոպոլիտ Գրեգորին, Վիտալի արքեպիսկոպոսը և ուրիշներ։ Անոնք դիտեցին Մատենադարանի զանազան բաժինները ու հայկական ձեռագիրները։ Ն. Ս. Ալեքսի Պատրիարք հաստատության ոսկեմատյանին մեջ սա տողերը գրեց.— «Ջատ ուրախ եղա այցելելուս համար հայոց շատ գեղեցիկ եկեղեցին ու Հայ Մշակույթի Տունը։ Կհայցեմ աստուածային օրհնությունն հոգեորականության և ամբողջ հավատացյալ համայնքին վրայ»։ «Հայ Մշակույթի Տանն» Մատենադարանը այցելեցին 1944-ին նաև Պուքրեշի Սովետ դեսպանատան ավագ քարտուղար Ս. Տոնկուլով, 1945-ին Սովետական Միության ճարտարապետներու միության փոխ-նախագահ, ճարտ. Կ. Հալաբյան, ճարտարապետ Ամիրխանյանի հետ միասին։ Նույն տարին այցելեց ռումանահայ կաթողիկե թեմի առաջնորդ Գեր. Հ. Լենկել Ջոլթան՝ Պուքրեշի ժողովրդապետ Հ. Խ. Կղեմեսյանի հետ միասին։ 1946-ին այցելեց ՀՍՍՌ Ներգաղթի կոմիտեի նախագահ տոքթ. Բ. Աստվածատրյան, ինչպես նաև Ռումանիայեն ներգաղթի լիազորներ Ջարըյան, Մուրադյան ու Սովետական դեսպանատան հյուպատոս Ս. Եւլիբեկյան։ 1947-ին այցելեց Ն. Ս. Անթիմ Նիքա՝ Պուքրեշի Արքեպիսկոպոսը։ 1945-ին այցելեցին կաթողիկոսական ընտրության մասնակցող պատվիրակներ Տ. Մամբրե եպիսկոպոսը, Տ. Սիոն և Տ. Տիրան վարդապետները (այժմ եպիսկոպոսներ), Պ. Սելյան և ուրիշներ։

Այստեղ արժե հիշել «Հայաստանեան Ճակատ»-ի կողմե կազմակերպված Սովետական Հայաստանի պանծալի 25-ամյակի տոնակատարության մասին, որ մեծ շուքով տեղի ունեցավ Սքալա հոյակապ սրահին մեջ՝ 3.000 հայրենասերներու ու բարձրաստիճան հյուրերու ներկայության։ Այդ 1945-ի նոյեմբերի 29-ին էր, որմե հետո դիշերը «Հայ Մշակույթի Տանը մեջ 150 հրավիրյալներու ներկայությամբ փայլուն ընդունելություն մը սարքվեցավ։ Աննախընթաց երեկո մըն էր, երբ գրեթե ռումեն կա-



«Հայ Մշակույթի Տան» արտաքին պատի զարդամանդակի նմուշ

ռավարության ամբողջ կազմն ու սովետական բարձրաստիճան անձինք այդքան երկար մնացին, քան որևէ երեկույթի առեն։ Իրենց ներկայությամբ երեկույթը պատված էին Սովետական դեսպան Տեր և Տիկ. Քավթարաձե, զոր. Սուսայկով՝ Դաշնակից Հակակշռի Հանձնախումբի տեղակալ, զոր. Վինոկրատով, դեսպանատան խորհրդական Յակովլև, Տեր և Տիկ. Տոնկուլով, ՏԱՍՍ գործակալության թղթակիցներ և այլն։ Ռումեն կառավարության կողմե ներկա էին վարչապետ Պ. Գրոզա, նախարարներ Գեորգիու Դեժ, Թեոհարի Ճեորճեսքու, փրոֆ.

Վլ. Ռըքոասա, փոխ-նախարարներ և այլք։ Ներկա էին նաև Պուլկարիո դեսպան Սավա Կանովսկի, օպերայի և ռադիո-ժուռնալի տնօրենները, ռումեն թերթերու խմբագիրներ և այլն։ Ճառեր արտասանեցին զոր. Սուսայկով, վարչապետ տոքթ. Պ. Գրոզա, պուլկար դեսպան Կանովսկի, Տ. Վազգեն վարդապետ և «Հայաստանեան Ճակատ» կազմակերպության ընդհանուր քարտուղար Հ. Պապոյան։ Վարչապետ Պ. Գրոզա Սովետական Հայաստանի կենաց-բաժակը բարձրացնելով և պահ մը իր հայացքը սրահը զարդարող հնադարյան սքանչելի վարագույրներում դարձնելով գովքը հյուսեց Սովետական Հայաստանի վերելքին ու հայ շքնաղ արվեստին։

«Հայ Մշակույթի Տան» մեջ է, որ դարձյալ կկազմակերպվին դասախոսություններ, հանդեսներ, կգումարվին կոնգրեսներ, ժողովներ և այլն։ Անոր թանգարանի սրահին մեջ էր, որ վարչության անդամներու օժանդակությամբ կազմակերպվեցավ Սովետական Հայաստանի նվաճումներու պատկերահանդեսը, որուն նկարները ստացվել էին Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության միջոցավ, և որը բացառիկ հաջողություն ունեցավ։ «Հայ Մշակույթի Տուն»-ը սատարած է նաև Ռումեն-Սովետ բարեկամության ընկերության ցուցահանդեսը, մասնակցելով անոր Սովետական Հայաստան հրատարակված գրքերու շարք մը ցուցադրելով։ «Հայ Մշակույթի Տուն»-ը մասնակցած է նաև Պուտաբեշթի ցուցահանդեսին։

«Հայ Մշակույթի Տուն»-ը ամեն տարի կկազմակերպե Մշակույթի օրվան նվիրված հանդես, ինչպես նաև հերթական հանդեսներ ու դասախոսություններ։

1945-ին Տան վարչության նախաձեռնությամբ և կարգ մը նվիրատուներու փափաքով կազմակերպվեցան մրցակցություններ։ Առաջինը տեղի ունեցավ նկարիչներու մրցակցությունը, որուն մասնակցեցան ռումանահայ կարգ մը նկարիչներ։ Ժյուրին կազմված էր ծանոթ նկարիչ ու ուսուցիչ Սթերիատիե և ուրիշներե։ Առաջին տեղը գրավեց նկարիչ Արամիկը (ներկայիս հայրենադարձ), երկրորդ տեղը՝ Լուչիա Ներսեսթիմուրյանը և երրորդ տեղը՝ Ցիգ Տամատյանը։ Զուգընթաց տեղի ունեցան նաև գրական մրցակցություններ. մանկական գրականության ասպարեզում առաջին տեղը գրավեց տոքթ. Ա. Սալբին, արձակի և չափածոյի ասպարեզում առաջին տեղերը գրավեցին Եղ. Քոլանճյան, Զ. Պլպուլ և Հորիոն, իսկ հայագիտական աշխատությունների ասպարեզում՝ Ն. Պալյան։

## «ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱԺԻՆ

### Ա. ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ

Ճիշտ է, թեև «Հայ Մշակույթի Տան» մեջ գտնվող թվով 150 ձեռագիրները ուրիշ ձեռագրական հավաքածոներու բաղդատմամբ բացառիկ արժեք մը չեն ներկայացներ, բայց և այնպես Պուքրեշի ձեռագրատունը հպարտ զգալու իրավունք ունի, քանի որ իր մեջ խմբված են Ռումանիո մեջ գրված հայ ձեռագիրներու կեսը. դարձյալ հոս է, որ կըպահվի Ռումանիո մեջ գտնվող ամենահին ձեռագիրը՝ գրված 1265-ին և վերջապես այս համեստ ձեռագրատունը իր ձեռագիրներու մանրանկարչական զարդերով ու այդ ձեռագիրներու ոմանց հիշատակարաններու պատմական արժեքով անսպառ նյութ կարող է մատակարարել մանավանդ այն գիտ-աշխատողին, որը կփափաքի ռումանահայոց և հարևան հայ գաղութներու պատմությամբ զբաղիլ։

Հիշատակության արժանի են մանավանդ հետևյալ ձեռագիրները.*)

*) Ս. Ե. Քոլանչյան.— Մայր Ցուցակ հայերեն ձեռագրաց Պուքրեշի «Հայ Մշակույթի Տան» մատենադարանի (անտիպ)։

1. **Ավետարան.**— գրված Հայոց ՉԺԴ թըվականին (=1265), 14×19×6 սմ մեծությամբ. գրված է Կիլիկիա, Մաշկևոր վանքին մեջ, Կիրակոս սարկավագե, Թեոդոս փակակալի խնդրանքով։ Կազմված է Առաքել Հնազանդենցի կողմե դարձյալ 1265-ին։ Ինչպես հիշատակարանը կըսե, գրված է—«ի թագաւորութեան Հեթմայ աւծեալ ի վերայ նահանգին Կիլիկիոյ...»։ Պատկանած է Ռոման քաղաքի հայոց եկեղեցվույն։

2. **Ճաշոց.**— գրված 1313—1331 թվականներում, 24×33×8 սմ մեծությամբ. գրված է Կարապետ քահանայե, Երուսաղեմի մեջ, Ասլեր տիկինի համար։ Ինչպես հիշատակարանը կվկայե, գրված է Օշին թագավորի օրոք։ Ձեռագիրը կազմված է Ստեփանոս դպիր Կամենիցի կողմե 1687 օգոստոս 1-ին, Թրանսիլվանիո Սեն Միքլոշ (Ճուրճով=Գեորգիեն) քաղաքին մեջ։ Պատկանած է Սուչավայի հայոց թաղականության։

3. **Ավետարան.**— գրված 1351-ին, 17×24×6 սմ մեծությամբ, Կաֆայի (Ղրիմ)

մէջ, Կարապետ քահանայէ, Գրիգոր սարկաւագի համար։ Վերջին սեփականատէր Հակոբշա և Աւյուժ կոչված եղբայրներու կողմէ 1451-ին նվիրված է Յաշի Ս. Աստուածածին եկեղեցվույն։ Այս ավետարանը նուրբ մանրանկարներ, խորաններ, թռչնագիր սկզբնատառեր ու լուսանցազարդեր ունի։ Կազմը ձեռագրատան մյուս բոլոր ձեռագիրների կազմերէն կատարեքի ու ամենարժեքավորն է. Նա արծաթապատ ու ոսկեզօծված է, երկու կողերը զիրար միացած են



Հիշատակարան 1265 թ. Կիլիկիա գրված ձեռագիր Ավետարանի
(«Հայ Մշակույթի Տուն»)

երեք արծաթյա լայն հյուսքերով. Ա կողին վրա փորագրված է Աստուածամայրը Հիսուսը գրկին, վերը կա երկաթագիր հայերեն արձանագրություն, իսկ ետևի կողքին հարության տեսարանը։ Ռումեն գիտնական մը՝ Դան Սիմյոնեսքու, որ ուսումնասիրած է այս ձեռագիր ավետարանը, իր աշխատության մէջ *), խոսելով անոր կազմին մասին, կըսե որ թեև արծաթապատ կողին վրա հայերեն է գրված, սակայն ան ռումանական XV և XVI դարերու արծաթյա կազմերու հատկանիշներն ունի, ներկայացնելով ռումանական բազմաթիվ ավետարաններու վրայի տեսարանները։ Դան Սիմյոնեսքու չատ հավանական կգտնե, որ այդ ձեռագրին արծաթյա կազմը, ինչպես հիշատակարանին վերջի մասեն ալ հայտնի կդառնա, 1451-ին Յաշի եկեղեցվույն նվիրելու ատեն շինված պետք է ըլլա Մոլտավիո հողին վրա XV դարուն, ռումեն երկրին մէջ սովորական դարձած կազմերու օրինակին հետեվելով։ Մանրանկարներու մասին Դան Սիմյոնեսքու կըսե. «Քննելով մանրանկարները կտեսնենք, որ Կաֆայի ԺԴ դարու դպրոցը չի ներկայացներ հայ մանրանկարչության արվեստի անկումը, այլ դատելով Յաշի պատկանող այս ավետարանեն, ան կըներկայացնե պայքարը ավանդապաշտ հոսանքին ու օտար ազդեցությանց, որոնց մէջ պարտադրվեցին ստեղծագործելու հայերը։ Ռումեն հողերու վրա հայոց ապրած կյանքին ընթացքին սլավո-ռումեն մանրանկարչական հին արվեստը ծաղկեցավ հայկական այս օրինակներում կից և սրանք այնքան տարածված էին Մոլտավիո իրենց եկեղեցական կեդրոններում մէջ, որ փոխաբերական ազդեցությունները պետք է ուսումնասիրվին ավելի նոր աղբյուրներու հիման վրա։

4. Ճաշոց. — գրված 1459—1460-ին, 22×32×11 սմ մեծությամբ. գրված է Աքքերման, Նիկողայոս եպիսկոպոսի կողմէ։ Պատկանած է Սուչավայի թաղականության։ Ունի բազմագույն ու նրբաճաշակ թռչնագիր լուսանցազարդեր և ճաշակավոր երեք խորաններ։ Գրիչը իբր իրեն օգնականներ կհիշե ազյակոբ արեղան, որ գծուղծս կոկեց, զյակոբ երէց, որ զտողն քաշեց, զստեփաննոս արեղան, որ ծաղկելուն ընկերեց և այլ ձեռնատուացն։ Գրված է Կյուրեղի ցանկությամբ Յաշի Ս. Աստուածածին եկեղեցվույն համար։ Հիշատակարանը իսկապես հանդավոր ոտանավորի մը գեղեցկությունն ունի, միացած գրիչին նկարչագեղ լեզվին հետ. ահա նմուշ մը անկե (թերթ 263, էջ 526)

Յար հրաշափառ մեծ տօնիս
Քեզ երանի որ հանդիպիս,
Լուսափթիթ բուրաստանիս,

*) Dan Simionescu.— Evanghelia Armeana din Jasi (1351), Bucuresti 1941:

*Հոգիարուխ սրբոյն տաւիտ,*
*Յորժամ ի ծունր խոնարհիս*
*Սիրով հոգւոյդ յԱստուած հըպիս*
*Յայնժամ յիշես դու զեղկելիս,*
*Զայս անպիտան աղքերմանցիս,*
*Զմեղաւք ծածկեալս ի մէջ տղմիս,*
*Նիկողայոս եպիսկոպոսիս*
*յինն հարիւր և ութ թվին։...։*

*Հակառակ նվիրատվին փափագին, այս ձեռագիրը երկար ժամանակ Յաշ չմնաց, քանի որ բուն գրչին հիշատակարանեն վերջ կհաջորդե 14 էջնոց հավելված մը, որուն վերջի հիշատակարանին մեջ կհիշվի Տեր Աստուածատուր, որդի Տեր Հովհաննեսի, որ թվականին ՌԿԷ (= 1618) Սեչով (Սուչավա) քաղաքին մեջ բազում աշխատանոք այդ մնացած պակասը կլրացնե։ Ու անկե վերջ, մինչև 1927 թվականը, ավելի քան 300 տարի կմնա Սուչավայի մեջ, ուրկե ալ կփոխադրվի Պուքրեշ։*

5. Մաշտոց.— *գրված 1555-ին, 15,5×20×3,5 սմ մեծությամբ. գրված է Լվով (Լեմպերկ), Ներսես քահանա արճեշեցիի կողմե։ Պատկանած է Սուչավայի թաղականության։*

6. Մաշտոց.— *գրված 1565-ին, 13,5×18×3,5 սմ մեծությամբ։ Հիշատակարանը կիսով չափ պատռված է, գրիչը, ստացողն ու հեղինակը անհայտ են։*

7. Կանոնագիրք.— *գրված 1621-ին, 16×20×6,5 սմ մեծությամբ. գրված է Գրիգոր քահանայի կողմէ, Կամենիցի (Լեհաստան) մեջ։*

8. Ավետարան.— *գրված 1649-ին, 18,5×21×7 սմ մեծությամբ. գրված է Հովհաննես քահանայի կողմե Սուչավայի մեջ խոճա Քրիստոսատուր Թոխաթեցիի համար, զոր նվիրած է քաղաքի Ս. Երրորդություն եկեղեցիին։ 1649-ին գրված այս ձեռագիրը կարմիր թավշապատ ու արծաթապատ է, ունի նուրբ և գունագեղ չորս խորաններ և թռչնազարդ սկզբնատառեր ու լուսանցազարդեր։ Գրիչը իր հիշատակարանի վերջը կգրե. «Բայց յորժամ գրեցաւ սուրբ աւետարանս էր թիւ հայկազեան տոմարի Ռ. Ղ. Ը. գրեցաւ ընդ հովանեաւ սրբոյն Սիմէոնի ի հայրապետութեան հայոց տան Տէր Փիլիպոսի և յառաջնորդութեան յայսմ նահանգիս Տէր Մինաս վարդապետին...»։ Այս այն Մինաս Չիլիֆտար Օղլու կոչեցյալ*



Ձեռագիր Ավետարան գրված 1351 թվին Կաֆա
(Հայ Մշակույթի Տուն)

եպիսկոպոսն է, որ Մոլտավիո Գեորգե Տուքա իշխանի 1672-ին հայոց դեմ սկսած հալածանքին պատճառավ, Մոլտավիայեն ու մանավանդ Սուչավայեն բազմաթիվ հայեր գաղթեցուց՝ մի մասին դեպի Լեհաստան, իսկ մեծագույն մասին ալ իր առաջնորդությամբ դեպի Թրանսիլվանիա*), որուն Միքայել Աբաֆի իշխանը հրավիրած էր զիրենք իր երկիրը ու շատ մը ազատություններ ալ շնորհած։ Հոս է, որ ավելի ուշ Ավքսենտիոս Վրդարյան, որ Թրանսիլվանիո հայ կաթողիկե թեմին առաջին առաջնորդը ու Գեռլա հայաքաղաքին հիմնադիրը եղավ, 1684-ին Հռոմեն, իբր առաքելական քարոզիչ, Թրանսիլվանիա անցեր էր Մոլտավիայեն հոն գաղթող հայերը կաթոլիկացնելու առաքելությամբ։ Հոս էր, որ նրա այս դիտավորության ամենեն ավելի ընդդիմացավ Մինաս Ջիլիֆտար Օղլու եպիսկոպոսը։ Հ. Գովրիկյան իր գրքին մեջ կգրե. «Ներջապէս իր աշխատութիւնը (Ավքսենտիոսի մասին է խոսքը) վարձատրուեցաւ, այնպէս որ նոյնիսկ անոնք, որոնք իր ամենէն մեծ թշնամիներն էին, ի մէջ այլոց Մինաս, քահանայից բազմութեամբ մը յայտնեցին իր առջեր թէ ուղղափառ եկեղեցին դառնալու կը փափաքին։ **)

1686-ին, ըստ Լեմպերկի Վարդան Հունանյանի եվգոկիացիներուն ուղղյալ թուղթի մը, Մինաս Ջիլիֆդար Օղլու Պուլտանու (Մոլտավիո) եպիսկոպոսը «եկն ընդ իս ի Լէօպոլիս, ի դառնալ իմում, և առաջին կարդինալին Փալլավիչինի Լէկարի փափին, արար զխոստովանութիւն հաւատոյ կաթողիկէի ...***)»։ Երկու տարի վերջ, ըստ Ստեփաննոս քահանայի ժամանակագրության, Մինաս եպիսկոպոս կվախճանի։ Գիրը անոր կսրբացնե, իբրև ճգնակյացի։ ****)

9. Հայսմավուրք. — գրված 1633—1655-ին, 27,5×39,5×13 սմ մեծությամբ. գրված է Կաֆայի մեջ, կկշռե ավելի քան 10 կիլոգրամ ու բոլոր մյուս ձեռագիրներեն ամենածանրն է. մեծ մասամբ Մինաս, իսկ մասամբ ալ Պարսամ անուամբ գրիչներու կողմե գրված է. ստոնցմե առաջինը ինքզինքը «տխմարս» և «փծուն» կանվանե. ծաղկողն ու կազմողը եղել է Նիկողայոս դպիրը։ Հիշատակարանի թվականը կպակսի, գրված է Փիլիպոս կաթողիկոսի օրոք (1633—1655). ստացողն է կաֆայեցի Դեմիր, որ նվիրած է Յաշի Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցվույն։ Սույն եկեղեցին, ըստ իր դռան վրա եղած արձանագրության, 1616-ին կառուցված էր. 1828-ին Յաշի մեծ հրդեհին ատենը հրո ճարակ եղած է, որմէ վերջ քաղաքին հայերը զայն քանդելով սկսած են վերստին կառուցել, երկու կողմերեն սենյակներ ավել-



Ճաշոց— գրված Ակկերման 1460-ին
(«Հայ Մշակույթի Տուն»)

ցնելով՝ իգական սեռի կրթության հատկացնելու համար։ *) «Հայ Մշակույթի Տան» Մատենադարանը կգտնվի Գ. Ասաքիի տպարանը տպված հանգանակության թուղթ մը սա վերնագրով. «Ստորագրութիւն վասն շինութեան յեաշ քաղաքի դպրոցի միոյ օրիորդաց և մատրանն յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ընդ բարեխէր գործակալութեան Տեառն, անունք, ոսկի և այլն։ Սակայն դրամի և վարժարան հաճախող աշա-

*) Lukaacsi.—Historia Armenorum Transilvaniae Vien 1859, p. 66:

**) Հ. Գր. վ. Գովրիկեան.— Թրանսիլվանիոյ Հայոց մետրապոլիսը կամ Նկարագիր Գերլա Հայաքաղաքին, Վիեննա 1896, էջ 118-119։

***) Հ. Ղ. Ալիշան.— Կամենից, էջ 126։

****) Նույն, էջ 144։

*) Գ. քհն. Մամիկոնեան.— Ռումանահայոց ներկայն և ապագայն, Կալաց, 1895, էջ 119-120։

*կերտուհիներու պակասէն կառուցվելիք շենքը երկար ժամանակ կիսատ մնացած ըլլալով մեր դարու սկիզբը բոլորովին քանդվեցավ։ *) Ներկայիս հետքն իսկ չկա այս շինության ու ոչ իսկ նախկին եկեղեցվույն արձանագրության քարը կերևա։*

*Սույն ձեռագիրը ունի գունազեղ խորան մը սկիզբը, ինչպես նաև նրբաճաշակ լուսանցազարդեր ու թռչնագիր սկզբնատառեր, որոնց գծողը հավանաբար օգտված պետք է ըլլա քիչ առաջ հիշված 1351-ին գրված, ինչպես և 1451-ին դարձյալ Յաշի մյուս եկեղեցվույն նվիրված ավետարանի լուսանցազարդերեն, քանի որ նույն ոճը ու նույն գույները կտեսնվին։*

**10. Շարակնոց.**— *գրված 1640-ին Կ. Պոլսո մեջ։*

**11. Ճաշոց.**— *ընտիր մագաղաթյա, գրված 1667-ին Կ. Պոլսում. Փիլիպոս քահանայի կողմե, Տեր Հովհաննեսի և Տեր Պողոսի համար։ Ձեռագիրը երկու գեղեցիկ խորաններ, շուրջ տասը կիսախորաններ, ճաշակավոր սկզբնատառեր ու լուսանցազարդեր և շատ փոքր մանրանկարներ ունի։ Նվեր ստացված է Պուքրեշի ավագ քահանա Տեր Իգ. Քիլիմջյանե։ Ինչպես ցույց կուտա վերջինիս հիշատակագրությունը, 1917-ին զայն գնած է Դամասկոսին մեջ։*

**12. Տոնացույց և Պարզատոմար.**— *գրված 1613—1622։*

**13. Ավետարան.**— *գրված 1712-ին, Մարաշ, Զաքարիա քահանայի կողմե, Տեր Հուսիկի համար. Նվիրված է դարձյալ Տ. Իգ. Քիլիմջյան ավագ քահանայի կողմե։*

**14. Ավետարան.**— *քրթրված ու պակասավոր, գրված հավանաբար Յաշ։ Պատկանած է Յաշի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվույն. գրված է Ռ. Ս. Թվականին. Հաջորդ տառերը պատռված են։*

**15. Խորհրդատետր.**— *գրված 1680-ին.*



Խորան 1667-ին Կ. Պոլիս գրված ձեռագիր Ճաշոցի
(«Հայ Մշակույթի Տուն»)

*Գեորգ դպիրի կողմե, նորընծա Գրիգոր քահանայի համար։ Պատկանած է Սուչավայի թաղականության։*

**16. Տոնացույց.**— *գրված 1660-ին։*

**17. Քարոզագիրք.**— *գրված 1759-ին, Նալյան պատրիարքի կողմե, ուր ամփոփված են իր խոսած քարոզները։ Նվիրված է Տ. Իգ. ավագ քհն. Քիլիմջյանի կողմե։*

---

*) N. A. Bogdan.— Orasul Jasi, Jasi 1913, p. 240:

**18. Բժշկարան.**— *երկու հատոր, առանց հիշատակագրության։ Նվիրված է բանաստեղծ Զ. Պըլպուլեն։*

**19. Զանազան ճառտրներ.**— *գրված Պուքրեշի հայոց նախկին առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Էռտեմիրցիի կողմե 1820—1843-ին։*

**20. Զանազան քարոզներ** *Եղիսաբեթուպոլիս հայաքաղաքի ժողովրդապետ Տ. Հովհաննես Գապտեպովյանի կողմե 1819—1830-ին գրված։*

**21. Գիրք որ կոչի կշիռ արդարութեան.**— *երկասիրություն Պետրոս արքեպիսկոպոս Նախիջևանցիի, գրված 19-րդ դարու սկզբին։*

**22. Երկասիրութիւնք.**— *Պոթոշանի հայոց երբեմնի վարժարանի տեսուչ Նիկողայոս Ջեննեյանի, 1870։*

**23. Կոմս Մոնթէ Քրիստօ.**— *թարգմ. 1865-ին, երկու հատոր։*

**24. Բազմաթիվ ճառտրներ** *ռումանահայոց երբեմնի ուսուցիչ Մարտիրոս Չերքեզյանի երկասիրություններեն, 1845—1903, Ֆոքշան—Պուքրեշ։*

**25. Ազգային պատմություն.**— *դասավանդված 1896-ին Եղիշե վարդապետ Դուրյանի կողմե Արմաշու դպրեվանքին մեջ։*

**26. Դասընթաց Հայոց Մատենագրության պատմության.**— *(վիմագիր), 1908 Թիֆլիզ կազմված Ստ. Մալխասյանի դասախոսություններեն։*

**27. Պատմություն Հայ Մատենագրության** *—գրված 1904-ին, Եղիշե վարդապետ Դուրյանի դասախոսությանց ամփոփում։*

**28. Հավաքածու տետր Գր. Անուշի 1768—1828.**— *այլազան բովանդակությամբ բազմաթիվ նյութեր։ Արևելահայ գրագետ Վրթ. Փափազյան 1914-ին Պուքրեշի Ազգային վարժարանի տնօրենն ըլլալով և ձեռք անցնելով վերոհիշյալ հավաքածուն, անկե քաղեր էր թիվ 40 երգիծական կտորը՝ «Դրամի հաւատամքը»-ը և լույս ընծայեր Թեոդիկի «Ամէնուն Տարեցոյցը»-ին մեջ*)։ Տարիներ հետո Մատենադարանի վարչության երբեմնի նախագահը իր ամսաթերթին մեջ «Կորսուած ձեռագիր»**) վերնագրին տակ ցավ կհայտներ, թե Վ. Փափազյանի հիշած սույն ձեռագիրը կարելի չէ եղած վերնահարկեն գտնըված ձեռագիրներուն մեջ գտնել, սակայն հանգուցյալ Վ. Մեշտուճյան իրականին մեջ շփոթության մատնված է։*

**29. Քարոզ կիւրակէից.**— *հատոր Բ գրված 1848-ին, գրիչ և հեղինակ Կարապետ արքեպիսկոպոս Կ. Պոլսո։*

**30. Գիրք Մատենի-հնագոյն պատմութեանց Հովսեպոսէ Փլափիանոսէ եբրայեցւոյ.** *—գրված 1761-ին, հավանաբար Կ. Պոլիս. գրիչ և թարգմանիչ Տայր Սիմոնյան Աթանաս վարդապետ։ Նվիրված է Վ. Երիցյանի կողմե։*

**31. Ողբ ի վերայ Օլախաց երկրի ճայերուն.** *—Հեղինակ Մինաս սարկավագ Թոխաթցի (1551), գրիչ Խաչատուր Հորմյանց Կերլացի տիրացու և վարժապետ, 1880-ին։*

**32. Թամիրաս Կուրածին և Յայրարատեան Մուզայից գրկեալ ի ճնարէ.**— *գրված է 1832—1845-ին, Մոսկով—Պուքրեշ. գրիչ և հեղինակ Խաչատուր Գրիգորյան—Սահակյանց։ Ամբողջ ձեռագիրը, սկզբեն մինչև վերջ, պաշտպանողական գրվածք մըն է «Մուզայք Արարատեանս» հատորին, որուն աշխատակիցներեն մին էր հավանաբար նաև այս ձեռագրին հեղինակը։ Ան պատասխան մըն է Վենետիկի «Մի ոմն յանանուն աբեղայի, ախտացեալ զամօթալի ոգիւ», որ արատավորեր էր վերոհիշյալ հատորի երևումը։*

**33. Պատմութիւն Պղնձէ քաղաքին.**— *գըրված 1831-ին Բարսեղ Խալաշե (հավանաբար Ալաշ). գրված պետք է ըլլա Սուչավայի մեջ։ Նվիրված է Գնել քահանա Մանդալյանի կողմե։*

**34. Պատմութիւն Հայոց Յոհաննու կաթողիկոսի.**— *գրիչ, ժամանակ, տեղ անհայտ։*

**35. Գիրք որ կոչի աղբիւր բացեալ (Մեկնութիւն Առակաց Քրիստոսի).**— *երկասիրություն Նախիջևանցի Պետրոս վարդապետ Աղամալյանի, 1821. գրված է հավանաբար Էջմիածին։*

**36. Աղօթագիրք.**— *գրված 1848-ին Գր. Սարգսյանցի կողմե Պրաշովի մեջ։*

**37.** *Զանազան հայատառ թրքերեն երկասիրություններ Տ. Ղևոնդ քահանա Փափազյանի։*

**38.** *Երեսուն քարոզներ Թրանսիլվանիո հայ ժողովրդապետներու (1752—1805)։*

**39.** *16 ձայնագրված երգեր, ստորագրված Կարա-Մուրզայի կողմե։*

**40.** *Զանազան երկասիրություններ հանգուցյալ Հար. ավագ քհն. Անդրեասյանի։*

**41.** *Վայելչագրության տետրակներ Յաշի, Սուչավայի հայ դպրոցներեն։*

**42.** *Արվեստագրության տետր Հակոբ Գրիգորյանի, Պուքրեշ։*

**43.** *Վիճակագրություններ Էարիների, Աղեքսանդրիո և Կալացի հայոց. պատրաստված Տ. Ղևոնդ քհն. Փափազյանի կողմե, 1880—1900։*

**44.** *Զանազան երկասիրություններ մոռցված գրող Մ. Տերտերյանի, 1915—1924։*

**45.** *Արաշես Պըլըգլիուփ կողմե ձայնագրված երգեր։*

**46.** *Համայիլ 10×40 մեթր երկար, 18-րդ դարեն։ Եվ այլն։*

---

*) Թեոդիկ.— Ամէնուն Տարեցոյց, 1914 Կ. Պոլիս, էջ 169—171։

**) «Ararat» ամսաթերթ, 1930, թիվ 108։

## Բ. ԿՈՆԴԱԿՆԵՐ

Մատենադարանի մեջ կան ձեռագիր գեղեցիկ կոնդակներ հետևյալ կաթողիկոսներեն ու պատրիարքներեն.

Ղուկաս կաթողիկոս (1792), Եփրեմ կաթողիկոս (1918), Գաբրիել պատրիարք Երուսաղեմի (1826), Կարապետ պատրիարք Կ. Պոլսո (1829), Հովհաննես կաթողիկոս (1839), Հակոբ պատրիարք Կ. Պոլսո (1839), Ստեփաննոս պատրիարք Կ. Պոլսո (1840), Աստուածատուր պատրիարք Կ. Պոլսո (1841), Մատթեոս պատրիարք Կ. Պոլսո (1848), Ներսես կաթողիկոս (1851), Եսայի պատրիարք Կ. Պոլսո (1833), Գևորգ Ե կաթողիկոս (1920)։ Կան նաև բազմաթիվ տպագիր կոնդակներ։

## Գ. ՆԱՄԱԿՆԵՐ

Դարձյալ ձեռագրատան բաժնին մեջ թղթածրարներու շարքին կգտնվին կարևոր թիվով նամակներ, որոնցմե հիշենք Եփրեմ կաթողիկոսի (1807), Ներսես Աշտարակեցիի (1829—1844), Կարապետ պատրիարքի (1821, 1831), Աստուածատուր պատրիարքի (1843), Հակոբ պատրիարքի (1849, 1857), Պողոս պատրիարքի (1864, 1871, 1873), Հարություն պատրիարքի (1885), Իզմիրլյան պատրիարքի (1908)։ Կան նաև երկար շարք մը նամակներու, բարձրաստիճան հոգևորականներու կողմե գրված, որոնք հղուած են ռումանահայ թեմը, ինչպես Գր. արքեպիսկոպոս Զաքարյանի (1812, 1825), Խաչատուր վարդապետի (1840), Գևորգ արքեպիսկոպոսի (1843), Ղուկաս արքեպիսկոպոսի (1849) և այլն։ Կան նաև նամակներ ալ զանազան հոգևորականներու կողմե գրված, որոնք իբրև այցելու հովիվ կամ նվիրակ այցելած են ռումանահայ թեմը, ինչպես օրինակ Մկրտիչ վարդապետի (1818), Մարկոս վարդապետի (1829), Գևորգ վարդապետի (1829), Գևորգ վարդապետ ռոմանցիի (1834), Մարկոս եպիսկոպոսի (1833, 1836), Խորեն Նարպեյի (1880) և շատ ուրիշներե։

## Դ. ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐ

Ձեռագրատան մեջ զետեղված կան նաև ռումանահայ դպրոցներու, հին ընկերություններու, ինչպես նաև հանրային դեպքերու ու դեմքերու վերաբերող թղթածրարներ, որոնք անսպառ նյութ կարող են մատակարարել ռումանահայ պատմության համար. անոնցմե հիշենք Յաշի, Սուչավայի, Ռոմանի, Պուքրեշի վարժարաններին (1843—1889), Պուքրեշի հետևյալ ընկերություններին՝ «Արարատեան» (1838), «Արարատ ուսումնասիրաց» (1843), «Ուսումնասիրաց» (1871) «Հայաստան» (1879), «Արարատեան» (1886), «Հայրենասիրաց» (1887), «Արագած» (1901), «Առևտրական» (1903), «Ուսումնասիրաց» (1905), «Հայ երիտասարդաց» (1920), «Հայ տիկնանց» (1925—1927), և այլ զանազան միությանց։ Ատենագրության տետրակներ ռումանահայ օրգանոցի Կեդրոնական Վարչության (1923—1925), Ռումանահայ Միության (1918—1921). կան թղթածրարներ Յաշի «Ազգասիրաց» ընկերության, Սուչավայի «Ողորմածաց» և «Անի» ընկերություններու. Ռոմանի «Հայ Երիտասարդաց» ընկերության (1862), Պոթոշանի «Հայաստանի Զաւակների Միության» (1887), ինչպես նաև ռումանահայ թեմի հիմնադրության (1931), Հայոց քաղ. իրավունքներու (1857), կաթողիկոսական ընտրությանց խնդիրներու (1885 և 1892), Հայկական խնդրի, 1906-ի ցուցահանդեսի և այլնի մասին։

Կան թուղթեր նաև Վ. Մեշտուճյանի, Հուսիկ արքեպիսկոպոսի, Գր. Թրանքու Յաշի, Ղևոնդ քհն. Փափազյանի, Օհան քհն. Մանդակունիի, Հովհաննես խան Մասեհյանի, Փոփովիչներու. Գևորգե Ասաքիի վերաբերյալ և այլն։ Նամակներ ալ կան Պողոս Նուպարի, Ֆրետերիք Մակլերի, Յոն Քարաջիալեի և այլն։

## Ե. ՖԵՐՄԱՆՆԵՐ ԵՎ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐ

Մատենադարանին մեջ կպահվին 7 սուլթանական ֆերմաններ (1802—1812) և 3 ռումեն իշխանական հրովարտակներ, որոնցմե մեկը կվերաբերի Պուքրեշի թաղականության վավերացմանը (1820), երկրորդ՝ պուքրեշցի Կարապետ Անուշին տիտղոս շնորհելուն, իսկ երրորդը՝ Մոլտավիո հայ դպրոցներու պետականացման (1841)։

## Զ. ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ԵՎ ՔԱՐԵՂԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռագրատան բաժնին մեջ կգտնվին նաև հանգուցյալ ծերակուտական Տոնիկ Սիմեոնյանի անձնական թղթապանակը, Պուքրեշի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոսի կտակագիրը (1843), Պուքրեշի Ազգային վարժարանի հիմնարկության ակտը (1817), «Աէր

անուն Յիսուսի» ընկերության պատր (1864), Գոլոմենիայի պատճեն (1836), Պոլոգիոնեն բուն դատին վերաբերյալ հիշատակագիր (1684), Ցաչի առաջին կանոնադրության պատճեն (1840)։

Թանգարանի բաժնին մեջ կան արձանագրության քարեր Բուքրեշի Հայոց եկեղեցվո (1781) և «Մէր անուն Յիսուսի» ընկերության (1849)։

## «ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱԺԻՆ

### Ա. ԽՈՐԱՆԻ ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐ

*Ռոմանիայի զանազան եկեղեցիներեն բերված ու ցուցադրության համար թանգարանի մեջ զետեղված խորանի մեծ վարագույրները, ինչպես, ամենահետաքրքիր մասը կկազմեն թանգարանի բաժնին։ Սույն վարագույրները*



Խորանի մեծ վարագույր Ֆոքշանի Հայոց եկեղեցիին, շինված 1757-ին («Հայ Մշակույթի Տուն»)

*ները հայ արվեստի տարբեր մեկ ճյուղին արտադրություններն են, որ ծաղկած էր ի մասնավորի XVI, XVII և XVIII դարերում, Թոքատի, Կ. Պոլսո և Հնդկաստանի հայ գաղութներում մեջ։ Անոնք կպատրաստվեին հայ վարպետներու կողմե, մեծ հմտությամբ ու արվեստով։ Փայտի վրա փորագրելով կրոնական զանազան նկարներ, անոնք այնուհետև այդ նկարները կտպեին հյուսվածքեղեններու վրա. այս կերպ կպատրաստվեին հայ եկեղեցիներում գեղեցիկ վարագույրները։ Հաճախ նվիրատուների կողմե պատվիրված ըլլալով այս կամ այն եկեղեցվո համար, այդ վարագույրները երկրորդ օրինակն ունենալ չէին կարող, ուստի վարպետները հատ մը*

*պատրաստելն վերջ կավրեին իրենց տքնաջան աշխատանքի արդյունք փորագրությունները։ Դեռ այսօր ալ տակավին իրենց վառ գույները պահած գեղեցիկ սույն վարագույրներու ներկերը կպատրաստվեին հայ ձեռագիրներու, մանրանկարներու և հայ գորգերու համար գործածվող ներկանյութերե, որոնք կստացվեին որթան կարմիրե ու զանազան բազմաթիվ բույսերե։ Այս վարագույրները իրենց պատկերներու այլազան ձևի հղացումներով, գույներու ներդաշնակությամբ, ներկերու բարձր որակով, կատարման արվեստի նրբությամբ, շուտով մեծ համբավի արժանացան։ Արվեստի քննադատ Գր. Ջամպազճյան՝ իր մի հոդվածին մեջ վարագույրներու մասին կըսե թե «Թոքատի, ինչպես նաև Փոքր Ասիո հայկական վայրերու, հայ վարպետները ինքնատիպ ոճ մը ստեղծեր էին, և որ ան ավելի կպատշաճեր խոնարհողի, հավատացողի ու ապաշխարհողի կրոնական զգացումներուն, նպաստակ ծառայելով մտամփոփման ու հոգիի վերացման։ Իսկ Կ. Պոլսո մեջ վարպետները, ներշնչված Մեծ Մետրոպոլիսի բազմարվեստյան խառնուրդեն, իրենց գործերը արևմտյան արվեստի ազդեցությունն ալ կըկրեին։ Անոնք կյուրացնեին արևմուտքի տեքնիք միջոցները և կտարվեին արտաքոյ արվեստի հմայքեն։ Այնպես որ այս վարպետներու կողմե տպված վարագույրները, եթե որոշ հմայքի մը կամ շքեղության մըն ալ հասած ըլլան, զուրկ են հետաքրքրական և հատկանշական ըլլալե»։*

1. Մեծ վարագույր Ֆոքշանի հայոց եկեղեցիեն.— *Ռումանիա գտնված ամենագեղեցիկ ու հատկանշական վարագույրն է, որ կըկրե հայոց 1206 (=1757) թվականը և նվիրված է Ֆոքշանի հայոց Ս. Աստուածածին եկեղեցվույն, իբր հիշատակ, Ապկերել Աստվածատուրի որդի Հաճի Իլիասի, յուր զավակաց, ծնողաց ու Ծաղիկ անուն կնոջ կողմե։ Գոց կապույտ խորագույնի մը վրա, 15 մետալիոններու մեջ, ներկայացված է Հիսուսի կյանքեն առնված զանազան դրըվագներ, որոնցմե մեկ քանին, ինչպես կըսե Գր. Ջամպազճյան, օրինակ Հիսուսի խաչելությունը, խաչեն վար առնվիլը, գլուխ գործոցներն են ու վարագույրին դիմաց կեցողը հոգեկան միստիք խորունկ զգացում մը կունենա։ Ընդհանուր վարագույրին ունեցած լափավոր ու ծանր ներդաշնակությունը արդյունք է գոց ու բաց կապույտ գույներու միացման և դեմքերու դեղնորակ նարնջագույնին։ Իր 15 մետալիոնները կներկայացնեն.— 1. Ավետումը, 2. Քրիստոսի մըկրտությունը, 3. Ոտնալուան, 4. Գեթսեմանիի պարտեզի վերջին աղոթքը, 5. Հիսուս Պիղատոսի առաջ, 6. Հիսուսի չարչարանքները, 7. Նույնը, 8. Խաչելությունը, 9. Խաչեն վար առնուիլը, 10. Հարությունը, 11. Գերեզմանի այցելությունը, 12. Ս. Հոգիի գալուստը, 13. Համբարձումը, 14. Այլակերպությունը, 15. Ս. Միածնի դեպի երկինք փոխադրումը։*

*Այս հրաշալի վարագույրը, որ բոլոր այցելուներու կողմե սքանչացման արժանացած է, դժբախտաբար մեկն է եղած հաստատության ամենատառապած գույքերեն։ Թանգարանի բաժնին մեջ եղած բոլոր վարագույրները, ի մասնավորի սույն գեղեցիկ՝ վարագույրը, որ ջրջանակ ալ ունի, պետք է շուտով ապակիով ծածկվին, զանոնք փչացումե զերծ պահելու համար։*

2. Երկրորդ մեծ վարագույր Ֆոքշանի եկեղեցիեն.— *այս գոց կարմիր և գոց կանաչ վարագույրը երեք գլխավոր նկար ունի.— Հիսուս մանուկը ու երեք մոգերը, խաչելությունը և մկրտությունը։ Շուրջը ունի բազմաթիվ գեղեցիկ զարդեր ու մետալիոններու շարք մը՝ սուրբերու, մարգարեներու, առաքյալներու նկարներով։ Կկրե հայոց 1265 (= 1816) թվականը և նվիրված է Ֆոքշանի Ս. Աստուածածին եկեղեցվույն շումլացի Հաճի Հակոբեն, Մուրատի և Խաչատուրի օգնությամբ։*

3. Երրորդ մեծ վարագույր Ֆոքշանի հայոց եկեղեցիեն.— *սա գոց կարմիր խորագույնի վրա ունի արձանագրություն մը, որ կըսե թե վարագույրը հիշատակ է Ֆոքշանցի Ալեքսանի որդի Հաճի Վարդանեն և Հաճի Ավետիսեն, նվիրված է Ս. Աստուածածին եկեղեցվույն հայոց 1230 (= 1781) թվականին, պատրաստված է Թոքատ, Հակոբի կողմե, որն ինքզինքին վայ կուտա ու զինք կանվանե խեղճ ու մեղապարտ Հակոբ, քանի որ իր սիրելի որդի Ավետիք տիրացուն, 26 տարու, մեռած է ժանտախտե 1229-ին (1780) և այլն։*

4. Յաշի հայոց եկեղեցվույն մեծ վարագույրը.— *սա բաց գույնի է, մասամբ տպագրված, մասամբ ալ գծագրված. կկրե արձանագրություն մը, որ կըսե թե ան նվիրված է Յաշի Ս. Աստուածածին եկեղեցվույն 21 մայիս 1840-ին Աղա Խաչիկեն, ի հիշատակ յուր ծնողաց՝ Աստատուրի և Մարիամի։ Գծված է Կ. Պոլիս Անանիայի կողմե։ Վարագույրին մեջ տեղի նկարը կներկայացնե Ս. Հակոբա վանքը. շուրջն ունի երկու շարք երեքական նկարներ, որոնք կներկայաց-*

նեն— 1. Ս. Հակոբա գլուխը Աստուածամօր բերվիլը, 2. Ս. Հակոբա մարմնույն բարձրացումը հրեշտակներու կողմէ, 3. Ս. Հակոբա գլխատումը, 4. Ս. Հովհաննես իր ավետարանը կգրէ, 5. Ս. Հովհաննես ավետարանիչ իր գերեզմանը կփորէ, 6. Ս. Հովհաննես ավետարանիչ իր գերեզմանին մեջ կհան-

կաղապարի վրա տպագրված ըլլալէ, յուղաներկի հետքեր ալ ունի։ Ինչպես կարելի է նշմարել հայկական կրոնական արվեստի մյուս ճյուղերուն մեջ ևս, արևմտյան Եվրոպայի արվեստի հպումը ազդված է մեր ոճը ու եթե մեր վարպետները փորձած են ընդարձակել իրենց ձեռնութեան եղանակը,



Խորանի մեծ վարագույր Յաշի հայոց եկեղեցիեն, շինված 1840-ին
(«Հայ Մշակույթի Տուն»)

զըստանա, Գր. Ջամպազճյան այս վարագույրին մասին կգրե. «Յաշի վարագույրը իր մեջ կպահե հասկանշական գիծերու խառնուրդ մը և պատրաստված է Կ. Պոլսո մեջ, Անանիա անուն վարպետեն, 1840-ին և այնպիսի տեքնիքայով մը, որ բացի փայտյա

փոխարեն սակայն կորանցուցած են իրենց ինքնատիպությունը ու ավանդական ձեւի արտահայտիչ զգացումը»։

Կան նաև խորանի երկու մեծ և երկու փոքր վարագույրներ բերված Սուչավայի հայոց եկեղեցիեն։

## Թ. ՆԿԱՐՆԵՐ

Թանգարանի գլխավոր զարդն է իտալացի համբավավոր նկարիչ Թիթո Պասսանոյի «Քրիստոսի ծնունդը» մեծ նկարը, որ նվիրված է, ինչպես ուրիշ տեղ մը ըսինք, օր. Ջինքա Թադոսի կողմե։ Կան նաև զանազան նկարներ կարգ մը նկարիչներու, ինչպես Թ. Վեզ, Թ. Ցրեր, Հ. Մելիք, Էտկար Շահին, Գ. Շիլթյան, Վ. Սուրենյան, Ե. Արյան, Մ. Մսերյան, Հ. Ավագյան, Թ. Վարդանյան, Արամիկ և այլն։ Կան բազմաթիվ դիմանկարներ ալ զանազան ռումանահայ հին դեմքերու

## Գ. ԴՐԱՄՆԵՐ

Թանգարանն ունի դրամներու փոքրիկ հավաքածո մը. այստեղ կան հինգ արծաթյա դրամներ Հեթումի և Լևոն կիլիկյան հայ թագավորներու, ինչպես նաև օտար՝ պարսկական, հունական, հռոմեական ու այլ. դրամներ։

## Դ. ՍՐԲԱՆՈԹՆԵՐ ԵՎ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Այս շարքին մեջ զետեղված են ռումանահայ եկեղեցիներեն հավաքված զանազան առարկաներ, որոնց մեջ սեղանի հին ֆիլիգրան խաչ մը, ոսկեթելով ասեղնագործված քահանայական հին թագ մը՝ Ռոմանի եկեղեցիեն, ավետարանի արծաթ կողեր՝ Յաշի ու Ռոմանի եկեղեցիներեն և հայկական բազմաթիվ սրբապատկերներ՝ Սուչավայի, Յաշի, Ֆոքշանի և Պուքրեշի եկեղեցիներեն։

## Ե. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

Թանգարանի բաժնին մեջ կան նաև բազմաթիվ եկեղեցական հանդերձներ, որոնց մեջ հանգուցյալ Ձոսիկ արքեպիսկոպոսի եպիսկոպոսական հանդերձանքը, ինչպես նաև շուրջառներ ու զգրական շապիկներ՝ հավաքված Մոլտավիո Հայոց եկեղեցիներեն։

Ասոնցմե զատ թանգարանն ունի բազմաթիվ հայկական ձեռագործներ և զանազան լուսանկարներ։

## «ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱԺԻՆ

## Ա. ՀԱՅ ՀԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ հին գիրքերու ավելի քան 200 հատորներ կան XVII—XIX դարերում տպագրված. ասոնցմե հիշենք Աստուածաշունչը՝ տպված Ամստերդամ 1666-ին. Աշխարհագրութիւն Մովսէսի Խորէնացւոյ և Աղուէսագիրք՝ տպ. 1668-ին Ամստերդամ, Պատմութիւն Առաքել Դաւրիժեցւոյ՝ տպ. 1669-ին Ամստերդամ, Պարզատումար մշտենջենական՝ և արհեստ համարողութեան՝ տպ. 1676-ին Մարսիլիա, Ավետարան՝ տպ. 1685-ին Վենետիկ, Խորհրդատետր՝ տպ. 1686-ին Վենետիկ, Ճաշոց՝ տպ. 1686-ին Կ. Պոլիս, Պարզաբանութիւն հոգենուագ մաղմոսաց՝ տպ. 1686-ին Վենետիկ, Գիրք Թովմայի Գեմբեդայ՝ տպ. 1691-ին Կ. Պոլիս, Գիրք Խոստովանութեանց՝ տպ. 1698-ին Կ. Պոլիս, Նարեկ՝ տպ. 1701-ին Կ. Պոլիս և այլն։

## Բ. ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՖՈՆԴ

Գրադարանի գիրքերու մեծ մասը, ի մասնավորի այն գիրքերը, որոնցմե մեկ-մեկ օրինակ կգտնվին գրադարանին մեջ, դուրս չեն տրվիր, ի բաց առյալ կարևոր պարագաներէ և այն ալ վարչության հավանությամբ։ Բացի հին տպագրություններէ գրադարանն ունի նաև հետևյալ բաժինները.— 1. Հայագիտական (պատմություն, աշխարհագրություն, տեղագրություն, հայ պատմիչներ), 2. Թարգմանական (գրաբար և աշխարհաբար), 3. Կրոնական-վարդապետական, 4. Դասագիրքերու, տեղեկագիրներու և կանոնագրություններու, 5. Հայ գրականության (վեպ, պատմվածք, չափածո, կենսագրական, թատերախաղ, երգարան, հայկական հարց), 6. Հայ և օտար բառարաններու ու համայնագիտարաններու, 7. Սովետական Հայաստանի (վեպ, պատմվածք, չափածո, թատերախաղ, ակադեմիական հրատարակություններ և այլն), 8. Հայագիտական՝ օտար լեզուներով (ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, հունգարերեն, լատիներեն, իտալերեն և այլն), 9. Օտար հին տպագրություններու, 10. Երաժշտական (Սովետական Հայաստանի և այլ երգեր), 11. Ռումանահայ գաղութի (ուր ամփոփված են Ռումանիա տպագրված հայկական գրքերեն կարևոր մաս մը, ռումեն հեղինակներու հրատարակությունները Հայոց մասին և ծագումով հայ հեղինակներու գործերը, որոնք կապ չունին Հայոց հետ, օրացույցներ, կանոնագրություններ, տեղեկագրություններ, թռուցիկներ, տոմսեր և այլն), 12. Ալպոմներու ու շքեղ հրատարակություններու և այլն։

## Գ. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՈՒՐՍ ՏՐՎԵԼԻՔ ԳԻՐՔԵՐՈՒ ԲԱԺԻՆ

*Այս բաժնին մեջ կմտնեն բոլոր այն գիրքերը, որոնցմե գոնե երկու օրինակ կգտնըվին գրադարանին մեջ։ Այս շարքին մեջ կան հայկական վեպ, պատմվածք, չափածո, կենսագրական, տարեգիրք և այլն, ինչպես նաև ռուսմաներեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն ու այլ լեզուներով գիրքեր։*

## Դ. ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ

*Ավելի քան 150 տեսակ պարբերական, թերթ ու տարեգիրք ունի գրադարանի այս բաժինը, որոնց մեջ կգտնվին կարևոր օրինակներ Վենետիկի «Դիտակ Բիւզանդեան»- են (1813), Զմյուռնիայի «Շտեմարան պիտանի գիտելեաց»-են (1839), դարձյալ Զմյուռնիայի «Արշալոյս Արարատեան»-են (1841), Վենետիկի «Բազմավէպ»-են (1843-են սկսյալ, պակասավոր), Թեոդոսիո «Մասեաց աղաւնիս»-են (1860—1866), Մոսկվայի «Հիւսիսափայլ»-են (1860), Թիֆլիսի «Կռունկ»-են (1862), Կ. Պոլսո «Կիլիկիա»-են (1863), Կ. Պոլսո «Երևակ»-են (1865), Կ. Պոլսո «Միլ Աւարայրիս»-են (1866), Էջմիածնի «Արարատ»-են (1868—1916), Կ. Պոլսո «Լրաբեր»-են (1870), Երուսաղեմի «Սիոն»-են (1874), Թիֆլիսի «Փորձ»-են (1876—1881), Մոսկվայի «Փարոս Հայաստանի»-են (1881), Թիֆլիսի «Աղբիւր»-են (1883) ու «Արձագանք»-են (1886, 1888), Զմյուռնիայի «Արևելյան Մամուլ»-են (1883—1890) և այլն։*

*Կան շատ ուրիշ թերթեր ալ տպագրված Սովետական Հայաստան, Ռումանիա, Աթենք, Վիեննա, Պետերսպուրկ, Թիֆլիս, Լոնդոն, Վառնա, Փարիզ, Գահիրե, Ժնև, Պերլին, Պաքու, Նյու-Յորք, Պոսթոն, Սոֆիա, Ցրեզնո, Անթիլիաս և այլ վայրեր։*



«Հիսուսի ծնունդը»
Գործ Թիրո Պասսանոյի
(«Հայ Մշակույթի Տուն»)

## Ե. ՆԵՐՔԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

*Գրադարանին մեջ կա ներքին մնայուն ընթերցարան մը, ուր սեղաններուն վրա զետեղված են Հայաստանյան և գաղութահայ թերթեր ու պարբերականներ, առոնցմե հի-*

չենք «Սովետական Հայաստան» օրաթերթը, «Սովետական Հայաստան», «Սովետական գրականություն և արվեստ» ու «Էջմիածին» պարբերականները, իսկ գաղութներեն «Հայաստանեան ճակատ», «Ժողովուրդ», «Եփրատ», «Զարթոնք», «Երևան», «Լրաբեր», «Հայաստանի կոչնակ», «Հայ մամուլ», «Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ» և այլ բազմաթիվ թերթեր ու պարբերականներ։ Սույն ընթերցարանին մեջ ընթերցելու համար փափագողներուն կտրվին անձեռնմխելի ֆոնդեն գիրքեր, հին պարբերականներու ու թերթերու հավաքածոներ և ալպոմներ։

Եզրափակելով Ռումանիո հայոց մտքի գանձարան «Հայ Մշակույթի Տան» նվիրված սույն հոդվածը, պետք է ըսենք, թե ան, իր գոյության 20-ե ավելի տարիներու ընթացքին, հետը հաշված Ռումանահայ Կեդրոնական Մատենադարանի գործունեության ալ շրջանը, թեև համեստ, բայց իր տեսակին մեջ կարևոր ու եզակի դեր մը խաղացած է այս գաղութին կյանքին մեջ։ Ան ամբողջ Պալքանյան հայ գաղութներու մեջ եզակի հանդիսացած է ու կհանդիսանա, որպես հայ մտքի մշտավառ ջահ մը, ան անխոնջ կաշխատի ռումանահայությունը հաղորդակից ընել Սովետական Հայաստանի հզոր վերելքին և համախմբել ռումանահայ հատվածին անոր շուրջը։ Ան ջանք չէ խնայած կորստե փրկելու համար հայ մշակույթին հետ առնչություն ունեցող մնացորդ ցանուցիր բեկորները, ռումանահայ գաղութին պատմությանը վերաբերող նշխարները։ Ան միաժամանակ գաղութի հայ երիտասարդության համար հայացի դաստիարակության անբաղդատելի վայր մը եղած է ու կմնա այդպիսին։ Հուսանք, որ «Հայ Մշակույթի Տուն»-ը, իբրև գաղութին հայ մտքի գանձարանը, այսուհետ ալ չթուլացող եռանդով կշարունակե իր, ըստ ամենայնի օգտաշատ ու բեղմնավոր գործունեությունը։ Կհավատանք, որ ան, իբրև գաղութին մեջ եղած հայ նշխարներու գլխավոր հավաքավայրը, ջանք պիտի չխնայե թե կորստե փրկվածները անվթար պահպանելու և թե գաղութին մեջ տակավին ցրված շատ մը նշխարներ ի մի ժողովելու համար։

ՍՈՒՐԵՆ ՔՈՂԱՆՋՅԱՆ

Նախկին օգնական-գրադարանապետ Ռումանահայ Կեդրոնական Մատենադարանի (1939—1944) և նախկին ընդհանուր վարիչ «Հայ Մշակույթի Տան» (1944—1947)

---

*Տպագրելով Ս. Քոլանջյանի սույն հոդվածը, խմբագրությունս կարծում է, որ ռումանահայ եկեղեցական և ազգային-հասարակական կազմակերպությունները, կուլտուրական այս կարևոր օջախը իր իսկական կոչման բարձրության վրա պահելու և այն իրենց գուրգուրանքի առարկան դարձնելու ուղղությամբ, չեն խնայի ոչ մի ջանք։*

*Միաժամանակ անհրաժեշտ է, հետագա մանրազնին. պրպտումների միջոցով կուլտուրական այս օջախը հետզհետե թե՛ ճոխացնել մշակութային նորանոր արժեքներով և թե՛ այնտեղ հավաքված արժեքները զերծ պահել կորստից, օտարների ձեռքն անցնելուց և, որ ամենագլխավորն է, փչացումից։*

*Յուրաքանչյուր հայրենասեր հայ մարդու սրբազան պարտականությունն է ամեն կերպ սատարել հայ մշակույթի ու հայ պատմության հետ առնչություն ունեցող արժեքների խնամքով հավաքմանն ու պահպանմանը։ Որքան լավ կլիներ, եթե ռումանահայերի խրախուսելի նախաձեռնությանը հետևելով, նմանօրինակ մշակութային օջախներ ստեղծվեին նաև մեր մյուս հայկական այն գաղութներում, որտեղ դրանք բացակայում են տակավին։ Գաղութահայությունը Մայր Հայրենիքի հետ կապող օղակներից մեկը հանդիսացող կուլտուրական այդ օջախներում հնարավոր կլինի ոչ միայն կենտրոնացնել հայ մշակույթի ու հայ պատմության հետ առնչություն ունեցող, այս կամ այն գաղութում գտնվող, արժեքները, փրկելով դրանք անդարձ կորստից, այլև այդ օջախների շուրջը համախմբելով օտարացման ու խորթացման ուղու վրա գտնվող գաղութահայ երիտասարդությունը, նրան հաղորդակից դարձնել հայ մշակույթին, արվեստին, լեզվին ու գրականությանը, այսպիսով թե՛ կանխելով օտարացումը և թե՛ նպաստելով ժամանակավորապես պանդխտության մեջ գտնվող մեր հայրենակիցների կապերի սերտացմանը Մայր Հայրենիքի հետ։*

ԽՄԲ.

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

# ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԸ

Ես կարդացել էի Ղազարոսի գրվածքները, լսել նրա մասին, տեսել լուսանկարը, բայց անձամբ նրա հետ ծանոթ չէի, մինչև նրա Նոր-Նախիջևան աքսորվելը, 1898 թվի մայիս ամսին, երբ առաջին անգամ տեսա նրան ու մի քանի օրից հետո էլ ծանոթացա հետը։ Պետք է ասեմ, որ այդ ժամանակները նա ոչ վառվռուն երիտասարդ էր, ոչ էլ միջին տարիքի առնական տղամարդ, այլ ծերության՝ 57-60-ի հասած մի մարդ, բանտ նստած, ընկճված...

Առաջին անգամ ես նրան տեսա ինձ անծանոթ մարդկանց հետ քաղաքի ասֆալտապատում զբոսնելիս, այսինքն արիորդաց գիմնազիայի, նորաշեն թատրոնի ու քաղաքային դպրոցի շենքերի առջև, ասֆալտապատ ու ծառազարդ փողոցում, որը քաղաքացիների սովորական զբոսավայրն էր հանդիսանում։ Ղազարոսը իր բարձր հասակով, ծղնոտե գլխարկով և անխնամ հագած ամառային վերնազգեստով աչքի էր ընկնում զբոսնողների մեջ։ Այդ մայիսի վերջին օրերին էր, երբ ես, զբաղված լինելով թեմական դպրոցի տարեվերջի քննություններով, ըշտապում էի և մյուս կողմից էլ ծանոթանալու համար վայրը անհարմար համարեցի, թեև շատ մեծ ցանկություն ունեի ծանոթանալու։ Իմ ծանոթանալը հետաձգելով մի այլ հարմար առիթի, ես շտապեցի դպրոց, ուր պատմեցի այդ մասին։ Ուսուցիչներից շատերն արդեն իմացել էին նրա քաղաքում գտնվելու մասին։ Ի միջի այլոց խոսք բացվեց և այն մասին, որ անհրաժեշտ է այցելել աքսորյալներին ու մխիթարել նրանց, որպեսզի նրանք շատ էլ չզգան իրենց աքսորի դառնությունը։ Այս ամենը, իհարկե, ի միջի այլոց էր և լոկ մտքերի փոխանակություն էր հանդիսանում, բայց չենք այդպես էլ կատարվեց...

Հանդիպեցի Մինաս Բերբերյանին ու որոշեցինք առաջին այցելությունը միասին կատարել։ Նույն օրը երեկոյան էլ այցելեցինք։ Նրանք սիրով, քաղցրությամբ ու համբույրներով ընդունեցին մեզ։ Պարզվեց, որ նրանց բնակարանը քաղաքի կենտրոնումն է, ամեն վայրին մոտիկ, հարմար ու վայելուչ։ Այդ Բերբերյանն էր հոգացել ու Ղազարոսին իր ընտանիքի հետ միասին երկու սենյակ տրամադրել։ Մի սենյակ էլ նա տրամադրել էր Ղազարոսի ընկերոջը՝ Ալեքսանդր Ստեփանյանին, որն ապրում էր իր մոր հետ միասին։ Այս երեք սենյակներն էլ գտնվում էին Բերբերյանի բնակած շենքի ցածի հարկումը։

Նստեցինք. թեյ մատուցին։ Աղայանը կանչեց Ստեփանյանին ու ծանոթացրեց մեզ նրա հետ։ Հայտնվեց, որ նա Աղայանի համատարիմ ընկերը, Թիֆլիսին լավ հայտնի Սն Աանդրոն էր, թունդ «Մշակ»-ական, Գեորգ Արամյանի ու նկարիչ Բաշինջաղյանի մտերիմ բարեկամը, Թիֆլիսի հայ հասարակության մեջ կշիռ ունեցող մի անձնավորություն։ Մեր խոսակցությունը սկզբում վերաբերում էր նրանց ճանապարհորդությանը։ Աղայանը շատ գոհ էր մնացել իրենց կատարած ծովային ճանապարհորդությունից։

— Հրաշալի էր, հրաշալի,— ասում էր նա,— ալիքների ծփծփոցը, ծովի ախորժելի հովը, ծովից ելնող լուսինը, դելֆինների խաղը հանգստացնում են մարդուն. շնչում ես ազատ և քաղաքի դաղչ օդից բռնված կուրծքդ լայնանում է, այդ զգալի էր մանավանդ ինձ, բանտարկյալիս, համար։

Այնուհետև մեր խոսակցությունն անդրադարձավ նրանց աքսորման շարժառիթներին. մենք հարց ու փորձ արինք նրանց մեղադրական գործի մասին և Աղայանը համա-

*ռոստակի մեզ բացատրեց թե ինչումն էր կայանում իրենց մեղադրանքը։*)*

*— Իմ գործը դոնքիշոտյան մի բան էր, ես բարի եմ ցանել, չար_է բուսել, իմ բարեմտությունը չարամտություն է հասկացվել. սխալանքը իմս չէ, այլ ժամանակինը. մութ, խառնաշփոթ ժամանակինը, երբ դժվար է ջոկել, տարբերել չարը բարուց, վնասակարն օգտավետից... Է՜հ, ինչ գլուխներդ ցավեցնեմ, ես վատ բան չեմ արել, վնասակար մտքեր չեմ քարոզել և ես իմ արածներից ու ասածներից հիմա էլ չեմ հրաժարվում... ասաց նա ու հուսահատությամբ գլուխը կախեց։*

*Մենք մեր հոգու խորքում սաստիկ ցավ զգացինք. նրա խոսքերը զուսպ էին, բայց հուզիչ ու համոզիչ։ Նա ժամանակից շուտ ծերացած ու ընկճված էր երևում։ Մխիթարեցինք նրան, որքան կարող էինք, և շտապեցինք մեկնել, չկամենալով ավելի ու ավելի քրքրել նրա խորը վերքերը։ Վերջում նա ցանկություն հայտնեց ծանոթանալու գաղութին, նրա հայկական հաստատություններին ու գործերին. մենք բաժանվեցինք, խոստանալով կատարել նրա այդ ցանկությունը։*

*Մի օր, երբ ազատ էի, գնացի խոստումս կատարելու։ Աղայանը առողջամիտ ու համակրելի մարդու տպավորություն էր թողել իմ վրա։*

*Առավոտ էր, օրը կիրակի. դուռը բաց արեց ինքը Աղայանը.*

*— Հա՛, եկար խոստումդ կատարելո՞ւ,— ասաց նա,— այն օրը տխուր բաժանվեցինք, այսօր տեսնում ես ուրախ եմ. բա՞ ինչ անեի, եղբայր, ինձ, վայրենի կրիտարիս, որ սովոր էր փարել բարձր լեռներին ու խիտ անտառներին, փակել էին չորս պատերի արանքում, կընկճվեի, բա ո՞նց։ Դե՛հ, գնանք. ուր տանելու ես, տար։ Սանդրո,— ձայն տվեց նա,— արի՛ գնանք։*

*Պետք է ասել, որ Աղայանն առանց Սանդրոյի տեղ չէր գնում։ Եվ առհասարակ զարմանալի էր Աղայանի վերաբերմունքը նրա հանդեպ. եզակի ու տարօրինակ բան էր այս երկուսի հարաբերությունը։ Սանդրոն Աղայանի նկատմամբ հսկողի, խնամակալի պաշտոն էր կատարում, իսկ Աղայանն էլ բոլորանվեր հնազանդվում, կատարում էր նրա բոլոր պատվերները։*

*— Ղազա՛ր, վզնոցդ կապի՛ր, սառը ջուր մի՛ խմիր, Ղազա՛ր, վերարկուդ կոճկի՛ր, դուրսը ցուրտ է; մի՛ խոսիր և այլն... Եվ Աղայանը միշտ էլ շտապում էր կատարել ընկերոջ բոլոր զգուշացնող հրամանները. երևի դրանք բժշկի տված պատվերներն էին, որ Սանդրոն սիրով, առանց ձանձրանալու միշտ հիշեցնում էր նրան։*

*Գնացինք Ս. Լուսավորիչ եկեղեցին՝ Ղրիմից բերված ուշագրության արժանի ձեռագրերը դիտելու։ Մտանք եկեղեցին. պատարագը վերջանալու մոտ էր և մենք պետք է սպասեինք մինչև վերջանար։ Երգում էր երգեցիկ խումբը, և այնպես լավ, մեղմ, դուրեկան, որ չնկատեցինք, թե ինչպես անցավ ժամանակը և մեր առջև բացվեց ձեռագրատան դուռը։ Ձեռագրատունը բավարար մեծությամբ մի սենյակ էր. երկու-երեք հարյուր ձեռագիր կարգով շարված էին նորաշեն ընդարձակ պահարանում. ավելի թանկարժեք ձեռագրերը դրված էին առանձին, մի փոքրիկ պահարանի մեջ։ Չենք կարող չհիշել այստեղ, որ այդ բոլոր հարմարությունները ստեղծվել էին Լազարյան ճեմարանի լիկեոնի հոգևոր բաժնի նախկին ուսանող և Ս. Լուսավորիչ եկեղեցու ավագ քահանա Տեր Խաչատուր Զարիֆյանի ձեռքով, մի բան, որ քանիցս Աղայանի գոհության ու գովասանքի առարկան եղավ։*

*— Ո՞ւր էր, որ հայ եկեղեցիներից շատերն այսպիսի քահանաներ ունենային,— ասում էր նա։*

*Սկսեցինք դիտել ձեռագրերը. հարմարության համար նախ փոքր պահարանից ընտիր ձեռագրերը հանեցինք ու կարգով շարեցինք սեղանի վրա։ Ես ուսումնասիրել էի պատմական Նոր-Նախիջևանը, ծանոթ էի այնտեղ բերված ձեռագրերի պատմությանը, և բնականաբար, ի վիճակի էի բավարարելու Աղայանի պարզ հարցասիրությունն այն մասին, թե ո՞րտեղից էին այս կամ այն ձեռագրերը Ղրիմ բերվել, ո՞ր ժամանակաշրջանում են գրված, ո՞րոնք են նրանցից ամենաարժեքավորները, նրանցից որը ի՞նչ առանձնահատկությամբ է օժտված, և այլն, և այլն։*

*Իմ բացատրությունները լսելուց հետո Աղայանը ուշադրությամբ մեկիկ-մեկիկ աչքի անցկացրեց 10—12 ընտիր ձեռագրերը և նրանց մեջ գտավ, ինձ արդեն հայտնի, ու 1643 թվին գրված, Շարակնոց-Սաղմոսարանը, որի վերջին թերթերի վրա տգեղ շեղագրով գրված և Աստվածամոր կուսին նվիրված ներբողը այնքան հավանեց, որ նախ բարձր ձայնով կարդաց և ապա խնդրեց թույլ տալ արտագրելու և, իբրև հիշատակ, իր մոտ պահելու։ Ցույց տված մի-*

---

*) Թե Ղազարոսի հետ միաժամանակ ովքեր են եղել աքսորված, ստույգ չգիտենք. Նախիջևան աքսորվածներից ճանաչում էինք Հովհաննես Միրզայանին, իր կնոջ հետ, և Աստրախանի կամ Սարգիս Մուրադյանին՝ իր կնոջ հետ. որոնց հետ մենք մոտ հարաբերություններ էինք ունեցել։

*նելու համար թե մեր հին երգերից որպիսի-ների սիրահար էր Ղազարոսը, ստորև բերում ենք այդ ներքողը.*

Անճառին տաճար,
Բանին ճաշտարար
Դերագոյն գտար, Մարիամ:
Դուռն երկնից գովյալ
Երգեն Սերովբեք,
Զարմանան Քերովբեք,
Երանյալ սուրբ կույս Մարիամ:
Ընտրյալդ ի Փրկչեն,
Թագըդ պարծանաց,
Ժառանգ ավետյաց,
Իսկուհի մաքուր Մարիամ:
Լուսին անձրման,
Խորան խընդալի,
Ծառ նարընջենի,
Կաքավ քաղցրախոս, Մարիամ:
Հավիկ սխրալի,
Ձայն քո տատրակի,
Ղամբար գիշերի,
Մըրան գիշերի,
Ճրագ լուսատու, Մարիամ:
Մեռյալ ընդ ոսկի,
Նարդոս քրքումի,
Շուշան ի դաշտի, Մարիամ:
Ոսկի ծուլածուի,
Չի կա քեզ նըման
Պտուղ ցանկալի,
Ջուր մաքուր, ճստակ, Մարիամ:
Ռահըդ վերին,
Սատափ ի ծովին,
Վանիչ մարգարտին,
Տաճար տերունի, Մարիամ:
Րաբունուն վերին,
Ցող գարնանային,
Քո նախ պատկերին,
Ի ճյուսյալ ոսկով,
Փափաքյալ ցանկամ, Մարիամ:

*Ցնկատեցինք թե ինչպես ձեռագրերով դրաղվելով բավականին ուշացել էինք. շտապեցինք հավաքել ձեռագրերը, տեղա-վորել, բանալիները հանձնել ու դուրս գալ։ Աղայանը ներքողի լավ տողերը միտն էր պահել ու ճանապարհին հաճախ կրկնում էր.*

Լուսին անձրման,
Խորան խընդալի,
Ծառ նարընջենի,
Կաքավ քաղցրախոս, Մարիամ*)։

*Նոր-Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմական դպրանոցի ուսուցչական կազմը մի լավ սովորություն ուներ, որ երբ ուսման տարին ավարտվում էր, նա դպրանոցի բակում մի համեստ տոնախմբություն կազմակերպելով ողջունում էր ուսումնական տարվա հաջող ավարտը և ապա միայն արձակուրդի մեկնում։ Այդ տարին էլ նույնը կատարվեց, բայց մի փոքրիկ տարբերությամբ, որ տոնախմբությանը մասնակցելու համար հրավիրված էր նաև Աղայանը, որպես մեր քաղաքում գտնվող հայ ուսուցիչ և դրականագետ մանկավարժ։ Աղայանի հետ հրավիրված էր նաև նրա ընկեր Ասնդրոն։*

*Հրավերը ես տարա։ Դեռ կանուխ էր, ուստի հարկավոր համարեցի մեր օրվա հյուրին մի քանի տեղեկություններ հաղորդել դպրանոցի մասին։ Գևորգ Դ վեհափառ Հայրապետի կաթողիկոսության օրոք Նոր-Նախիջևանում բացվել էր չորրդասյան հոգևոր դպրոց. տարիներ անցնելուց հետո, երբ փակվել էր Խալիբյան դպրոցը Թեոդոսիայում, հոգևոր դպրոցն էլ վերափոխվել էր թեմական դպրանոցի, ժառանգելով Խալիբյան դպրոցի տպարանը, մատենադարանը և թանկարժեք շենքը ու քաղաքի «Խոնախի» կոչված շենքը Թեոդոսիայում։*

*Եկանք դպրանոց, ուր մեր հյուրը իր ընկերոջ հետ սրտանց ընդունելության արժանացավ։ Խոսքն ու զրույցը, ճառերն ու կենացները, ծիծաղն ու երգերը տևեցին մինչև գիշերվա կեսը։ Ղազարոսի քեֆը բացվեց և նա երգեց իր Քյորօղլին։*

Ա՜յ Քյորօղլի, ջա՜ն Քյորօղլի,
Ա՜յ Քյորօղլի, ջա՜ն Քյորօղլի,
Քեզ խաբեց Համզան, Քյորօղլի, հա՜յ, հա՜յ, հա՜յ...
Բայց որ դառել ես ջաղացպան,
Կանչիր բող դան, Քյորօղլի, ջա՜ն,
Ջա՜ն, Քյորօղլի, ջա՜ն,
Ջա՜ն Քյորօղլի՜:

**) Ներքողի հեղինակի ով լինելը մեզ անհայտ է. ձեռագրի մեջ մի անորոշ ծանոթագրություն կա, «Եպիսկոպոսին գրածն է», որից երևում է, որ հեղինակը անծանոթ չի եղել իր ժամանակակիցներին։ Ներքողից երևում է, որ այդ եպիսկոպոսը հայանի երգահանյան պետք է եղած լինի։*

Մարդու բախտն էլ անա այսպես
Պտտվում է ջաղացի պես.
Մեկ օր անեծքի վիշապ ես,
Մյուս օր ջաղացպան, Քյորօղլի:

Բայց դու էլի Քյորօղլին ես.
Ժողովրդի սիրելին ես.
Թեկուզ ջաղացպան էլ լինես,
Քեզ պատիվ կըտա՜ն, Քյորօղլի:

Թեև Ղռաթիցդ զրկված,
Բայց թուր ունիս վրադ կապած
Համզան ստրուկ, թակից փախած,
Իսկ դու ազատ, խա՜ն Քյորօղլի:

Մոտըդ կանչիր ճըսկաներից,
Հավատարիմ կտրիճներից,
Թող գան զանեն փախած գերից,
Չըկորչի Համզա՛ն, Քյորօղլի:

— Ղազա՛ր, կես գիշեր է, քեզ վնաս է այդպես բարձր երգելը,— ասում էր Սանդրոն։

— Այո՛, իհարկե, բայց քեֆս բացվել է, Սանդրո ջան, եթե այսօր մի լավ քեֆ չանեմ, էլ ո՞րտեղ պիտի գտնեմ այսպիսի ընկերություն։

Ղազարոսը առանձնապես լավ ձայն չուներ, բայց որ քեֆը տեղն էր լինում, նա իր պարզ երգը այնպիսի ոգևորությամբ, այնպես շեշտված էր երգում, որ բոլորին վարակում էր ու ամենքն էլ նրան ձայնակցելով կրկնում էին նրա բառերը «Ջա՜ն Քյորօղլի ջա՜ն, ջա՜ն Քյորօղլի» և այլն. ստացվում էր մի անուշ երաժշտություն։ Թիֆլիսին կարոտած լինելով նա երգում էր մի ուրիշ երգ էլ, որը վերաբերում էր Թիֆլիսին. այդ երգի բնագիրը չեմ հիշում, միայն միտս է մնացել նրանից «Ճանապարհս ընկավ Թիֆլիս» բառերը։

Անցավ մի քանի օր. առավոտ էր. Սև Սանդրոն եկավ և հաղորդեց ինձ, որ Ղազարոսը ծանր հիվանդ է և տաքության մեջ զառանցում է... Ես անհանգստացա և շտապեցի այցելել նրան։ Երբ ներս մտա, տեսա նրան հագնված, անկողնում նստած և ճակատին սառը կոմպրես դրած։ Այդ օրերին նա շատ էր զբաղվել Ղարաբաղի բարբառի քննությամբ ու այդ գիշերն էլ քնապառ չէր քնել, որի հետևանքով սկսել էր անմիտ ու կցկտուր բաներ խոսել, վախեցնելով յուրայիններին։ Անհրաժեշտ էր նրան զբաղեցնել բոլորովին մի այլ խնդրով, ուստի և ես առաջարկեցի նրան միասին Դոնի ափը գնալ զբոսնելու և դիտելու գետի երկու ճյուղի բաժանվելու տեղի գեղեցիկ տեսարանը, գոյացած կղզին, լաստակամուրջը և այլն։ Այս մասին էի խոսում, երբ ներս եկավ դպրանոցի ուսուցիչներից Ստեփան Սմբատյանը, որը բազմաթիվ զվարճալի պատմություններ գիտեր Նոր-Նախիջևանի կյանքից և համով-հոտով պատմում էր դրանք։ Մենք հիվանդին մեզ հետ առնելով սկսեցինք քաղաքի բարձրավանդակից իջնել դեպի ցած, դեպի գետի ափը։ Մի կողմից այն գեղեցիկ տեսարանները, որոնք հաջորդաբար բացվում էին մեր առջև, և մյուս կողմից էլ այն զվարճալի պատմությունները, որ պատմում էր Սմբատյանը, շուտով Ղազարոսին մոռացնել տվին գիշերը նրա գլխով անցածները, և նա ինքն էլ սկսեց ասել, խոսել, ծիծաղել ու պատմել իր գլխով անցած գնացածներից։

Զբոսանքից հետո վերադարձանք մեր տունը, տանն եղած բարիքից հապճեպ պատրաստված ճաշ անուշ արինք և մեր սիրելի Ղազարոսին ուրախ, զվարթ ու միանգամայն առողջ վիճակում ճանապարհ դրինք իր բնակարանը, որ թե՛ իր ընտանիքին և թե՛ մեզ բոլորիս մեծ ուրախություն պատճառեց։ Երբ հասանք նրա բնակարանը, նա մեզ անմիջապես ետ վերադառնալ չթողեց, այլ, ծղնոտե գլխարկն ու «կրիլատկան» հանելով ու բազմոցի վրա նստելով, պատվիրեց բերել Եբրբերյանի նվիրած «Դոնի շամպայնը». ապա իրեն հատուկ շեշտով նա ավելացրեց.

— Այս օրը իմ այստեղ անցկացրած օրերից ամենալավագույնն է, և որովհետև դրա պատճառը իմ սիրելի Երվանդն է, ես գրկում, համբուրում եմ նրա ճակատը, առաջարկելով խմել նրա կենացը, իսկ ի հիշատակ նվիրում եմ նրան այս իմ ձեռագիր գրվածքը։

Այս ասելով նա տվեց ինձ ձեռագիրը. ես բաց անելով կարդացի ձեռագրի խորագիրը, որ հետևյալն էր. «Ղազարոս Աղայանի քննադատականը Այվազովսկի Գաբրիել եպիսկոպոսի Հազար ու մի առակավոր

րանք-ի վերաբերմամբ։ Այս նվիրական գրվածքը ես սիրով կարդացի ու պահեցի թղթերիս մեջ, և երբ 1922 թվի հունիսին փոխադրվում էի Երևան, աշխատանքի հրավիրված լինելով Հայաստան, հետս բերի և այդ թանկարժեք հիշատակը ու նվիրեցի Թանգարանի Գրական բաժնին, որի վարիչն էի կարգվել ես։

Ստույգ չգիտեմ թե Աղայանը ո՛րքան ժամանակով էր աքսորվել. ինչքան ինձ հայտնի է, նա աքսորվել էր 1898 թվի մայիսին և աքսորում մնացել է 1898 թ. մայիսից մինչև 1899 թ. նոյեմբեր ամիսը։ Այդ ժամանակամիջոցում, մոտ մի տարի. 1898 թ. մայիսի 18-ից մինչև 1899 թ. ապրիլ ամիսը, նա ապրեց Նոր-Նախիջևանում, իսկ մնացյալ 7 ամիսը Հին Ղրիմում ու Թեոդոսիայում։ Այնուհետև նա վերադարձել էր Թիֆլիս, ուր 1902 թվին կատարվել էր նրա հոբելյանը։



Ղազարոս Աղայան

Նոր-Նախիջևանում ամառվա ամիսներին նա զոհ է եղել իր կենցաղից թե՛ բարոյապես և թե՛ նյութապես։ Օգոստոսի վերջերին, նոր պարոցական տարվա սկզբին, նա իր փոքր որդի Մուշեղին ուղարկել էր թեմական դպրանոցն ուսանելու. երեխան, ըստ իր գիտության ու տարիքի, ընդունվել է բարձր նախակրթարանը (թեմական դպրանոցն ուներ երեք նախակրթարանային բաժին- ստորին, միջին և բարձր)- ըստ մեր դիտողության, երեխան լավ պատրաստված էր այդ բաժնի համար, որ, իհարկե, պետք էր վերագրել մանկավարժ հորը. հայերեն նա լավ խոսում էր, վարժ կարդում և կարդացածը ըմբռնում։ Նա ինքն էլ մի թովռուն, աչքաբաց ու սիրելի մանուկ էր։

Աղայանը ծայրահեղ բծախնդիր ու խստապահանջ էր ուսուցիչների նկատմամբ. այս առթիվ մեր միջև հաճախ վեճեր էին ծագում, սուր վիճաբանություններ տեղի ունենում, սակայն դրանք միշտ էլ վերջանում էին փոխադարձ համաձայնությամբ, մի բան, որ մեզ ավելի էր իրար մոտեցնում ու իրար հարգել տալիս։

Ինչ վերաբերում էր ձմեռը Նախիջևանում նրա մնալուն, մենք միշտ էլ նրան այս առթիվ զգուշացնում էինք, նկատի առնելով ձըմեռները Նախիջևանի կլիմայի խստությունը, խստություն, որին դժվար թե կարողանար դիմանալ նրա հյուծված մարմինը և խախտված առողջությունը։ Փորձը ցույց տվեց որ մեր կարծիքը ճիշտ էր. արդեն դեկտեմբերին ու հունվարին նրա տաքության աստիճանը սովորականից միշտ բարձր էր լինում, իսկ հունվարի վերջերին երբեմն հասնում էր 38—39 աստիճանի։

Ընտանեկան մի փոքրիկ խորհրդակցություն տեղի ունեցավ. որին մասնակցեցի նաև ես. որոշվեց, որ նա մի դիմում գրի ում և ուր հարկն է և խնդրի թույլտվություն բնակության փոխադրվելու Էսքի-Ղրիմ։ Գործը, ըստ սովորության, ձգձգվեց և նա ստիպված եղավ սպասել մինչև մարտի վերջերը, երբ վերջապես ստացվեց ցանկալի թույլտվությունը։

Հիշում եմ, ապրիլ ամսվա սկզբի օրերն էին, երբ ճանապարհ դրինք նրան. նա սիրում էր ծովային ճանապարհորդությունը, ուստի նշանակված օրը և ժամին սիրող-հարգողների մի խումբ հավաքվել էր Ռոստովի նավահանգստում՝ նրան ճանապարհ ձգելու համար. նավ ուղեկցելով՝ նրան շրջապատած մնացինք մինչև վերջին ազդանշանը, և բաժանվեցինք նրանից գրկախառնությամբ ու համբույրներով։

Նավը քարափին միացնող սանդուխքը վեր քաշեցին, խարիսխը շառաչյունով վեր բարձ-

բացրին և նավը սկսեց շարժվել ու կամաց կամաց հեռանալ մեզնից։ Իսկ Ղազարոսը դեռ երկար ժամանակ շարունակում էր կանգնած մնալ տախտակամածի վրա. նա շարունակ օդային համբույրներ էր ուղարկում մեզ և ի հիշատակ Նախիջևանում անցկացրած օրերի, երգում էր Ս. Լուսավորչի եկեղեցու ձեռագրի վերը մեր բերած ներբողը.

Հավիկ սիրալի,
Ձայն քո տատրակի,
Ղամբար գիշերի,
Մրթան գիշերի,
Ճրագ լուսատու, Մարիամ:

Մենք էլ նրա օդային համբույրներին պատասխանում էինք թաշկինակների թափահարությամբ... և երբ նավը բոլորովին հեռացավ ու աննկատելի դարձավ, տխուր ու տրտում վերադարձանք Նախիջևան։

Ղազարոսին վերջին անգամ ես տեսա Թիֆլիսում 1908 թվին, երբ շտապ հայրենիք էի գնում և մի երկու օր Թիֆլիսում կանգ էի առել բարեկամներիս տեսնելու համար։ Թիֆլիս ժամանելուս մյուս օրը առավոտյան դուրս եկա «Կավկազ» հյուրանոցից, որտեղ իջևանել էի, և մտադրությունս կատարած լինելու համար ցանկացա առաջին հերթին այցելել Ղազարոսին. սակայն նրա բնակարանի հասցեն լավ չգիտեի և ստիպված քայլերս ուղղեցի դեպի Հովհաննես Միրաքյանի բնակարանը ու ճանապարհին անակնկալ կերպով պատահեցի հենց իրեն Աղայանին, որը զբոսնում էր մի կարճահասակ ծեր մարդու հետ միասին։ Ինձ տեսնելուց նա շատ ուրախացավ, մնաս բարով ասաց իր հետ զբոսնողին, թևս մտավ ու գնացինք։ Արևոտ օր էր. նա ուզում էր ինձ մի հով տեղ տանել, որ երկար ու հանգիստ զրուցելու համար հարմար լիներ։

Կանգնեցինք Ֆունիկուլյորի կայարանում և սար բարձրանալով տեղավորվեցինք սրճարանի սեղաններից մեկի շուրջը. նա սուրճ պատվիրեց։

— Դե՛հ, հիմա ասա, տեսնենք ինչ կա չկա, ու՞ր ես գնում, ի՞նչու ես շտապում այդպես,— իրար հետևից շուտ շուտ հարցեր էր տալիս նա։

Ես զննողական հայացքով նայեցի նրան. Նա շատ ծերացած, այլայլված երևաց ինձ։ Նրա հարցերին մեկ առ մեկ պատասխանելուց հետո հարցրի.

— Ես ուզում եմ քո կարծիքն իմանալ Աբովյան-Նազարյան գրական ֆոնդի մասին, որը հիմնել է Սմբատ Շահազիզը. քո լավ բարեկամը։

—Այդ ի՞նչ հարցմունք է,— ասաց նա.— դրան երկու պատասխան լինել չի կարող, այլ միայն մի, մի, լսու՞մ ես։ Նա ազատության սիրող մարդ էր և կամենալով իր անձի. մտքի ու հոգու ազատությունն ապահովել, չքաշվեց փարել բորսայի դռներին ու հասավ իր նպատակին, դարձավ հայ լեզվի աղա ուսուցիչ և հայ աղա գրականագետ, և դրանով էլ չբավականանալով կամեցավ իր նմաններին էլ ազատել չունևորությունից, որի համար էլ հիմնադրեց հիշյալ ֆոնդը։ Եվ շատ լավ է արել։ Չունևորությունը մաշել ու մաշում է հայ գրականագետների հոգին, նվաստացրել ու նվաստացնում է մեզ, դրա հետ և այն ազնիվ ու կարևոր ազգային գործը, որին ծառայում ենք մենք»*)։

Ես լուռ նայում էի նրան. նա նստած տեղից վեր էր կացել, շտկվել ամբողջ հասակով մեկ. Նրա աչքերը ցոլում էին և իմ առջև կանգնած էր դարձյալ առաջվա Ղազարոս Աղայանը։ Ես ամուր սեղմեցի նրա

*) Աղայանը Սմբատ Շահազիզին այնքան էր սիրում, որ նրա մասին խոսելիս չէր ասում Սմբատը, այլ «Սմբատս»։ Որքան ինձ հայտնի է, նրանք անձամբ իրար հետ ծանոթ էլ չեն եղել, նրանց ծանոթությունը սկսվել է նամակագրությամբ։ Ֆոնդի տոկոսներից Շահազիզը Ղազարոսին բաժին էր հանում առանց վերջինիս գիտենալու, խնդրելու։ Ղազարոսի հարցին, թե ինչո՞ւ եմ հայրենիք շտապում, ես չէի պատասխանել և միայն ճաշի ժամանակ նրա ականջին փսփսացել էի, որ հայրենիք եմ շտապում կիսամեռիկ ֆոնդը վերստին վերականգնելու համար։ Ֆոնդի վերականգնումը վերաբերում էր ինձ ու իմ եղբայրներին։ Հորեղբայրս վախճանվել էր 1907 թ. դեկտեմբերի 24-ին, առանց տնօրինելու ֆոնդի խնդիրը։ Հանգուցյալի աճյունը հողում ամփոփելուց հետո երբ թաղման հանձնաժողովը վերջնահաշիվ էր տեսնում, ինձնից հարցրին հորեղբորս թողած կտակի ինչպես նաև ֆոնդի գումարի մասին։ Ես հայտնեցի, որ այդ մասին որևէ որոշակի բան ասել չեմ կարող և ինձ հայտնի է միայն այն, որ նա կտակ թողել է, որի մանրամասնությունները դեռ ինձ հայտնի չեն։ Ինչ վերաբերում էր ֆոնդի գումարին, ես հայտնեցի, որ չեմ կարծում թե նա խառնած լիներ իր սեփական դրամի հետ, քանի որ, ինչքան ինձ հայտնի էր, նա սովորություն ուներ ֆոնդի գումարը աճեցնելու համար պարտք տալու իր բարեկամներին ո՛չ թե բանկային հինգ տոկոսով, այլ ավելի բարձր տոկոսով։ Ուրեմն մնում էր հարց ու փորձ անել բարեկամներին և այս ձևով ստուգել ֆոնդի գումարի վիճակը։

Դրանով էլ հանձնաժողովի նիստը, որին մասնակցում էի և ես, փակվեց և խնդիրը սպառված համարվեց։ Երբ ժողովականները սկսեցին ցրվել, Նիկողայոս Ծամհարյանը ինձ, Գրիգոր Խալաթյանին և երկու ուրիշ անձանց մի ուրիշ սենյակ հրավիրելով,

ձեռքը։ Մեր խոսակցությունը բավական ժամանակ տևեց։ Վերադարձին նա ինձ ճանապարհ դրեց մինչև հյուրանոց և պարտադրեց, որպեսզի հաջորդ օրը ճաշին լինեմ իր տանը՝ Խաչենի անուշահամ գինով թարմ յոք վայելելու համար։

Մյուս օրը ճիշտ նշանակված ժամին նրա տանն էի. հրավիրված էին նաև մեր ընդհանուր ծանոթներից մի քանիսը։ Շատ լավ ժամանակ անցկացրինք. Ես մի անգամ էլ լսեցի նրա «Քյորօղլին» ու ես էլ իր հետ երգեցի «Ա՜յ Քյորօղլի, ջա՜ն Քյորօղլի»։ Վերջում Ղազարոսը երգեց Նոր-Նախիջևանի զվարճալի «Հարթան Միկիտի խաղը»։

Այու, Այու, Դևլե՛,
Տունը յալիին քովն է.
Դրացիին ինադեն
Սամսա կրակն կերե։

Այս խաղը, իբրև դադուցային երգ, իր բովանդակությամբ և ր տառը Նախիջևանի բարբառին հատուկ ծ-ով արտասանելու սովորությամբ, շատ զվարճացրեց բոլորիս և ամենքս էլ հոհռալով բաժանվեցինք միմյանցից։ Ամենից վերջը դուրս եկա ես. համբուրվեցինք.

— Մնաս բարով չեմ ասում, այլ ցտեսություն,— ասացի ես։

— Չեմ կարծում,— պատասխանեց նա տխրությամբ,— ես հիվանդ եմ, լուրջ հիվանդ. Հին Ղրիմում շնչարգելությունս այնքան էր թեթևացել, որ առանց նեղության կարողանում էի սարերը բարձրանալ անգամ, իսկ այստեղ այժմ նույնիսկ դժվարանում եմ շատ մ[illegible] դալ, կարծես խեղդում է...*)

Տարիներ անցան... 1911 թվին սրտի դառնությամբ կարդացի, որ հունիսի 20-ին Ղազարոսը հանկարծամահ է եղել։

Հեյ և ամենիս սիրելի Ղազարոս, ի՜նչքան լավ իղձեր ունեիր։

---

ցույց տվեց մի ծրար, որի վրա ռուսերեն գրված էր «Шах-Азиз»։

— Հանգուցյալը այս ծրարը իր ամենցվածքի հետ միասին հանձնել է մեր բանկին ի պահպանություն... Մենք չգիտեինք թե ի՞նչ կար նրա մեջ և այժմ էլ չգիտենք,— ասաց ժամհարյանը և դառնալով ինձ, իբրև ժառանգներից մեկին, թույլտվություն խնդրեց ծրարը բաց անելու։

Ծրարը բացվեց և նրա մեջ գտնվեց այնքանի մուրհակ, որքան ֆոնդի գումարն էր. այդ գումարը նա պարտք էր տված եղել մոսկովաբնակ Նոր-Նախիջևանցի մի ունևոր վաճառականի։ Այսպիսով ֆոնդի գումարը գտնվեց, սակայն, պետական օրենքով այդ գումարը այլևս գումար համարվել չէր կարող, քանի որ Նահազգիզի կողմից պարտք տրված լինելով, պետք է կազմեր նրա կարողության մի մասը և, խառնվելով կարողության ընդհանուր գումարին, բաժանվեր ժառանգների միջև, վերջիններիս ժառանգական իրավունքները հաստատվելուց հետո։ Մնում էր միայն, որ ժառանգներից յուրաքանչյուրը ինքնակամ կերպով իր ստացածից բաժին հաներ հօգուտ ֆոնդի այն չափով, որ ստացվեր ֆոնդի գումարը։ Ահա հենց նրա համար էլ ես հայրենիք էի շտապում։ Ինձ հաջողվեց այդ իրագործել։ Ժառանգներից միայն հանգուցյալի եղբայրը մերժեց կատարել իր բարոյական պարտականությունը։ Այսպիսով կիսամեռիկ ֆոնդը վերականգնվեց ու հանձնվեց Բարեգործական Ընկերությանը՝ նշված նպատակի համար գործադրելու պայմանով։

*) Ազայանը մի առողջակազմ տղամարդ էր, ծնված, սնված ու մեծացած մաքուր օդի մեջ։ Նրա առողջության վրա չէր ազդել և նրա գրաշարական զբաղմունքը Թիֆլիսում, Թեոդոսիայում, Մոսկվայում ու Պետերբուրգում. Նրա առողջությունը քայքայեց միայն ու միայն բանտարկությունը, որը զորեղապես ազդեց նրա թոքերի վրա։ Հին Ղրիմում նա այնքան էր կազդուրվել, որ առանց դժվարության զբոսնում էր սարերի վրա և մինչև անգամ որոշել էր ոտով շրջագայել Ղրիմի հայկական գաղութի պատմական վայրերը։ Բայց Թիֆլիս վերադառնալուց հետո նրա թոքերի հիվանդությունը նորից բորբոքվում է ավելի զորեղ կերպով, որին և զոհ է գնում նա։

# ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

## ՀՈՒՆԱԿԱՆ ԹԵՐԹ ՄԸ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Պուենոս-Այրես հրատարակվող հունարեն «Մորփոս» շաբաթաթերթը թացառիկ թիվ մը*) (20 փետրվար 1948 թ.) հատկացուցած է Վարդանանց հիշատակին՝ պատկերազարդ և ճոխ տպագրությամբ։

Առաջին էջը ամբողջությամբ կպարունակե թաչն Վարդան Մամիկոնյանի նկարը՝ գունավոր տպագրությամբ, երկրորդ էջը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, իսկ երրորդը Կիլիկիո Հայրապետին։ Շաբաթաթերթին մեջ կան նաև Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքներուն, Սսոյ և Էջմիածնի Հայրապետական Աթոռներուն, Մեծն Տիգրանի, Լևոն Բ Թագավորի և այլոց նկարները։

Նույն շաբաթաթերթին մեջ «Հայաստանյայց Եկեղեցվոտ պատմության և վարդապետության մասին շահեկան ուսումնասիրություն մը ունի կիպրահայ բանասեր Պ. Նուպար Մազոոտյան։ Այս թացառիկին ծախքերը հոգացված են Պ. Տիգրան Սավալյանի կողմե, որ թոռն է հանգուցյալ հայտնի բանասեր Տիգրան Սավալյանի, և որ 20 տարիներե ի վեր կբնակի Հարավային Ամերիկայի Պուենոս-Այրես քաղաքին մեջ։ Տիգրան Սավալյան ևս սպաներեն լեզվով հոդված մը ունի այս թիվին մեջ հայ ազգի քաղաքական, կրոնական և գրական կյանքի և սահեղծագործությանց մասին։

Հայության անունին և փառքին համար պատվաբեր և օգտակար հրատարակություն մըն է սարկա։ Պ. Նուպար Մազոոտյան և Պ. Տիգրան Սավալյան արժանի են չերմ շնորհավորանքի։

(«Հասկ» մարտ 1948 թ.)

*) «Մորփոս» շաբաթաթերթի սույն թացառիկ թիվի մեկ օրինակը ստացվել է նաև Մայր Աթոռում։

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ճարտարապետության գործերի Վարչության կից պատմական հուշարձանների պահպանության Կոմիտեն ավարտել է մի շարք հուշարձանների վերանորոգման աշխատանքները։

Լրիվ կերպով վերանորոգվել են Ծաղկաձորի հուշարձանները։ Վերականգնվել են քանդված պատերը և նորոգվել ծածկերը։ Մոտ ժամանակներս հուշարձանների շուրջը չուգունից պատրաստված ցանկապատեր են դրվելու։ Վերանորոգվել են նաև Թալինի Փոքր եկեղեցին, Թալիշի Մեծ տաճարը և մասամբ Երերույքի բազիլիկայի հարավային պատն ու որմախորշը։

Ներկայումս վերականգնվում են միջնադարյան հայ ճարտարապետության նշանավոր կոթողներ— Նորավանքի հուշարձանների խմբի մեջ մտնող երկհարկանի տաճարը և Եղվարդի, 7-րդ դարում կառուցված, Զորավարի բազմաարսիդային տաճարը։

## ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՈՒՄԲ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից ճարտարապետության գործերի Վարչության պատմական հուշարձանների պահպանության Կոմիտեի հնագիտական արշավախումբը հետազոտել է Աշտարակի շրջանի հյուսիս-արևմտյան մասը։

Արշավախումբը հաշվառման է ենթարկել մոտ 70 պատմա-հնագիտական հուշարձաններ, որոնցից 15-ը հայտնաբերվում են առաջին անգամ։ Դրանց թվում առանձին հետաքրքրություն են ներկայացնում մեծ ջրավազանը և ճարտարապետական հուշարձանի բեկորները Գոշ գյուղի շրջակայքում։

Հավաքված է մինչև 65 արձանագրություն։ Որոշված են մի քանի հուշարձանների հիմնրման թվականները, որ նախկինում անհայտ էին։

Ներկայումս հավաքված նյութերը մշակվում և մի սիստեմի են բերվում։ Աշխատանքը կատարվում է պատմական գիտությունների թեկնածու Հ. Եղիազարյանի ղեկավարությամբ։

## ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ, ԱՐՎԵՍՏԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1943 թվի նոյեմբերի 29-ին հիմնադրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան, որը ներկայումս ունի 30 գիտական հաստատություններ, որոնցից 15 ինստիտուտ, 5 սեկտոր, 2 լաբորատորիա և այլ գիտական հիմնարկներ։ Այդ հաստատություններում աշխատում են Գիտությունների Ակադեմիայի 26 իսկական անդամներ, 19 թղթակից-անդամներ, 50 դոկտոր-պրոֆեսորներ, 204 գիտության թեկնածուներ, 44 ավագ գիտաշխատողներ, 246 կրտսեր գիտաշխատողներ, 231 գիտա-տեխնիկական աշխատողներ։

Սովետական իշխանության տարիներին դպրոցական վիթխարի շինարարություն է կատարվել։ Բավական է նշել, որ միայն Երևան քաղաքում կառուցվել է ավելի քան 150 դպրոցական և նախադպրոցական շենք։ Երևանում ներկայումս գործում է 55 միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ դպրոց։ 1948 թվին ռեսպուբլիկայի դպրոցների թիվը հասել է 1.193-ի, որտեղ սովորում է 300 հազար աշակերտ։ Ռեսպուբլիկայի դպրոցներում ընդգրկված են հայրենադարձների 20 հազար երեխա։ Դպրոցների պահպանման և դպրոցական ուսուցման կարիքների համար միայն 1948 թվին հատկացված է 300 միլիոն ռուբլի։ Ռեսպուբլիկայի քաղաքներում լիովին իրագործված է 7-ամյա պարտադիր ուսուցումը, իսկ գյուղական վայրերում ընդհանուր պարտադիր ուսուցումը։

Միայն 1948 թվին Հայպետհրատը դպրոցների համար հրատարակել է և շարունակում է հրատարակել 44 անուն դասագիրք՝ մի քանի տասնյակ միլիոն տիրաժով։

Ռեսպուբլիկայում գործում է 53 տեխնիկում 9.282 սովորողներով։

1948 թվին ռեսպուբլիկայի 14 բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թիվը հասել է 9.597 մարդու։ Վերջին տարիներս Պետական համալսարանում ստեղծվել է միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, ֆիլոլոգիական ֆակուլտետում ավելացել են արևելյան լեզուների ու գրականության և տրամաբանության ու հոգեբանության բաժիններ։ Մանկավարժական ինստիտուտում բացվել է նախադպրոցական ֆակուլտետ։ Վերջին ութ և կես տարվա ընթացքում ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունները տվել են 6.610 մասնագետ։

Սովետական Հայաստանի աշխատավորության կյանքում մեծ դեր են խաղում կուլտուր-լուսավորական հիմնարկները։ Սովետական իշխանությունը անցած 28 տարվա ընթացքում կուլտուրական խոշոր շինարարություն կատարեց կոլխոզային գյուղում։ Այս տարի ռեսպուբլիկայի գյուղական վայրերում արդեն գործում են 757 ակումբ և 2.110 գրադարան ու գրադարան-ընթերցարան։ Բոլոր շրջանային կենտրոններում կառուցված են կուլտուրայի տներ։ Գյուղական վայրերում գործում է 216 կինոսարքավորում, որից 40-ը շրջիկ կինոսարքավորում։

Ռեսպուբլիկայի բոլոր շրջանային կենտրոններն ունեն ռադիոհանգույցներ՝ հազարավոր ռադիոկետերի կարողությամբ։

Ռեսպուբլիկայի թերթերի ընդհանուր տիրաժն է 117.220։ Ռեսպուբլիկայում հայերեն լեզվով լույս է տեսնում 44, այլ լեզուներով 12 անուն թերթ։ Հրատարակվում են բազմաթիվ ամսագրեր, գիտական աշխատություններ և բյուլետեններ։ Առանձին ուշադրություն է դրավում գրքերի հրատարակության գործը. միայն վերջին ութ տարվա ընթացքում հրատարակվել է 3.635 անուն գիրք՝ 16.983 հազար տիրաժով։

Մեծ նվաճումներ են ձեռք բերվել ժողովրդական առողջապահության բնագավառում։ 1948 թվին աշխատող բժիշկների թիվը հասնում է 1732-ի։ Քաղաքներում և գյուղական վայրերում գործում են 162 պոլիկլինիկա ու ամբուլատորիա։

Ակնառու են նվաճումները արվեստի բնագավառում։ Սովետական իշխանության հաստատումից առաջ Հայաստանը չի ունեցել ոչ մի պրոֆեսիոնալ թատրոն։ Սովետական իշխանության հոգատարության շնորհիվ ռեսպուբլիկայի 20 շրջաններում կազմակերպվել են շրջանային թատրոններ, որոնց համար կառուցվել են նոր շենքեր։ Միայն Երևան և Լենինական քաղաքներում ներկայումս գործում են 8 թատրոն, որոնց համար սովետական իշխանության տարիներին կառուցվել են նոր շենքեր։ Այս հնգամյակում սկսվելու է Գ. Սունդուկյանի անվան թատրոնի նոր հոյակապ շենքի կառուցումը։

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովը։

Ժողովը բացեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։

«Նոր էլեմենտար մասնիկները» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ալիխանյանը։

Զեկուցումից հետո հանդես եկած Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը ընդգծեց, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ալիխանյանի հետազոտությունները հսկայական նշանակություն ունեն ոչ միայն ֆիզիկայի, այլև ամբողջ բնագիտության համար, քանի որ նրանք արմատապես փոխում են մեր պատկերացումները էլեմենտար մասնիկների մասին։ Այդ աշխատանքի համար ակադեմիկոս Ա. Ալիխանովը և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ալիխանյանը այս տարի արժանացել են Ստալինյան մրցանակի։

Օրակարգի երկրորդ հարցում ընդհանուր ժողովը ձեռնամուխ եղավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նոր իսկական անդամների ընտրությանը։ Ֆիզիկա-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ի. Եղիազարյանը առաջարկեց

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ ընտրել երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր Ի. Մաղաքյանին։ Նա բնութագրեց նրա արդյունավետ և արժեքավոր գիտական գործունեությունը։ Որպես հանքերի խոշոր մասնագետ և հետազոտող Ի. Մաղաքյանը Հայաստանի մետալոգենիայի վերաբերյալ իր աշխատանքներով զգալի ավանդ է մտցրել ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Վ. Գուլքանյանը գյուղատնտեսական և բիոլոգիական գիտությունների բաժանմունքների անունից առաջարկեց ընտրել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ բիոլոգիական գիտությունների թեկնածու, Գենետիկայի ինստիտուտի դիրեկտոր Գ. Բաբաջանյանին։ Ակադեմիկոս Տ. Լիսենկոյի համատարիմ և հետևողական աշակերտ Գ. Բաբաջանյանը իր գիտական աշխատությունները նվիրել է միչուրինյան ագրոբիոլոգիայի, մասնավորապես գյուղատնտեսական բույսերի ընտրովի բեղմնավորման թեորիային։ 1947 թվին լույս է տեսել «Գյուղատնտեսական բույսերը բեղմնավորելու ընտրողական ընդունակությունը» աշխատությունը՝ ակադեմիկոս Տ. Լիսենկոյի առաջաբանով, որը բարձր գնահատական է տվել այդ աշխատությանը։

Նրա որոշ աշխատություններ նվիրված են ագրոբիոլոգիայի միանգամայն նոր բնագավառին, որը վերաբերում է սեռական մենտորի երևույթների վերաբերյալ նոր ապացուցված դրույթին։

Ընդհանուր ժողովը գաղտնի քվեարկությամբ ընտրեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր Ի. Մաղաքյանին և բիոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Բաբաջանյանին։

Ժողովը լսեց և ընդունեց գյուղատնտեսական և բիոլոգիական գիտությունների բաժանմունքների նոր կառուցվածքը։

Ընդհանուր ժողովը բավարարեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Մ. Թումանյանի խնդրանքը և նրան ազատեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի և Ակադեմիայի նախագահության անդամի պաշտոնից։

Ժողովը գաղտնի քվեարկությամբ ընտրեց գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Բաբաջանյանին և նրան մտցրեց նախագահության կազմի մեջ։

***

Նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովը։ Գիտությունների Ակադեմիայի նիստերի դահլիճում ներկա են Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ, գիտությունների դոկտորներ ու թեկնածուներ, գիտական աշխատողներ, պարտիական, սովետական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գրականության և արվեստի գործիչներ։ Ընդհանուր ժողովի աշխատանքներին մասնակցում են եղբայրական ռեսպուբլիկաներից եկած հյուրեր՝ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ռ. Ագլաձեն, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Գ. Ծերեթելին և Գ. Ձուրինաշվիլին, գիտության վաստակավոր գործիչներ՝ երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր Կ. Ալի-Զադեն, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Խ. Ամիրխանովը, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Արասլին, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Ջ. Խալիլովը։

Ժողովը բացեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։

Իր ներածական ճառում Վ. Համբարձումյանն ասաց.

— Քսանութ տարի է անցել այն օրերից, երբ հայ ժողովուրդը, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, տապալեց դաշնակ ավանտյուրիստների լուծը և հաստատեց սովետական հասարակարգ։ Քսանութ տարի է, որ ռեսպուբլիկայում շարունակվում է ստեղծագործական աշխատանքը։ Ստեղծվել է խոշոր արդյունաբերություն։ Գյուղում հաղթանակել է կոլխոզային կարգը։ Ամբողջ ռեսպուբլիկան ծածկվել է ոռոգիչ ջրանցքների ցանցով։ Ընդլայնվել և մեծացել են մեր քաղաքները։ Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման հետ միասին չտեսնված ծաղկման են հասել մեր կուլտուրան ու գիտությունը։

Գերմանո-ֆաշիստական զավթիչների արշավանքը չկասեցրեց ինչպես մեր ռեսպուբլիկայում, այնպես էլ ամբողջ Սովետական Միությունում կուլտուրական շինարարությունը։

Դրա ապացույցը հանդիսանում է այն, որ հինգ տարի առաջ, Հայրենական պատերազմի ծանր տարիներին ստեղծվեց մեր Գիտությունների Ակադեմիան։ Անցած ժամանակամիջոցում բոլշևիկյան պարտիայի և կառավարության հոգատարության ու ուշադրության շնորհիվ Ակադեմիայի աշխատանքը ընդլայնվեց, որի հետևանքով մենք հասանք զգալի հաջողությունների, որոնք բարձր են գնահատվել մեր պարտիայի ու կառավարության կողմից։

Գիտությունների Ակադեմիայի գոյության ընթացքում աճել են գիտական նոր կադրեր։ Բազմաթիվ լաբորատորիաները հարստացվել են ժամանակակից նորագույն սարքավորումով։ Ստեղծվել են բոլոր պայմանները բեղմնավոր գիտական աշխատանքի համար։ Մենք մեծ հնարավորություններ ունենք, որպեսզի եղբայրական ռեսպուբլիկաների գիտնականների հետ միասին կատարենք մեծ Ստալինի կողմից մեր առաջ դրված խնդիրը՝ ամենակարճ ժամկետում գերազանցել օտարերկրյա գիտնականների գիտական նվաճումները։

Մեր ընդհանուր ժողովը զուգադիպում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հիմնադրման հնգամյակի հետ։

Թույլ տվեք ձեզ բոլորիդ, ինչպես նաև մեր հյուրերին, Վրաստանի ու Ադրբեջանի գիտնականներին, շնորհավորել այդ նշանակալից իրադարձության առթիվ։

Այնուհետև Վ. Համբարձումյանը խոսում է անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամության մասին, նշելով, որ անհրաժեշտ է էլ ավելի ուժեղացնել կապերը եղբայրական երեք ռեսպուբլիկաների գիտնականների միջև։

Իր ճառը Վ. Համբարձումյանը ավարտում է կեցցեով ի պատիվ մեծ առաջնորդ, գիտության կորիֆեյ ընկեր Ստալինի։

Առաջին նիստում լսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանի զեկուցումը աստղային ասոցիացիաների մասին։

«Կովկասի հերոսական պաշտպանությունը 1942—1943 թվերին» զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Ար. Մնացականյանը։

Զեկուցումների հետ միաժամանակ ցույց տրվեցին դիապոզիտիվներ։

Դրանով առաջին նիստը ավարտվեց։

***

Նոյեմբերի 26-ին շարունակվեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովի աշխատանքները։ «Կիսանուրբ բուրդ ունեցող ոչխարների նոր տեսակ» զեկուցումով հանդես եկավ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Ռուխկյանը։

Զեկուցողը փաստական հարուստ նյութի հիման վրա մանրամասնորեն պատմեց Միչուրին-Լիսենկոյի ուսմունքից ելնելով ոչխարների նոր տեսակ ստեղծելու և ամրապնդելու սելեկցիոն-ցեղային միջոցառումների մասին։

Մոտակա տարիներում նախատեսվում է շարունակել սելեկցիոն-ցեղային միջոցառումները և լայնորեն արմատավորել նոր ցեղը ռեսպուբլիկայի մի շարք լեռնային շրջաններում։

Տեխնիկական գիտությունների դոկտոր Մ. Կասյանի զեկուցումը նվիրված էր բնական շինաքարերը հատմամբ մեխանիկորեն մշակելու հարցին։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Շինանյութերի և կառուցումների ինստիտուտում ուսումնասիրվել է տուֆը հատելով մշակելու սկզբունքները և ստեղծված փորձնական բազայի հիման վրա հայտնաբերվել են հատման առավել ռացիոնալ ռեժիմները։ Միաժամանակ լուծվել են տուֆի հատումից առաջացող մնացուկների առավել նպատակավոր օգտագործման հարցերը։

Նոյեմբերի 27-ի նիստում փիլիսոփայական գիտությունների թեկնածու Խ. Մոմջյանի զեկուցումը նվիրված էր «Ստեղծագործական ակտիվությունը սովետական մարդու առանձնահատուկ գիծն է» թեմային։ Քննադատության ենթարկելով պատմության ֆատալիստական ըմբռնումը, որը ժխտում է հասարակական զարգացման ասպարեզում գիտակցության ու կամքի դերն ու նշանակությունը, զեկուցողը, հենվելով մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների վրա, ցույց տվեց, թե սոցիալական ինչպիսի պայմաններում մարդկանց, հասարակական դասակարգերի գիտակցությունն ու կամքը դառնում են պատմական պրոցեսի հզոր գործոններ։

Բիոլոգիական գիտությունների դոկտոր Ա. Փանոսյանը զեկուցեց «Միկրոօրգանիզմների հակամարտությունը և նրա նշանակությունը» թեմայի մասին։

Շարադրելով մանրէների հակամարտ փոխհարաբերության ուսմունքի պատմությունը, զեկուցողը ակնառու կերպով ցույց տվեց գիտության այդ մարզի ստեղծման ու զարգացման ասպարեզում ռուս գիտնական-

ների առաջնությունը։ Սովետական գիտնականների աշխատանքները որպես հիմք ծառայեցին մանրեներից դեղորայք ստանալու համար։

Ներկայումս կատարվող բազմաթիվ հետազոտությունները գործնական հսկայական նշանակություն ունեն, քանի որ նրանք նպատակ են դնում ստանալ դեղորայք այնպիսի ինֆեկցիաների դեմ պայքարելու համար, որոնց դեմ բժշկությունը ներկայումս այլ միջոցներ չունի։

Վերջին նիստում եզրափակիչ խոսքով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։

***

Վրաստանի և Ադրբեջանի գիտնականների ժամանման կապակցությամբ նոյեմբերի 26-ի ցերեկը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում տեղի ունեցավ խորհրդակցություն, որը քննարկեց եղբայրական երեք ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների, ինստիտուտների ու գիտնականների միջև գիտական կապերը է՛լ ավելի ամրապնդելու և փորձի փոխանակում կատարելու հարցերը։ Խորհրդակցությունը բացեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը, որը նշեց դարերի ընթացքում եղբայրական բարեկամությամբ կապված Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովրդների գիտնականների միջև գիտական կապեր հաստատելու և զարգացնելու մեծ նշանակությունը։

Նիստում հանդես եկան Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ռ. Ագլաձեն, Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Ծերեթելին, գիտության վաստակավոր գործիչ, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Խ. Ամիրխանովը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Վ. Գուլքանյանը. Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Հ. Բունիաթյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Բաբաջանյանը, երկրաբանական-հանքաբանական գիտությունների թեկնածու Ա. Դեմյոխինը։

Նրանք մի շարք առաջարկներ մտցրին համատեղ գիտական աշխատանքի հետագա զարգացման մասին, որը կստեղծի սովետական գիտության նոր վերելք։

## ՀԱՐՍՏԱՆՈՒՄ Է ԳՐԱԴԱՐԱՆԻ ՖՈՆԴԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կենտրոնական գրադարանը ինչպես Սովետական Միության բոլոր խոշորագույն քաղաքներից, այնպես էլ արտասահմանյան երկրներից ստանում է գրականություն, ժուռնալներ, թերթեր։ Գրադարանն արտասահմանից ստանում է հատկապես գիտական բնույթի պարբերականներ և հայերեն լեզվով լույս ընծայված բոլոր գրքերը։

Վերջերս գրադարանն ստացավ Վիեննայի Մխիթարյանների կողմից վերջին 50 տարիների ընթացքում հրատարակված 558 անուն, հայոց պատմության, լեզվաբանության և այլ բնագավառների վերաբերյալ, զանազան գրքեր։

## ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտը Սովետական Հայաստանի 28-ամյակը դիմավորեց մի շարք հաջողություններով։

Արդեն Արարատյան դաշտավայրի մի շարք կոլխոզներում 500 հեկտարի վրա ցանված է ինստիտուտի կողմից անհատական ընտրության միջոցով ստացված աշնանացան ցորենի «Արտաշատի—42» տեսակը, որը 3—4 ցենտներով ավելի բերք է տալիս (մեկ հեկտարի վրա), քան տեղական ցորենը։

Բազմացվում է «Եղվարդի—4» տեսակը, որն իր բերքատվությամբ 7—8 ցենտներով (մեկ հեկտարի վրա) գերազանցում է տեղական ցորենին։ Այդ տեսակը տարածվելու է ռեսպուբլիկայի նախալեռնային շրջաններում։

## ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Նոյեմբերի վերջերին Թբիլիսիում կայացավ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի մաթեմատիկական և բնական գիտությունների բաժանմունքի 30-րդ գիտական սեսիան՝ նվիրված մաթեմատիկայի խնդիրներին։ Սեսիայի նիստերին լսվեցին հաղորդումներ Վրաստանի և Հայաստանի մաթեմատիկոսների վերջին տարիներում ձեռնարկած աշխատանքների մի քանի արդյունքների մասին։

Զեկուցումներով հանդես եկան Վրաստանի մաթեմատիկոսները— Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Ի. Վեկուան և Վ. Կուպրաձեն։

«Մոտավորների տեսության վերաբերյալ հետազոտությունների արդյունքները Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում» զեկուցմամբ հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Շահինյանը։ Նա վրաց մաթեմատիկոսներին ծանոթացրեց այն արդյունքների հետ, որին հասել են թե ինքը զեկուցողը և թե իր աշակերտները— Հայաստանի երիտասարդ մաթեմատիկոսները։

Սեսիան ցույց տվեց, որ ստեղծագործական աշխատանքի շնորհիվ Վրաստանի և Հայաստանի մաթեմատիկոսները լուրջ հաջողություններ են ձեռք բերել։

## ՄՇՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմական թանգարանում կազմակերպվում է Հայաստանի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի մշտական ցուցահանդես։

Ցուցահանդեսի մի բաժինը ընդգրկում է «1914—1918 թ. թ. համաշխարհային առաջին պատերազմի շրջանը»։ Մյուս բաժինը պատկերում է «Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի շրջանը»։ Հաջորդ բաժինը կազմում է «Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում», որտեղ իլյուստրացիաներով և պատմական փաստաթղթերով ցուցադրված են եղբայրական ռեսպուբլիկաների օգնությունը Հայաստանին, Անդրֆեդերացիայի կազմակերպումը, Սովետական Հայաստանի առաջին կոնստիտուցիան և այլն։

Հաջորդ բաժինը կազմում է Հայրենական Մեծ պատերազմի շրջանը։ Այստեղ ցուցադրված են Սովետական Միության հայ հերոսների, հայ գեներալների մասին նյութեր, իլյուստրացիաներ։ Ներկայացված են հայ ժողովրդի զավակները Հայրենական Մեծ պատերազմում։ Հետաքրքիր բաժիններից է «Հայրենադարձություն» բաժինը։

Վերջին և մեծ բաժիններից մեկը կազմում է «Ժողովրդական տնտեսություն» բաժինը։ Այստեղ ցուցադրված են Հայաստանի ժողովրդական տնտեսության նվաճումները 28 տարիների ընթացքում, սոցիալիստական արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, կուլտուրան, գիտությունը, ժողովրդական լուսավորությունը, առողջապահությունը և ժողովրդական տնտեսության այլ բնագավառներ։

Օրերս տեղի կունենա մշտական ցուցահանդեսի բացումը։

## ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 20-ԱՄՅԱԿԸ

Հոկտեմբերի 20-ին Երևանի Անասնաբուժական ինստիտուտի դահլիճում հանդիսավոր նիստ տեղի ունեցավ նվիրված ինստիտուտի գոյության 20-ամյակին։

Սովետական Միության խոշորագույն անասնաբուժական բարձրագույն ուսհիմնարկներից մեկի 20-ամյա գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի դիրեկտոր, անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Շաքարյանը։

20 տարվա ընթացքում Երևանի Անասնաբուժական ինստիտուտը երկրին տվել է մոտ 1700 շրջանավարտ, որոնք աշխատում են ոչ միայն Հայաստանում, այլ և Անդրկովկասի եղբայրական ռեսպուբլիկաներում, Միջին Ասիայում, Հյուսիսային Կովկասում, Մոնղոլական ժողովրդական ռեսպուբլիկայում։ Ինստիտուտի 48 շրջանավարտներ ներկայումս աշխատում են իրենց իսկ ավարտած ինստիտուտում, որպես դասախոսներ։ Ինստիտուտի շրջանավարտների մեջ կան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ, թղթակից-անդամներ, դոկտորներ և անասնաբուժական գիտությունների թեկնածուներ։

Ինստիտուտի 20-ամյակի կապակցությամբ ողջույնի խոսքով հանդես եկան Վրացական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրությունից՝ Ա. Կաշախիձեն, Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրությունից՝ Ա. Թումանյանը, Ադրբեջանի գյուղատնտեսական ինստիտուտից՝ Խալիլովը, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայից՝ ակադեմիկոս Ա. Թամամշյանը և ուրիշներ։

ՍՍՌՄ Բարձրագույն կրթության մինիստրության հրամանով շնորհակալություն է հայտնված ինստիտուտում երկար տարիներ աշխատած մի խումբ դասախոսների և աշխատակիցների։

Այնուհետև ընթերցվում են ստացված բազմաթիվ ողջույնի հեռագրերը, որոնց թվում ՍՍՌՄ գյուղատնտեսության մինիստր Ի. Ա. Բենեդիկտովի, ՍՍՌՄ բարձրագույն կրթության մինիստր Ս. Վ. Կաֆտանովի, Տիմիրյազևի անվան Ակադեմիայի, Լատվիական Գյուղատնտեսական Ակադեմիայի, և այլոց հեռագրերը։ Ողջույնի հեռագրեր էին ստացվել նաև Լենինգրադից, Կիևից, Խար-

կովից, Քիշինևից, Թբիլիսիից, Բաքվից, Կազանից, Տաշքենդից, Օմսկից, Սարատովից։ Հանդիսավոր նիստը խանդավառությամբ ընդունեց ժողովուրդների առաջնորդ, գիտության կորիֆեյ մեծ Ստալինին ուղղված ողջույնի տեքստը։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԸ ԱՐԺԱՆԱՑԱՆ ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻՆ

Հազարից ավելի էքսպոնատներ են ցուցադրվել կիրառական արվեստի և կերպարվեստի ինքնուս վարպետների Մոսկվայում կազմակերպված համամիութենական ցուցահանդեսում։ Նկարչության, քանդակագործության, գրաֆիկայի և մետաղի, փայտի ու ոսկրի վրա կատարված փորագրությունների բազմաթիվ էքսպոնատները, գեղարվեստական ձեռագործներն ու գորգերը հանդիսացան ազգային ռեսպուբլիկաների կիրառական արվեստի ինքնուս վարպետների աճի ցուցանիշ։

Հայաստանը ցուցահանդեսում ցուցադրել է քանից ավելի վարպետների վաթսուն աշխատանքները։ Ա. Պողոսյանի «Սովետական Միության Հիմնը» փորագրությունը, Կ. Ղուկասյանի խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակին նվիրված պլաստմասսայի վրա արված փորագրությունը, Փ. Ավետիսյանի մետաքսե կտորի վրա ասեղնագործած կոմպոզիտոր Կոմիտասի պորտրեն և հայրենադարձ Հ. Ստեփանյանի «Վերածնված Հայաստանը» փորագրությունը արծաթի վրա մեծ վարպետությամբ կատարված աշխատանքները արժանացել են ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից արվեստի գործերի Կոմիտեի առաջին չորս մրցանակներին։

## ԳՈՒՍԱՆՆԵՐԻ ԵՐԳԵՐԸ

Ժողովրդական ստեղծագործության Տան ֆոլկլորային բաժինը վերջին ամիսներին հավաքել է ավելի քան 400 ժողովրդական ու գուսանական նոր երգեր։ Այդ երգերը նվիրված են սովետական ժողովրդի մեծ առաջնորդ Ստալինին, սոցիալիստական շինարարությանը, կոլխոզային կյանքին, սովետական երիտասարդությանը։

Ֆոլկլորիստ Ս. Խանզադյանը 47 երգ հավաքել է Հոկտեմբերյանի շրջանում։ Դրանց մեծ մասը գրի է առնված բամբակազտիչ գործարանի աշխատակցուհի Մ. Արտեմյանի խոսքերից, ինչպես օրինակ «Մեր դաշտերը», «Երգ Թալինի մասին», «Աշխատանքային», «Բամբակի արտում»։

Կոմպոզիտոր Ա. Խաչատրյանը Ազիզբեկովի և Նոր Բայազետի շրջաններում գրի է առել 50 երգ՝ ժամանակակից թեմաներով։ Երաժշտական ֆոլկլորի գրառման ուղղությամբ աշխատող ֆոլկլորիստուհի Վ. Պետրոսյանը Ջանգիբասարում, Լենինականում ու Ախուրյանում հավաքել է ավելի քան 30 երգ։

Ժողովրդական ստեղծագործության Տունը հրատարակության է պատրաստում գուսանական նոր երգերի ժողովածու։

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԳՐԱՌՈՒՄ

Ապարանի շրջանից Երևան է վերադարձել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի արվեստի պատմության ու տեսության սեկտորի արշավախումբը։

Արշավախումբը հավաքել ու գրի է առել ավելի քան 300 հայկական ժողովրդական երգեր,— աշխատանքային, կենցաղային, պարային, լիրիկական և այլն։

Հատկապես ուշադրության արժանի են սովետական շրջանի երգերը, որոնք աշխույժ ու կենսուրախ են։

Ներկայումս սեկտորը կատարում է հավաքված նյութի ուսումնասիրություն։

## ՔԱՂԱՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Երևանի Քաղաքային Սովետի գործկոմի ճարտարապետության գործերի բաժնի մի խումբ աշխատողներ, ճարտարապետ Ն. Զարգարյանի ղեկավարությամբ, ներկայումս աշխատում են քաղաքի պլանավորման մանրամասն նախագծեր կազմելու վրա։

Նախագծեր են կազմվում հայրենադարձ հայերի համար մի շարք ավաններ կառուցելու, ինչպես նաև Աբովյան ու Նալբանդյան փողոցներում և Միկոյանի պողոտայում կառուցման անսամբլը պահպանելու համար։

## ՆՈՐ ԿԱՄՈՒՐՋ ԶԱՆԳՈՒ ԳԵՏԻ ՎՐԱ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը հաստատեց Զանգու գետի վրա երկաթ բետոնից կամարակապ կամուրջ կառուցելու նախագծային առաջադրանքը։ Նոր կամուրջը

քաղաքի Արաբկիրի շրջանը կապելու է Բերիայի շրջանի տերիտորիայի աջափյնա մասի հետ, որտեղ նախատեսվում է հետագայում խոշոր բնակարանային շինարարություն կատարել։

Կամրջի վրայից դեպի նոր շինարարության վայրը տրամվայի գիծ է անցկացվելու։

## ԱՎԱՐՏՎՈՒՄ Է ՄԵՂՐՈՒ ՇՐՋԱՆԻ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ

Վերջին տարիներս Մեղրու շրջանում կոլխոզների էլեկտրիֆիկացման գծով մեծ աշխատանք է տարվել։ Շրջանի 16 կոլխոզներից 13-ը արդեն էլեկտրիֆիկացված են։ Օրերս էլեկտրիֆիկացման աշխատանքները ավարտվեցին Վանք և Կալեր գյուղերում։ Բոլոր հասարակական շենքերում ու կոլխոզնիկների տներում վառվեցին էլեկտրական լամպերը։

Թափով առաջ են տարվում Ալդարա և Շվանիձոր գյուղերի էլեկտրիֆիկացման աշխատանքները։ Արդեն ավարտվել են սյուների տնկումը և էլեկտրահաղորդ գծերի կառուցումը։

Այս բոլորից հետո Մեղրու շրջանը կվերածվի համատարած էլեկտրիֆիկացման շրջանի։

Կուրիս և Կարճևան գյուղերի կոլխոզները վերջին ամիսների ընթացքում կառուցել են էլեկտրաղացներ։ Այս և հաջորդ տարում էլեկտրաղացներ են կառուցվելու նաև Լիճք, Տաշտուն, Ալդարա և Կալեր գյուղերում։

Լեհվազ, Վարդանաձոր, Կարճևան, Կուրիս և Լիճք գյուղերում շահագործման են հանձնըվել ստացիոնար կինոսարքավորումներ։

## ԱԿՆԵՐԳԷՍ

Գորիսի շրջանի կոլխոզնիկները որոշել են կառուցել երեք հիդրո-էլեկտրակայան, ընդ որում դրանցից Շինուհայրգէսը և Տաթևգէսը պետք է կառուցվեն Որոտան գետի, իսկ երրորդը— բարձր լեռներից հոսող Ակներ կոչված աղբյուրների օգտագործման բազայի վրա։

Ակներգէսը կառուցվելու է երկու հերթում և կասկադի ձևով։ Առաջին հերթին էլեկտրակայան է կառուցվելու լեռան ստորոտում՝ Բռուն գյուղի մոտ, իսկ երկրորդ հերթին առաջինից մի կիլոմետր ցած գտնվող վայրում։

Ակներգէսի առաջին հերթը էլեկտրաէներգիայով կապահովի քաղաքը, մեխանիկական գործարանը, տրիկոտաժի ֆաբրիկան և այլ ձեռնարկներ։

Էլեկտրական լուսավորություն կստանան Վերիշեն, Բռուն, Գորիս, Բայանդուր, Խոզնավար և Խնածախ գյուղերը։

Ակներգէսի շինարարությունը սկսվել է սույն տարվա սեպտեմբերին։ Կարճ ժամանակամիջոցում մեծ աշխատանք է կատարված։ Ավարտված է 3,5 կիլոմետր երկարությամբ ջրամատույց ջրանցքի կառուցումը։ Ներկայումս շարվում են ԳԷՍ-ի շենքի պատերը։ Բռուն, Գորիս, Վերիշեն, Բայանդուր գյուղերից յուրաքանչյուր օր աշխատանքի են դուրս գալիս 200 կոլխոզնիկ։

Շրջանի կոլխոզնիկներին և Գորիս քաղաքի բնակիչներին մի միտք է զբաղեցնում—հիդրոկայանը շահագործման հանձնել 1949 թվին և այդ նույն ժամկետում էլ ավարտել երկրորդ հերթի շինարարությունը, որպեսզի էլեկտրաէներգիայով ապահովվեն նաև Տեղ, Կոռնիձոր, Խնձորեսկ, Քարաշեն, Ազատաշեն, Կյորու և Մաղանջուղ գյուղերը։

Նախատեսված է 1950 թվին շահագործման հանձնել Շինուհայրգէսը և Տաթևգէսը ու այսպիսով ավարտել Գորիսի շրջանի էլեկտրիֆիկացիան։

## ՂԱՓԱՆԸ ԱՅՍՕՐ

Սովետական իշխանության տարիներին Ղափանը դարձել է Սովետական Հայաստանի արդյունաբերական ու կուլտուրական կենտրոններից մեկը։ Նոր տեխնիկայի ու գիտության բազայի վրա վերակառուցվել են հանքերը, էլեկտրաէներգիան մեծ կիրառություն է գտել հանքահորերում։ Աճել է և տեղական արդյունաբերությունը։ Տեղարդկոմբինատը ընդգրկում է աղյուսա-կղմինդրային, թիթեղագործական, սայլաշինարարական, կոշկակարական, կարի և այլ արտադրական ձեռնարկներ, որոնք տարեկան միլիոն ռուբլուց ավելի արտադրանք են տալիս։ Կառուցվում են մեխանիկական և կոնսերվի գործարաններ։

Լայն ծավալ է ընդունել կոմունալ-կուլտուրական շինարարությունը։ Նախկին խրճիթների տեղում այժմ բարձրանում են գեղեցիկ բազմահարկ տները։ Բնակելի տարածությունը հասել է 35 հազար քառակուսի մետրի՝ 1920 թվի 4 հազարի դիմաց։ 298 բանվորներ և ծառայողներ պետության օժանդակությամբ իրենց համար սեփական տներ են կառուցել։ Կառուցվել են դպրոցներ, կինոթատրոններ ու հիվանդանոցներ։ Քաղաքի հյուսիսային մասում նոր թաղամաս է կառուցվում, ուր մոտ ժամանակներս շահագործման կհանձնվեն ութը նոր տներ, կառուցված արտասահմանից վերադարձած հայերի համար։

Աճում է Ղափանի ազգաբնակչությունը. 1921 թվի համեմատությամբ բնակիչների թիվը աճել է ավելի քան 10 անգամ։ Քաղաքում և բանվորական ավաններում կա 4 միջնակարգ և 6 տարրական դպրոց, որտեղ սովորում է 3140 աշակերտ։ Բացի այդ գործում են երկու միջնակարգ դպրոց՝ բանվոր երիտասարդության համար և երկու յոթամյա դպրոց՝ մեծահասակների համար. այս դպրոցներում սովորում են 248 մարդ։ Ղափանում կան 9 մանկապարտեզ ու մանկամսուր։

Դպրոցներում դասավանդում են 167 ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնցից 46-ը բարձրագույն կրթությամբ։



Ղափան. մի տեսարան

Բարեկարգված են թե քաղաքի փողոցները և թե դեպի արդյունաբերական հիմնարկներն ու բանվորական ավանները տանող ճանապարհները։ Վերջին տարի ու կեսում ասֆալտապատված է 16.500 քառակուսի մետր տարածություն։ Ընդարձակվում ու ասֆալտապատվում է դեպի կայարան տանող ճանապարհը։ Քաղաքային այգին բարեկարգվել ու ընդարձակվել է 1,4 հեկտարով։ 9.300-ից ավելի դեկորատիվ ծառեր են տնկվել քաղաքային այգում ու փողոցների կողքերին։ Բնակիչների ուժերով Դավիթ-բեկի ամրոցի մոտի աղբյուրից ջրմուղ է անցկացված մինչև քաղաքի կենտրոնը. ի պատիվ Հայրենական Մեծ պատերազմում զոհված մարտիկների հուշարձան-աղբյուր է կառուցված։

Մեծ չափով բարելավվել է ազգաբնակչության բուժսպասարկումը։ Ղափանում գործում են լավ սարքավորված մեկ պոլիկլինիկա, 2 հիվանդանոց՝ 115 մահճակալով, ծննդատուն, առկայան, մի քանի բուժկետեր, ամբուլատորիա, 2 դեղատուն։ Բուժհիմնարկներում աշխատում են 19 բժիշկ և 41 մարդուց բաղկացած միջին բժշկական անձնակազմ։

Քաղաքում կան ձմեռային ու ամառային կինոթատրոններ, 8 գրադարան, 5 բանվորական ակումբ և կուլտուրայի տուն։

Քաղաքն ունի ռադիոհանգույց և 1050 ռադիոկետ։ Բոլոր հիմնարկներն ու ձեռնարկները ընդգրկված են հեռախոսային ցանցում։ Հեռախոսներ են դրված նաև շատ բանվորների ու ծառայողների բնակարաններում։

Ներկայումս մշակվում է քաղաքի վերակառուցման գլխավոր պլանը։

## ԷԼԵԿՏՐԱՉԱՓԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Երևանի էլեկտրաչափիչ գործիքների գործարանը յուրացրել է իր հիմնական արտադրանքի թողարկումը։ Գործարանը թողարկել է լաբորատոր գործիքների առաջին խումբը 0,2 և 0,5 կարգի վոլտաչափեր, ամպերաչափեր, վատտաչափեր։ Գործիքների նախնական ստուգումը հիանալի արդյունք է տվել։

## ԱՐԳԵԼԱՎԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Վեդու և Կարաբաղլարի շրջաններում, Սարայբուլաղի լեռնաշղթայի լանջերին տարածվում է 1939 թվից կազմակերպված արգելավայրը։ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Կենդանաբանական ինստիտուտի արշավախումբը արգելավայրում հաշվի է առել 134 տեսակի ողնաշարավոր կենդանիներ։ Ամենամեծ հետաքրքրություն ներկայացնում են քարայծերը և վայրի ոչխարները։ Այս կենդանիները կարող են օգտագործվել ընտանի այծի և ոչխարի մի քանի տեսակների մետիզացիայի համար։

Որսորդական տնտեսության գործերի վարչությունը, որի հսկողության տակ է գտնվում արգելավայրը, ներկայումս այդ կենդանիների հաշվառում է կատարում։

## ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ՄԱՅՐԵՐ

Հայկական ՍՍՌ-ի քաղաքներում ու գյուղերում արձանագրված են 47.500 բազմազավակ մայրեր, որոնց չորս տարվա ընթացքում պետությունը նպաստ է տվել 174 միլիոն ռուբլի։ Տասը և ավելի երեխաներ ունեցող 446 մայրեր արժանացել են «Մայր-հերոսուհի» կոչման, իսկ 47 հազարից ավելի մայրեր էլ պարգևատրվել են «Մայրական փառք» շքանշաններով և մայրության համար մեդալներով։

Պարգևատրված բազմազավակ մայրերի մեջ կան հարյուրավոր հայրենադարձ մայրեր, որոնք հայրենիք են վերադարձել Իրանից, Լիբանանից, Սիրիայից, Եգիպտոսից, Հունաստանից, Ռումինիայից, Ֆրանսիայից և այլ արտասահմանյան երկրներից։

## „ԳԵՐՄԱՆՈ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՁԱԽՈՂՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ“

Հայպետհրատի հրատարակությամբ լույս տեսավ պատմական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյանի «Գերմանո-թուրքական զավթիչների գործակալության ձախողումը Կովկասում» գիրքը։

Գրքի վեց գլուխներում արխիվային չհրապարակված փաստաթղթերի հիման վրա ցույց է տրված Թուրքիայի և նրա դաշնակից Գերմանիայի զավթողական քաղաքականությունը Կովկասի ժողովուրդների նկատմամբ և այդ քաղաքականությունը կենսագործելու համար ստեղծված լրտեսական-դիվերսիոն կազմակերպությունների ձախողումը համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին։

Գրքի 7-րդ՝ «Հայերի բնաջնջման նախապատրաստումը և իմպերիալիզմի գործակալները» գլխում լուսաբանված է, թե ինչպես գերմանական և մյուս իմպերիալիստների գործակալների գիտությամբ ու հավանությամբ Թուրքիան նախապատրաստում էր հայ ժողովրդի բնաջնջումը։

# ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿՅԱՆՔ

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԸ

«ՀԱՍԿ»-ը Երուսաղեմի հայոց մասին հետևյալ տեղեկությունները է հաղորդում՝ քաղված Դռան եպիսկոպոս Գերշ. Տ. Խորեն Սրբազան Բարոյանի Ն. Ս. Օծություն Վեհափառ Հայրապետին մատուցած տեղեկագրերից: Գերշ. Սրբազանը առաջին անգամ Երուսաղեմ է մեկնել մայիսի 6-ին, իր հետ տանելով դրամական օժանդակություն և առատ դեղորայք ու Աթոռ է վերադարձել մայիսի 8-ին: Իսկ երկրորդ անգամ Երուսաղեմ է մեկնել հունիսի 11-ին ու Աթոռ վերադարձել նույն ամսի 17-ին:

ԽՄԲ.

Ա

*Վեհափա՛ռ Տեր,*

*Մայիս 6-ին մեկնեցա Երուսաղեմ։*

*Հաղորդեցի Ամեն. Տ. Կյուրեղ Բ Սրբազան Պատրիարքին Ձեր ողջույնները և հանձնեցի Եգիպտոսի Հ. Բ. Ը. Միության Կեդր. Հանձնաժողովի Պաղեստինի հայ աղետյալներու հատկացուցած 5000 Պաղ. ոսկին, և Լ. Օ. Խաչին ու նույն Բարեգործականին տրամադրած դեղորայքը՝ 4 սնտուկ։*

*Սրբազան Պատրիարքը, Պատուարժան Միաբանությունը և վանք ապաստանած հազարավոր հայեր մեծապես ուրախացան և շատ գոհ մնացին այս եղբայրական օժանդակության համար, որուն այնքան կարիքն ունեին։*

*Ի պատիվ Ս. Հակոբյանց Միաբանության հայտնեմ, որ վանքը իր դռները լայնորեն բացած է ամենուն առջև, առանց դավանական և այլ որևէ խտրության։*

*Հինգ հազարի հասնող ծովածավալ բազմություն մը խռնված է այժմ վանքին մեջ։ Տրամադրելի ամեն տեղ հատկացված է աղետյալներուն. այս նպատակին համար փակված են Ժառանգավորաց և Թարգմանչաց վարժարանները, ուր գաղթականներ տեղավորված են։ Ժողովուրդը լեցված է ուխտավորներու սենյակները, վարդապետաց թաղը, հանդիսասրահները, բակին մեջ, կամարներու ներքև, և կներկայացնեն ողբալի և արգահատելի վիճակ մը։*

*Այցելեցի ամենուն ալ. բոլորն ալ վստահ են, որ պիտի չլքվին իրենց եղբայրակիցներեն և օգնություն պիտի հասնի իրենց։*

*Պատրիարք Սրբազանը կազմած է պարենավորման, մաքրության հսկող, առողջապահական, ջուրի մթերման և այլ հանձնախումբեր՝ Միաբաններե և ժողովուրդեն բաղկացյալ, որոնք ամենայն խղճմտությամբ և ժրաջանությամբ կկատարեն իրենց պարտականությունը։*

*Ցարդ որևէ հիվանդություն պատահած չէ։ Նախազգուշական ամեն մի միջոց ձեռք առած են։ Ցավալի է, որ հայ բժիշկ չունին, կխնդրեն որ բժիշկ մը ղրկվի իրենց՝ գոհացուցիչ պայմաններով։*

*Ժողովուրդը իր պարենը դյուրությամբ կապահովե. արաբական թաղերեն կրնան ունենալ նույնիսկ կանաչեղեն և պտուղներ։ Իրենց պզտիկ խնայողությունները զիրենք պահած է ցարդ։ Ժողովուրդին մեծամասնությունը օր ավուր աշխատող և ապրող ըլլալուն, դրամի պետք ունի։*

*Պատրիարք Սրբազանը, խոհական հեռատեսությամբ մը, շուրջ 2000 Պաղ. ոսկիի ալյուր, պլղուր և այլ ուտեստեղեններ գնած ու ամբարած է ավելի գեշ օրերու գործածության համար։*

*Ամեն. Պատրիարք Սրբազանի վարած իմաստուն քաղաքականությունը ապահոված է բարեկամությունը թե՛ արաբին և թե՛ հրեային։*

*Վանապատկան հասութաբեր մաս մը շենքեր ու խանութներ քանդված են կամ կիսով չափ փլած, իսկ մնացյալներեն ալ կարելի չըլլար վարձքերը գանձել՝ ստեղծված անորոշ կացության հետևանքով։*

*Գաղթականաց Խնամակալ Մարմինը, Պատրիարք Հոր նախագահությանը ներքև, գրած է վեցամսյա պյուտճե մը, կացության*

վատթարանալու պարագային, կարենալ ապրեցնելու համար շուրջ 5000 հոգի։ Ասոր համար նախատեսած են մոտավորապես 5—10 հազար Պաղ. ոսկի։

Պատրիարք Սրբազանը իր Միաբանությունով և Երուսաղեմի հայությունը կխնդրեն Ձեր Վեհափառութենեն և Ձեր միջոցավ ալ Սյուրիո ու Լիբանանի հայութենեն, նյութական օգնության փութալ իրենց՝ մինչև որ վերահաստատվի բաղձալի խաղաղությունը։

Բ

Հունիս 11-ին, երկրորդ անգամ ըլլալով, մեկնեցա Երուսաղեմ, Եգիպտոսի Հ. Բ. Ը. Միության Կեդր. Հանձնաժողովը Երուսաղեմի հայ աղետյալ և կարոտյալ տրամադրած գումարին երկրորդ մասը՝ 3530 Պաղ. ոսկին հանձնեցի Ամեն. Տ. Կյուրեղ Բ Պատրիարքին և հայտնեցի Ձեր Վեհափառության հայրական ողջույններն ու օրհնությունները։

Ստորև, ամփոփ կերպով, կներկայացնեմ մայիս 15-են մինչև հունիս 15 Ս. Հակոբա Միաբանության և ի Ս. Հակոբ ապաստանած հազարավոր հայորդիներու կրած դառն փորձությունները։

Ս. Հակոբա վանքը և մասնավորաբար վանապատկան կալվածները մեծ վնասներու և կորուստներու ենթարկված են դժբախտաբար։ Ս. Աթոռո համար, ցարդ, ուղղակի ոչ մեկ նպաստ եղած է և Միաբանությունը խիստ խնայողությամբ կկառավարվի։ Ստեղծված կացության բերումով անկարելի եղած է կալվածներու եկամուտները գանձել։ Կսպասվի օգնության բարերար ձեռքերու՝ թույլ չտալու, որ պարտքի ճիրաններու ներքև մխրճվի վանքը։

Գնահատելի են Միաբանության և Խնամակալության բոլորանվեր աշխատանքները՝ բուժական, առողջապահական, պարենավորման և սնունդի պատրաստության ու բաշխման գործին մեջ։

Մեկ ամսվան փորձառությունը ցույց տված է, որ կարոտյալներու թիվը շատ ավելի եղած է և պիտի ըլլա, քան ինչ որ այս Խնամակալությունը նախապես ենթադրած էր։

Ս. Հակոբա պատսպարյալներուն կեսեն ավելին ավուր հացի կարոտ վիճակի մեջ են. ժամանակե մը ի վեր օրական մոտավորապես 1200 հոգիի կեսօրվան ճաշ և հաց կտրվի։ Ս. Հակոբ գտնված միջոցիս, անձամբ ներկա կըլլայի օրական մեկ ժամ ճաշի բաշխման. տասնյակ հարյուրավոր չքավոր կարոտյալներ, կերակուրի ամաններ ի ձեռին, իրարու ետև շարված, պոչ բռնած, կուգան հսկա կաթսաներու մեջ եփված ճաշեն իրենց բաժինը առնելու։ Կերակուրի և հացի բաշխման այս գործին կհսկե Պարենավորման Հանձնախումբը կանոնավորապես, եթե ներկա անորոշ կացությունը շարունակվի։ Վանքը պիտի ստիպվի ստվար թիվով հայերու սնունդ տալ և որովհետև նյութական անձկության մեջ է այժմ Ս. Աթոռը, Ս. Պատրիարքը թախանձագին կխնդրե Ձեր Վեհափառութենեն, Հ. Բ. Ը. Միության և արտասահմանի հայության դրամական օգնությունը փութացնել ի Ս. Հակոբ։ Վանքին մոտիկ արաբական շուկայեն կարելի է սննդանյութ հայթայթել, եթե դրամ ըլլա։

Վանքեն ներս էլեկտրականություն և ջուր չկա։ Սարինջներու և հորերու ջուրը կգործածեն խիստ խնայողությամբ և բաժնեչափով. շաբաթը անձ գլուխ մեկ թիթեղ ըմպելի ջուր և երկու թիթեղ ալ գործածելի ջուր կտրվի։

Երիտասարդությունը կազմակերպված է. զոհաբերության մեծ ոգիով, գիշեր-ցերեկ անդադար հսկողության պարտականություններ կկատարեն և առաջքը կառնեն հավանական ամեն տեսակ անպատեհությունները։

Պաղեստինի զանազան մասերուն մեջ մեր ունեցած 16 կորուստներեն հետո, մայիս 15-են ասդին, Վանքին շրջապատին մեջ և քովերը՝ ռումբերու պայթումներեն և հրազեններու փամփուշտներեն ունեցած ենք 111 հայ վիրավորյալներ. ասոնցմե 12 հոգին մեռած, երկուքը՝ աշխատավոր միաբան։ Նույն սահմաններուն մեջ վիրավորված են նաև 68 հոգի, որոնցմե 3-ը մեռած են։ Վանքին վրա ինկած են 100-ե ավելի ռումբեր, որոնցմե չորսը՝ մեծ։

Վանքին Դարմանատան օրագրութենեն քաղելով կուտամ հետևյալ թվանշանները, ցույց տալու թե ո՛րքան օգտակար եղած են Պեյրութեն և Կահիրեեն հասած դեղերը։

Դարմանատան մեջ մայիս 4-են մինչև հունիս 7, 166 վիրավորյալներ ընդունված են, շատերու մարմինը ռումբի կտորներով ծակծկված, և 1252 դարմանումներ եղած։ Պեյրութի Հ. Բ. Ը. Միության ղրկած վիրաբույժ-բժիշկը, Տոքտ. Բյուզանդ Գրիգորյան օրհնություն մը եղած է մեր վիրավորյալներուն համար։ Տոքտ. Գրիգորյանի և Դարմանատան հիվանդապահուհիներու միջոցավ 2130 հոգի հակաթիֆոյիտի շիճուկ ընդունած են. նույնպես 50 փոքրիկներ ծաղկախտի պատվաստ ընդունած են. իսկ 250 այլ հիվանդներ ևս դարմանված են Հարգելի Տոքթորին միջոցավ։

Նյութական օժանդակություն և դեղորայք շատ անհրաժեշտ են այժմ Ս. Հակոբա աղետյալ-կարոտյալներուն համար։

# ՎԱԶԳԵՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՎ Հ. ՊԱՊՈՅԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ

Հունիս 10-ին Հայաստանեն Բուքրեշ ժամանեցին Ռումանահայ թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Վազգեն ծայրագույն վարդապետ և «Հայաստանեան Ճակատ» կազմակերպության Կեդր. Կոմիտեի ընդհանուր քարտուղար Հ. Պապոյան։ Օդանավակայանը հարգելի պատվիրակները դիմավորելու եկած էին Սովետ հյուպատոս ընկ. Ելչիբեկյան, Ռումեն Պատրիարքարանի կողմե Լեոն քահանան, «Հ. Ճ.»-ի նախագահ ընկ. Վ. Դանիելյան, Կեդր. Կոմիտեի բոլոր ընկերները, Թեմական և Թաղական խորհուրդները՝ իրենց ամբողջ կազմով, «Հ. Ճ.»-ի Տեղ. և Ներգաղթի կոմիտեներու և բոլոր բաժիններու բազմաթիվ ընկերներ։ Բոլոր ներկաները բարի գալուստ մաղթեցին հայրենիքեն վերադարձող այս բախտավոր կրոնականներուն. իրենց ծաղկեփունջեր մատուցվեցան և կարճ տեսություններ հետո բոլորը մեքենաներով ուղղվեցան դեպի Հայոց եկեղեցին, ուր շարականի մեղեդիներով ու պատշաճ արարողությամբ Վազգեն ծայրագույն վարդապետ առաջնորդվեցավ դեպի Սեղան։ Մեկ վարկյանեն ամբողջ եկեղեցին լեցված էր հայրենաբաղձ հայրենակիցներու բազմությամբ։ Կարճ աղոթքե մը հետո եկեղեցվո ավագերեց Տ. Քիլիմյան քահանա ողջույնի և բարի գալուստի խոսք ուղղեց Տ. Վազգեն ծայրագույն վարդապետին, մաղթելով անոր գործունեության նոր ավյուն։

Անմիջապես հետո, խոսք առնելով Տ. Լեոն քահանան Ռումանիո Ս. Պատրիարք Յուստինյանի ողջույնները հաղորդեց Տ. Վազգեն ծայրագույն վարդապետին և ամբողջ ռումանահայ գաղութին։ Ապա Տ. Լեոն վեր հանեց Տ. Վազգեն ծայրագույն վարդապետի մտավոր և բարոյական արժանիքները, հայտնելով միաժամանակ, թե ինք դավանության նախարարության մեջ շարունակ պաշտպանած է հայ եկեղեցվո շահերը։ Ապա իր խնդակցությունները հայտնեց ռումանահայոց Առաջնորդական Փոխանորդին իր աստիճանի բարձրացման առթիվ։ Վստահ եմ միանգամայն, եզրակացուց Տ. Լեոն քահանան, թե Հայոց և Ռումեն եկեղեցիները նաև հետ այսու պիտի շարունակեն իրենց եղբայրական գործակցությունը, և առ այս, ըսավ ան, կմատուցանեմ Ձեզի, վարդապետ եղբայր, մեր Ս. Պատրիարքի այս նվերը՝ աստվածամոր այս պատկերը, զոր հանգուցյալ Պատրիարք Միրոն իր այցելության ատեն ստացած է Երուսաղեմի հայոց Ս. Պատրիարքեն։ Այս ըսելով Տ. Լեոն պատկերը հանձնեց Տ. Վազգեն ծայրագույն վարդապետին և երկու հոգևորականները ողջագուրվեցան։

Ապա խոսեցավ Թեմական խորհուրդի կողմե փաստ. Գ. Աստվածատուրով, որ իր խնդակցությունը հայտնելով Տ. Վազգեն ծայրագույն վարդապետի և «Հ. Ճ.»-ի պատվիրակ ընկ. Հ. Պապոյանի վերադարձի առթիվ, խնդրեց հանուն ամբողջ ռումանահայ թեմի ընդունել Թեմ. խորհուրդի լավագույն մաղթանքները։

Այնուհետև խոսք առավ Բուքրեշի քաղականության նախագահ ընկ. Գ. Տեիրմենճյան, որ հանուն Թաղ. խորհուրդի ողջունեց Տ. Վազգեն ծայրագույն վարդապետի և «Հ. Ճ.»-ի ընդհանուր քարտուղար ընկ. Հ. Պապոյանի ժամանումը, հայտնելով հանուն Բուքրեշի հայ համայնքին Թաղ. խորհուրդի շնորհավորությունները Տ. Վազգենի ծայրագունության աստիճան ստանալու առթիվ։

Այս բոլոր ողջույններուն պատասխանեց Տ. Վազգեն ծայրագույն վարդապետ նշմարելի հուզումով մը։ Ան ըսավ մոտավորապես հետևյալը. Ձեր սիրո և հարգանքի ողջույնները տարինք Հայրենիքին և Ս. Էջմիածնին և փոխադարձաբար ձեզի կբերեմ մեր սիրելի Հայաստանի ողջույնները և Ամենայն Հայոց Սրբազան Կաթողիկոսի օրհնությունները։ Ապա Տ. Լեոն քահանային դառնալով Տ. Վազգեն ծայրագույն վարդապետ ռումեն լեզվով իր խորին շնորհակալությունները հայտնեց նոր օծյալ Յուստինիան Մարինա Ս. Պատրիարքին իր այս բարձր ուշադրության առթիվ։ Ինք և ամբողջ ռումանահայ գաղութը միշտ ալ հարգանքի զգացմունքներ են ունեցած Ռումեն Օրթոդոքս եկեղեցվո հանդեպ, ըսավ Տ. Վազգեն ծայրագույն վարդապետ, և խնդրեց Տ. Լեոնեն, որ իր հարգալից շնորհավորությունները ու շնորհակալությունները հայտնե Ս. Պատրիարքին։ Անշուշտ, ըսավ, առաջին իսկ առիթով պիտի ներկայանամ Ս. Պատրիարքին, փոխանցելու անոր մեր Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունները և եղբայրական ողջույնները։

Ապա Տ. Վազգեն ծայրագույն վարդապետ մեկ-մեկ իր շնորհակալությունները հայտնեց ավագերեց Տ. Քիլիմյան ավագ քահանային, Թեմ. և Թաղ. խորհուրդներուն, իրենց սիրո և հարգանքի ողջույններու առթիվ։

Այնուհետև խոսքը ներկա ժողովուրդին ուղղելով Տ. Վազգեն ծայրագույն վարդա-

պետ ըսաւ.— «Սիրելի ժողովուրդ, ամենամեծ հուզմունքով արտասանելիք խօսքերս են՝ Սովետ. Հայրենիք, Հայ ժողովուրդ, և Ս. Էջմիածին, որոնց ջերմ ողջույնները կբերեմ ձեզի։ Այս երեքը՝ Հայրենիք, ժողովուրդ և Ս. Էջմիածին երրորդությունը մեկ միություն է։ Անշուշտ պիտի ուզեիք հարցնել ինծի մեր Ս. Կաթողիկոսի մասին։ Ան այսօր 80 տարեկան է, բայց ես զինքը գտա ավելի առողջ և թարմ, քան նույնիսկ ասկե 3 տարի առաջ։ Ան վճռած է դեռ երկար տարիներ հովվելու Հայոց եկեղեցին։ Ան ունի դեռ շատ և մեծ ծրագիրներ։

Ինչ կվերաբերի մեր սիրելի Հայրենիքին, անոր մասին դեռ շատ երկար պիտի խոսենք ես և Պ. Պապոյանը, որովհետև մենք երկուքս միասին տեսանք, միասին զգացինք և միասին հուզվեցանք մեր Հայրենիքի վերելքին ի տես։ Երևանը այսօր, համեմատած 3 տարի առաջվա հետ, անճանաչելի է դարձած իր շրջակա կանաչազարդ բլուրներով, նոր ավաններով, նոր փողոցներու և նոր տուներու շինարարությամբ։ Երևանը այս 3 տարվա մեջ 30 առ հարյուրով ավելի մեծցած և 50 առ հարյուրով ավելի գեղեցկացած է։

Վերջացնելե առաջ, շնորհակալություններս կհայտնեմ, իմ և Պ. Պապոյանի կողմե, բոլորիդ այս գեղեցիկ և սրտառուչ ընդունելության համար։ Մասնավոր և հարգալից շնորհակալություններ ունինք արտահայտելու հոս ներկա Սովետ հյուպատոս Պ. Էլլիբեկյանին, որուն պարտական ենք մեր այս այցելության դյուրությունները, և կխնդրենք իրմե, որ մեր հարգանքներու և շնորհակալություններու թարգմանը հանդիսանա Պուքրեշի Սովետ դեսպան Պ. Քավթարաձեի քով։

Տ. Վազգեն ծայրագույն վարդապետ վերջացուց իր խոսքը օրհնելով ժողովուրդը։

Այնուհետև պաշտոնական մարմինները հրավիրվեցան Առաջնորդարան, ուր տեղի ունեցավ կարճ ընդունելություն մը, որու ընթացքին շամպայնի բաժակներ առաջարկվեցան հետևյալ կարգով.—

Տ. Վազգեն ծայրագույն վարդապետ առաջարկեց խմել կենացը Սովետ իշխանության, որու արժանավոր ներկայացուցիչը ըսավ, ունինք մեր մեջ հանձին Սովետ հյուպատոս Պ. Էլլիբեկյանի (կեցցեներ), Մեր Հայրենիքի երջանկությանը— այս բացականչությամբ վերջացուց Տ. Վազգեն ծայրագույն վարդապետ իր հակիրճ խոսքը։

Երկրորդ բաժակը առաջարկեց «Հ. Ճ.»-ի նախագահ ընկ. Վ. Դանիելյան, որ հանուն մեր կազմակերպության բարի գալուստ մաղթեց Տ. Վազգեն ծայրագույն վարդապետին և շնորհակալություններ հայտնեց Հայրենիքեն բերած իր բարի լուրերուն համար։ Ռումանահայ գաղութը,— ըսավ ընկ. նախագահը,— Ձեր մասին այն կարծիքն ունի, որ Դուք միանգամայն արժանի եք այն ուշադրության, որ Ձեզի ընծայած է Ամենայն Հայոց Ս. Կաթողիկոսը։ Բարի եկաք, Առաջնորդ Հայր (ծափեր)։

Ապա խոսք առավ ընկ. Հ. Պապոյան, որ արտակարգ հուզված վիճակի մը մեջ ըսավ հետևյալը.— «Ես ալ անկեղծ շնորհակալություններ կհայտնեմ ձեզ բոլորիդ այս ընդունելության առթիվ։ Իմ ալ սրտագին շնորհակալության առաջին խոսքս կուղղվի Սովետ իշխանության և անոր հոս ներկա եղող ներկայացուցիչին՝ ընկ. Էլլիբեկյանին։ Շնորհակալություն նաև Թեմ. և Թաղ. խորհուրդներուն և ավագերեց Հոր ու բոլորիդ։ Այս նույն խանդավառ զգացմունքներով մեզի դիմավորեցին մեր Հայրենիքին մեջ։ Դուք գիտեք, որ մենք պայքարի մարդիկ ենք, բայց եղան մեկե ավելի առիթներ, երբ մենք մեր Հայրենիքին մեջ բազմաթիվ առիթներով խորապես հուզվեցանք։ (Այս խոսքերը արտասանելու ատեն ընկ. Պապոյանի աչքերը արցունքով լեցվեցան և իր ձայնը սկսավ խեղդվիլ)։ Մեր ռումանահայ ներգաղթողները Հայաստանի ամեն անկյուններեն եկան մեզի տեսնելու և անոնք մեզի հուզեցին խորապես։

Ես շատ հուզվեցա մանավանդ մեր պետական վարիչներու հոգածութենեն՝ մեր ներգաղթողներու հանդեպ։ Ես տեսա պատրաստ տուներ, որոնք կազմ ու պատրաստ կսպասեն ներգաղթողներու։ Անշուշտ դեռ շատ ու շատ պատմելիքներ ունինք։ Միայն կուզեմ կրկնել անգամ մըն ալ, թե մենք եղբայրական աննկարագրելի ընդունելության հանդիպեցանք մեր Հայրենիքին մեջ։ Այս բոլորը, անշուշտ, մեր անձին հանդեպ եղած վերաբերմունք մը չէր, այլ անոնք սիրո արտահայտություններ էին արտասահմանի և մասնավորապես Ռումանիո հայության հանդեպ։

Արդ,— եզրափակեց ընկ. Պապոյանը,— մեր գաղութի ղեկավարներուն կիյնա այն պատիվը, զոր կվայելեն մեր ռումանահայ եղբայրները Հայաստանի մեջ։ Մեր Հայրենիքի կառավարության վրա շատ լավ տպավորություն ձգած է մեր գաղութի ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃԱԿԱՏ ունենալը։ Դեռ ավելի երկար պիտի խոսիմ հառաջիկա օրերուն։ Առ այժմ այսքանս (ծափեր)։

Պապոյանի այս հուզիչ խոսքը ռումաներենի թարգմանեց փաստ. Սրապիոնյան։

## ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐԸ

*Աղեքսանդրիո «Արաքս»-են կտեղեկանանք, թե Պ. Ներսես Խուտավերտյան Երուսաղեմ գտնված ատեն Անթիլիասի Վեհափառ Կաթողիկոսին հանձնած է իր քով գտնված Կոմիտասի անտիպ գործերը,— երգ, նոթագրություն և հավաքագրություն ժողովրդական երգերու՝ հայկական ձայնագրությամբ։*

*Հարգելի երաժշտապետը դեռ իր քով պահած ունի Կոմիտասի ուղղակի ձեռագիրը եղող քանի մը անտիպ գործեր, զորս խնամքով կպահե։*

*Վեհափառին հանձնված 45 կտորները բնագրերեն կատարված ընդօրինակություններ են, որոնց կարգին կան Կոմիտասի դպրոցական շրջանին ըրած վարժությունները, ինչպես նաև նամակ մը, որուն մեջ կհիշվի անունը Ամենայն Հայոց արդի Կաթողիկոսին, Կոմիտասի հետ անցուցած պատանեկական կյանքի հիշատակումով։*

(«Հայաստանեայց Եկեղեցի» *թիվ 7, 1948)*

## ՄՈՆԹԱՐԺԻԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

*Մեր փոքրիկ գաղութը հաստատված է 1928-են ի վեր։ Հայերը մեծ մասամբ կաշխատին տեղվույն Հյուչինսոն քաուչուկի հսկա գործարանը, որ ունի մոտավորապես 3—4 հազար գործավոր ։ Մենք հայերս հոս շատ փոքր թիվ մը կկազմենք. պատերազմեն առաջ ունեինք Շալեթի Հայ Ուսումնասիրաց Միություն մը, որուն բուն նպատակն էր զարկ տալ հայ փոքրիկներու դաստիարակությանը. ունեինք դպրոց մը 40—50 աշակերտով։ Պատերազմեն անմիջապես հետո կազմեցինք Ֆ. Հ. Ա. Ը. Միության մասնաճյուղ մը և անոր կողքին Հայ Երիտասարդներու Միություն մը, վառ պահելով հայրենիքի սերը մեր սրտերուն մեջ։ Մեր գաղութը ոչ մեկ հայրենակցական միություն ունի։ Բոլորը մեկ մարդու պես, առանց խտրության, կանգնած են մեկ նպատակի շուրջ, որ է՝ մեր սիրելի հայրենիքը։ Ամբողջ գաղութի հայերը անխտիր հավաքված են Հ. Ա. Ը. Միության շուրջը հայրենիքի հարազատ գաղափարով։*

*Մեր գաղութը զզվանքով կնայի մեր հայրենիքին դավող թշնամի մարդոց։*

*Մեր գաղութեն անցյալ տարի յոթը ընտանիք մեկնեցան հայրենիք, իսկ մաս մըն ալ Փարիզ և այլուր։ Այժմ ունինք 15—20 ընտանիք, որոնց ամենագեղեցիկ երազն է ուշ կամ կանուխ մեկնիլ հայրենիք։*

Գ. ՊԱԼՅԱՆ

(«Ժողովուրդ» 24 սեպտ. 1948 *թ.)*

# «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1948 ԹՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

(Ըստ համարների)

## 1. ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ

*1.* Կոնդակ Ամանորյա ողջույնի և Հայրապետական հորդորի:

*2.* Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի Կոնդակը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության:

*3.* Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի գրությունը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Վարիչ-Տնօրեն Վսեմաշուք Տիար Վահան Մալեզյանին:

*4.* Արտասահմանյան հայ հոգևորականությունը Սովետական Հայաստանի 27-րդ տարեդարձի մասին.— ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ.— *Պատմական օրվան մը նշանակությունը։* ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— *Արտասահմանի մեջ Հայ եկեղեցին Հայաստանի հոգևոր կայսրությունն է։* ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼՃՅԱՆ.— *Նոյեմբերի 29-ին, Հայաստանյան ճակատի Պուքրեշում կազմակերպված փառատոնին, արտասանած ճառերը։*

*5.* Կաթոլիկ եկեղեցին կպառակտե հայրենադարձ հայ ընտանիքը.— *Կաթոլիկներ կարգիլեն Ջոլաքյանի փոքրիկներու մեկնումը հայրենիք. Ամերիկահայոց Ս. Առաջնորդը կստանձնե դատի պաշտպանությունը. Վերադարձրեք իմ երեխաներին.— բաց նամակ Նյու-Յորքի նահանգի գերագույն դատարանի անդամ Լըմբարդին. Խմբագրության կողմից։*

*6.* ՃԵՄԱՐԱՆՑԻ.— Բեթղեհեմի Ս. Մանուկը:

*7.* Մայր Աթոռ.— *Հայրապետական հանդիսավոր մաղթանք Ամանորի առթիվ։ Ս. Պատարագ Ճրագալույցի երեկոյան։ Ջրօրհնյաց հանդեսի արարողությունը։ Ամանորի և Ս. Ծննդյան տոնի առթիվ շնորհավորական հեռագրերի ստացում։ Հանդիսավոր Պատարագ Վարդանանց տոնի առթիվ։ Վարդանանց տոնին նվիրված գրական-գեղարվեստական երեկույթ Հոգևոր ճեմարանում։ Կոնդակ՝ Ջ. Պ. Զորաբին «Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողով»-ի անդամ հաստատելու մասին։ Կոնդակ՝ Ռ. Գ. Միքայելին «Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողով»-ի անդամ հաստատելու մասին։ Կոնդակ՝ Ս. Քյուլպենկյանին Լոնդոնի «Արգարյան Տրըստ»-ի ավանդապահ հաստատելու մասին։ Տ. Սուրեն եպիսկոպոսի մեկնումը Բաքու—Ադրբեջանի ու Թուրքեստանի թեմի Առաջնորդի պաշտոնով։ Թբիլիսիի թեմի նախկին առաջնորդական փոխանորդ Տեր-Սահակ ավագ քահանա Սահակյանի մահը։*

*8.* Ներսես եպիսկոպոս Աբրահամյան:

*9.* Հոգևոր ճեմարանի սաների անկյուն.— Ք. ԳԵՎՈՐԳՅԱՆ.— *Հայ հոգևորականությունը և Վարդանանց պատերազմը։* Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.— *Վարդանանք։* Հ. ՎԱՐՈՒԺՅԱՆ.— *Ավարայր։*

*10.* Հայաստանյայց եկեղեցին Սփյուռքի մեջ.— *Մայր Աթոռի փոխադրության 500-ամյակի տոնակատարության իմաստը։ Եվրոպայի Հայրապետական Պատվիրակը Վենետիկի մեջ։ Ս. Առաջնորդ Գեր. Տիրան Եպիսկոպս Ներսոյանը Թորոնթոյի մեջ։ Գևորգ քահանա Գասարճյան կարգալույծ։*

*11.* Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի Կոնդակը Գևորգ քահանա Գասարճյանի կարգալուծության մասին:

*12.* Ներգաղթը և հայ հոգևորականությունը.— ՊԱՂԵՍՏԻՆՑԻ.— *Նամակ Պաղեստինից։* ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ.— *Ներգաղթի հանգանակությունը։*

*13.* Հայրենադարձության ուղիով — *Հայերի ժամանումը Ֆրանսիայից։ Մի խումբ հայերի վերադարձը Չինաստանից։*

*14.* Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ.— Հռիփսիմե:

*15.* Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Կոմիտասի կենսագրությանը վերաբերող նյութեր:

*16.* Ա. ԵՐԵՄՅԱՆ.— Էջեր Նոր-Ջուղայի ժողովրդական բանահյուսությունից:

*17.* ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.— Համառոտ տեղեկություն հայոց շարականների մասին:

*18.* Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ:

*19.* Օտարները հայերի և Հայաստանի մասին.— *Ամերիկայի ծերակուտականներ հայկական հարցին ի նպաստ։ Բազմաչարչար*

*հայերը իրենց հայրենի երկիրը կվերադառնան։*

*20.* Սովետական Հայաստանում.— *Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր պետական օպերայի և բալետի թատրոնի 15 տարին։ Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի դելեգացիան Երևանում։ Հայագիտության ամբիոն Թբիլիսիի Ստալինի անվան պետական համալսարանում։ Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության առաջավորներին Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում շնորհելու մասին։ Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության առաջավորների պարգևատրումը։ Տուն սովետական նոր քաղաքացիների համար։ Հայրենադարձ հայերը սովորում են մայրենի լեզուն։ Ցուցահանդես Մոսկվայի Հայկական Կուլտուրայի Տանը։ Ժամանակակից լավագույն կինոսցենարիաների կոնկուրս։ Նոր դոկումենտալ ֆիլմ։ Պարտիզանուհու կիսանդրին։ Պատրաստվում են համամիութենական ցուցահանդեսին։ Ինքնագործ խմբի հաջողությունը։ Գյուղի էլեկտրիֆիկացումը։ Կուլտուրական շինարարության նոր վերելք։ Կոլխոզային հիվանդանոց։ Պոլիտեխնիկ ինստիտուտի նոր շենքը։ Ծածկված շուկայի կառուցում Երևանում։ Կառուցվում է հյուրանոցի մեծ շենք։ Նոր տպարան։*

*20.* Գաղութահայ կյանք.— *Շքեղ ընդունելություն Սովետական հյուպատոսարանի մեջ։ Միջոցների հանգանակություն ԱՄՆ-ում հայերի դեպի Սովետական Հայաստան հայրենադարձության համար։ Բացված է ներգաղթի երկրորդ միլիոն դոլարի համազգային հանգանակությունը։ Ջեկույց Հ. Բ. Ը. Միության։ Բանաձև հայոց հողային հարցի մասին։ Սովետահայ երգիչ Պ. Լիսիցյան կերգե Հունգարիո մեջ։ Գուրգեն Ալեմշահի սիմֆոնիկ նվագահանդեսը Թաուն Հոլի մեջ։ Ռուբեն Մամուլյան Արժենթինի մեջ։ Կիլիկիո ծերունազարդ Հայրապետը, ինչպես նաև պ. պ. Պագալյան, Գալեմքյարյան, Գրիգորյան և Մանվելյան Պատվո Գրով պարգևատրված Սովետ Հայաստանի Գերագույն Սովետի Նախագահության կողմե, Արշակ Ցեթվանյան։ Արմենիա թիպորն— «Վերածնված Հայաստան»։ Հայ նոր բեմադրիչ մը։ Տիրան Եպիսկոպոսի «Երկիր հայրենի» շարժապատկերի մասին։*

## 2. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ.

*1.* Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Զ-ի Կոնդակը՝ Վսեմափայլ Զարեհ Պօղոսի Նուպարին և Վսեմաշուք Առաքել Պօղոսի Նուպարին:

*2.* Մի կարեւոր խնդրի շուրջը:

*3.* Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Զ-ի Կոնդակը՝ Բարեգործական Ընդհանուր Միութեան Հայրենադարձի Հանձնաժողովի և Գործադիր Մարմնի ատենապետներին:

*4.* Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Զ-ի Կոնդակը՝ Արտավազդ Արքեպիսկոպոս Սիւրմէեանին:

*5.* Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Նախագահ Ա. Գարակէօզեանի գրութիւնը:

*6.* Մայր Աթոռ.— *Զատկի ճրագալույցի Ս. Պատարագի մատուցում։ Ս. Պատարագի մատուցում Զատկի օրը։ Շնորհավորանքների մատուցում Վեհափառ Հայրապետին Զատկական տոնի առթիվ։ Զատկական տոների առթիվ Միաբանության անդամների մեկնումը Երևան և Լենինական։ Շնորհավորական հեռագրերի ստացում Քրիստոսի Հարության տոնի առթիվ։ Շնորհավորական հեռագրերի հղում Քրիստոսի Հարության տոնի առթիվ։ Ներգաղթած քահանա Տեր Վաղարշակ Բաղումյանի Թալինի շրջանի Ղըմզլու գյուղի եկեղեցու ծխատեր քահանա կարգվելը։ Ներգաղթած քահանաներ Տեր Գաբրիել Արարյանի և Տեր Գյուտ Միքայելյանի Կոտայքի շրջանի Քանաքեռ գյուղի եկեղեցու ծխատեր քահանաներ կարգվելը։ Ջոլախաչ գյուղի ընծայացու Լևոն Գրիգորյանի քահանա ձեռնադրումը։*

*7.* Հայաստանեայց Եկեղեցին Սփիւռքի մէջ.— *Վեհափառ Գարեգին Ա Կաթողիկոսի հոբելյանական հանդեսը Պուքրեշի մեջ։* ՎԱԶԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ.— *Տանն Կիլիկիո Հայրապետ Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի 80-ամյակը։* Դոկտ. Ա. ՏԻՐԱՑԵԱՆ.— *Ն. Վ. Գարեգին Ա Կաթողիկոսի հոբելյանին առթիվ։ Հայրապետական Պատվիրակի կոչը։*

*8.* ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂՐԻՄԵՑԻ.— Սրբոց Հռիփսիմեանց և Գայիանեանց կոյսերի վկայաբանութիւնը:

*9.* ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.— Համառոտ տեղեկութիւն Հայոց շարականների մասին *(շարունակություն)։*

*10.* ՃԵՄԱՐԱՆՑԻ.— ԺԷ դարի հայոց վերանորոգիչ կաթողիկոսները:

*11.* Ս. ՀԱՆԱՆՏԱՆ.— Հենրի Մարտինը Էջմիածնում 1812 թվին:

*12.* Մ. ՏԷՐ-ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Գանձասար:

*13.* Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Մի «պարտէզ»-ի պատմութիւն:

14. Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ:

15. Հայրենի հարազատ հողի վրա:

16. Օտարները հայերի և Հայաստանի մասին.— *Բոլ Էլուար հայերու մասին: Հայաստանի մասին հրատարակություն մը:*

17. Սովետական Հայաստանում.— *Կոմիտասի արխիվային նոր նյութերը: Արժեքավոր հայտնաբերում: Պատմական թանգարանում: Նկարիչ Հակոբյանի գործերը: Պատանի նկարիչների և քանդակագործների հաջողությունները: Պռոշյանի թանգարանը: Հովհաննես Թումանյանի հիշատակին նվիրված երեկո Մոսկվայում: Տ. Ջուխաճյանի մահվան 50-ամյակին նվիրված երեկո: Երեկո, նվիրված նկարիչ Էդգար Շահինի հիշատակին: Նկարիչ Արշակ Ֆեթվաճյանի ստեղծագործությունների ցուցահանդես: Ակադեմիայի գրադարանը: Երևանի Պետական համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետը: Սունդուկյանի անվան թատրոնի նոր շենքը: Նոր ինստիտուտ: Մանկավարժության պատմության ձեռնարկ: Մեներգների ժողովածու: Դանթեի «Դժոխքը» հայերեն լեզվով: Հայ գեղարվեստական կլասիկ գրականության հրատարակություն: Հերոսուհի մայրեր: Սանատորիա Սևանի կղզում: Նոր հիդրոէլեկտրակայան: Նոր գործարան: Ռադիոընդունիչների գործարան Երևանում: Պանրի գործարան: Էջմիածնի մեխանիկական գործարանը: Կոնսերվի գործարաններ: Էջմիածնի շրջանի գյուղերի և շրջկենտրոնի անտառապատումը: Ալավերդին այսօր: Բուսաբանական այգում: Հայաստանի գինիները: Հացահատիկային տեսակների փորձադաշտ:*

18. Գաղութահայ կյանք.— *Կոմիտասի գործերի նոր գանձեր երևան հանված են: Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս Գարեգին Ա-ի նոր աշխատությունները: Իրանահայու մը նվերը Ս. Էջմիածնին: Դեպի Էջմիածին: Անգլերեն գրող հայ կիներ: Օնիկ Պերպերյանի նվագահանդեսը: Այց մը Ս. Ղազարի վանքին՝ «Բազմավէպ»-ի 100-ամյակի առթիվ: Հայերը Սուրիո և Լիբանանի մեջ: Հայերը Էլազիգի մեջ: Պաղեստինյան հայ գաղութը: Կիպրահայության թիվը:*

## 3. ՄԱՅԻՍ-ՀՈՒՆԻՍ

1. ՀԱԿՈԲ ԱՐԱՄՅԱՆ.— Էջմիածին:

2. ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ.— Եկեղեցին Հայկական:

3. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ի գահակալության երրորդ տարեդարձը:

4. ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ.— Մի բուռ հող:

5. ՀՀԳ-ի թղթակցի զրույցը Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի հետ:

6. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի կոնդակը՝ Տիար Հայկ Գավուքճյանին:

7. Մայր Աթոռ.— *Ս. Պատարագ և մաղթանք Հաղթանակի տոնի օրը: Ս. Պատարագ և Հայրապետական մաղթանք Նորին Ս. Օծության Տ. Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց Ազգընտիր Պատրիարք-Կաթողիկոսի օծման և գահակալության երրորդ տարելիցի առթիվ: Վեհափառ Հայրապետի հեռագիրը Տանն Կիլիկիո Կաթողիկոսին—Կիլիկիո Կաթողիկոսարանում կատարվելիք մյուռոնօրհնության առթիվ: Ս. Պատարագ Համբարձման տոնի օրը և բանախոսություն Հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու նշանակության մասին: Ռումինահայ թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Վազգեն վարդապետի ժամանումը Մայր Աթոռ: Ս Պատարագների մատուցում Ս. Հռիփսիմեի, Ս. Գայիանեի, Ս. Շողակաթի վանքերում Սրբոց Կուսանացն տոնի օրերին: Հանդիսավոր Պատարագ Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի օրը: Հոգևոր ճեմարանի սաների էքսկուրսիան Զվարթնոցում: Հոգևոր ճեմարանի սաների էքսկուրսիան Երևանում: Տարեվերջի քննությունները Հոգևոր ճեմարանում: Հոգևոր ճեմարանի սաների, դասախոսների և Միաբանության անդամների այցելությունը Օշական՝ Սրբոց Թարգմանչացն Սահակա և Մեսրոպա տոնի օրը: Վեհափառ Հայրապետի գրությունը՝ պ. Արտաշես Պոյաճյանին: Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ Ռումինիայի թեմի Կալաց քաղաքի համայնքին: Ռումինահայերի ուղարկած նվերների ստացումը Էջմիածնում:*

8. Ռումինահայ թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Վազգեն վարդապետ Պալճյանի այցելությունը Մայր Աթոռ:

9. Մոսկվայի և Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիի պատվիրակությունը Մայր Աթոռում:

10. Մ. ՄԻՆԱՍՅԱՆ.— Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանը ուսման երրորդ տարում:

11. Կոմիտաս վարդապետի ստեղծագործություններին նվիրված երեկույթ Հոգևոր ճեմարանում:

12. Ռումինահայ «Հայաստանյան Ճակատ» կազմակերպության կենտրոնական վարչության ընդհանուր քարտուղար Հարություն Պապոյանը Երևանում:

13. Հայաստանյայց եկեղեցին Սփյուռքի մեջ.— *Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս Գարեգին Ա-ի ծննդյան 80-ամյա հոբելյանը Ֆրանսիայի մեջ։ Արտավազդ Սյուրմեյան Արքեպիսկոպոսի քառասնամյա գործունեության հոբելյանը։ Հայրապետական Աթոռի Սսեն Էջմիածին փոխադրության 500-ամյակի հանդեսը Նյու-Յորքում։ Գերապատիվ Տիրան Եպիսկոպոս Ներսոյան Մայեմիի մեջ։ Անթիլիասի ուխտի օրը։*

14. Հայրենի հարազատ հողի վրա.—*Բնակարաններ հայրենադարձների համար։ Հայրենադարձ հայերը կառուցում են բնակարաններ։ 2818 սենյակ հայրենադարձների համար։ Նոր շենքեր։ Մեծ կարևորություն ունեցող խնդիր։ Նոր Կյանք գյուղում։ Հայրենադարձ շքանշանակիրը։ Հայրենադարձ էնտուզիաստների ընտանիքը։ Հայրենադարձները արտադրության առաջավորներ։ Հայրենադարձ գորգագործները։ Ժողովրդական ստեղծագործության վարպետը։ Վերածնված Հայաստան։*

15, Հայրենադարձության ուղիով.— *Հայերի մի խմբի մեկնումը Ռումինիայից Սովետական Հայաստան։ Հայերի նոր խմբի ժամանումը։*

16. Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ: *Թող պապի մասին։*

17. ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.— Խաչատուր Աբովյանին վերաբերող նորագյուտ մի վավերականի առթիվ:

18. Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ.— Էջմիածին:

19. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Կենսագրական նյութեր Միքայել Նալբանդյանի մասին:

20. Ս. Քոլանջյան.—Ռումանահայոց մշակի գանձարան «Հայ Մշակույթի Տունը»:

21. Օտարները հայերի և Հայաստանի մասին.— *Հայրենադարձը և անգլուհիի մը նամակը իր հայ ամուսինին։*

22. Սովետական Հայաստանում.— *Պերճ Պռոշյանի Տուն-թանգարանի բացումը։ Թումանյանի Տուն-թանգարանում։ Ցուցահանդես նվիրված Րաֆֆու մահվան 60-ամյակին։ Հայ ժողովրդի նոր պատմության բաժին։ Ալեքսանդր Սպենդիարյանի մահվան 20-ամյակը։ Ստալինյան մրցանակի շնորհում։ Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների համատեղ սեսիան։ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հաջողությունները։ Ինքնուս արվեստի հաջողությունները։ Հայաստանի պետական շագնվագախմբի 10-ամյակը։ Հնագիտական պեղումներ։ Պեղումներ Դվինում։ Նոր էլեկտրակայան։ Գործի դրվեց միկրոգէսը։ Կոնսերվի գործարան։ Ուզբեկական գրականության հիմնադիր Ալիշեր Նավոիի ծննդյան 500-ամյակը։*

23. Գաղութահայ կյանք.— Վ. ՀԱԿՈԲՅԱՆ.— *«Մի անհայտ ձեռագիր տաղարան»։* ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅ ՄԸ.— *Կարտինալ Աղաջանյանի հովուական Բ թուղթին առթիվ։* Զ. Ռ.— *Հարգանքի երեկույթ Ռեզիստանսի հայ անմահ զոհերու հիշատակին։ Կարևոր կտակ մը։ Զարեհ պեյ Նուպարի արժեքավոր նվիրատվությունը Բարիզի Նուպարյան Մատենադարանին։ Ի պաշտպանություն Զոլաքյանի ընտանիքի։ Երկու տողով։*

24. «Հայաստանյան Ճակատ» թերթը «Էջմիածին» ամսագրի մասին:

## 4. ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ

1. Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը:

2. Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի հրավիրագիրը:

3. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի պատասխան-գրությունը:

4. Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի ողջույնի խոսքը Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանի առթիվ:

5. Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանը:

6. Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի խոսքը «Վատիկանը և Պրավոսլավ եկեղեցին» հարցի քննարկման առթիվ:

7. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ.— Տպավորություններ:

8. ՏԱՍՍ-ի հաղորդագրությունները Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության (ինքնուրույնության) 500-ամյակի տոնակատարության առթիվ:

9. Հ. ԱԳՈՒԼՅԱՆ.— Նորին Վեհափառություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի ուղևորությունը դեպի Մոսկվա՝ Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության 500-ամյա հոբելյանական տոնակատարություններին մասնակցելու համար:

10. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԼԻՄԵՑԻ.—

Ռուսաց պրավոսլավ եկեղեցու ավտոկեֆալության (ինքնուրույնության) 500-ամյա հոբելյանը:

*11.* Խաչատուր Աբովյան:

*12.* Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակը.— *Գիտական սեսիաներ։ Ցուցահանդեսներ։ Սովետական կոմպոզիտորների նոր ստեղծագործությունները նվիրված Խ. Աբովյանին։ Կինո-ակնարկ։ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետում։ Աբովյանի նոր հուշարձանը։ Խ. Աբովյանի լավագույն դիմանկարի մրցանակաբաշխության արդյունքները։ Սովետական ամբողջ երկիրը նշում է Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը։ Հանդիսավոր նիստ նվիրված Խ. Աբովյանի մահվան 100-ամյակին։ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի նշումը Հայաստանի քաղաքներում ու գյուղերում։ Հանդիսավոր երեկո Աբովյանի ծննդավայրում։ Աբովյանի Տուն-թանգարանում։*

*13.* Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Խաչատուր Աբովյանի մի անտիպ դամբանական ճառը:

*14.* Մայր Աթոռ.— *Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Մոսկվա հուլիսի 1-ին։ Մոսկվայից Նորին Վեհափառության ժամանումը Մայր Աթոռ։ Լատվիացի մի խումբ պիոներների այցելությունը Մայր Աթոռ։ Ս. Պատարագի մատուցում Վերափոխման տոնի օրը։ Ս. Պատարագի մատուցում Խաչվերացի տոնի օրը։ Ընդունելություն – հյուրասիրություն Վեհարանում՝ Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի օրը։ Ֆիզիոլոգների, բիոքիմիկոսների և ֆարմակոլոգների անդրկովկասյան համագումարի (Երևան) մի խումբ մասնակիցների այցելությունը Մայր Աթոռ։*

*15.* Հայաստանյայց եկեղեցին Սփյուռքի մեջ.— *«Հասկ» ամսագրի թիվ 5-ում տպագրված խմբագրական հոդվածի Գարեգին Կաթողիկոսի երեք տարվա գործունեության համառոտ նկարագրությանը վերաբերող մասը։*

*16.* ՎԱԶԳԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼՃՅԱՆ.— Ռումանահայ բեմը երեկ և այսօր:

*17.* Հայրենադարձության ուղիով.— *Հայրենադարձ հայերի նոր խմբի ժամանումը Երևան։ Հայրենադարձ հայերի մեկնումը Եգիպտոսից Սովետական Հայաստան։ Եգիպտոսից հայրենիք վերադարձող հայերի ժամանումը Բաթումի։ Հայրենադարձ հայերի ժամանումը Երևան։*

*18.* Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ.— Ռումանահայ հայրենադարձի տպավորությունները:

19. Հայրենի ճարտար հողի վրա.— *Բնակարանային շինարարություն։ Նոր Կամարսի ավանի կառուցումը։ Ջեյթուն ավանում։ Հայրենադարձ գորգագործը։ Աբովյանի պորտրեն գորգի վրա։ Նկարիչ Ռ. Շիշմանյանի աշխատանքների ցուցահանդեսը։*

*20.* ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.— Իմ հուշերից — Պերճ Պռոշյանը:

*21.* Օտարները հայերի և Հայաստանի մասին.— *Դոկտոր Ռապըրթ Ու. Սըրլ։*

*22.* Սովետական Հայաստանում.— *Դվինի պեղումները։ Կոտայքի մի հնագույն հուշարձան Կիրովականում։ XIV դարի հուշարձանի վերականգնում։ Հետաքրքիր հայտաբերում։ Հին հայկական դրամների հավաքածու։ Երևան քաղաքի պատմության թանգարանում։ Նվեր պատկերասրահին։ Նկարիչ Հմայակ Հակոբյանի ցուցահանդեսը։ Մատենադարանում։ Պետրոս Ադամյանի ծննդյան 100-ամյակը։ Նոր նյութեր Գաբրիել Սունդուկյանի մասին։ Երեկո նվիրված գուսան Շերամի մահվան 10-ամյակին։ Հայկական առաջին գունավոր կինոնկարը։ Երևանի Թատերական ինստիտուտը տվեց իր առաջին շրջանավարտները։ Հայաստանի վարպետների հաջողությունները ժողովրդական ստեղծագործության համամիութենական ցուցահանդեսում։ Ժողովրդական ստեղծագործության վարպետների համամիութենական սեմինար։ Համամիութենական շարժական ցուցահանդես։ Արվեստի աշխատողների Տուն։ Հայաստանի կենդանական աշխարհի ուսումնասիրման արշավախումբ։ Շամպայն պատրաստելու խաղողի տեսակներ։ Մերձարևադարձային կուլտուրաների տնկարան։ Արտեզյան ջրհորներ։ Սկսվեց Ոսկեպարի հիդրոկայանի շինարարությունը։ Առողջապահական հաստատությունների նոր շենքեր։ Բերիայի անվան շրջանն այսօր։*

*23.* Գաղութահայ կյանք.— *Երուսաղեմի Ս. Պատրիարք Հոր նամակը, ուղղված Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետին, Պաղեստինի հայոց ներկա դրության մասին։ Երուսաղեմի Ս. Աթոռի Կյուլպենկյան Մատենադարանը։ «Հայերը Ուոլլեսի ընտրության կողմնակից կազմակերպության դեկլարացիան»։ Հայկական պրոգրեսիվ կազմակերպությունների տարեկան համաժողովը։ Հայերի դեմ կիրառվող հալածանքները Իրանում։*

## 5. ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

1. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի Կոնդակը՝ պաղեստինահայ աղետյալներին և Երուսաղեմի Ս. Տեղյաց օգնություն կազմակերպելու մասին:

2. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի Կոնդակը՝ Ռումանահայ թեմի նորընտիր Առաջնորդ Տ. Վազգեն ծ. վարդապետ Պալճյանին իր նոր պաշտոնում հաստատելու մասին:

3. Հայրենիքի համար ու Հայրենիքի հետ:

4. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 31-րդ տարեդարձը.— *Հանդիսավոր նիստ Երևանում՝ նվիրված Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 31-րդ տարեդարձին։ Զորահանդեսը և աշխատավորների շքերթը Երևանում։*

5. Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձի տոնակատարությունը.— *Երևանի Քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը՝ նվիրված Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձին։ Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձի տոնակատարությունը արտասահմանում։*

6. Խ. ՍԵՅՐԱՆ.— Վերհիշում:

7. Մայր Աթոռ.— *Հանդիսավոր Պատարագ և մաղթանք Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 31-րդ տարեդարձի առթիվ։ Ողջույնի հեռագրի հղում ՍՍՌ Միության կառավարության անունով Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի առթիվ։ Հանդիսավոր Պատարագ և մաղթանք Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձի առթիվ։ Ողջույնի հեռագրի հղում Հայկական ՍՍՌ կառավարության անունով՝ Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձի առթիվ։ Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստ Հոգևոր Ճեմարանում։ Երուսաղեմի Պատրիարքի հեռագիրը Վեհափառ Հայրապետին— պաղեստինահայ աղետյալներին օգնություն կազմակերպելու առթիվ։ Վեհափառ Հայրապետի պատասխան-հեռագիրը Երուսաղեմի Պատրիարքին։ Վեհափառ Հայրապետի հեռագիրը Կիլիկիո Ամենաշնորհ Կաթողիկոսին և մի շարք թեմերի Թեմական Առաջնորդներին— պաղեստինահայ աղետյալներին օգնություն կազմակերպելու առթիվ։ Մի հատված Ռումանահայ թեմի Առաջնորդ Տ. Վազգեն ծայրագույն վարդապետի 1948 թ. հոկտ. 12 թվակիր գրությունից։ Վեհափառ Հայրապետի հեռագիրը Ատրպատականի թեմի Առաջնորդ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի մահվան առթիվ։ Պատարագ և հոգեհանգիստ Մայր Տաճարում Ատրպատականի թեմի Առաջնորդ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հիշատակին։ Ճեմարանի լսարանական բաժնի հանդիսավոր բացումը։ Գրական երեկո Հոգևոր Ճեմարանում՝ նվիրված Խ. Աբովյանի մահվան 100-ամյակին։ Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման համար անհրաժեշտ էլեկտրասարքավորման խնդիրներին նվիրված Համամիութենական գիտա-տեխնիկական սեսիայի մի խումբ մասնակիցների այցելությունը Մայր Աթոռ։ Հանքատերմիկական էլեկտրավառարաններին վերաբերող Համամիութենական գիտա-տեխնիկական խորհրդակցության մի խումբ մասնակիցների այցելությունը Մայր Աթոռ։*

8. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի ցավակցական հեռագիրը Ատրպատականի թեմի Առաջնորդ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի մահվան առթիվ:

9. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան:

10. Հայաստանյայց եկեղեցին Սփյուռքի մեջ.— ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ.— *Օգնենք Ս. Երուսաղեմի 5.000 հայ աղետյալներուն։ Սրտառուչ կոչ մը։ Ռումանահայ թեմի Պատգամավորական ժողովը։*

11. Հայրենի հարազատ հողի վրա.— *Բնակարաններ հայրենադարձների համար։ Օգնություն սովետական նոր քաղաքացիներին։ Անհատական բնակարանային շինարարություն։ Հայրենադարձ նկարիչները Մոսկվա մեկնեցին։*

12. ՀԱԿՈԲ ԱՐԱՄՅԱՆ.— Հայրենադարձների հարսանիք— Ոսկերիչ Արշակի ուխտերի կատարումը:

13. ԱՐԱՄ ԵՐԵՄՅԱՆ.— Հայ ժողովրդի ազատագրական պայքարի Մադրասի դրոշակակիրները:

14. ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.— Մեծատառ՝ բե՛ անապատ, բե՛ ամրոց:

15. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.—Կենսագրական նյութեր Միքայել Նալբանդյանի մասին *(շարունակություն)*:

16. Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ.— Ռումանահայոց

մաքի գանձարան «Հայ Մշակույթի Տունը» *(շարունակություն)։*

*17.* ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.— Իմ նոթերից— Ղազարոս Աղայանը:

*18.* Օտարները հայերի և Հայաստանի մասին.— *Հունական թերթ մը հայոց մասին։*

*19.* Սովետական Հայաստանում.— *Հուշարձանների վերանորոգում։ Հնագիտական արշավախումբ։ Գիտության, կուլտուրայի, արվեստի նվաճումները Սովետական Հայաստանում։ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում։ Հարստանում է գրադարանի ֆոնդը։ Գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտում։ Վրաստանի և Հայաստանի գիտնականների համատեղ աշխատանքը։ Մշտական ցուցահանդես։ Երևանի Անասնաբուժական ինստիտուտի 20-ամյակը։ Հայաստանի ժողովրդական ստեղծագործության վարպետները արժանացան առաջին մրցանակներին։ Գուսանների երգերը։ Ժողովրդական երգերի գրառում։ Քաղաքի պլանավորման նախագիծ։ Նոր կամուրջ Զանգու գետի վրա։ Ավարտվում է Մեղրու շրջանի էլեկտրիֆիկացիան։ Ակներգէս։ Ղափանը այսօր։ Էլեկտրաչափիչ գործիքներ։ Արգելավայր Հայաստանում։ Բազմազավակ մայրեր։ «Գերմանո-թուրքական զավթիչների գործակալության ձախողումը Կովկասում»։*

*20.* Գաղութահայ կյանք.— *Երուսաղեմի հայոց վիճակը։ Վազգեն ծայրագույն վարդապետի և Հ. Պապոյանի վերադարձը Հայաստանեն։ Կոմիտասի անտիպ գործերը։ Մոնթարժիի հայ գաղութը։*

*21.* «Էջմիածին» ամսագրում 1948 թվի ընթացքում տպագրված նյութերի ցանկ:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

1. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի Կոնդակը—պաղեստինահայ տեղահանյալների և Երուսաղեմի Ս. Տեղյաց օգնություն կազմակերպելու մասին . . . . 3
2. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ի Կոնդակը— Ռումանահայ թեմի նորընտիր Առաջնորդ Տ. Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճյանին իր նոր պաշտոնում հաստատելու մասին . . . . . 5
3. Հայրենիքի համար ու Հայրենիքի հետ . . . . . 6
4. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 31-րդ տարեդարձը . . . . . 12
5. Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձի տոնակատարությունը 15
6. Խ. ՍԵՅՐԱՆ.— Վերհիշում . . . . . 18
7. Մայր Աթոռ . . . . . 19
8. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի ցավակցական հեռագիրը Ատրպատականի թեմի Առաջնորդ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի մահվան առթիվ 23
9. Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան . . . . . 24
10. Հայաստանյայց եկեղեցին Սփյուռքի մեջ . . . . . 27
11. Հայրենի հարազատ հողի վրա . . . . . 31
12. ՀԱԿՈԲ ԱՐԱՄՅԱՆ.— Հայրենադարձների հարսանիք - Ոսկերիչ Արշակի ուխտերի կատարումը . . . . . 32
13. ԱՐԱՄ ԽՐԽՄՅԱՆ.— Հայ ժողովրդի ազատագրական պայքարի Մադրասի գործակիցները . . . . . 38
14. ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.—Մեծաքար՝ թե՛ անապատ, թե՛ ամրոց 46
15. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Կենսագրական նյութեր Միքայել Նալբանդյանի մասին . . . . . 48
16. Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ.— Ռումանահայոց մտքի գանձարան «Հայ Մշակույթի Տունը» . . . . . 56
17. ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.— Իմ հուշերից— Ղազարոս Աղայանը 73
18. Օտարները հայերի և Հայաստանի մասին . . . . . 80
19. Սովետական Հայաստանում . . . . . 81
20. Գաղութահայ կյանք . . . . . 91
21. «Էջմիածին» ամսագրում 1948 թվի ընթացքում տպագրված նյութերի ցանկ . . . . . 96



# ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ
ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

ԷՋՄԻԱԾԻՆ, «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"
Redaction of the magasine „Etchmiadzin", Armenia, USSR

Պատվեր N 930

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. Վարչ. № 2 տպարան, Երևան